
ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ԱՐԵՎԵԼՔԻ
ԵՐԿՐՆԵՐ
ԵՎ
ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ
XV




ՀԱՅԿ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

СТРАНЫ и НАРОДЫ БЛИЖНЕГО и СРЕДНЕГО ВОСТОКА

XV

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1989

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ПА26
ARGRET

ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

XV

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1989

Խմբագրական կոլեգիա

Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆ (նախագահ), Հ. Մ. ԵԳԱՆՅԱՆ, Ն. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ,
Շ. Խ. ՄՀՈՅԱՆ, Ռ. Գ. ՍԱՀԱԿՅԱՆ, Ե. Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
Հատորի պատասխանատու խմբագիր
Ն. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝
պատմական գիտ. թեկնածուներ
Հ. Խ. ԹՈՓՈՒԶՅԱՆԸ և Ռ. Գ. ԿՈՆԴԱԿՉՅԱՆԸ

Редакционная коллегия

Г. Х. САРКИСЯН (председатель), Г. М. ЕГАНЯН, Ш. Х. МГОЯН,
Н. О. ОГАНЕСЯН, Р. Г. СААКЯН, Е. К. САРКИСЯН

Ответственный редактор тома
Н. О. ОГАНЕСЯН

Ժողովածուում քննարկվում են 1960—1980-ական թվականներին Արաբական արևելքի երկրներում, Իրանում և Թուրքիայում տեղի ունեցած կարևոր քաղաքական իրադարձությունները և սոցիալ-տնտեսական զարգացման, միջազգային հարաբերությունների առանձին խնդիրներ։ Լուսաբանված են նշված երկրների պատմական զարգացման, գաղափարախոսության ու գրականության զանազան հարցեր։ Զգալի տեղ է հատկացված նաև բանասիրության հարցերին։

Գիրքը հասցեագրվում է պատմաբանների, միջազգայնագետների, բանասերների լայն շրջաններին։

THE COUNTRIES AND PEOPLES OF THE NEAR
AND MIDDLE EAST
XV
PUBLISHING HOUSE OF THE ACADEMY OF SCIENCES OF THE
ARMENIAN SSR

YEREVAN—1989

Մ $\frac{1506000000}{703(02)-89}$ 32—87

ISBN 5—8080

© Հայկական ԽՍՀ ԳԱ հրատարակչություն, 1989

ԴՈՒՐԱՆԱԿԱՆ ՈՐՁԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՖՈՒՐՖԻՆՅՈՒՆ «ՀՈՐ ԱՂՏՈՂՈՑՈՒՆ ԿԱՂՑՈՑՈՒՆՅԱՆ» ՊԵՂԱՄՈՒՆ
ՀԱՐՅԱՆ ՇՈՒԺՅԱՆ (XX դ. 30-ԱԿԱՆ ԹԹ.)

Կրկի ժամանակաշրջանում ծանոթ դարձած հայ ազգային-ազատագրական շարժման գործիչներից մեկը, ով իր ինչ-որ չափով անհատական գծերով ներկայացրել է ազգային-ազատագրական պայքարի ոգին, ոչ միայն իր ժամանակակիցների, այլև հետագա սերունդների համար, եղել է Ֆրանգյուլյան «Հոր աղտողոցության կաղցողության» պեղամուն։ Ֆրանգյուլյանի անձնական կյանքի, նրա գործունեության ուսումնասիրությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն նրա ժամանակակիցների, այլև հետագա սերունդների համար, որովհետև նրա կյանքի ուղին ու գործունեությունը ամենից ավելի են բնորոշում այդ ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական կյանքի առանձնահատկությունները։

Ֆրանգյուլյանի ծնողները Ղարաբաղի Ջրաբերդ գավառի Ղարաղուշ գյուղից էին։ Նրանց ընտանիքը հարուստ էր։ Ֆրանգյուլյանի հայրը՝ Ստեփան աղան, ունեցել է մեծ հողատարածություններ, ինչպես նաև մեծաքանակ անասնագլուխ։ Ֆրանգյուլյանի մայրը՝ Մարիամ խանումը, եղել է Մելիք-Ղամազասպ Մելիք-Ղամազասպյանի դուստրը։ Ֆրանգյուլյանի ծնողները ամուսնացել են 1850-ական թվականներին։ Ֆրանգյուլյանի մանկության տարիները անցել են Ղարաղուշում։ Նրա հայրը, որ ունեցել է մեծ հեղինակություն գյուղում, ցանկացել է, որ որդին ստանա լավ կրթություն։ Ֆրանգյուլյանը սկզբնական կրթությունը ստացել է տանը։ Նրա ուսուցիչը եղել է Ղարաղուշի հոգևորական դպրոցի ուսուցիչ Ստեփան Ղարաղուշեցի։ Ֆրանգյուլյանը ուսումնասիրել է հայոց լեզուն, քերականությունը, աստվածաբանությունը, պատմությունը, ինչպես նաև ռուսերեն լեզուն։ Ստեփան Ղարաղուշեցին ուշադրություն է դարձրել նաև Ֆրանգյուլյանի ֆիզիկական զարգացմանը։ Նա ուսուցանել է նրան ձիավարության, նետաձգության, սուսերամարտի հմտություններ։ Ֆրանգյուլյանը ուսումնասիրել է նաև ռուսերեն լեզուն։ Ստեփան Ղարաղուշեցին ուշադրություն է դարձրել նաև Ֆրանգյուլյանի ֆիզիկական զարգացմանը։ Նա ուսուցանել է նրան ձիավարության, նետաձգության, սուսերամարտի հմտություններ։

ՖՐԱՆԳՅՈՒԼՅԱՆԻ ԾՆՈՂՆԵՐԸ ԵՎ ՆՐԱ ՏՈՀՄԸ

փաստեր և դիտարկումներ[2]։ Այս հարցին հպանցիկ անդրադարձել են նաև արևմտյան որոշ գիտնականներ[3]։

Հենվելով հիմնականում թուրքական աղբյուրների վրա, մենք նպատակ ունենք քննարկել «նոր պատմական կոնցեպցիայի» ստեղծման պատճառներն ու պայմանները, ինչպես նաև ցույց տալ, թե այն ինչպիսի արտացոլում է գտել Թուրքական պատմական ընկերության առաջին աշխատություններում։

1918—1923 թթ. ազգային պայքարի ավարտից և Թուրքական հանրապետության հիմնադրումից հետո երկրի առջև դրվեց տնտեսության, քաղաքականության և մշակույթի ասպարեզում արմատական վերափոխություններ մտցնելու խնդիրը։ Թուրքական ազգային բուրժուազիայի առաջնահերթ խնդիրներից մեկը դարձավ այնպիսի գաղափարախոսության մշակումը, որի միջոցով կարողանար պատմականորեն հիմնավորել ինքնուրույն զարգացման իր իրավունքը։ Եվ նացիոնալիզմը դարձավ նորաստեղծ բուրժուազիայի գաղափարախոսությունը, որն իր արտացոլումը գտավ նաև այսպես կոչված «նոր պատմական կոնցեպցիայում»։

Իշխանության գլուխ անցնելով, քեմալականները ձևականորեն հրաժարվեցին պանթյուրքիզմի գաղափարախոսությունից և քաղաքականությունից։ 1921 թ. դեկտեմբերին, ելույթ ունենալով Ազգային մեծ ժողովում, Մուստաֆա Քեմալ Աթաթուրքը հայտարարեց. «Պարոնայք, մեր համաքաղաքացիներից, հավատակիցներից և հայրենակիցներից ամեն մեկը մտովին կարող է ունենալ իր մեծ իդեալը, նա ազատ է և ինքնուրույն։ Ոչ ոք իրավունք չունի խառնվելու նրա գործերին։ Սակայն Թուրքիայի Ազգային մեծ ժողովը հետևում է հիմնավոր և կայուն քաղաքականության, որը կոչված է ազգային որոշակի սահմաններում ապահովելու թուրքերի կյանքը և անկախությունը։ Ազգը ներկայացնող Թուրքիայի Ազգային մեծ ժողովը և նրա կառավարությունը ամենևին հեռու են պատրանքներից և իրենց քաղաքականության մեջ բավական համեստ ու իրատես են... Պարոնայք, այս ազգն այսօր կառափնարանի հասցրած գործողությունների և արարքների արմատները թաքնված են պատրանքների ու զգացմունքների մեջ»[4]։

Քեմալականները փոխեցին անգամ «թյուրքչուլուք» տերմինը, որը միաժամանակ նշանակում էր թուրքիզմ (այսինքն՝ թուրքական նացիոնալիզմ), և թյուրքիզմ (այսինքն՝ պանթյուրքիզմ), փոխարինելով

այն «միլլիյեթչիլիք» բառով (հետագայում՝ «ուլուսչուլուք»), որ նշանակում է նացիոնալիզմ։ Միլլիյեթչիլիքը հայտարարվեց ժողովրդահանրապետական կուսակցության լոզունգներից մեկը և մտավ նրա ծրագրի մեջ[5]։

Իսկ ո՛չ քեմալականները, և ո՛չ էլ ինքը՝ Քեմալ Աթաթուրքը, հետևողական չդտնվեցին պանթյուրքիզմի դատապարտման հարցում։ Աթաթուրքը հետագայում ներողամտություն դրսևորեց մի շարք անձանց գործողության հանդեպ, որոնց հոդվածներում և գրքերում պրոպագանդվում էր այդ հետադիմական գաղափարախոսությունը, և դա վկայում է բուրժուական գաղափարախոսության մեջ և երկրի հասարակական կյանքում հետադիմական միտումների դեմ պայքարելու չկամության ու անկարողության։ Նույնպիսի անհետևողականություն դրսևորվեց նաև Աթաթուրքի առաջ քաշած «նոր պատմական կոնցեպցիայի» և թե թուրքական պատմական կոնգրեսի աշխատանքների նկատմամբ։

Օսմանյան միապետության կործանումից հետո քեմալականների առաջ դրվեց համազգային պետություն ստեղծելու խնդիրը (1920 թ. հունվարի 28-ի Ազգային համաձայնագրով որոշված սահմանների շրջանակում)[6]։ Այս իմաստով Աթաթուրքը առաջնահերթ էր համարում «մարդկանց գիտակցությունից արմատախիլ անել միապետության կամ իսլամական աշխարհի հանդեպ եղած հավատարմության գաղափարը՝ փոխարինելով այն հայրենիքին նվիրվածության գաղափարով»[7]։

Այս նպատակին հասնելու միջոցներից մեկը համարվեց պատմությունը, իսկ նրա նախաձեռնությամբ ստեղծված Թուրքական պատմական ընկերությունը[8] կոչված էր դառնալու գաղափարախոսության և մշակույթի ասպարեզում պետական քաղաքականության անցկացնող միջնորդ։ Թուրք գիտնականների առջև դրված էր իր էությամբ նացիոնալիստական խնդիր, այն է՝ ապացուցել անատոլիական թուրքերի բնիկ լինելը և դրանով իսկ «գիտականորեն» հիմնավորել նրանց իրավունքը Փոքր Ասիայի տարածքի նկատմամբ։ Պատմության հանդեպ քեմալականների նման ակտիվությունը պատահական չէր։ Ինչպես հայտնի է, 1919—1922 թթ. Արևմտյան Անատոլիան գրաված հույները հայտարարել էին, թե այն պետք է պատկանի Հունաստանին, քանի որ այդտեղ հնում գոյություն է ունեցել հունական քաղաքակրթություն։ Իտալացիները ևս, վկայակոչելով այն փաստը, որ Անատոլիան ժամանակին մտել է Հռոմեական մեծ կայսրության մեջ, 1919—1921 թթ. գրավեցին Հարավային Անատոլիան[9]։

Մոտավոր նույն տեսակետից արտահայտվում նաև Ղևոնդ Ալիշանը, նկատելով հետևյալ փաստերը. «Ոչ պիտի ասեմ զայն, թե հետևեալ ժամանակաց մեջ փոփոխեալ հետևի ոչ ինչ ի նմանէ, որ ոչ ունի ինչ ի նմանէ, այլ ասեմ, թե ոչ ինչ ի նմանէ, որ ոչ ունի ինչ ի նմանէ,

քիայի պատմութիւնը առնչվող նյութերը ուսումնասիրելու գործում ներգրավվեցին բոլոր նրանց, ովքեր զբաղվում կամ կարող էին զբաղվել պատմությամբ։ Նյութերի հիման վրա կազմվում էին հաշվետվություններ և ներկայացվում Աթաթուրքին։ Այս հետազոտությունների արդյունքը նշավ Աթաթուրքի պատրաստած «Թուրքական պատմության հիմնական ուղղություններ» աշխատությունը[15], որի առաջաբանում ասված էր. «Մեր նախնիները, որ մեծ տերություններ են ստեղծել, դարձան նաև մեծ քաղաքակրթություններ ստեղծողներ։ Մեր պարտքն է՝ հետազոտել, ուսումնասիրել, և թուրքական ժողովրդին ու ողջ աշխարհին պատմել այդ մասին։ Եթե թուրք երեխաներն իմանան իրենց նախնիների մեծագործությունները, նրանք իրենց մեջ ուժ կգտնեն ավելի կարևոր գործեր իրականացնելու համար»[16]։

Այս աշխատանքի էլեկտային դրույթներից մեկը հետևյալն էր. հնագույն ժամանակներում, երաշտի և տնտեսական այլ բնույթի պատճառների հետևանքով, Միջին Ասիայից քոչվորները մեծ տեղաշարժ են կատարել։ Քոչվոր այս ցեղերը խոսել են թյուրքական լեզուներով և պատկանել են ալպիական կարճագլուխ ռասային։ Նրանք վերաբնակեցված վայրերն են բերել իրենց առաջավոր մշակույթը։ Այս դրույթը դարձավ պաշտոնական «նոր պատմական կոնցեպցիայի» հիմքը։ Դրա ապացուցմանը նվիրվեց թուրք գիտնականների ուսումնասիրությունների մի ամբողջ շարք։

Այս դոկտրինայի լույսի տակ դասախոսներ պատրաստելու համար որոշվեց 1932 թ. հուլիսին ստեղծել հատուկ դասընթացներ։ Հետագայում դրանք ստացան Թուրքական առաջին պատմական կոնգրես անվանումը, և նրա արձանագրությունները էլ հրատարակվեցին այդ անվանմամբ[17]։

Այդ կոնգրեսը կազմակերպվեց Թուրքիայի ժողովրդական կրթության մինիստրության կողմից։ Մասնակցում էին 232 հոգի, այդ թվում՝ Ստամբուլի համալսարանի պատմության պրոֆեսորներ, լիցեյների, դպրոցների և ուսումնական այլ հաստատությունների դասախոսներ։

Բնականաբար, կոնգրեսի հիմնական ուշադրությունը բևեռված էր թուրքերի ծագումնաբանության խնդրին։ Թուրք գիտնականները որոշեին ապացուցել Անատոլիայում թուրքերի բնիկ լինելը, ծայրահեղ դեպքում՝ նեոլիթի ժամանակներից բնավորվելը։ Այս հարցին էր մասնավորապես նվիրված Աֆեթ Ինանի «Նախապատմական շրջանում և պատմության արշալույսին»[18] զեկուցումը, ուր նա կանգ առավ հետևյալ հարցերի վրա.



ինչ պեղումների) դիմել օտարներին, մատնվելի կամեցողին մատնահարության տեսակետից հատկապես հարմար նրանք բնություն համարելով և Ա. Ինաևը, «Հայարա մրցում տիրոջը նեղը պատկանել և հայատակ նեղը պատկանել են նրանք այլ ընտրելու»[24]։

Ինչպես տեսնում ենք, հեղինակի նեղությունից հետաքրքրական ելքեր են իրենց առջև դրած խնդիրների։ Մի բան, որ արձակագրում է նրա հավաքած փաստական նյութը։

Ժողովրդական կրճատված տիպերի (Հոգաորեր) ընդհանրական հատկանիշներ են հանդես գալիս հետևյալ գծերը՝ «Ինչպես ասում են, որ «ծծիները, որ «ծծիները» հետևյալ գծերը հետագայում նրանց չեն պատկանում և նրանց ձգվում են մինչև գոտկատեղը[25]։

Կոնգրեսում այդ մասին խոսեց նաև Լըֆլէ Սամիէլը իր «Հարգ ևսկի» մասին մեր նամակում «Հայ ազգագրական հավաքածուի» ապագայի հարցերի մասին» և «փոխել նիմոսան գարնան ե ընդհանուր ապագան ելքեր[26]։

«Նոր ապարանքն կոնցեպցիան ապացուցելու հարց հարգ պետական կարգերի, նրան վերջում պետք է մեր ազգագրական հավաքածուն հարստացնելու համար հարկավոր կապակցություն ու արժանիքներ։ Ինչպես, օրինակ. Հասն պետք հատկացվել ազգագրության ու «առաջին վեպն հայոց հարցաշարի ընդհանրական» և «փոխել նիմոսան գարնան ե ընդհանուր ապագան[30]։

Սրանք լոկ ճամարտակութ յունններ չեն՝ թոռած այդ ժամանակվա ժողովրդական մինիստրի շուրթերից։ Լուսավորութ յան ասպարեզում նրանք վարում էին շատ որոշակի քաղաքականութ յուն, այն է՝ երիտասարդութ յանը դաստիարակել ծայրահեղ ազգայնամոլութ յան ոգով։

«Նոր պատմական կոնցեպցիայի» գլխավոր դրույթներն ընկան «Թարիհ» քառահատոր գրքի հիմքում, որ դարձավ պատմութ յան դասագիրք[31]։ «Թարիհ»-ում թուրք գիտնականները ավելի հեռուն գնացին։ Թուրքերի տաղանդին վերագրվեց մշակույթի ծաղկումը Հին Չինաստանում[32], սկյութների[33] մոտ, Հնդկաստանում[34], Եգիպտոսում[35] և այլուր, հենվելով եվրոպական գիտնականների վրա[36], որոնք երբեմն «բուրանական» են համարում ոչ սեմական և ոչ հնդեվրոպական ժողովուրդներին և ցեղերին՝ ամենևին էլ այդ տերմինի տակ նկատի չունենալով թուրքերին։ Ահա թե ինչ է գրում «Թահիհ»-ը գրչութ յան առաջացման մասին. «Այն ստեղծվել է թուրքերի կողմից նախապատմական ժամանակաշրջանում և տարածվել է ամբողջ աշխարհում»[37]։ Հայտնի է, որ մ.թ.ա. IV դարի վերջին և III-ի սկզբին Հարավային Միջագետքում առաջացավ հնագույն գրչութ յուն։ Առաջավոր Ասիայի համարյա բոլոր ժողովուրդները փոխառնելով շումերներից սեպագրերի համակարգը, հարմարեցրին այն իրենց լեզվական առանձնահատկութ յուններին[38]։ Եթե հետևելու լինենք թուրք գիտնականների տրամաբանութ յանը, համաձայն որի շումերները նախաթուրքերն են, ապա ողջ մարդկութ յունը պետք է հենց նրանց «պարտական» լինի, այդ մեծագույն նվաճման համար։

Ինչպես տեսնում ենք, թուրքական գիտնականները իրենց վարկածները հիմնավորելու համար դիմել են հին աշխարհի ժողովուրդների պատմութ յան առանձին փաստերին։ Ուսումնասիրութ յունների ժամանակ կոնկրետ փաստերին անդրադառնալը դրական երևույթ է համարվում։ Սակայն, ինչպես նշել է Վ. Ի. Լենինը. «Փաստերը, եթե դրանք վերցվեն իրենց ամբողջութ յան, իրենց կապի մեջ, ոչ միայն համառ են, այլև անվերապահորեն ապացուցիչ բան են։ Մանր փաստերը, եթե դրանք վերցվում են ամբողջութ յունից դուրս, կապից դուրս, եթե դրանք կցկտուր և կամայական են, հենց միայն, խաղալիք են կամ որևէ էլ ավելի վատ բան»[39]։

Թուրք գիտնականները նենգափոխելով փաստերը, պատմական առանձին կոնկրետ ուսումնասիրութ յունների արդյունքները, «Փոքր

Ասիայում գոյություն ունեցած բոլոր քաղաքակրթությունները վերագրում են թուրքական տաղանդավոր ազգին»[40]։

Հանրապետության հռչակումից հետո թուրք պատմաբանների գլխավոր ուշադրությունը կենտրոնացվեց «զուտ թուրքական անցյալի» որոնումների վրա։ Այս կապակցությամբ մեծ հետաքրքրությամբ ուսումնասիրվում էին թուրքերի էթնիկական ակունքները և փորձեր էին արվում ապացուցելու Անատոլիայում նրանց բոլորից վաղ երևան գալը։

Սովետական գիտնական Դ. Ծ. Երեմեևը, բնութագրելով 30-ական թվականների թուրքական պատմագիտությունը, գրում է, որ այն չի խուսափել «ազգան հիվանդություններից»[41]։ Հազիվ թե կարելի լինի «հիվանդություն» անվանել որոշակի նպատակներով պատմությունը գիտակցաբար խեղաթյուրելը, մանավանդ.. որ XX դարի 30-ական թվականներին առաջ քաշված «նոր պատմական կոնցեպցիան», այսօր էլ շարունակում է հիմնադրույթ մնալ թուրքական պատմական ընկերության աշխատանքներում, ինչպես դա նշված է նրա կանոնադրության մեջ։ Թուրքական առաջին պատմական կոնգրեսի ամբիոնից, քառասունհատոր «Թարիհի» էջերում և այլ աշխատություններում թուրք գիտնականները հայտարարում էին, որ պատրաստվում են գրել իրենց ազգի «իսկական» պատմությունը՝ ի տարբերություն եվրոպական հեղինակների, որոնք կանխակալ դիրքերից են ներկայացրել «իրենց ազգի պատմությունը»։

Ինչպես բնորոշ է բուրժուական գիտությանը, այդ խնդրի իրականացման հարցում էլ նրանք հետևողական չգտնվեցին։ Եվրոպական նացիոնալիզմին նրանք հակադրեցին իրենց նացիոնալ-շովինիզմը։ «Նոր պատմական կոնցեպցիան» մշակվեց թուրքական բուրժուական նացիոնալիզմի զարգացման մթնոլորտում՝ միաժամանակ հանդիսանալով նրա արդյունքը և խթանը։ Իսկ, թե ինչպես է արտահայտվում այն ժամանակակից թուրքական պատմագիտության մեջ և ինչպիսի փոփոխություններ է կրել, դա արդեն հատուկ ուսումնասիրության նյութ է։

А. Р. ОГАНЕСЯН

К ВОПРОСУ О ВЫРАБОТКЕ В ТУРЦИИ «НОВОЙ ИСТОРИЧЕСКОЙ КОНЦЕПЦИИ» (30-е гг. XX в.)

Резюме

Статья посвящена анализу причин и условий выработки в Турции «новой исторической концепции» (30-е гг. XX в.), ее отражению в первых трудах созданного тогда же Турецкого исторического общества. После победы кемалистского движения, для обоснования прав на создание собственной государственности, турецкими буржуазными идеологами перед учеными была поставлена задача: доказать автохтонность анатолийских турок, извечность их обитания на территории Малой Азии. Целый ряд работ турецких ученых был посвящен ее доказательству. Ставшая официальной доктриной эта концепция и сегодня остается руководствующей в работах Турецкого исторического общества. Используя, в основном, турецкие источники, автор показывает националистическую сущность этой концепции, дает критику первых работ турецких историков, созданных в ее духе.

1 *Տե՛ս* Ռ. Սահակյան, *Սովետա-թուրքական հարաբերությունների պատմության հակագիտական լուսաբանումը ժամանակակից թուրք պատմագրության մեջ, Երևան, 1964 թ.*, Ե. Սարգյան, Ռ. Սահակյան, *Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության ներկափոխումը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963 թ.*, Тверитинова А. С. Фальсификация истории средневековой Турции в кемалистской историографии. „Византийский временник", VII, 1953, *էջ 9—31*; С. Ф. Орешкова „Кризис" исторической науки и некоторые новые направления исторических исследований в современной Турции. „Великий Октябрь и Турция", тезисы и резюме докладов и сообщений научной конференции (1977, Тбилиси). М., 1977, *ռեզյումե, էջ 61—65*.

2 *Տե՛ս* М. К. Зулалян, Вопросы древней и средневековой историн Армении в освещении современной турецкой историографии. Ереван, 1970; Д. Е. Еремеев, Этногенез турок, М., 1971.

3 *Այդ թվում կարելի է նշել* B. Lewis, The emergence of modern Turkey. London, 1962; D. Kushner. The rise of turkish nationalism, London, 1977.

4 Atatürkün söylev ve demeçleri, Isţ, 1945, c. 1, s. 193—194.

5 Aykut Şeref. Kamalism. (CHP programının izahi), Its. 1936, s. 20—25.

6 *Տե՛ս* Мустафа Кемаль (Ататюрк). Путь новой Турции, М., 1934. т. 4, с. 333.

7 B. Lewis. op. cit., p. *339*.

8 Այն հիմնադրվել է 1931 թ. նախկին Թուրքական պատմության ուսումնասիրման ընկերության փոխարեն։ Նորաստեղծ ընկերության կանոնադրության մեջ նշված էր, որ այն կոչված է «նոր պատմական կոնցեպցիայի լույսի տակ պարբերաբար իրականացնելու պատմական ուսումնասիրություններ»։

9 Համաձայն Մուդրոսի զինադադարի, հույներն օկուպացրին Արևմտյան Անատոլիան։ Տե՛ս Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне, М. 1927, с. III—XII. Раздел Азиатской Турции (По секретным документам б. Министерства иностранных дел) М. 1924; М. Шмсутдинов Планы раздела султанской Турции и использование ее в вооруженной интервенции Антанты против Советской России (1918—1919). —Турецкий сборник, М., 1958, *էջ 32—47*։

10 The „scourages of God"—St. Lane-Pool, Turkey. New York, 1914, *էջ 3*։

11 XIX դարում եվրոպական կապիտալիստական պետությունների կողմից Ասիայի և Աֆրիկայի մի շարք երկրների ռազմաքաղաքական և գաղութային կայսրությունների՝ Բրիտանական, Ֆրանսիական, Գերմանական և այլոց ստեղծման ժամանակ Եվրոպայում լայն տարածում գտավ հետամնաց Արևելքի և առաջադեմ Արևմուտքի կոնցեպցիան։ Էությանորեն այն հիմնավորված էր Հեգելի պատմափիլիսոփայական սխեմայում։ Այն տարբերում էր այսպես կոչված «պատմական ժողովուրդներ», որոնց թվին էին վերագրվում հին հույներն ու հռոմեացիները, եվրոպացի քրիստոնյա ժողովուրդները՝ մի պատմական ժողովուրդների շարքին էին վերագրվում Արևելքի ժողովուրդները։ Տե՛ս Гегель. Философия истории. Сочинения, т. VIII, М—Л, 1935.

12 TTK, Islam Ansiklopedisi, 10 cüz, Ist. 1949, *787*.

13 U. Igdemir. Yılların içinden. Ankara. 1976, *203*.

14 Ю. Тишанский По новой Турции. ОГИЗ, 1933, с. 120.

15 Türk tarihinin ana hatları. Ist. 1930.

16 Նույն տեղում։

17 Birinci Türk Tarih Kongresi (Konferanslar ve müzakere zabıtları), Istanbul, 1932. *Հետագայում՝* IT Kongresi.

18 Tarihten evvel ve tarih fecrinde, I TT Kongresi.

19 Համաձայն Թուրքական պատմագրության ավանդույթների, Միջին Ասիա աշխարհագրական հասկացության մեջ Աֆղանստանը ընդգրկում է նաև Պամիրն ու Ալթայը։

20 Այս զեկուցման հիմնական դրույթները հետագայում զարգացվեցին Dr. Afetinan. Afetinan. Türkiye halkının antropolojik karakterleri ve Türkiye tarihi (Türk irkinin vatanı Anadolu). Ankara, 1947 *գրքում։*

21 «Արիացիս բառը, որպես հնդեվրոպական ցեղերի անվանում, դանում ենք պատմության մեջ առաջին թուրքերի ի հայտ գալուց մի քանի հազարամյակ առաջ։ Տե՛ս История Древнего Востока. М., 1979, с. 349—350.

22 Dr. Afetinan, op. cit., *56*.

23 Նույն տեղում, էջ 49։

24 Նույն տեղում։

25 I TT Kongresi..., s. s. 7—8.
26 Ալդ թեզը հետագայում իր արտահայտությունը գտավ լեզվի ծագման, այսպես կոչված «արևային թեորիայում»։
27 Թուրքիայում 30-ական թթ. հայտնվեցին անգամ բանկեր փքուն անվանումներով՝ «Սումերբանկ» («Շումերական բանկ») և «Էթիբանկ» («Խեթական բանկ»), ժամանակակից գիտությունն ապացուցել է, որ խեթերենը պատկանում է հնդեվրոպական լեզուների շարքին։ Տե՛ս J. G. Macqueen, The hittites and their contemporaries in Asia Minor, London, 1975; J. Melaart, Earliest civilizations on the Near East, London, 1965: **В. Иванов**, Хеттский язык М., 1963, **И. Дьяконов**, Предыстория армянского народа, Ереван, 1968, *ժամանակակից որոշ թուրք գիտնականներ ընդունում են խեթերի հնդեվրոպական ծագումը։ Տե՛ս* **Эрзен Афиф**, Восточная Анатолия и Урарту. АН Арм ССР, Центр научной информации по общественным наукам, Научно-информационный бюллетень по общественным наукам, Серия III, № 10/64, Ереван, 1983, с. 19:
28 I TT Kongresi., 117:
29 Նույն տեղում, էջ 201։
30 Նույն տեղում, էջ 6։
31 Tarih, Ist. 1932.
32 Նույն տեղում, հ. 1, էջ 55, 59։
33 Նույն տեղում, էջ 69—71։
34 Նույն տեղում, էջ 74—75։
35 Նույն տեղում, էջ 103—105։
36 Օր.՝ Ժ. Մորգանին, է. ՊիքՓարին և այլոց։
37 Tarih, c. I, 41.
38 *Տե՛ս* История Древнего Востока, с. 181—182.
39 Վ. Ի. Լենին, Երկ., հ. 30, էջ 430։
40 U. Igdemir. Yıllarin içinden, s. 303:
41 Դ. Ե. Եռխին, Թուրքերի ծագումը, Երևան, 1975, էջ 26։

Ա. Ա. ՄԱՆԱՍՅԱՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ «ԲԱՑ ԴՈՒՆԵՐԻ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՒՕՂՈՒՄԸ

Եգիպտոսի սոցիալ-տնտեսական կյանքում 70-ական թթ. սկիզբը բնութագրվում է նշանակալից փոփոխություններով։ Պրեզիդենտ Նասերի հանկարծահաս մահը, որը հանգեցրեց երկրում քաղաքական ղեկավարության փոփոխմանը, տեղի ունեցավ այն պահին, երբ ճգնաժամային վիճակում գտնվող տնտեսության ոլորտում անհրաժեշտությունն էր դարձել անհապաղ միջոցառումների ձեռնարկումը։ Երևան էին եկել տնտեսական աճի նվազման նշաններ՝ 1969—1970 թթ. 6,9 տոկոսի դիմաց 1970—1971 թթ. այն իջել էր 4,8 տոկոսի[1]։ 1967 թ. իսրայելական ագրեսիան նյութական մեծ կորուստներ պատճառեց, ռազմական ծախսերն աճեցին, որոնց ծավալը 70-ական թվականների սկզբում համապատասխանում էր Եգիպտոսի ազգային համախառն արտադրանքի 25 տոկոսին։ Մոլեգնում էր դրամարժեքի անկումը, չէր բավականացնում մթերքը, համախառն արտադրանքը կտրուկ նվազում էր։

Զարգացող երկրների տնտեսության պետական հատվածի սովորական թերությունները պատճառ և առիթ ծառայեցին հետադեմ տարրերի ելույթների համար, որոնք սկսեցին ավելի հաճախակի և ավելի բարձրաձայն խոսել պետհատվածի վերացման և տնտեսության ղեկավար բարձունքները մասնավոր ձեռնարկություններին հանձնելու մասին։ Այդ ժամանակ առաջ եկած «օտարու ճշգրտման շարժումը» եգիպտական հեղափոխության կերպարանափոխման ընթացքի նախերգանքն էր։

Եգիպտական «նոր կապիտալիստները», որոնց առաջնահերթ նպատակը մասնավոր ձեռնարկատիրական գործունեությունը պետության վերահսկողությունից դուրս բերելն էր, իսկ վերջնականը՝ երկրի տնտեսության առավել շահութաբեր ճյուղերում տիրապետող դիրքերի

2—635

ՀՀ ԳԱԱ Գիտական գրադարանի ՀՈՒՆԴԱՄՆՑԻԿ ԳՐԱԴԱՐԱՆ

գրավումը, ոգևորված կառավարության աջակցությունից, հանդես էին գալիս հենց պետական ձեռնարկության գաղափարի քննադատությամբ, պատճառաբանելով, որ պետական ձեռնարկությունները փաստորեն մշտապես աշխատում են ոչ լրիվ կարողությամբ, քանի որ ներքին շուկայում նրանց որևէ մրցակցություն չի սպառնում։ Ձայներ էին հնչում, որոնք պահանջում էին պետական հատվածի գլխավոր վարչություններ արժեքղթերի վաճառք, դրամատնային, վալյուտային ու հարկային համակարգի վերափոխման, արտահանման—ներմուծման գործառույթների բնագավառում պետհատվածի դիրքերի թուլացում։

«Նախկին ժամանակաշրջանի սխալների ուղղման» պատրվակով Եգիպտոսի պրեզիդենտ Սադաթը 1971 թ. փետրվարին հայտարարեց հինգ հազար խոշոր հողատերերի՝ նախկինում խլված հողերի դիմաց դրամական փոխհատուցում տալու, 800 խոշոր կալվածատերերի հողը վերադարձնելու և բռնագրավման քաղաքականությունից հրաժարվելու մասին։ Ուշադրության են արժանի այդ նույն տարում հրապարակված երկու օրենքները՝ «Արաբական կապիտալի ներդրումների մասին» (№ 65) և «Արտաքին առևտրի և զարգացման եգիպտական դրամատան հիմնադրման մասին» (№ 77), որոնք մատչելի էին դարձնում Եգիպտոսի տնտեսության մեջ օտարերկրյա կապիտալի ներթափանցումը[3]։

Համաձայն № 65 օրենքի արաբական և այլ օտարերկրյա կապիտալ ներդրումների բերած շահույթները հինգ տարի ազատվում էին եկամտահարկից, օգտագործած կապիտալ ներդրումներից ստացված մաքուր շահույթը կարող էր փոխադրվել արտասահման ներդրման՝ վալյուտայով։ Օրենքը երաշխավորում էր ներդրման պահից հինգ տարի անց հետագա հինգ տարիների ընթացքում օտարերկրյա կապիտալի դուրս բերում երկրից։ Օտարերկրացի մասնագետներին իրավունք էր տրվում օտարերկրյա վալյուտայով արտասահման փոխադրել իրենց աշխատավարձի կեսը։

№ 77 օրենքը նպատակ ուներ արտասահմանից արտոնյալ պայմաններով օտարերկրյա վալյուտայով միջոցներ ներգրավել պետական և մասնավոր ընկերությունների և ուղղակի ներդրումային գործարքների համար։ Բանկային ավանդները աղգայնացման կամ բռնագրավման ենթակա չէին, ավանդատների եկամուտները զերծ էին մնում հարկումներից, իսկ դրամատան գործառույթները դուրս էին մնում եգիպտական օրենքների իրավասությունից։

Մյուր արձեն ամենայան գործում նոր գեներատորների ստեղծման հետ կապված հարցերը։ Դա հույսն է հայտնում, որ ապագայում էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները կաճեն, ինչպես նաև կկատարելագործվեն էներգիայի փոխանցման եղանակները։

Ելույթ ունեցավ գործադիր կոմիտեի նախագահ Հենրի Քիսինջերը։ Նա հայտնեց, որ ԱՄՆ-ի և Սովետական Միության միջև առևտրական հարաբերությունների զարգացման հեռանկարները լավ են։ Ամերիկյան կողմը հետաքրքրված է ԽՍՀՄ-ի հետ առևտրական հարաբերությունների ընդլայնմամբ։ Ներկայումս ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև առևտրական հարաբերությունները կարգավորվում են 1974 թ. հոկտեմբերին ստորագրված «Հիմունքների» համաձայն։ Այդ փաստաթղթի 4-րդ հոդվածում ասված է, որ «Կողմերը, հաշվի առնելով իրենց տնտեսությունների զարգացման տարբերությունները, ձգտում են ընդլայնել առևտրական հարաբերությունները՝ հիմք ընդունելով ոչ խտրականության սկզբունքը»։

Ելույթ ունեցավ նաև Միացյալ Նահանգների առևտրի նախարար Փիթըր Փիթերսոնը։ Նա նշեց, որ ներկայումս ԱՄՆ-ի կոնգրեսում քննարկվում է մի նոր օրենսդրական նախագիծ, որը նախատեսում է ԱՄՆ-ի նախագահին լիազորություններ տալ ԽՍՀՄ-ի հետ առևտրական հարաբերությունները կարգավորելու համար։

Ելույթ ունեցավ նաև Ամերիկա-Սովետական հարաբերությունների ընկերության նախագահ Ջորջ Քենանը։ Նա հայտնեց, որ ընկերությունը ձգտում է ամրապնդել ամերիկա-սովետական առևտրական հարաբերությունները։

Ելույթ ունեցավ նաև Ամերիկա-Սովետական առևտրական պալատի նախագահ Ջոն Ռոբերտսը։ Նա հայտնեց, որ պալատը ձգտում է ընդլայնել ամերիկա-սովետական առևտրական հարաբերությունները։

Ելույթ ունեցավ նաև Ամերիկա-Սովետական առևտրական պալատի նախագահ Ջոն Ռոբերտսը։ Նա հայտնեց, որ պալատը ձգտում է ընդլայնել ամերիկա-սովետական առևտրական հարաբերությունները։

Այսպիսով, այդուհետև պետհատվածում կենտրոնացված պլանավորման համակարգը դադարեց գոյություն ունենալուց։ Բացի այդ, պետական վերահսկիչ կոորդինացիոն հաստատությունների վերացման հետ մեկտեղ օրենքը մասնավոր անձանց թույլ տվեց ձեռք բերել պետհատվածի ընկերությունների արժեթղթեր, իսկ մասնավոր հատվածի մասնագետներին՝ մտնել պետհատվածի ընկերությունների վարչական խորհուրդների կազմի մեջ։

1975 թ. ընդհանուր ազգային արտադրության մեջ առաջին անգամ պետհատվածի մասնաբաժինը նվազեց 54,5 տոկոսից՝ 53,3 տոկոսի։ Ի լրումն դրա՝ ՆԱՀ-ի կառավարական գերատեսչությունները քննարկեցին և հավանություն տվեցին պետական 95 կազմակերպությունների և հաստատությունների ապասազգայնացման հարցին, որոնց մեջ էին նաև Կահիրեի և Ալեքսանդրիայի փոխադրական ծառայությունները, ճանապարհների շինարարությունն ու շահագործումը, հողաբարելավումը, երկաթահանքային համալիրը, հեռահաղորդակցությունը և այլն։ Պետհատվածի գործարանները հնարավորություն ստացան սեփական վարկային ֆոնդի առկայության դեպքում և կամ օտարերկրյա վարկերով ֆինանսավորելիս, առանց նախնական թույլտվության ապրանքներ ներմուծել[5]։

Չնայած այս օրենսդրական վավերագրումներին և եգիպտական մամուլում լայնորեն գովաբանվող օգուտներին ու առավելություններին, որ ինչպես Եգիպտոսին, այնպես էլ զարգացած կապիտալիստական երկրներին իբր բերում է «բաց դռների» քաղաքականությունը, սկզբնական շրջանում եգիպտական տնտեսության մեջ օտարերկրյա ներդրումները ծայրահեղորեն դանդաղ էին աճում։ Դա առաջին հերթին վերաբերում էր օտարերկրյա մասնավոր ներդրումներին։ 1975 թ. 1974 թ. համեմատությամբ ո՛չ վարկային գործառությունների ապարիզում և ո՛չ էլ փոխառություններ տրամադրելու գործում արևմտաեվրոպական պետություններից կապիտալի հոսքի և Եգիպտոսի հետ տնտեսական համագործակցության ծավալի մեծացում չէր նկատվում։ 1976 թ. վերջին ՆԱՀ-ի տնտեսության մեջ ներդրված էր ընդամենը 75 մլն. դոլար օտարերկրյա մասնավոր կապիտալ[6]։

Օտարերկրյա կապիտալի թույլ հոսքից մտահոգված եգիպտական կառավարությունը դիմեց նոր միջոցների։ 1977 թ. վերանայվեց 1974 թ. «Արաբական և օտարերկրյա ներդրումների և ազատ գոտիների մասին» օրենքը և № 32 օրենքով նրա մեջ փոփոխություններ մտցվեցին[7]։ Գլխավոր

փոփոխություններից մեկն էր կապիտալի և եկամուտների ոչ թե պաշտոնական, այլ փոխանակման կուրսով երկրից արտարկելու թույլատրումը։ Փոփոխությունները ընդլայնեցին նաև արաբական և այլ օտարերկրացի ներդրողների կապիտալների հնարավոր ներդրման ոլորտները։ Մտցվեց ևս մի փոփոխություն, որի համաձայն Եգիպտոսի բաժինը համատեղ բաժնետիրական ընկերությունների մեջ չպետք է լիներ 50 տոկոսից պակաս, իսկ տեխնիկա և տեխնոլոգիա մատակարարող ընկերությունները պիտի ընդունեին համատեղ արտահանող ընկերությունների տեսք։

Այս միջոցառումների հետևանքով օտարերկրյա մասնավոր ձեռնարկատիրական գործունեության որոշ աշխուժացում նկատվեց, սակայն այդ աշխուժությունը արտահայտվեց ոչ թե արդյունաբերության կամ գյուղատնտեսության մեջ, ինչպես նախատեսում էր եգիպտական կառավարությունը, այլ անարտադրողական ոլորտներում։ «Պետհատվածի ձեռնարկությունները տեղական և օտարերկրյա մասնավոր հատվածի մրցակցությանը չդիմանալով աշխատում են սոսկ իրենց կարողության քառորդով, շատերը փակվում են։ Օրինակ, պետհատվածի 235 ձեռնարկություններից 70-ական թվականների վերջին մնացին միայն 7-ը»[8]։

Չնայած ինչպես գների մակարդակի, այնպես էլ բաշխումների ոլորտի անարխիայի դեմ կառավարության միջոցառումներին, աշխատավորական զանգվածների գրությունը շարունակում էր մնալ ծանր։ 1980 թ. հունվարին ընդունված 10 տոկոսով աշխատավարձը բարձրացնելու և ապրուստի թանկացման դեմ նպաստահատուցում մտցնելու մասին որոշումը պետհատվածի աշխատավորների համար ցանկալի արդյունք չտվեց, դրամարժեքի նվազման աղետավոր չափի հետևանքով, որը 80-ական թվականների սկզբին հասավ 60 տոկոսի[9]։

«Ինֆիթահի» տարիներին անթևակալելիորեն աճեց կաշառակերությունը։ Այդ հսկայական շղթան սկսվում էր միջնորդներից և հասնում մինչև կառավարության անդամները։ Այսպես, ԵԱՀ-ի վարչապետի նախկին տեղակալ Ա. Սուլթանը ամերիկյան «Վեստինգհաուզ էլեկտրիկ քորփորեյշընից» ստացել էր 332 հազ. դոլար՝ 30 մլն. դոլարի էլեկտրատեխնիկական սարքավորում մատակարարելու գործարքագիր ստորագրելու համար[10], իսկ «Բոինգ» ընկերությունը, կաշառելով քաղաքացիական օդատորմիղի մինիստր Նուհին, Եգիպտոսին վաճառեց խոտան շարժիչներով ինքնաթիռներ[11]։

Չէր լուծվում նաև բնակարանային սուր խնդիրը։ 1979 թ. Եգիպտոսը կարիք ուներ 1,11 մլն. բնակարանի, բայց կառուցվեց միայն 27 հազար։ 1980 թ. Կահիրեում անօթևանների թիվը հասավ 400 հազարի։ Տարեկան մոտ 80 հազ. կահիրեցիներ թողնում են իրենց բնակարանները։ Արագ աճող բնակվարձը նրանց կարողություններից վեր է, քանի որ տանտերերը պահանջում են երկրում միջին ամսական աշխատավարձը 100 անգամ գերազանցող մի գումար։

70-ական թթ. ընթացքում կառավարությունը ի վիճակի չեղավ լուծել նաև փոխադրամիջոցների խնդիրը։ Մոտ 10 միլիոնանոց Կահիրեի բնակչությանը հասնում էր ընդամենը 11 հազ. ավտոբուս։ Ալեքսանդրիա քաղաքի փոխադրամիջոցների գլխավոր վարչությունը ճապոնական «Միցուբիսի» ընկերությունից գնեց տրամվայի հնացած նմուշներ, հրաժարվելով ՀՍՍՀ-ի արտահանող կազմակերպությունների օգտավետ առաջարկից։ Այդ շահանենգության մասնակիցների հասցրած ընդհանուր վնասը գնահատվեց 8 մլն. դոլար[12]։

«Բաց դռներ» քաղաքականությունը դիպչում էր նաև գյուղատնտեսությանը։ «Ինֆիթահի» քաղաքականության շրջանակներում եգիպտական գյուղում իրագործված սոցիալ-տնտեսական միջոցառումները ուղղված էին խոշոր և միջին հողատերերի մեջ ձեռնարկատիրական գործունեության քաջալերմանը։ Արդեն հիշատակված 1971 թ. վերափոխումներից բացի, նախկին խոշոր հողատերերի 600 ընտանիքների հողերի և ունեցվածքի վերադարձման համար 1974 թ. վերսկսվեց մի նոր արշավ, իսկ 1975 թ. օրենք ընդունվեց հողատերերի և վարձակալների միջև հարաբերությունների փոփոխման վերաբերյալ։ Վարձավճարի չափը բարձրացվեց 20—25 տոկոսով, հողատերերն իրավունք ստացան լուծարքել վարձակալման պայմանագիրը, եթե գյուղատնտեսության տարեշրջանի ավարտից երկու ամիս անց վարձակալողը մուծած չլինի վարձավճարը։ Նոր հողերի յուրացման խնդիրը լուծելիս կառավարությունը ձգտում էր ներգրավել մասնավոր կապիտալին՝ քաջալերելով օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ խառն ընկերությունների ստեղծումը։ Ըստ եգիպտական մամուլի հաղորդումների, այդպիսի ընկերությունների ստեղծման վերաբերյալ համաձայնություններ ձեռք բերվեցին ԳՖՀ-ի, ԱՄՆ-ի, Հարավսլավիայի, Սուդանի հետ[13]։ Գյուղում տնտեսական «ազատականացման» քաղաքականությունը հանգեցրեց միջին ու խոշոր հողատերերի, հարուստ քաղաքացիների և առևտրականների կողմից հողերի ձեռքբերմանը։

Գյուղատնտեսության բնագավառում վերափոխությունները 70-ական ԹԹ. կեսին ծնեցին նոր երևույթ՝ գյուղատնտեսական առևտրի պակասորդ։ Գյուղատնտեսական ներմուծման և արտահանման միջև ճեղքվածքը սկսեց անընդհատ մեծանալ և չնայած այն ծրագրերին, որոնք նպատակամղված են գյուղատնտեսական արտադրության հետ մնալու պատճառների վերացմանը, երկրի բնակչության աճի զսպմանը, որևէ նախադրյալ չկա, որ մոտակա տարիներին Եգիպտոսը կկարողանա իրեն ապահովել սննդամթերքով։

Գյուղատնտեսական մթերքների հարաբերականորեն աննշան ներմուծողից վերջին տարիներին Եգիպտոսը, մասնավորապես ցորենի ներմուծման գծով, գրավում է աշխարհում 5-րդ տեղը։ Այսպես, 1979 թ. գյուղատնտեսական արտադրանքի ներմուծումը կազմեց 2 մլրդ. դոլար, որը երկու անգամ ավելի է գյուղատնտեսական արտահանումից և 7 անգամ գերազանցում է 1970—1973 ԹԹ. ներմուծումը[14]։

Պետական հատվածի դիրքերի վրա հարձակման և մասնավոր ձեռնարկատիրական գործունեության քաջալերման քաղաքականությունը նպաստեց հասարակության սոցիալական շերտավորման ուժեղացմանը՝ մի կողմից պորտաբույծ բուրժուազիայի եկամուտների աճին, մյուս կողմից աշխատավորական լայն զանգվածների կենսամակարդակի ցածրացմանը։

80-ական ԹԹ. սկզբին «բաց դռների» քաղաքականության կործանարար հետևանքների մասին սկսեց գրել նույնիսկ եգիպտական պաշտոնական մամուլը։ Այսպես, կառավարող Ազգային-ժողովրդական կուսակցության զեկուցագրում խոսվում էր եկամուտների բաշխման մեջ լուրջ խախտումների մասին։ Եվ իսկապես, 70-ական ԹԹ. երկրում ընթանում էր եկամուտների վերաբաշխման պրոցես, հօգուտ ունևոր խավերի։ 1982 թ. սկզբի տվյալներով ՆԱՀ-ի բնակչության 1/20 տիրում էր ազգային համախառն արտադրանքի 80 տոկոսին այն ժամանակ, երբ եգիպտացիների 2/3-ը կիսաքաղց էր։

«Ինֆիթահի» քաղաքականության շնորհիվ հարստացած եգիպտացիների նոր խավը Սադաթի օրոք իրեն վստահ էր զգում, իմանալով, որ համարյա որևէ վերահսկողության չենթարկվելով ցածր վարձատրվող պաշտոնյաների կողմից, որոնց կաշառում էր, ինքը կարող է հասնել այն ամենին, ինչն իրեն պետք է։ Իրենց շրջապատելով շքեղությամբ, նորահարուստները ոչ միայն չէին փորձում սքողել այդ, այլ նույնիսկ կարծես ի ցույց էին դնում։ Դրանով իսկ նրանք գրգռում էին

բնակչության ընչազուրկ մեծամասնությանը։ Հենց այդ անսքող հակադրություններն էլ դարձան ֆունդամենտալիզմի տարածման և տարասեռ կրոնական ծայրահեղական խմբավորումների ազդեցության ընդլայնման գլխավոր պատճառներից մեկը, որոնց զոհն էլ դարձավ Սադաթը, որը ֆունդամենտալիստների աչքում մարմնավորում էր «ինֆիթահ»՝ որպես «արևմտյան կենսաձևի» դրսևորման արատները։

Որպեսզի մեղմի ժողովրդական լայն զանգվածներին և հանգստացնի բուրժուազիայի տարբեր խավերին, ՆԱՀ-ի նոր պրեզիդենտ Մուբարաքը առաջ քաշեց «պայքար կաշառակերության դեմ» կարգախոսը։ Սադաթի մահին հաջորդած ժամանակամիջոցում եգիպտական նորահարուստների ֆինանսական շահանենգությունների բացահայտման հետ կապված խայտառակությունները ավելի մեծ թափ ստացան։ Ըստ որում զերծ չմնացին նույնիսկ Սադաթի ընտանիքի անդամներն ու մերձավորները, որոնք մասնակցություն էին ունեցել շահութաբեր գործարքներին։ Կառավարության կողմից վերահսկվող մամուլը, պրեզիդենտ Մուբարաքի իշխանության գլուխն անցնելուց անմիջապես հետո, պահանջեց պաշտոնատար այն անձանց հեռացումը, որոնք կասկածվում էին կաշառակերության մեջ։

Գիտակցելով սոցիալական աղաղակող հակադրությունների սպառնացող պայթյունի վտանգավորությունը, իշխանություններն ամեն կերպ փորձում են ժողովրդին համոզել, թե իրենց գլխավոր նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը՝ անհոգ շահամոլների սանձահարումը, այլասերված տարրերին պատասխանատվության ենթարկելը։

Այսպիսին է եգիպտական տնտեսության մեջ «բաց դռներիս» քաղաքականության ձախողումների իրական պատկերը՝ տնտեսական զարգացման անկախ ոտքու փոփոխման, ՍՍՀՄ-ի և մյուս սոցիալիստական երկրների հետ համակողմանի համագործակցությունից հրաժարվելու օրինաչափ հետևանքը։

Ж. А. МАНАСЯН

ИЗДЕРЖКИ ПОЛИТИКИ «ОТКРЫТЫХ ДВЕРЕЙ» В ЭКОНОМИКЕ ЕГИПТА

Начало 70-х годов охарактеризовалось значительными переменами в социально-экономической жизни Египта: пришедшее к власти новое политическое руководство провозгласило политику «открытых дверей».

В данной статье автор рассматривает проблему воздействия политики «открытых дверей» на экономику АРЕ в период нахождения у власти президента Садата.

Автор подчеркивает такие пагубные последствия этой политики как ослабление государственного сектора, усиление экономической зависимости АРЕ от развитых стран империалистического лагеря, усиление социальной дифференциации общества —рост доходов паразитической буржуазии с одной стороны, и снижение жизненного уровня широких трудящихся масс—с другой.

1 B. Hansen, K. Nashashibi. Egypt: foreign trade regimes and economic development. N., Y., 1975, p. 121.
2 А. Васильев, Социально-политическая эволюция Египта в 70-е годы—«Азия и Африка сегодня», № 6, 1978 г.
3 Law № 43 concerning the investment of Arab and foreeign Funds and Free Zones. Cairo, 1977.
4. ١٩٧٤-١٩٧٣ الاخبار، القاهره
5 Monitеur du commerc, international, P., 1978, №. 283, p. 20.
6 MEED. December, 26, 1976.
7 National Bank of Egypt. Economic Bulletin, 1978, № 2, p. 137.
8 За рубежом, № 24, 1979.
9 Նույն տեղում, № 14, 1980 թ.

10 International Herald Tribunne. 27.10.1978.
11 الاخبار، ٢١ـ١ـ١٩٧٩
12 О. Г. Герасимов, А. Г. Князев, Египет. Десять лет после Насера, М., 1980.
13 الجمهورية، القاهره، ٢١ـ٨ـ١٩٧٥
14 Foreign Agriculture, vol. 17, № 16.
15 «Правда», 16.02.1982.

Գ. Վ. ՆՈՎԻԿՈՎ

ՆԱՍԵՐԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ

Նասերիզմի գաղափարախոսությունը արտահայտում է Եգիպտոսի պատմության մոտ քսանամյա փուլի համար բնորոշ՝ հավասարակըշռված քաղաքականություն վարելու և միջին ուղուն հետևելու ձգտումը։ Նասերիզմի գաղափարախոսության ձևավորումը նման էր «ճոճանակի երերմանը, որի ձախ ճոճման լայնությունն անմիջապես հետևում էր աջ լայնությամբ»[1]։

• Նասերն անցել է բարդ և հակասական ուղի՝ պրեզիդենտական աթոռն զբաղնցրած փոխգնդապետից մինչև համաշխարհային մասշտաբի քաղաքական գործիչ, որը հաղթահարելով իր դասակարգային և դասային սահմանափակվածությունը կարողացավ հասնել մինչև իմպերիալիզմի ու սեփական խոշոր ու մասամբ նաև միջին բուրժուազիայի դեմ պայքարելու անհրաժեշտության և անխուսափելիության ըմբռնմանը։

Նասերի տեսական պրպտումները հիմնականում պայմանավորվում էին երկրում և դրանից դուրս ստեղծված կոնկրետ իրավիճակով։ Մինչև «Ազատ սպաներ» կազմակերպության ստեղծումը նրա քաղաքական հայացքները հաճախ համընկնում էին «մուսուլման եղբայրների» հայացքների հետ, բարձրանում մինչև ձախ խմբերի քաղաքական ծրագրերն հասկանալու փորձերը, սակայն, նա երբեք չհարեց նախահեղափոխական Եգիպտոսում գոյություն ունեցող որևէ քաղաքական հոսանքի։

Դաղափարախոսության նկատմամբ նվազագույն և ինչ-որ չափով ստիպողական հետաքրքրությունը պայմանավորեց Նասերի քաղաքական աշխարհայացքի ուշացած ձևավորումը։ Ինչպես նկատել է Ր. Բեյկերը, «Եգիպտական հեղափոխությունն ավելի շուտ մշուշոտ նացիոնալիզմի վրա էր խարսխված, քան հետևողական գաղափարախոսության»[2]։

Նասերի գաղափարախոսության որակական թռիչքների, տնտեսական և քաղաքական կյանքի կոնկրետ փոփոխություններին նրա գաղափարախոսության հարմարվելու մասին է վկայում այն հանգամանքը, որ Նասերի 18 տարի իշխանության գլուխ գտնվելու ընթացքում (հաշված նաև իշխանության ամրապնդման համար նրա մղած պայքարի տարիները) Եգիպտոսում ստեղծվեցին երեք քաղաքական կազմակերպություններ, հաստատվեցին վեց սահմանադրություններ, հինգ անգամ համարյա ամբողջությամբ փոխվեց Դաճլիճեերի կազմը և երեք անգամ՝ 1955, 1962. և 1968 թթ. ընդունվեցին վարչակարգի գործունեության ծրագրեր։ Հետևաբար, խոսել Նասերի գաղափարախոսության մասին երկրի կոնկրետ իրադրությունից կտրված, արմատապես սխալ է։

Նասերի գաղափարախոսությունը բաղկացած էր մի քանի տարրերից, որոնցից կարևորագույնները կապված էին եգիպտական իրականության երկու տասնամյակների ընթացքում տեղի ունեցած ներքին պրոցեսների աստիճանական իմաստավորման, իսլամական գործոնի և նացիոնալիզմի հետ։ Ոչ պակաս կարևոր դեր էր կատարում նաև Եգիպտոսի նկատմամբ արևմտյան երկրների դիրքորոշումը։ Մեզ համար առավել հետաքրքրություն ներկայացնում է Նասերի փիլիսոփայության առաջին բաղկացուցիչ տարրը։

Հեղափոխության առաջին փուլի տեսաբաններից Իհսան Աբդալ Կադդուսը գրել է. «Բանն այն է, որ տվյալ փուլում հեղափոխությունը կարիք ունի ավելի շուտ պրակտիկ գործերի, քան տեսական դատողությունների կամ վերլուծություններ»[3]։ Այսպիսի պարզունակ մոտեցման հետ համաձայնվել չի կարելի, քանի որ գաղափարական համապատասխան հենակետի ստեղծման անհրաժեշտությունն ակնհայտ էր, քանի որ ընդհուպ մինչև 60-ական թթ. սկիզբը Նասերի փիլիսոփայության անկյունաքարը դասակարգերի և դասակարգային պայքարի դոկտրյան մարքսիստական ըմբռնման ամբողջական մերժումն էր։ Հեղափոխության երկրորդ տարեդարձի տոնակատարության ժամանակ, 1954 թ. հուլիսի 23-ին, Նասերը հետևյալն հայտարարեց. «Ըստ էության, մեր պետությունը ամբողջ ժողովրդի պետություն է և արտահայտում է բոլոր դասակարգերի շահերը։ Այն բանվորների և գյուղացիների, ծառայողների և ուսանողների, կապիտալ ունեցողների և մտավորականների պետություն է, աղքատների և չունևորների, ուժեղների և հարուստների պետություն։ Մեր պետությունը ամբողջ ազգին է ծառայում»[4]։

Ջնայած վերևում բերված մեջբերումում Նասերը թվում է մի քանի դասակարգեր և դասեր, չպետք է մոռանալ, որ մինչև 1960—1961 թթ.

այդ ասելով ուղղակիորեն հասկացվում էր «հարուստներ» և «աղքատներ», Ավելի ուշ ի հայտ եկան «շահագործողներ» և «շահագործվողներ» հասկացությունները։

Այս փուլի Նասերի փիլիսոփայության ոչ պակաս կարևոր գործոնը պրոլետարիատի դիկտատուրայի խնդրի նկատմամբ խիստ բացասական վերաբերմունքն էր, որը մինչև վերջ անփոփոխ մնաց։ Ըստ Նասերի եգիպտական հեղափոխությունը պետք է լիներ հենց «համազգային հեղափոխություն», որը ազգային-աղատագրական հեղափոխություն լինելով առավել ընդունելի էր, և, հետևաբար, գաղափարական նվաղագույն հիմք պետք է դառնար ազգային միասնությանը։ Ընդհուպ մինչև 1960 թ. համագործակցելով եգիպտական բուրժուազիայի բոլոր խավերի հետ, երկրի տնտեսությունում բացառիկ իրավունքներ տալով նրան, վարչակարգը պետք է պաշտպաներ նրան նաև քաղաքական մարզում, շարունակելով ժրաջանությամբ քարոզել դասակարգային հաշտության տեսությունը. «Մենք ցանկանում ենք անցում կատարել «հետադիմական դիկտատուրայից դեպի ամբողջ ժողովրդի դեմոկրատիա..., մենք մեր երկրում ցանկանում ենք հասարակական հակասությունները լուծել խաղաղ ճանապարհով»[5]։ Այսպիսի գաղափարական կեցվածքը նաև հետևանք էր հեղափոխությունից առաջ և նրա առաջին տարիներին կուռ քաղաքական ծրագրի բացակայության, ինչպես նաև Եգիպտոսում գոյություն ունեցող որևէ քաղաքական հոսանքի ենթարկվելու եգիպտական ղեկավարության չկամության։ Սակայն, 60-ական թթ. սկզբին եգիպտական հասարակարգի «վերդասակարգայնության» տեսությունը անհաջողության կրեց։ «Մենք սխալ գործեցինք, հաշտություն կնքելով հետադիմական տարրերի հետ։ Մենք կարծում էինք, որ ինչքան էլ մեծ լինեն մեր հակասությունները, նրանք այնուամենայնիվ մեր ժողովրդի զավակներն են, և որ մենք մեկ բախտի տեր ենք։ Բայց փորձը ցույց տվեց, որ այդպես մտածելով մենք սխալվել ենք։ Փորձը ցույց տվեց, որ հետադիմությունը, լինելով իմպերիալիզմի հենարաններից մեկը, չի խորշում իր հերթին հենվել նրա վրա, որպեսզի խլի ժողովրդից նրա սոցիալական նվաճումները։ Փորձը ցույց տվեց, որ հետադիմությունը պատրաստ է դաշինքի մեջ մտնել իմպերիալիզմի հետ իր կորցրած դիրքերը վերականգնելու համար...։ Հետադիմությունը չարաշահեց ժողովրդական զանգվածների բարությունը, համբերությունը և բարեկեցությունը...։

Դրա համար էլ ես հեղափոխությունը շարունակելուց, նրա դրոշը ավելի բարձրացնելուց բացի, ուրիշ ելք չեմ տեսնում...։ Այժմ մենք պետք է ամբողջապես վերագնահատենք մեր հասարակարգի իդեալներն ու բարքերը նոր, ավելի խորը հիմքերի վրա[6]։

Ստեղծված իրավիճակում Նասերին անհրաժեշտ էր նոր սոցիալական հենարան գտնել՝ հեղափոխության խորացող ընթացքի համար։ Այդպիսի հենարան կարող էին դառնալ եգիպտական հասարակարգի այն բոլոր դասակարգերն ու խավերը, որոնք շահագրգռված էին արմատական փոփոխություններով։ Հենց այդ փուլում է շրջանառության մեջ մտցվում «աշխատավոր ժողովրդի զավակներ» տերմինը, որը հավաքական անուն էր նշելու համար «գյուղացիներին, բանվորներին, զինվորներին, մտավորականությանը և ազգային կապիտալին»[7]։ Նասերն ավելի է հեռու գնում։ Խարտիայի մասին զեկուցումում նա փորձում է որոշել եգիպտացիների՝ հասարակության այս կամ այն դասակարգին կամ խավին պատկանելու սահմանները. «Բանվոր է նա, ով ստանում է աշխատավարձ և արհմիության անդամ է։ Գյուղացի է նա, ով իր ընտանիքի բոլոր անդամների հետ տիրում է ոչ ավելի, քան 25 ֆեդդան հողակտորի, ապրում է իր հողակտորում և որի համար հողագործությունը գոյության հիմնական միջոց է։ Մտավորականներ են բոլոր նրանք, ովքեր գյուղատնտեսական աշխատողների մեջ չեն մտնում, չեն աշխատում արտադրության մեջ, մանր արտադրողներ և վինված ուժերի ներկայացուցիչ չեն»[8]։ Այս սահմանումները վկայում են իր հասարակարգի դասակարգային կառուցվածքի գնահատման խընդրում դասակարգային մոտեցում ի հայտ բերելու Նասերի ձգտման մասին։ Արձանագրելով, որ «Նոր սահմանադրությունը պետք է բանվորներին և գյուղացիներին տրամագրի ժողովրդական և քաղաքական կազմակերպությունների բոլոր մակարդակների տեղերի կեսը»[9], եգիպտական հեղափոխության տեսությունը նոր որակական թռիչք գործեց։ Այդ ժամանակ արդեն Նասերը մոտ էր սոցիալիզմի գիտական ըմբռնմանը։ Ի միջի այլոց, ինքը՝ պրեզիդենտը, երբեք չի նույնացրել իր աշխարհայացքը մարքսիզմի հետ. «մարքսիզմն ունի իր փիլիսոփայությունը, և նրա հետ հաշվի ընտել չի կարելի, բայց մարքսիզմը չի ընդունում կրոնը։ Այստեղ ես սկզբունքորեն նրա հետ համաձայն չեմ։ Նա ընդունում է պրոլետարիատի դիկտատուրան, խոսում մի դասակարգի մյուսի նկատմամբ բռնություն գործադրելու մասին։ Այս հարցերում մենք տարբեր կարծիքներ ունենք։ Հետևաբար, մեր սոցիա-

լիզմը մի բան է, իսկ կոմունիզմը՝ այլ բան»[10]։ Իսկ Գիզայում ևրաբական սոցիալիստական միության անդամների խորհրդակցությունում, 1966 թ. գարնանը Նասերն հայտարարեց. «Եթե մարքսիզմը պայմանականորեն ձևակերպենք 20 կետերով, ապա դրանցից տասնութի տակ ես պատրաստ եմ ստորագրել։ Միայն երկու կետ են մեզ տարանջատում մարքսիստներից. այն է՝ պրոլետարիատի դիկտատուրան և վերաբերմունքը կրոնի նկատմամբ»[11]։

Նասերը բազմիցս հայտարարել է, որ իր ուղին հեղափոխության ուղին է, որի վերջնական նպատակն է սոցիալիզմի եգիպտական մոդելի կառուցումը։ 1956 թ. Նասերն առաջին անգամ փորձեց եգիպտական հասարակությունը ներկայացնել եռամիասնական բանաձևով՝ «սոցիալիստական, կոոպերատիվ, դեմոկրատական»։ Նա պնդում էր, որ կոոպերատիվ, սոցիալիստական, դեմոկրատական է այն հասարակությունը, որում բարձրանում է կենսամակարդակը, կա սոցիալական արդարություն, վերացված են ֆեոդալիզմն ու շահագործումը, կապիտալի տիրապետությունը, հնարավորություններ են որոնվում երկրի յուրաքանչյուր բնակչի համար։ Չկան այլևս տերեր ու ստրուկներ։ «Մենք բոլորս քաղաքացիներ ենք մի հանրապետության։ Մենք հավասար ենք, ունենք սեփական արժանապատվության զգացում»[12]։ 1961 թ. հոկտեմբերի 16-ին ժողովրդին ուղղված ուղերձում պրեզիդենտը նկատեց. «Սոցիալիզմի ամենապարզ և ակնառու սահմանումն այն է, որ սոցիալիզմի ժամանակ ազգային եկամուտը բոլոր քաղաքացիների ընդհանուր սեփականությունն է։ Բայց առանց ազգային եկամտի օբյեկտիվ և արդարացի բաշխման, այն (սոցիալիզմը—Գ. Ն.) չի լինի բոլոր քաղաքացիների սեփականությունը»[13]։ Նույն ուղերձում Նասերն հետևյալը հայտարարեց. «Մենք այժմ կարիք չունենք նոր սոցիալիստական օրենքների, որոնք կհամալրեն արդեն մեր ունեցած սոցիալիստական օրենքները»։ Եգիպտական հեղափոխության հիմնադրույթը, որը կանխորոշում էր նրա առանձնահատուկ դիծը, մասնավոր սեփականության անձեռնմխելիության ընդունումն էր («մենք հավատում ենք հզհագործող սեփականության գոյությանը շահագործող սեփականության հետ միասին») և հողի ազգայնացման անհրաժեշտության ժխտումը («մենք հավատում ենք անձնական սեփականությանը՝ հողի մասնավոր սեփականությանը»)[14]։

Նասերը լավ հասկանում էր, որ սոցիալիզմի կառուցումը վայրկենական գործ չէ։ Նրանք ունենալով Ազգային ժողովի 11-րդ նստա-

շըրջանում, 1964 թ. նոյեմբերին նա ասաց. «Մենք առայժմ հեռու ենք սոցիալիստական պետություն լինելուց, մենք գտնվում ենք կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու անցումային շրջանում, քանի որ սոցիալիզմը չի նշանակում միայն մի քանի գործարանների ազգայնացում։ Մեր անցումային շրջանի սոցիալիզմը դեռ չի ձերբազատվել ֆեոդալիզմի մնացուկների, կապիտալիզմի և բյուրոկրատիզմի ազդեցությունից...։ Անցումը սոցիալիզմին՝ աշխատավոր ժողովրդի դեմոկրատական արդարացի հասարակարգին, կարող է իրագործվել միայն սոցիալիզմի ուժերի աճի ուղիով։ Սոցիալիզմը ժողովրդի իշխանություն է»[15]։

Իր ճառերում եգիպտական հեղափոխության առաջնորդը պնդում էր, որ Եգիպտոսում կառուցվող սոցիալիզմը ամբողջապես համապատասխանում էր երկրի զարգացման պայմաններին և որ երկրում կառուցվող դեմոկրատական, կոոպերատիվ, սոցիալիստական հասարակարգը «ազատված կլինի տնտեսական, քաղաքական և սոցիալական շահագործումից»[16]։

Եգիպտական հասարակության առաջընթաց շարժումն իմաստավորելու փորձերը դրսևորվեցին նաև դեմոկրատիայի հարցում։ 1959 թ. «Մեր սոցիալական հեղափոխությունը» գրքույկում Նասերը գրում էր. «Մեզանում կային կուսակցություններ և կար արևմտյան դեմոկրատիայի մոդել, որին կուրորեն հետևում էին։ Դեմոկրատիա այսուհետ չի նշանակում խոսքեր և կուսակցություններ։ Իսկական դեմոկրատիան այն է, որում անհատն ազատ կլինի, հասարակությունը նույնպես ազատ կլինի, և կկառուցվի առողջ հիմքերի վրա։ Այդպիսի դեմոկրատիան ստեղծվում է սոցիալիստական, կոոպերատիվ հասարակության կառուցելու ճանապարհով, որի ստեղծումից հետո չի մնա այնպիսի մարզ, որը կվաճառահանի երկիրը կամ կտիրապետի նրան»[17]։

Դեմոկրատիայի հարցերին է նվիրված Ազգային գործողությունների խարտիայի հինգերորդ գլուխը։ Այնտեղ արձանագրված է հետևյալը. «Դեմոկրատիան քաղաքական ազատություն է...»։ Քաղաքական դեմոկրատիան չի կարող անջատվել սոցիալական դեմոկրատիայից, քաղաքական դեմոկրատիան չի կարող իրագործվել որևէ դասակարգի միանձնյա տիրապետության պայմաններում։ Դեմոկրատիան ամբողջ ժողովրդի իշխանությունն է և նրա գերիշխանությունը»[18] և այլն։ Նասերը շատ էր սիրում «առողջ դեմոկրատիա» արտահայտությունը, բայց դերադասում էր չվերծանել այն։

Այսպես էր իրավիճակը քղթի վրա։ Իրականում ակնհայտ էր տիրապետող վարչակարգի խոսքերի և գործերի միջև եղած տարբերությունը, որում, անկասկած, արտահայտվում էր եգիպտական ղեկավարության մանրբուրժուական բնույթը։

Հենց ղեկավարության դասակարգային սահմանափակվածությունը, նրա վախը ժողովրդական զանգվածներից գործնականորեն ի չիք դարձրին եգիպտական ժողովրդի մասնակցությունը հեղափոխությանը, չնայած հակաիմպերիալիստական և հակաֆեոդալական հեղափոխության խնդիրները լուծելիս «նրանք («Ազատ սպաները»—Կ. Ն.) կարող էին աջակցություն գտնել առաջադիմական և դեմոկրատական լայն շրջանակներում։ Բայց նրանք այդ չարեցին մի շարք սուբյեկտիվ (ճշտորոշ գաղափարախոսություն, բավականաչափ քաղաքական փորձի բացակայություն), ինչպես նաև օբյեկտիվ (առաջադիմական կազմակերպությունների տարանջատվածություն, որը և նրանց միջև առաջացրել էր մրցակցական ոգի) պատճառներով»[19]։ Դեռ ավելին, երկրի ղեկավարությունը ոչ մի կերպ չէր ցանկանում թույլ տալ ժողովրդական զանգվածների մասնակցությունը պետության կառավարմանը և միայն ճակատագրական, ճգնաժամային իրադրություններում էր նասերը դիմում ժողովրդին։ Եգիպտական ժողովուրդը շատ հազվադեպ էր նախաձեռնություն դրսևորում և դուրս գալիս երկրի քաղաքական թատերաբեմ։ Այդ բանն ունի մի քանի պատճառ։ Առաջին հերթին պրեզիդենտ Նասերի անձը. «Նասերը օրենքի աղբյուր էր և հնարավորության սահմաններում օգտագործում էր առաջնորդի ժողովրդականությունը՝ ազգային միասնությունը առերևույթ պահպանելու համար։ Դրա համար էլ նա ժողովրդին համախմբում էր միայն իր անձով և, հասարակության բոլոր մնացած ընտրախավերին դեն նետելով, թույլ չէր տալիս միջանկյալ հաստատություններին կանգնել իր և սեփական պետական իշխանության և զանգվածների միջև։ Պատասխանատվությունն իր վրա վերցնելն հանգեցրեց ժողովրդի մեծամասնության անպատասխանատվությանը»[20]։ Երկրորդ, ժողովրդի պասիվ աջակցությունը ապահովվում էր կոնկրետ միջոցներով, այն է՝ ինքնակալության տապալումը, անգլիացիների վտարումը երկրից, հողային բարեփոխումները, ազգայնացումները և այլն։ Բացի այդ, ինչպես ճշտորեն նշել է Լ. Բինդերը, «Կառավարությունն ու ժողովուրդը նույնացվում էին ոչ միայն ձևական դեմոկրատական իմաստով, այլ նաև թույլատրելի քաղաքական դիրքերի սահմաններում և դափնեպսակները բաժանե-



կծոտիքյամբ իրենց ծոծրակի մազերն էին փրփրում, ականջները հատցրած՝ լսում էին, թե ինչ է ինձ ասում մեծ Ալի-Ռզա-խանը, որ նստած էր ոսկեզօծ գահի վրա, և ես, ինչպես ասացի, ոչ մի խոսք չէի հասկանում, որովհետև պարսկերեն չգիտեի։ Ինձ հետ էին միայն իմ թարգմանիչ Ղազարը և Ղուկասը, որ ինձ հետ էին եկել Թավրիզից։ Ղազարը ինձ ասում էր, որ շահը հարցնում է, թե ինչ եմ ուզում, որ նա անի ինձ համար։ Ես պատասխանեցի, որ ուզում եմ, որ նա հրամայի իր բոլոր զորքերին, որ ինձ հետ գան մինչև Թավրիզ, որպեսզի ես ինձ ապահով զգամ։ Ղազարը թարգմանեց իմ խոսքերը շահին, և նա ինձ պատասխանեց, որ ինքը ոչ միայն հրամայում է իր զորքերին, որ ինձ հետ գան մինչև Թավրիզ, այլև հրամայում է, որ ինձ հետ գան նաև Թեհրան, որպեսզի ես ինձ ապահով զգամ։ Ղազարը ինձ ասաց, որ շահը հրամայել է, որ ես ինձ համար ամեն տեղ ձիեր պատրաստեն, որ ես ինձ հետ վերցնեմ, ուր ուզեմ։ Ես շնորհակալություն հայտնեցի շահին, և նա ինձ հրամայեց, որ գնամ իմ տեղը և հանգիստ նստեմ։ Ես այդպես էլ արեցի։ Ինձ համար ամեն տեղ ձիեր պատրաստ էին, և ես ինձ հետ վերցրի ինչքան ուզեցի։ Ես ինձ հետ վերցրի Ղազարին, Ղուկասին և ևս մի հայ երիտասարդի, որ Ղազարի ազգական էր։ Ես ինձ հետ վերցրի նաև մի պարսիկ սպայի, որ ինձ ուղարկեց շահը, որպեսզի ես ինձ ապահով զգամ։ Ես ինձ հետ վերցրի նաև մի պարսիկ սպայի, որ ինձ ուղարկեց շահը, որպեսզի ես ինձ ապահով զգամ։[38] Եվ ոչ միայն շահը, այլև նրա մայրը, որ ինձ շատ էր սիրում, ինձ ուղարկեց իր մի հարազատ ազգականին, որ ինձ ուղեկցի մինչև Թավրիզ։

տակները և բոլոր ջանքերն ուղղեցին միշկուսակցական երկպառակություններին»[29]*, ապա նրա հայացքների էվոլյուցիան այդ հարցում ցույց է տալիս հետևյալ արտահայտությունը. «...քաղաքական կազմակերպության առկայությունը ռոցիալիստական միության շրջանակներում վերջինիս կուժեղացնի»*[30]*։*

Պրեզիդենտի հայացքների այսպիսի էվոլյուցիան վկայում է, որ լինելով սկզբում դիկտատորական վարչակարգ, Եգիպտոսը դանդաղ, բայց ճշտորեն գնում էր դեպի դեմոկրատիա։ Եվ մենք ոչ մի բարոյական իրավունք չունենք Եգիպտոսի պատմության այդ շրջանը միանշանակորեն դիկտատորական համարել։

Г. В. НОВИКОВ

НЕКОТОРЫЕ АСПЕКТЫ ИДЕОЛОГИИ НАСЕРА

Резюме

В статье изложены некоторые компоненты философии президента Насера, связанные с постепенным осмыслением внутренних процессов, имевших место в египетской действительности на протяжении двух десятилетий. Прослеживается постепенное отступление воззрений Насера от теории «надклассовости» египетского общества до приближения к научному пониманию социализма; рассматривается эволюция взглядов президента в отношении к народным массам; дается краткая характеристика «египетского социализма».

1 **И. П. Беляев, Е. М. Примаков,** Египет: время президента Насера, М., 1981, с. 266.

2 **R. W. Baker,** Egypt's uncertain revolution under Nasser and Sadat, London 1978, p. 34.

3 Մեջբերումն ըստ **Nissim Rejwan,** The Nasserist Ideology. Its exponents and critics, New York, Jerusalem, 1974, p. 70.

4 مجموعة خطب و تصريحات و بيانات الرئيس جمال عبدالناصر، القسم الاول، ص. ١٧٨
مجموعة خطب و...، القسم الثالث، ص. ٦٥

5 Նույն տեղում, էջ 565։

57 الميثاق، القاهرة، ١٩٦٢ ص. ٦٤.

8 **J. Waterbury,** The Egypt of Nasser and Sadat: the political economy of two regimes, New York, Princeton, 1983, p. 326.
9 المیثاق، ص ٥٢
10 **Г. А. Насер,** Проблемы египетской революции. Избранные речи и выступления 1952—1970 гг., М., 1979. с. 113.
11 Մեջբերումն ըստ Беляев, Примаков, *նշված աշխ., էջ 274։*
12 مجموعة خطب و...، ص القسم الثالث، ص ٣٢٦
13 Նույն տեղում, էջ 564։
14 Նույն տեղում, էջ 565։
15 الاهرام، القاهره، ١٩٦٤/١١/٢٤
17 جمال عبد الناصر، ثورتنا الاجتماعية، القاهرة، ١٩٥٩، ص ١٨٣—١٨٤
18 "المیثاق"، ص ٥٠، ٦٣—٦٤
19 **О В. Ковтунович,** Революция «Свободных офицеров» в Египте, М., 1984, с. 111.
20 **P. J. Vatikiotis,** Nasser and his generation, London, 1978, p. 198.
21 **L. Binder,** In a moment of enthusiasm: political power and the second stratum in Egypt, Chicago—London, 1978, p. 304.
22 **G. A. Nasser,** Philosophy of the Revolution, New York, 1955. p. 71.
23 Նաների հանդիպումները ԱՄՀ անդամների հետ Գիղայում 7—8 մարտի 1966 թ., ԱՄՀ փակ բյուլետեն։
24 Մեջբերումն ըստ **Vatikiotis,** *նշված աշխ., էջ 193—194։*
25 محمد حسنين تهيكل، السلام المستحيل و الديموقراطية الغائبة، بيروت، ١٩٨٠، ص ٢٣٥—٢٣٦
26 مجموعة خطب و...، القسم الثاني، ص ١٠١
27 "الاهرام"، القاهرة، ٣٠—٥—١٩٦٥
28 مجموعة خطب و...، القسم الاول، ص ٣١١
29 Նույն տեղում, էջ 214։
30 "الاهرام"، ٣٠—٥—١٩٦٥

ԻՐԱՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՀԱՐՑԵՐԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1970–ՆԿԱՏՎԱԾ ՓԲ.)

Մեծամասին տիպական շատ երևույթ, այդ թվում և իրաբան, ցույց է տալիս, որ իրավունքի զարգացման ընդհանուր օրինաչափությունների ճանաչումը հնարավորություն է տալիս ոչ միայն ճիշտ ընկալել անցյալը, այլև ավելի ճշգրիտ կանխատեսել ապագան։ Ուստի ոչ պատահական է, որ իրավունքի պատմության հարցերը միշտ եղել են ուշադրության կենտրոնում։ Ինչպես նշել է Ֆ. Էնգելսը, «Մեզ համար կարևոր է ոչ թե ընդհանրապես իրավունքի, այլ ժամանակակից բուրժուական իրավունքի պատմությունը, որովհետև մեր ամբողջ հասարակական կարգը հիմնված է մեծ մասամբ միայն նրա վրա»։ Ինչպես ցույց է տալիս իրավունքի պատմությունը, իրավունքի զարգացումը ենթարկվում է որոշակի օրինաչափությունների։ Դրանցից մեկը հետևյալն է՝ իրավունքի զարգացումը ենթարկվում է տնտեսական հիմքի զարգացմանը։ Իրավունքի զարգացման մյուս օրինաչափությունը կայանում է նրանում, որ իրավունքի զարգացումը ենթարկվում է հասարակության քաղաքական կարգի զարգացմանը։ Իրավունքի զարգացման երրորդ օրինաչափությունը կայանում է նրանում, որ իրավունքի զարգացումը ենթարկվում է հասարակության գաղափարական զարգացմանը։

ծունեության աշխուժացումը երկրի արհմիութենական կյանքում։ Այստեղ պետք է նախաձեռնության ցուցաբերեն նաև հենց իրենք արհմիությունները, շատ կարևոր է հենց իրենց՝ արհմիությունների վճռականությունն ու հետևողականությունը»[2],—ընդգծում էին կոմունիստները։

Իրաքի կոմկուսի ծրագրային փաստաթղթերում պատշաճ ուշադրության է արժանացած գյուղական շրջանների կանանց հետ տարվող աշխատանքին։ Այդ կանանց մեծամասնությունը անգրագետ էր։ 70-ական թվականներին ընդունված օրենքների և որոշումների մեծ մասը, որոնք վերաբերում էին կանանց ազատագրության հարցին, ուշադրությունից դուրս էին թողնում գյուղական շրջաններում բնակվող կանանց վիճակը։ Այդ կանայք անտեղյակ էին հասարակական-քաղաքական կյանքի ընդհանուր բարեփոխություններին։ «Դա վերաբերում է մինչև իսկ առավել գիտակից գյուղացիներին։ Եթե գյուղացին ինքը գիտակցում է, որ իրեն շահագործում են, ապա այդ նույն միտքը չի հասնում նրա կնոջը։ Մենք պետք է գտնենք որևէ մեկին, որը մշտապես և սերտորեն կապված լիներ գյուղի կյանքի հետ։ Այդպիսիները կարող էին լինել ուսուցիչներ, բժիշկներ։ Վերջին ժամանակներս մենք կարողացել ենք հասնել նրան, որ իրենք գյուղացիները՝ մեր կուսակցական ընկերները, սկսել են իրենց ընտանիքների անդամներին ներգրավել կանանց շարժման մեջ»[3]։ Նաիլհա Դուլեյմիի այս խոսքերը ակնբախ են դարձնում Իրաքի կանանց շարժման բարդությունն ու դժվարությունները։ 60-ական թթ. վերջին և 70-ական թթ. սկզբին երկրում տարվող առաջադիմական հասարակական-տնտեսական բարեփոխությունների ընթացքում հաստնացել էր նաև կանանց վերաբերող կոնկրետ միջոցառումների անցկացումը։ Իրաքի կոմկուսի ծրագրային փաստաթղթերում հասարակական կյանքում կանանց ներգրավման հարցին հատկացված են հատուկ բաժիններ։

1970 թ. սեպտեմբերին Իրաքի կոմկուսի II համագումարում ուշադրության է դարձված կանանց ամուսնության և ամուսնալուծության, կտակի, ժառանգության, տղամարդկանց հետ հավասար աշխատավարձի, աշխատավոր կանանց վիճակի բարելավման հարցերին։ Մեկ անգամ ևս ընդգծված է հասարակական կյանքում կանանց դերի բարձրացման կարևորությունը[4]։

1970 թ. Իրաքում ընդունվեց նոր աշխատանքային կոդեքս։ 151 հոդվածի համաձայն սահմանվում էին կանանց և տղամարդկանց հա-

ռահվիրաների աշխատանքի կեդրոն։ Հետաքրքիր է, որ մեր ժամանակ ռահվիրաների թիվը գնալով նվազում է։ Եթե 1959 թ. Հոկտեմբերի 1-ին մարզում հաշվվում էր 79 հոգի, ապա 1-ին տեղում էր միայն 1-ը։ Ինչպես տեսնում ենք, ռահվիրաների թիվը կրճատվել է 78-ով։ Ինչո՞վ է դա բացատրվում։ Արդյոք մեր երկրում ռահվիրայական աշխատանքի անհրաժեշտությունն անցել է։ Ոչ, իհարկե։ Ռահվիրայական աշխատանքի անհրաժեշտությունը մեր երկրում կա եղել և կա։ Ռահվիրաների թվի նվազումը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով։ Ինչպես հայտնի է, ռահվիրաների մեծ մասը կազմում են երիտասարդ մասնագետները, որոնք աշխատանքի են ուղարկվում բարձրագույն կրթություն ստանալուց հետո։ Ռահվիրայական աշխատանքի ժամանակ նրանք ստանում են աշխատավարձի 20 տոկոսի չափով հավելավճար, որը, իհարկե, խթանում է նրանց աշխատանքային ակտիվությունը։ Ռահվիրայական աշխատանքի ժամանակ նրանք ստանում են նաև բնակարան, որը, իհարկե, ևս խթանում է նրանց աշխատանքային ակտիվությունը։ Ռահվիրայական աշխատանքի ժամանակ նրանք ստանում են նաև բնակարան, որը, իհարկե, ևս խթանում է նրանց աշխատանքային ակտիվությունը։

1973 թ. մարտին հանդիպում ենք մեր ընկերներին «Դեղձուտ» հյուրանոցում։ Ընթրիքի ժամանակ նրանք պատմում են իրենց ռահվիրայական աշխատանքի մասին։ Ինչպես տեսնում ենք, նրանք չեն ափսոսում ռահվիրայական աշխատանքի անցկացրած տարիների համար։ Ընդհակառակը, նրանք գոհ են իրենց ընտրած ճանապարհից։ Ռահվիրայական աշխատանքի ժամանակ նրանք ձեռք են բերել մեծ աշխատանքային փորձ, որն էլ հետագայում մեծապես նպաստել է նրանց հետագա աշխատանքային հաջողություններին։

70-ական թթ. առաջին կեսին աշխատանքի ընդունվեցին նաև Ղազարոս Ղազարյանը, Ռուբեն Ղազարյանը, Ռուբեն Ղազարյանը, Ռուբեն

երկրների կանանց կազմակերպությունների միջև։ Կանանց միջազգային դեմոկրատական ֆեդերացիայի ջանքերով անց էին կացվում տարբեր միջոցառումներ, այդ թվում պարբերական թեմատիկ սեմինարներ։ Քննարկվում էին քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում կանանց դերի ուժեղացման հարցերը։

Ուշադրության արժանի է այն փաստը, որ 1970 թ. սեպտեմբերի 28-ին Բաղդադում կայացավ կանանց բողոքի ցույց, հաղարավոր կանանց մասնակցությամբ, ի աջակցություն պաղեստինյան շարժման։ Միաժամանակ հղվեց ուղերձ պաղեստինյան ազատագրության շարժման կազմակերպությանը, որի տակ ստորագրեցին ինչպես Իրաքի կանանց Լիգայի, այնպես էլ Քուրդստանի կանանց կազմակերպության դեկավարները, որոնք հանդես էին գալիս տեղական պայմանների կանանց և երեխաների վիճակի մտահոգությամբ։ 1973 թ. հոկտեմբերի 8-ին Իրաքի կանանց Լիգան դիմեց բոլոր կանանց իսրայելական ագրեսիան դատապարտելու կոչով, նշելով «Դիմում ենք կանանց վճռականորեն և միասնական շարքով կանգնել մեր ժողովրդի, ինչպես նաև Եգիպտոսի և Սիրիայի արաբական ժողովուրդների առաջադիմական ուժերի կողքին, դատապարտելով իսրայելական նոր ագրեսիան»։ Իրաքի կանանց Լիգայի ներկայացուցիչները մասնակցեցին նաև Ասիայի և Աֆրիկայի երկրների կանանց սիմպոզիումի աշխատանքներին՝ «Կինը և հասարակական զարգացումը» թեմայով, որ կայացավ 1975 թ. մարտին Ալեքսանդրիայում և կազմակերպված էր Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների համերաշխության կազմակերպության կողմից, կանանց միջազգային տարվա շրջանակներում։ Այդ սիմպոզիումի մասնակիցները առաջարկեցին ստեղծել Ասիայի և Աֆրիկայի կանանց կազմակերպությունների օգնության ֆոնդ և կոչ արեցին ամրապնդել համագործակցությունը միջազգային դեմոկրատական կազմակերպությունների հետ։ Այդ միջոցառմանը մասնակցող կանայք հույս հայտնեցին իրենց ավանդը ներդնելու ազատագրվող երկրների ժողովուրդների պայքարում՝ հանուն տնտեսության զարգացման, անկախության և իրենց ազգային հարստությունների վրա վերահսկողության, պետությունների հետ տնտեսական հարաբերությունների ամրապնդման, իրավահավասար իրավունքների հիմքի վրա։ Ընդունված փաստաթղթում նշված է հիտլերյան ֆաշիզմի դեմ պատմական հաղթանակի երեսնամյա հոբելյանի նշանակությունը և բան-



Ծոմայն ներեցեք, որ ձեզ հետ խոսելիս ես ոչ միայն ձեզ եմ նկատի ունենում, այլև ամբողջ ժողովրդին, որի ներկայացուցիչն եմ ես այս պահին։ Ես ուզում եմ ասել, որ ամբողջ ժողովրդի անունից

Դեռևս 1968 թ. Իրաքի կոմկուսի առաջարկած նախագծի[14] շատ դրույթներ արտացոլվեցին« Ազգային» գործողությունների խարտիայի էջերում։ Իրաքի հայրենասիրական ազգային առաջադիմական ճակատի ծրագրում ընդգծված է ժողովրդական մասսաների, այդ թվում և կանանց մոբիլիզացման կարևորությունը, «ժողովրդական մասսաների մոբիլիզացումը» բաժնում նշված է՝ «բանվորների, գյուղացիների, ուսանողների, ինտելիգենցիայի և կանանց համախմբումը արհմիությունների, ընկերությունների և միավորումների միջոցով օրինական իրավունք է, ընդգծված խարտիայում[15]։ «Հեղափոխությունը գտնում է, որ երիտասարդ տղաների և աղջիկների համախմբումը երիտասարդական կազմակերպությունների լայն ցանցի օգնությամբ կարևոր անհրաժեշտություն է»[16], «Հեղափոխությունը գտնում է, որ կնոջ մասնակցությունը բոլոր գոյություն ունեցող կազմակերպություններում, միություններում և հաստատություններում կարևոր անհրաժեշտություն է, որ պետք է իրականացնել լայնորեն»։

«Հեղափոխությունը աջակցում է տարբեր կանանց կազմակերպություններին, նպատակ ունենալով հնարավորություն տալ կանանց գրավել իրենց արժանի տեղը և ակտիվ զեր խաղալ հեղափոխական շինարարության գործում և ազգային պայքարում»[17]։

Ազգային գործողությունների խարտիան Իրաքի կանանց համար ապահովում էր տղամարդկանց հետ հավասար քաղաքական, տնտեսական, սոցիալական իրավունքներ։

«Բանվորական արհմիությունները, գյուղական միավորումները, ուսանողական և կանանց կազմակերպությունները կարող են ակտիվ զեր խաղալ հեղափոխական սոցիալական վերափոխումների իրականացման արագացման գործում և իրենց ավանդը ներմուծել քաղաքական, տնտեսական և մշակութային բնագավառներում նոր հաջողությունների ձեռքբերման ճանապարհին»[18] ընդգծված է խարտիայում։ «Սոցիալական նպատակներ» բաժնում, (կետ 7) հանգամանորեն ներկայացված են Իրաքի կանանց վիճակը և նրանց ազատագրման նշանակությունը ամբողջ հասարակության համար։ «...Կինը, կրելով ճնշման, շահագործման և հետամնացության բեռը, որը կրել է մեր ժողովուրդը, կրել է նաև իր մարդկային արժանապատվության բոլոր նվաստացումները, որոնք խեղանդամել են նրա ազատ, գիտակից և ստեղծագործական մասնակցությունը հասարակական և մարդկային կյանքում»[19]։ Հայրենասիրական ազգային առաջադիմական ճակատի



Դատելով է նրանից, որ «Մոցիալիստը վերադարձրեց ընթերցողներին իրենց ցուցաբերած ջերմեռանդ ընդունելության համար և տատանվեց դատը հրատարակելու թե ոչ, որովհետև նա իսկապես շահագրգռված էր, որ այդ գործը հրապարակ գար»[20]։

Իրավի առաջադրած այդ հարցը ամեն տեսակետից շատ էր կապված ազգային ոգու հետ, ինչպես նաև սերնդի հոգեբանության հետ։ Ամեն մի ազգ ունի իր ուրույն հոգեբանությունը, որ ձևավորվում է դարերի ընթացքում, ինչպես նաև ամեն մի սերունդ ունի իր հոգեբանությունը, որ ձևավորվում է նախորդ սերունդների ազդեցության տակ, բայց միևնույն ժամանակ ունենալով իր ուրույն գծերը։ Ազգային հոգեբանության մեջ ամենից ավելի կայուն են ավանդական գծերը, որոնք ամենից դանդաղ են փոխվում։ Սերնդի հոգեբանության մեջ ավելի հեշտ են փոխվում այն գծերը, որոնք պայմանավորված են ժամանակի առանձնահատկություններով։ Ազգային հոգեբանության մեջ ամենից ավելի կայուն են այն գծերը, որոնք ստեղծվել են ազգի պատմական երկարատև զարգացման ընթացքում

շատ կարևի է հանդիպել երկրի հասարակական, տնտեսական և մշակութային կյանքի բոլոր բնագավառներում։ Հենց այն հանգամանքը, որ կանայք ավելի հաճախ են դուրս դալիս տնային տնտեսության իրենց նեղ աշխարհից, ավելի լայնորեն են մասնակցում հասարակական արտադրության ոլորտում, առաջին պլան է մղում մանկական հաստատությունների հարցը, որոնց գլխավոր կազմակերպիչը Իրաքի կանանց համընդհանուր ֆեդերացիան է»[23]։ Այնուհետև նշված է, որ Բալդադում բացված «Բարաամ ալ-Տաուրա» մանկապարտեզը կանանց կազմակերպության վերջին հաջողություններից է։

Հոգատարությունը մատաղ սերնդի հանդեպ նույնպես նոր երևույթ է Արևելքի շատ երկրներում, այդ թվում և Իրաքում, որտեղ երեխաները 7—8 տարեկանից ստիպված էին իրենք իրենց ապրուստը հոգալ։ Ագգային գործողություններն հարտիայում հատկապես նշված է «Պետությունը նույնպես պետք է հոգ տանի նախադպրոցական շըրջանի երեխաների մասին, ընդարձակելով և զարգացնելով մսուրների և մանկապարտեզների ցանցը, քանի որ դրանք դաստիարակչական հաստատություններ և միջոցներ են, որոնք հեշտացնում են պետության կողմից կանանց առջև դրված խնդիրների իրականացումը»[24]։

Երկրի առաջադիմական ուժերի համատեղ ջանքերով ղեկավի չափով նվաղել է անգրագիտության տոկոսը՝ հասնելով 28-ի, բարձրագույն ուսումնական հաստատություններում ընդգրկված տղաների և աղջիկների թիվը գրեթե հավասարվել է։ Շեշտակի նվազել են երեխաների մահացության դեպքերը։ Սոցիալական վերափոխումների ծրագրում մեծ ուշադրություն է դարձված ժողովրդական լուսավորության։ 1978 թ. վերջին ուսուցման ոլորտում ընդգրկված էր երեխաների 90%-ը քաղաքում և 60%-ը գյուղական շրջաններում[25]։ Այս տվյալները ուշադրության արժանի են մի այնպիսի երկրի համար, ուր 1958 թ. հուլիսի 14-ի հեղափոխության նախօրեին բնակչության անգրագիտության ցուցանիշը 85% էր[26]։

Միաժամանակ ավելացել է արդյունաբերության ոլորտում ընդգրկված կանանց թիվը՝ 1972 թ. խոշոր արդյունաբերական կենտրոնների բանվորների ընդհանուր թվի (13,741) 11,3%-ը կանայք էին, 1973 թ. 13%-ը[27]։ 1976 թ., թվով 248,5 հազար արդյունաբերական աշխատողներից (չհաշվելով նավթարդյունաբերությունը), 20,53 հազար կամ ազգային արդյունաբերության աշխատողների 8,26%-ը կանայք էին[28]։

1977 թ. մարդահամարի տվյալներով, երկրի տնտեսությունում աշխատում էին 7—9 տարեկան 4590 երեխա, նրանցից մոտավորապես 40%-ը գյուղատնտեսության ոլորտում և նրան հարող ճյուղերում, 24%-ը վերամշակող արդյունաբերության և 14%-ը շինարարության բնագավառներում։ Երկրի տնտեսության մեջ զբաղված էին 10—14 տարեկան 141,608 երեխա, նրանց 63%-ը գյուղատնտեսության մեջ և հարակից ճյուղերում, շինարարության ոլորտում 15%-ը։ Առաջին տարիքային խմբում աղջիկները կազմում էին ընդամենը 16,5%, իսկ երկրորդում կեսը։

Աշխատունակ տարիքի ներքին ցուցանիշը՝ 15 տարեկան, որ սահմանված է օրենքով, համապատասխանում է ոչ լրիվ միջնակարգ կրթության ունեցողների տարիքին և կիրառվում է 80-ական ԹԹ. սկզբից։ Աշխատանքային օրենքը արգելում է 15—18 տարեկան դեռահասների ծանր և արտաժամյա աշխատանքի օգտագործումը գիշերային ժամերին։ Մինչև 16 տարեկան դեռահասների աշխատօրի տևողությունը 7 ժամից չպետք է գերազանցի (հոդված 36)։ Վերջին տարիներին ընդունված օրենքներն ու որոշումները (պարտադիր տարրական կրթության մասին օրենքը 1978 թ., երեխաների խնամակալությունը պետության կողմից, պետական մանկական հաստատությունների հիմնումը, դեռահասների ընդգրկումը պետական սեկտորի ձեռնարկություններում և այլ միջոցառումներ) զգալի չափով նվազեցրին աշխատող դեռահասների թիվը, որը 1977 թ. կազմում էր 229 հազար (15—19 տարեկան)[28]։

70-ական ԹԹ. վերջից 15—45 տարեկան բոլոր անգրագետ քաղաքացիների համար կազմակերպվեցին հատուկ դասընթացներ։ 1977 թ. մարդահամարի տվյալներով անգրագետ բնակչության տեսակարար կշիռը կազմում էր 53%՝ կանանց շրջանում՝ 70,7%, տղամարդկանց՝ 36%[29]։

Երկրի տարբեր շրջաններն էին ուղարկվում կուլտուր-լուսավորական բրիգադներ՝ կազմակերպված Իրաքի կանանց լիգայի կողմից, որոնք օգնում էին կարգավորել բժշկական սպասարկումը և վերացնել բնակչության անգրագիտությունը[30]։

Կնոջ ազատագրության ուղղությամբ կարևոր իրադարձություն էր ընտանիքի և ամուսնության մասին օրենքը։ Նշենք, որ դեռևս 1959 թ. ընդունված ընտանիքի և ամուսնության մասին միասնական կոդեքսը լրիվ նորություն էր։ Իրաքի հասարակական կյանքում և դիտվեց, որ-

պես 1958 թ. հուլիսյան հեղափոխության լավագույն ձեռքբերումներից մեկը։ Այդ մասին հիշատակում ենք, քանի որ հետագա տարիներին Իրաքի կանանց Լիգան բազմիցս անդրադարձել է այդ օրենքի կենսագործման վիճակին։ Ինչպես նշված է Իրաքի կանանց լիգայի հոդվածում, որ գրվել է «Ծխենշչինի միրա» միջազգային հանդեսի համար՝ «Իր բնույթով առաջադիմական կոդեքսը հավանության գտավ բնակչության լայն խավերի կողմից։ Բայց նրա ընդունումից քիչ անց հետադիմությունը անցավ հարձակման, կոդեքսում մտցված փոփոխությունները հանգեցրին նրան, որ 1963 թ. առաջադիմական միջոցառումների մեծամասնությունը ի չիք դարձավ»[31]։

Ընտանիքի և ամուսնության մասին նոր օրենքի նախագծում Իրաքի կանանց Լիգան նոր առաջարկություններ փոխանցեց։ «Կազմակերպվում էին լայն քննարկումներ, որոնց ժամանակ իրավաբանները, փաստաբանները, դատավորները, ինչպես տղամարդիկ, այնպես էլ կանայք, պարզաբանում էին այն կարևոր փոփոխությունների բովանդակությունը, որոնք նախատեսվում էր մտցնել ընտանիքի և ամուսնության մասին օրենքի մեջ»[32]։ Ինչպես արաբական շատ երկրներում, այնպես էլ Իրաքում ընտանիքի և ամուսնության մասին օրենքը քաղաքացիական օրենքի մի մասն է, և կարգավորում է գույքային և անձնական հարաբերությունները։ 1977 թ. այդ օրենքը հավելվեց նոր կետերով հօգուտ Իրաքի կանանց։ Փոփոխությունները վերաբերում էին ժառանգության իրավունքին, խնամակալությանը, ամուսնալուծությանը։ Ըստ նոր օրենքի, իրաքցի կինը իրավունք ունի ամուսնալուծության, ստանալով ամուսնուց ապահարզան։ Ամեցվածքի բաժանման ժամանակ կանայք տղամարդկանց հետ ունեն հավասար իրավունքներ։

«Ես չհիշեցի որոշման բոլոր կետերը,—գրում է «Իրաքի բաց աչքերը» վերը նշված հոդվածի հեղինակը,—սակայն դատելով իրաքցի ընկերուհիներիս հուզված և ուրախ տեսքից, պարզ էր՝ տապալվել էր կնոջ հանդեպ ունեցած վերաբերմունքի դարավոր ավանդույթների մի աշտարակ»[33]։

1976 թ. մայիսին կայացավ Իրաքի կոմկուսի III համագումարը։ Կուսակցությունը ուղենշեց կնոջ ազատագրության նոր հարցեր և խնդիրներ։ Կուսակցությունն այդ հարցին լուրջ ուշադրություն էր դարձնում և կոչ էր անում կոմունիստներին հետևողականորեն աշխատել կանանց, երիտասարդության, ուսանողության շրջանում՝ նպա-

տակ ունենալով նրանց միավորել և դարձնել այնպիսի կազմակերպություններ, որոնք իրենց ծրագրերը, գործունեությունը և ղեկավար մարմինների կառուցվածքը որոշելիս առաջնորդվեն ազգային դաշինքի սկզբունքներով[34]։

1970—1975 թթ. կին կուսակցականների թիվը զգալի աճեց։ Իրաքի կոմունիստները կարևոր խնդիր էին համարում կանանց կազմակերպություններում կոմունիստների գործունեությունը, այդ կազմակերպությունների աշխատանքներին ուղղություն տալու նպատակով։ Իրաքի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Ազիզ Մուհամմեդը 3-րդ համագումարի հաշվետու զեկուցման մեջ ընդգծել է, որ չնայած առաջադիմական ազգային հայրենասիրական ճակատի ծրագրում հաստատված է կանանց կազմակերպությունների գործունեության նշանակությունը, սակայն երկրում ստեղծված են կանանց և երիտասարդական կազմակերպություններում կոմունիստների գործունեությանը խանգարող պայմաններ։ «Ծավոք, այդ ջանքերը,—նշել է Ազիզ Մուհամեդը,—հաջողություն չունեցան (նկատի ունի Իրաքի կոմունիստների ջանքերը կանանց կազմակերպություններում գործելու համար բաաս կուսակցության հետ համագործակցության ջլալը), քանի որ շարունակվում էին հետևողական պահանջները Դեմոկրատական երիտասարդության միությունը, Իրաքի հանրապետության համընդհանուր միությունը և Իրաքի կանանց Լիգան արձակելու մասին, այսինքն այն կազմակերպությունները, որոնց ղեկավարության կազմում մասնակցում էին մեր ընկերները։

Այդ ամենը կուսակցությանը ստիպեց որոշում ընդունել իր գործունեությունը այդ կազմակերպություններում ժամանակավորապես ընդհատելու մասին, բարդություններից խուսափելու համար, նպատակ ունենալով պահպանել երկու կուսակցությունների համագործակցությունը ճակատում, հույս ունենալով բարենպաստ պայմանների, այդ կարևոր դեմոկրատական գործունեության բնագավառում գտնելու համագործակցության ավելի հարմար եղանակ»[35]։

Իրաքի կոմկուսի ղեկավարի այս խոսքերը բնութագրում են ինչպես Իրաքի կոմկուսի, այնպես էլ կանանց լիդայի գործունեության ողջ բարդությունը։ Քաղաքական այսպիսի մթնոլորտում Իրաքի կոմկուսը իր 3-րդ համագումարում ընդունեց կանանց ազատագրության մասին բանաձև։ Բանաձևում ընդգծված է բոլոր առաջադիմական ուժերի, հատկապես կանանց կազմակերպությունների ջանքերի ակտիվացման

ան՝ ուժեղացնելու, լուծելու համար հանդես եկած պատասխանատու խնդիրները։ Ահա հատկանշական մի հատվածը նրա «Ինչպե՞ս վերակառուցենք մեր տեսչությունը» հոդվածից, որտեղ նա գրում է. «Մեզ պետք է ոչ թե ձևական, այլ իրական ստուգում, թե ինչպես է կատարվում կուսակցության որոշումների ստուգումը։

Մեր կարծիքով, առաջադրված հարցադրումը որոշակիացնում է, որ ամբողջ շարժումը ակտիվիստների միաստիճան մասնակցության մասին չէ, այլ ներառում է նաև ակտիվիստների շրջանակին հարող զանգվածներին, որոնք ակտիվիստների հետ միասին կազմում են շարժման հասարակական հենքը։ Այդ հենքի մասնակցությունը շարժմանը ոչ միայն ակտիվ չէր, այլև հաճախ ուներ պասիվ բնույթ։

Մեզ համար կարևոր է նաև այն հանգամանքը, որ Իրավ հոդվածում ներկայացված տեսակետը հիմնված է ոչ թե ակտիվիստների ինքնագնահատականի, այլ նրանց հասցեին ուղղված քննադատությունների վրա։ Այդ քննադատությունները հեղինակը քաղել է «Ժողովուրդ» («Ազգ») թերթում 1943 թ.։ Այդ հոդվածում ներկայացված տեսակետը ոչ միայն ակտիվիստների, այլև հանրային մյուս գործիչների կողմից ենթարկվեց խիստ քննադատության։ Ահա թե ինչ է գրում այդ առթիվ «Ալ-Ֆաթհ» («Հաղթություն») թերթը 1943 թ.։ «Ոչ հոդվածագիր ճշտելու նպատակով հարցրեցինք մեր ակտիվիստներից, որոնք ներկա էին ժողովին, թե ինչպես կարելի է ասել, որ ամբողջ ազգը ընդունում է նրանց կարծիքը, եթե նրանք ակտիվիստների միայն փոքրամասնությունն են կազմում։ Նրանք պատասխանեցին, որ ամբողջ ազգը ներկայացնում է Կոմիտեն, որի մեջ մտնում են ակտիվիստների ներկայացուցիչները»[39]։

Ընդդեմ է այն միտքը, թե ակտիվիստները շարժման միակ ղեկավարն են։ Ազգային շարժման ղեկավարությունը ընդգրկում է նաև մի շարք հայտնի հասարակական գործիչների, որոնք ակտիվիստների հետ միասին ստանձնել են շարժման ղեկավարությունը։ Ակտիվիստների մասնակցությունը շարժմանը ոչ միայն չի խոչընդոտել, այլև նպաստել է նրա ընդլայնմանը։ Ակտիվիստների ներգրավումը շարժման մեջ ապահովել է նրա կազմակերպվածությունը, ինչպես նաև ազգային զանգվածների ակտիվ մասնակցությունը շարժ

1973 թ. սկսած զծվարին ապրելակերպին Իրաքի ու-
նեցող կիսալի գործընկերներին հարմարեցնելու ճանապարհին 70-ական թթ.
ունեցող շարժման ղեկավարները հասկացան, որ խոսքը միայն «Իրաքի ու-
նեցող ժողովրդի» մասին չէ, այլև ամբողջ արաբական աշխարհի մասին:

Իրաքում էլ ինչպես բոլոր զարգացող երկրներում, ժամանակ ան-
հրաժեշտ էր Իրաքի ապրելակերպում կատարելու որոշ փոփոխություններ,
որպեսզի ինքնաբուխ կերպով ստեղծվեր ներքին շուկա, որը կապահովեր
ներդրված կապիտալների շահութաբեր շրջանառությունը, ինչպես նաև
ապահովեր ժողովրդի ապրելակերպի որոշակի բարելավում: Սակայն
ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, ղեկավարները
չկարողացան հասնել այդ նպատակներին, քանի որ նրանք չէին ցանկա-
նում կամ չէին կարողանում հրաժարվել իրենց ավանդական ապրելա-
կերպից, որը հիմնված էր ռենտայի եկամտի վրա:

Լիգայի երեսնամյա պայքարի փորձը» հոդվածում գրում է. «1975—79 թթ. ծանր տարիների ընթացքում, երբ Լիգայի գործունեությունը դադարեցված էր, հայրենասիրական և առաջադիմական շարժումը համալրվեց երիտասարդ կանանց նոր խմբերով, որոնք լի էին խանդավառությամբ և պատրաստակամությամբ պայքարելու համար հանուն կանանց իրավունքների՝ մեր երկրում ստեղծված նոր պայմաններում»[42]։

Նկատելով 80-ական թթ. սկզբի Իրաքի կանանց շարժման ընթացքի օրինակներից, կարելի է ասել, ինչպես յուրաքանչյուր առաջադիմական շարժում, այնպես էլ Իրաքի բնակչության կեսը կազմող կանանց շարժումը ունի զարգացման պոտենցիալ հնարավորություններ։

К. Х. САМВЕЛЯН

КОМПАРТИЯ И ПРОГРЕССИВНЫЕ СИЛЫ ИРАКА В БОРЬБЕ ЗА ЭМАНСИПАЦИЮ ЖЕНЩИНЫ
(70-ые годы)

Резюме

В статье освещены вопросы эмансипации женщины в Ираке в 70-ые годы. Женское движение в стране зародилось и развивалось в специфических для стран Востока условиях.

Большое место уделено деятельности Иракской компартии. На различных этапах женского движения компартия Ирака действовала по трем основным направлениям: популяризация прогрессивных идей и марксистско-ленинских взглядов на проблему оосвобождения женщины, выявленне взаимосвязей между этим вопросом и общепатриотическнми проблемами, а также классовой борьбой рабочих и крестьян; выработка конкретных программных лозунгов, доведнне их до широких масс трудящихся женщин, изучение их положения и проблем: организационно, с целью вовлечь женщин в деятельность демократических организаций и приумножить число женщин—коммунисток.

В программных документах Иракской компартии уделено должное внимание работе с женщинами-крестьянками. В 70-е годы большинство законов и постановлений не распространялись на женщин сельских местностей. Они были изолированы от общих перемен в социально-экономической жизни.

Подчеркнута активизация деятельности Лиги иракских женщин в первой половине 70-ых гг. Показаны международные связи этой организации. На фактическом материале показаны некоторые изменения в положении женщин и детей, в связи с осуществлением программы социально-экономических преобразований. В 1975—1979 гг. для деятельности Лиги иракских женщин в стране не было возможностей. Уроки истории женского движения в Ираке убеждают, что это движение имеет потенциальные возможности.

В статье широко использованы программные материалы Иракской компартии (II, III съездов), Патриотического-национально-прогрессивного фронта. Большой интерес представляют статьи Назихи Дулеймн.

1 «Проблемы мира и социализма», 1980, № 3, с. 77.
2 Նույն տեղում, էջ 79։
3 Նույն տեղում, էջ 80։
4 Մարքսիզմ բառնամաջ ալ-հիզբ ալ-շույուղի ալ-Իրաքի, Բաղդադ, 1970, էջ 36—37,
К. Х. Самвелян, Рабочий класс Ирака в борьбе за упрочение демократического строя и демократию, 1979, Ереван, с. 23, 81, 94, 95.
5 Ան-Նասրա, Բաղդատ, 17, 5, 1975։
6 «Болгарская женщина», 1978. № 12, с. 13.
7 А. Ф. Федченко, Ирак в борьбе за независимость (1917—1969). — М., 1970, с. 258.
8 «Ան-Սակաֆա ալ-Ջադիդա», Բաղդադ, 1982, № 139, էջ 138։
9 *Տե՛ս* К. Х. Самвелян, Участие женщин Ирака в общественно-политической жизни страны (1945—1975 гг.) *Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ*, IX, *Արաբական երկրներ, Երևան, 1978, էջ 144։*
10 «Женщины мира», 1975, № 2.
11 Նույն տեղում, 1976, № 4, էջ 44։
12 Նույն տեղում։
13 «Устав и принципы действий Патриотического и национально-прогрессивного фронта в Ираке», Хельсинки, 1976, с. 14.
14 «Ալ-Ախբար», Բեյրութ, 17.11.1968։
15 «Устав и принципы действий Патриотического и национально-прогрессивного фронта в Ираке», с. 17.
16 Նույն տեղում։
17 Նույն տեղում։
18 Նույն տեղում, էջ 18։
19 Նույն տեղում, էջ 31։

20 Նույն տեղում։
21 Նույն տեղում։
22 «Арабская нация едина, ее миссия бессмертна», Политический отчет VIII регионального съезда. январь, 1974. Хельсинки, 1975, с. 187.
23 «Болгарская женщина», София, 1978, № 12, с. 13.
24 Устав и принципы..., с. 30.
25 «Болгарская женщина», 1978, № 12, с. 13.
26 «Азия и Африка сегодня», 1979, № 1, с. 44.
27 «Ան-Սահաֆա ալ-Ջադիդա», Բաղդադ, № 11 (77), 1975, էջ 5։
28 С. Г. Гришин, К. Х. Самвелян, — Ирак,—спр. «Рабочий класс Азии», М... 1985, с. 106.
29 Նույն տեղում, էջ 108, 101։
30 «Женщины мира», 1976, № 4, с. 44.
31 Նույն տեղում, 1975, № 2, էջ 42։
32 Նույն տեղում։
33 «Болгарская женщина», 1978, № 12, с. 13.
34 III Национальный съезд Иракской компартии, 1977, М., с. 68.
35 Նույն տեղում, էջ 39—40։
36 Նույն տեղում, էջ 169։
37 «Проблемы мира и социализма», Прага, № 111, 1980, с. 80.
38 Նույն տեղում, № 3, 1979, էջ 65։
39 «50 лет Иракской коммунистической партии» — (Строки из истории Иракской коммунистической партии). *տեղը և թիվը նշված չէ, էջ 10։*
40 «Проблемы мира и социализма», 1980, 111, с. 81.
41 «Политические партии», М., 1981, с. 140.
42 «Ան-Սահաֆա ալ-ջադիդա», Բաղդադ, 1982, № 139, էջ 115։

Ա. Գ. ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՃԱԿԱՏԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1978—1979 ԹԹ. ԻՐԱՆԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆԸ

1978—79 ԹԹ. իրանական հեղափոխության Ազգային ճակատ կազմակերպության մասնակցության հետ առնչվող հարցերի ուսումնասիրությունն ու լուսաբանումը չափազանց կարևոր է հեղափոխության շարժիչ ուժերից յուրաքանչյուրի տեղի ու դերի որոշման համար։

Իրանի ազգային բուրժուազիայի քաղաքական կազմակերպությունը՝ Ազգային ճակատը պայքարի մեծ փորձ ուներ։ Այն հիմնվել էր դեռևս ետպատերազմյան տարիներին Իրանում ծավալված ազգային-աղատագրական շարժման վերելքի ընթացում՝ 1949 թ.[1], ազգային բուրժուազիայի նշանավոր գործիչ Մուհամմադ Մոսադեղի նախաձեռնությամբ և վճռական դեր էր խաղացել Իրանի նավթարդյունաբերության ազգայնացման գործում։ 1953 թ. օգոստոսի 19-ին տեղական հետադիմական շրջանների և օտարերկրյա, հատկապես ամերիկյան իմպերիալիստների համատեղ ջանքերով Իրանում կազմակերպված պետական հեղաշրջումից և գեներալ Ֆ. Զահեդիի ռեժիմի հաստատումից հետո Ազգային ճակատն ամենադաժան ճնշումների ենթարկվեց և, փաստորեն, դադարեցրեց իր գործունեությունը։

Ազգային ճակատի վերածնման համար երկրում նպաստավոր իրադրություն ստեղծվեց 60-ական թվականների սկզբներին, երբ ներքին հակասությունների ծայրահեղ սրման պայմաններում Իրանի Մուհամմադ Ռեզա Փեհլևի շահը հարկադրված էր վերանայել իր տնտեսական, սոցիալական և քաղաքական ըմբռնումները և, որոշ զիջումների դիմել։ Ի հետևանք, ազգային բուրժուազիայի ուժերը հնարավորություն ստացան կարճ ժամանակով վերահամախմբվել այսպես կոչված Երկրորդ Ազգային ճակատում (Քարիմ Սանջաբիի գլխավորությամբ) և առաջ քաշել «ոչ հակամիապետական, բայց սահմանադրական»[2] կազմակերպությանը բնորոշ պահանջներ, որոնք հան-

գոմ էին սահմանադրական միապետության շրջանակներում բուրժուադեմոկրատական ազատությունների պահպանմանը[3]։

1963 թ. հունիսին սակայն, ռեակցիայի սաստկացման պատճառով երկրորդ Ազգային ճակատն ստիպված եղավ անցնել ընդհատակ։

1978—79 թթ. իրանական հեղափոխության նախօրեին երկրում ստեղծված որոշակի քաղաքական իրադրության պայմաններում Ազգային ճակատը, ինչպես և պետք էր սպասել, ասպարեզ եկավ, և ամենաակտիվ գործունեություն ծավալեց։ Նախկինում Ազգային ճակատի ճանաչված գործիչներից մի քանիսին հաջողվեց 1977 թ. նոյեմբերի 19-ին հիմնել Երրորդ Ազգային ճակատը[4], որի կազմի մեջ մտան Ազգային շարժման սոցիալիստական Լիգան՝ Քարիմ Սանջաբիի ղեկավարությամբ, Իրան կուսակցությունը՝ Շահփուր Բախթիարի ղեկավարությամբ, Իրանական ազգի կուսակցությունը՝ Դարիուշ Ֆորուհարի ղեկավարությամբ և մի շարք պրոֆեսիոնալ միություններ ու խմբեր, ինչպես՝ Մարդու իրավունքների Միությունը, Իրանական ազատության շարժումը, փաստաբանների միությունը և այլն։

Ազգային ճակատի վերակազմավորումն այս անգամ հնարավոր դարձավ ռեժիմի այսպես կոչված «լիբերալացման քաղաքականության» անցնելու հետևանքով, որը շահին պարտադրել էր ԱՄՆ-ի պրեզիդենտ Ջ. Քարտերը՝ ելնելով ստեղծված իրադրության մեջ շահի իշխանությունն ամեն կերպ պահպանելու միացյալ նահանգների անմիջական շահագրգռությունից և օգտագործելով մարդու իրավունքների պաշտպանության իր հանրահայտ դեմագոգիկ թեզը։

Օգտվելով առիթից, Ազգային ճակատը, որը կողմնակից էր «էվոլյուցիայի, և ոչ հեղափոխության»[5], առանց հապաղելու բաց նամակ հղեց շահին, որտեղ շարադրված էին պառլամենտը, ինչպես նաև պրոշահական, երկրում միակ օրինական «Ռաստախիզ-ե մելլի» («Ազգային վերածնունդ») կուսակցությունը լուծարքի ենթարկելու, բոլոր ընդդիմադիր կուսակցություններին և կազմակերպություններին ազատ գործունեության հնարավորություն տրամադրելու և այլ պահանջներ։ Բաց նամակին հետևեցին նույնանուն բովանդակությամբ մի ամբողջ շարք հանրագրեր[6]։

Չնայած Ազգային ճակատի կազմի խայտաբղետությանը, որը, բնականաբար, ենթադրում էր նրա մեջ մտնող տարբեր կուսակցությունների, խմբերի և առանձին գործիչների տեսակետների և նպատակների անխուսափելի տարբերություն, երբեմն նաև բացարձակ

հակադրություն, այսուհանդերձ, ինչպես վկայում են 1977 թ. դեկտեմբերին կազմակերպության ընդունած ծրագիրը և անմիջապես նրա գործողությունները, այս շրջանում Ազգային ճակատի հիմնական պահանջները հստակ էին և դարձյալ սահմանափակվում էին սահմանադրական միապետության շրջանակներում դեմոկրատական իրավունքների ձեռքբերմամբ[7]։

Դևսյերի հետագա զարգացումը և մեկուսացման հնարավորության հանդեպ ունեցած վախը, սակայն, հարկադրեց Ազգային ճակատին ընտրել գործունեության միանգամայն այլ ոճ, և, հրաժարվելով նամակներով ու հանրագրերով երբևէ հաջողության հասնելու հույսից՝ միանալ ժողովրդական շարժմանը, որն օրըստօրե ավելի էր ընդարձակվում։ Մանավանդ, որ նա իրեն դաշնակից գտավ բարձրաստիճան հոգևոր ղեկավարների շրջանում՝ ի դեմս այաթոլլա Շարիաթ-Մադարիի, որը նույնպես հակված էր համաձայնողականության, և բավարարվում էր սահմանադրական միապետության հաստատմամբ։ Ի դեպ, այս դաշնակցությունը լրջորեն հավակնում էր ժողովրդական շարժման ղեկավարի դերին։ Սակայն շատ շուտով ակնհայտ դարձավ նրա քաղաքական գծի անհեռանկար լինելը։ Երկրում տեղի էր ունենում ուժերի ծայրահեղ բևեռացման պրոցես. հակադրվելով շահի ստեղծած զինվորական կառավարությանը՝ ժողովուրդը կենտրոնացել էր արտասահմանում գտնվող այաթոլլա Խոմեյնու միահեծան ղեկավարության տակ, Խոմեյնու, որը չէր դադարում կրկնել, որ հաստատ է շահի ռեժիմը տապալելու սկզբունքին, և որ շահի կողմից հովանավորվող որևէ կառավարության կազմումը դավաճանություն կլինի հեղափոխությանը։

Հեղափոխական իրադարձությունների զարգացման որոշակի փուլում քաղաքական իրադրության այսպիսի փոփոխությունը դրդեց Ազգային ճակատին հիմնովին վերափոխել իր դիրքորոշումը։ Այլևս անկասկած էր, որ շահի ռեժիմի տապալման հավանականությունը ավելի քան իրական էր դառնում և Ազգային ճակատին լուրջ վտանգ էր սպառնում հեղափոխության հաղթանակի դեպքում անմասն մնալ իշխանությունից։

Անհրաժեշտ էր Խոմեյնու հետ որևէ ձևով համաձայնության գալ։ 1978 թ. հոկտեմբերի վերջերին Ազգային ճակատի ղեկավար Քարիմ Սանջարին շտապեց Փարիզ[8]։ Նա թաքուն հույս ուներ համոզել Խոմեյնուն քաղաքացիական պատերազմից խուսափելու համար գրավել

Նվազ անհամաձայնողական դիրքորոշում (որն, ըստ երևույթին, ի նկատի ուներ Մուհամմադ Ռեզա շահի տապալումն առանց Իրանում միապետության վերացման ընդհանրապես)։ Սակայն տեղի ունեցավ հակառակը։ Փարիզից վերադառնալուց հետո Սանջարին հայտարարեց Խոմեյնու հետ իր կատարյալ համաձայնության մասին, և հատկապես ընդգծեց, որ չի մտնի որևէ կառավարության կազմի մեջ այնքան ժամանակ, քանի դեռ երկրում կպահպանվի միապետությունը[9]։

Ավելորդ չէ նշել, որ Սանջաբիի՝ սահմանադրական միապետության գաղափարից հրաժարվելու և միապետության տապալման գաղափարն ընդունելու փաստն առիթ տվեց Ազգային ճակատի պառակտման։ Իրան կուսակցության ղեկավար Շահփուր Բախթիարն, օրինակ, որն առավել բուռն էր արտահայտում իր դժգոհությունը, մեղադրում էր Սանջաբիին այն բանում, որ վերջինս, իբրև, «մեծ զիջման էր գնացել՝ առանց որևէ բան շահելու»[10], և որ «...սահմանափակել էր հետագա մանևրման հնարավորությունը»[11]։

Այնուամենայնիվ, չնայած առկա տարաձայնություններին, Ազգային ճակատն այժմ գործունեության հիմնական նպատակ ընտրեց հետևյալ խնդիրների իրականացումը. միապետության վերացում, իսլամի վրա հիմնված կառավարության ստեղծում և պետության ապագա կառուցվածքի որոշման նպատակով հանրաքվեի անցկացում[12]։

Ազգային ճակատի այսպիսի սկզբունքային վերակողմորոշումը, որն սկիզբ դրեց նրա գործունեության նոր փուլին, միաժամանակ, շրջադարձային եղավ հեղափոխության ընթացքի համար և մեծապես որոշեց նրա ճակատագիրը։

Ազգային ճակատի նոր, անսպասելի դիրքորոշումը չափազանց բարդացրեց շահի վիճակը։ (Նրա հանձնարարությամբ 1978 թ. նոյեմբերի 5-ին գեներալ Ազհարին կազմեց զինվորական կառավարություն[13], որն առանց հապաղելու ձերբակալեց Փարիզից նոր վերադարձած Մանջաբիին և Ֆորուհարին[14]։ Որոշ ժամանակ անց, սակայն, ժողովրդական շարժման ճնշման տակ, ստիպված եղավ նրանց արձակել)[15]։

Այս կոնտեքստում իրանական իշխանությունների համար կենսական նշանակություն էր ստանում օպոզիցիային ինչ-որ ձևով ռեժիմի հետ հաշտեցնելու հարցը։ Ընդ որում, առավել իրականանալի էր դիտվում «քաղաքացիական» կոալիցիոն բուրժուական կառավարության ստեղծելու գաղափարի իրականացումը։

Ապագա կառավարության մեջ ընգգիմագիր հիմնական կազմակերպության՝ Ազգային ճակատի մասնակցությունն ապահովելու դիտավորությամբ 1978 թ. դեկտեմբերի 14-ին շահը հանդիպում ունեցավ Սանջաբիի հետ[16]։ Սակայն վերջինիս դիրքորոշումն այս հարցում անվերապահորեն բացասական էր։ Հանդիպմանը հաջորդող իր պաշտոնական հայտարարության մեջ Սանջարին մեկ անգամ ևս նշում էր, որ Ազգային ճակատը հրաժարվում է մտնել որևէ կառավարության կազմի մեջ, քանի դեռ շահը գտնվում է իշխանության գլուխ[17]։

Չհրաժարվելով, այնուամենայնիվ, քաղաքացիական կառավարություն ստեղծելու մտքից, որը, ստեղծված իրադրության պայմաններում միակ հուսադրող հնարավորությունն էր, Իրանի տիրող շրջաններն այն ղեկավարելու համար օպոզիցիայի շարքերից ռեժիմի համար ընդունելի թեկնածու էին որոնում։

Միացյալ նահանգները, որը լրջորեն մտահոգված էր Իրանի իրավիճակով, և նրա սպասելի, իր համար ոչ ձեռնտու հեռանկարներով, ամեն կերպ ձգտում էր ազդել դեպքերի զարգացման ընթացքի վրա։ Հայտնի է, որ ԱՄՆ-ը պաշտպանում էր «քաղաքացիական» կառավարություն ստեղծելու միտքը, և նրա ներկայացուցիչներն ամենագործոն մասնակցությունն էին ցուցաբերում օպոզիցիայի «չափավոր» գործիչների հետ այդ կապակցությամբ տարվող խորհրդակցություններին։ Ամերիկյան ծրագրի բովանդակությունն այսպիսին էր. ելնելով Իրանի ազգային շահերից (ավելի ճիշտ՝ Միացյալ Նահանգների իմպերիալիստական շահերից), շահը պետք է ժամանակավորապես հեռանա Իրանից, իսկ նրա պարտականությունները հանձնվեն այսպես կոչված Բարձրագույն կոնսուլտատիվ խորհրդին, որի կազմի մեջ կմտնեն Իրանի հիմնական քաղաքական ուժերի ներկայացուցիչները՝ շահի ընտրությամբ։ Գործադիր իշխանությունը կհանձնվի «քաղաքացիական» կոալիցիոն կառավարությանը՝ օպոզիցիայի «չափավոր» թևի որևէ, ատավել հարմար ներկայացուցչի գլխավորությամբ[18]։ Այս ծրագիրը, որի նպատակը ժամանակ շահելն ու միապետությունը փրկելն էր, իրականանալու դեպքում իրանական իշխանությունների համար բավական գրավիչ էր։ Սակայն այդ ուղղությամբ ձեռնարկված առաջին փորձն անհաջողության մատնվեց։ Ազգային ճակատի հայտնի գործիչներից մեկը՝ Ղոլամ Հոսեյն Սադեղին, որին Միացյալ Նահանգների խորհրդով հանձնարարվեց կազմել «քաղաքացիական» կառավարություն[19], և որն սկզբնապես տվել էր իր համաձայնությունը, ի վեր-

ջո հարկադրված եղավ հրաժարվել[20]։ Պատճառը ոչ միայն այն էր, որ նրան այդպես էլ չհաջողվեց համոզել օպոզիցիայի գործիչներին մտնել կառավարության կազմի մեջ, այլև, գլխավորապես Ազգային ճակատի դիրքորոշումն այս հարցում, որը վճռականորեն պահանջում էր շահի հեռանալը երկրից, և որին վերջինս համառորեն դիմադրում էր։ Նույն պատճառներով անհնարին եղավ նաև օպոզիցիայի մեկ այլ ներկայացուցչի՝ Մոզաֆֆար Բաղայիի կողմից կառավարության կազմումը[21]։

Ազգային ճակատն իր հայտարարություններում անընդհատ ընդգծում էր, որ պայքարը չի դադարեցնի, մինչև զինվորական կաբինետը հրաժարական չտա և շահը գահընկեց չարվի։

Ազհարիի կառավարությունը, որի գոյությունն արդեն միանգամայն անիմաստ և աննպատակահարմար էր դարձել, ստիպված էր հրաժարական տալ[22]։ Այս անգամ շահը, դարձյալ Միացյալ Նահանգների խորհրդով, հանձնարարեց կառավարություն կազմել Շահփուր Բախթիարին[23], օգտագործելով, անշուշտ, նաև Սանջաբիի հետ նրա բացահայտ տարաձայնությունների հանգամանքը, և թերևս, նաև այն, որ շահի անկեղծ խոստովանությամբ, այդ պահին Բախթիարը քաղաքացիական գործիչներից միակն էր, որ ընդունել էր նրա այդ առաջարկը[24]։

Ընդդիմադիր որոշ շրջանների աջակցությամբ Բախթիարը ձեռնամուխ եղավ իր ստանձնած միսիայի իրականացմանը։ Դրան անմիջապես հաջորդեց վերջինիս իր շարքերից վտարելու Ազգային ճակատի որոշումը[25]։ Հատկանշական է, որ նրա ղեկավարներից և ոչ մեկը հանդես չեկավ նոր կառավարության պաշտպանությամբ[26]։ Ազգային ճակատն այս անգամ ևս վճռականորեն հրաժարվեց մտնել կառավարության կազմի մեջ, և, ավելին, բոյկոտ հայտարարեց նրա գործունեությանը[27]։

Դեռևս 1979 թ. հունվարի 2-ին, ռադիոյով իր ելույթում Բախթիարը խոստանում էր գործող Սահմանադրության շրջանակներում ժողովրդի համար ապահովել իրավունքներ և ազատություններ, վերացնել մամուլի գրաքննությունը, ազատել քաղաքական բանտարկյալներին, թույլատրել քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների օրինական գործունեությունը։ Նա ժողովրդին կոչ էր անում անհապաղ դադարեցնել հակակառավարական ելույթներն ու գործադուլները[28]։

Շուտով, մեկ այլ առիթով, Բախթիարը, հայտարարեց ՍԱՎԱՔ—ի գործունեությունը սահմանափակելու, մամուլի ազատությունը վերականգնելու և երկրում ռազմական դրությունն աստիճանաբար վերացնելու իր մտադրության մասին[29]։

Բախթիարի բացահայտ դեմագոգիկ խոստումների նպատակն, անշուշտ, երկրում օպոզիցիայի դիմադրությունն ինչ-որ չափով մեղմելն էր։ Անմիջապես դրան էր ուղղված նաև նրա այն հավաստիացումը, թե շահը մտադիր է ամենամոտ ժամանակներս հանգստի մեկնել արտասահման[30]։

Ի պատասխան, ազգային ճակատը և ընդդիմադիր մյուս կուսակերպությունները հայտարարեցին, որ միապետության հարցում անհրաժեշտ է ընդունել արմատական որոշում, և որ միմիայն այդ դեպքում հնարավոր կլինի կայունացնել իրադրությունը[31]։

Հունվարի 11-ին Բախթիարը մեջլիսի հաստատմանը ներկայացրեց իր կառավարության կազմը և ապագա գործունեության ծրագիրը[32]։ Այն նախատեսում էր ցրել ՍԱՎԱՔ-ը, վերացնել ռազմական դրությունը, վերականգնել ժողովրդի քաղաքացիական իրավունքներն ու ազատությունները, արձակել քաղաքական բանտարկյալներին, անհապաղ պատասխանատվության ենթարկել հասարակական միջոցների կողոպտման և օրինախախտումների մեղավորներին։

Անդրադառնալով արտաքին քաղաքականության ընագավառին, Բախթիարը հայտնեց, որ իր կառավարությունը մտադիր է վերանայել Հարավ-Աֆրիկյան հանրապետության և Իսրայելի հետ հարաբերությունները, մասնավորաբար, դադարեցնել նավթի մատակարարումն այդ երկրներին։ Նա հայտնեց նաև, որ կառավարությունը ձգտելու է հարաբերություններ զարգացնել մուսուլմանական և հարևան պետությունների հետ[33]։

Բախթիարի կառավարության ծրագիրը, որը մշակված էր որոշակի դիտավորությամբ, անշուշտ, ավելի քան հավակնոտ էր, և, երկրում տիրող իրադրության պայմաններում, միանգամայն անիրականանալի։ Այն, ինչպես և պետք էր սպասել, հավանության չարժանացավ Ազգային ճակատի և ընդդիմադիր մյուս կազմակերպությունների կողմից, քանի որ խոստումների երկար և հրապուրիչ շարանում բացակայում էր ամենակարևորը՝ միապետության վերացման հարցը։

Բախթիարի կառավարության կազմումը որևէ չափով չնպաստեց երկրում լարվածության թուլացմանը։ Ավելին, միապետությունը փըր-

ձևելու իր չքողարկված միտումով այն էլ ավելի գրգռեց օպոզիցիային, որը համառորեն պահանջում էր շահի հրաժարումը գահից։

Ի վերջո, ժողովրդական հզոր շարժման ճնշման տակ 1979 թ. հունվարի 10-ին Մուհամմադ Ռեզա Փեհլևի շահն ստիպված եղավ երկրից հեռանալ[34]։ Սակայն նրա այդքան սպասված մեկնումը. ևո անկարող էր զսպել ժողովրդական շարժման ալիքը և վերջնական հաղթանակի հասնելու ընդդիմադիր ուժերի վճռականությունը։ Շահի մեկնումն իրավացիորեն գնահատելով որպես իրանական ժողովրդի պահանջներից մեկի իրականացում[35], Ազգային ճակատի ղեկավար Սանջաբին զգուշացնում էր, որ այդ, իրոք մեծ հաջողությունը «...չպետք է ստիպի մոռանալ այն երկար ճանապարհի մասին, որը դեռ առջևում է»[36]։ Ազգային ճակատը խոստանում էր «...շահի դինաստիայի և ամերիկյան կապիտալի շահերն արտահայտող ներկայիս կառավարության դեմ պայքարը շարունակել այնքան ժամանակ, մինչև այն կտապալվի»[37]։ Նույնանման բովանդակություն ուներ նաև Ֆրանսիայում գտնվող հոգևոր առաջնորդ այաթոլլա Խոմեյնիի՝ Իրանի ժողովրդին ուղղած դիմումը[38]։

Բախթիարը, սակայն, իշխանությունը պահպանելուն հուսահատ ճիգեր էր գործադրում։ Նրա խնդրանքով հունվարի 24-ին հրավիրվեց մեջլիսի արտակարգ նիստ, որը պետք է քննարկեր ՍԱՎԱՔ-ի ցրման, ինչպես նաև պաշտոնական դիրքի շարաշահման և կոռուպցիայի մեջ մերկացված պետական ծառայողներին դատական պատասխանատվության ենթարկելու հարցերը[39]։

Նրա այս հապճեպ միջոցառումն այլ բան չէր, քան օպոզիցիայի նուրբ զգացմունքների վրա ազդելու և նրան սիրաշահելու նպատակով արված ուշացած մի ժեստ, որը, սակայն, սպասված տպավորությունը չթողեց։

Անհաջողության հանդիպեց նաև օպոզիցիայի հետ քաղաքական կոմպրոմիս ձեռք բերելու համար Խոմեյնու հետ բանակցելու Բախթիարի փորձը, քանի որ Խոմեյնին կտրականապես հրաժարվեց նրան ընդունել, պահանջելով, որ նա, նախ, հրաժարական տա[40]։ «Ներկայիս կառավարությունը, որն ստեղծվել է շահի ցուցումով՝ երկրում կառավարման միապետական սիստեմի պահպանման նպատակով, այսօր այլ ելք չունի, քան հրաժարական տալ»,—մամուլի կոնֆերանսում հայտարարեց օպոզիցիայի ներկայացուցիչ Մեհդի Բազարգանը[41]։

1979 թ. փետրվարի 1-ին այաթոլլա Խոմեյնին երկարատև վտարանդիությունից վերադարձավ հայրենիք[42]։ Իրանական ժողովրդի ամենալայն զանգվածները նրան ցնծությամբ դիմավորեցին։ Հենց Մեհրարադ օդանավակայանում արած իր հայտարարության մեջ Խոմեյնին օպոզիցիայի բոլոր ուժերին կոչ էր անում համախմբվել՝ Իրանում միապետական կարգերը, ինչպես նաև շահի դրածո Բախթիարի կառավարությունը տապալելու համար[43]։ Ազգային ճակատն շտապեց հավաստիացնել, որ պատրաստ է հոգևորականության և ազգային-հայրենասիրական մյուս բոլոր ուժերի հետ միասին այսուհետև ևս վճռականորեն պայքարել հեղափոխության վերջնական հաղթանակի համար[44]։

Իզուր չէր, որ Բախթիարին այդքան անհանգստացնում էր Խոմեյնիի վերադարձը, և նա այդքան ջանքեր էր գործադրում արգելելու նրա մուտքն Իրան։

Այսուհանդերձ, չնայած ավելի քան ակնհայտ էր, որ իր կառավարությունն այլևս որևէ հեռանկար չունի, Բախթիարը համառորեն հրաժարվում էր իշխանությունից հեռանալ։

Փետրվարի 5-ին Խոմեյնին հայտարարեց Իրանի ժամանակավոր հեղափոխական կառավարության ստեղծման մասին և պրեմիեր-մինիստր առաջադրեց Ազգային ճակատի ղեկավարներից մեկին՝ Մեհդի Բազարգանին[45], որը տարիներ շարունակ համագործակցել էր նրա հետ և վայելում էր նրա վստահությունը։ «Բազարգանի անցումնային կառավարությունը,—ասաց Խոմեյնին մամուլի կոնֆերանսում,—պետք է գործի մինչև Իրանի Իսլամական հանրապետության հռչակումը։ Այն կնախապատրաստի և կանցկացնի նոր պառլամենտի ընտրություններ, որն, իր հերթին, կընդունի Իսլամական հանրապետության նոր Սահմանադրությունը»[46]։ Ժամանակավոր հեղափոխական կառավարության կազմի մեջ մտան Ազգային ճակատի ղեկավարներ Քարիմ Սանջաբին և Դարիուշ Ֆորուհարը, ինչպես նաև բուրժուական այլ կուսակցությունների գործիչներ։

Երկրում, փաստորեն, ստեղծվել էր երկիշխանություն, քանի որ Բազարգանի կառավարության կողքին ղեռևս պահպանվում էր Բախթիարի կառավարությունը, որը հենվում էր բանակի վրա, և որն ամեն առիթով սպառնում էր անհրաժեշտության դեպքում դիմել նրա օգնությանը։ (Ավելորդ չէ նշել, որ միացյալ Նահանգները ևս, որը մինչամայն որոշակի հույսեր էր կապում Բախթիարի կառավարության հետ, հեռանկարում, նրա տապալման դեպքում, չէր բացառում ռազմական հեղաշրջում իրականացնելու հնարավորությունը)։

Այս անգամ արդեն Բախթիարը փորձում էր բանակցությունների մեջ մտնել Բազարգանի հետ՝ երկու հակառակորդ ուժերի միջև «համաձայնության» կարգավորելու հնարավորությունները քննարկելու նպատակով։ Նա նույնիսկ խոստանում էր, ժողովրդական հուզումները դադարեցնելու պայմանով, համաձայնել Իրանի ապագա քաղաքական կարգի որոշման համար հանրաքվեի անցկացման[47]։

Սակայն դեպքերի հետագա, անսպասելի ընթացքն ինքնըստինքյան վճռեց իշխանության հարցը։ Փետրվարի 9-ի գիշերը շահական գվարդիայի ստորաբաժանումները հարձակում գործեցին ռազմա-օդային ուժերի՝ Թեհրանից ոչ հեռու տեղակայված Ֆարահաբադ մարզական բազայի վրա՝ հաշվեհարդար տեսնելու այն զինվորականների հետ, ովքեր մասնակցել էին ժողովրդական ելույթներին[48]։ Այս ակտն առաջ բերեց օպոզիցիայի ուժերի բուռն հակազդեցություն, և նրանց դիմադրությունը, փաստորեն, վերածվեց զինված ապստամբության։

Այս պարագայում, սխալ կերպով գնահատելով ստեղծված իրադրությունը, Իրանի զինված ուժերի ղեկավարությունը նպատակահարմար գտավ այլևս չմիջամտել իրադարձություններին. փետրվարի 11-ին Բարձրագույն ռազմական խորհուրդը որոշում կայացրեց քաղաքական հակադիր ուժերի բախման մեջ բանակի չեզոքության մասին[49]։ Իսկ մեկ օր անց Իրանի զինված ուժերի Գերագույն շտաբը, կայսերական գվարդիան և առանձին զորամասեր անցան հեղափոխության կողմը[50]։

Բախթիարին, որը զրկվել էր իր հիմնական հենարանից, այլ բան չէր մնում, քան հրաժարական տալ[51]։

Փետրվարյան զինված ապստամբությունը հաղթանակեց, իշխանությունը երկրում, այդ անգամ արդեն ամբողջապես, անցավ Բազարգանի գլխավորած ժամանակավոր կառավարությանը։ Փետրվարի 12-ին Բազարգանը ռադիոյով իր ելույթում հայտնեց, որ Իրանի ողջ զինված ուժերը միահամուռ կերպով միացել են ժողովրդին, և որ միապետությունը վերջնականապես տապալվել է[52]։

Փետրվարի 14-ին ՍԱՎԱՔ-ը պաշտոնապես լուծարքի ենթարկվեց[53]։

Փետրվարյան զինված ապստամբության հաղթանակն, անտարակույս, պետք է գնահատել որպես 1978—79 թթ. իրանական հեղափոխության ամենակարևոր նվաճումներից մեկը, որը, միաժամանակ, սկզբնավորեց նրա զարգացման որակապես նոր փուլը։

Օգտվելով համաժողովրդական աջակցությունից և հաջողությամբ դիմակայելով հակահեղափոխական ուժերի անընդհատ ոտնձգություննե-

րին, Բաղարգանի ժամանակավոր կառավարությունն սկսեց իրականացնել իր քաղաքական գիծը, որն ընդգծված դեմոկրատական և հակաիմպերիալիստական ուղղվածություն ուներ։

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ներքին քաղաքականության բնագավառում կառավարության առաջնահերթ խնդիրներից մեկը պետական ապարատի վերջնական զտումն էր պրոշահական տարրերից և սոցիալ-տնտեսական ու քաղաքական վերափոխումների իրականացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը։

Ինչ վերաբերում է արտաքին քաղաքականությանը, ապա կառավարության առաջին իսկ միջոցառումներն աներկբայորեն վկայում էին ազգային անկախության ապահովման ու պահպանման նրա հաստատ մտադրության մասին։

Մարտի 13-ին Բաղարգանի կառավարությունը պաշտոնապես հայտարարեց ՍԵՆՏՕ ագրեսիվ բլոկից Իրանի դուրս գալու մասին[54]։ Ավելի ուշ կառավարությունը հեղյալ հայտարարեց Արևմուտքի հետ իր բոլոր ռազմական պայմանագրերը։ Նա հրաժարվեց նաև Մերձավոր Արևելքում իմպերիալիզմի ժանդարմի իր ավանդական դերից և հավաստիացրեց, որ բոլոր, հատկապես հարևան երկրների նկատմամբ Իրանի դիրքորոշումն, այսուհետև, լինելու է միայն բարեկամական[55]։

Կառավարությունը պաշտոնապես հայտարարեց Իսրայելի հետ բոլոր տեսակի հարաբերություններն ընդհատելու մասին[56]։ Դիվանագիտական կապերը խզվեցին նաև Հարավ-Աֆրիկյան Հանրապետության հետ[57]։

Ուշագրավ էր Բաղարգանի կառավարության նավթային քաղաքականությունը։ Հայտնի է, որ հեղափոխական իրադրության պայմաններում, հատկապես նավթագործ բանվորների տևական գործադուլների և մի շարք այլ հանգամանքների պատճառով նավթի հանույթն ու արտահանությունը չափազանց կրճատվել էր։ Արդեն փետրվարի վերջերին պրեմիեր-մինիստրի տեղակալ Յազդին հայտարարեց, որ կառավարությունը ամենամոտ ժամանակներս կարգավորելու է նավթի արտահանությունը, և որ դրանից ստացվող եկամուտներն այլևս չեն ծախսվելու ղևնր գնելու նպատակով[58]։

Կառավարությունը մտադիր էր պետական մենաշնորհ սահմանել նավթի վաճառքի վրա և նավթը վաճառել բացառապես Իրանական ազգային նավթային Ընկերության, և ոչ խոշոր ընկերությունների միջազգային Կոնսորցիումի միջոցով[59]։

Հայաստանի իրանական դարերի հնագույն քաղաքակրթության, նրա հոգևոր ու նյութական մշակույթի ուսումնասիրության գործում մեծ ներդրում ունեցած Ստեփան Մալխասյանցի անունը հայ ժողովրդի պատմության մեջ միշտ էլ պատվավոր տեղ կգրավի, որովհետև նա իր ողջ կյանքը նվիրեց հայրենի հողի ու ժողովրդի անցյալի ուսումնասիրությանը։ Ծնվել է 1901 թվականին Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի) աղքատ գյուղացիական ընտանիքում։ Հայրը՝ Գրիգոր Մալխասյանցը, ստիպված է եղել հեռանալ հայրենի գյուղից և ապրել Ալեքսանդրապոլում։ Ստեփանը 18-ին ավարտել է քաղաքի ռեալական դպրոցը[62], նկարել է տեղի հնությունները, ուսումնասիրել հին ճարտարապետական հուշարձանները, հետաքրքրվել հնագիտությամբ։ Ուսումնական տարիներին նա ծանոթացել է Ալեքսանդրապոլի պատմության և հնագիտության նշանավոր գիտնական Նիկողայոս Մառի հետ, որի ազդեցությունը զգալի է եղել նրա հետագա գիտական գործունեության վրա։

1921 թվականին Ստեփան Մալխասյանցը ընդունվում է Երևանի համալսարանի պատմության ֆակուլտետը, որտեղ նրա ուսուցիչներն են եղել Հրաչյա Աճառյանը, Մանուկ Աբեղյանը, Հակոբ Մանանդյանը, Գևորգ Ղափանցյանը, Ստեփան Մալխասյանցի ընկերն ու ուսուցիչը Գևորգ Ջահուկյանը, Ստեփան Մալխասյանցի ընկերն ու ուսուցիչը Գևորգ Ջահուկյանը, Ստեփան Մալխասյանցի ընկերն ու ուսուցիչը Գևորգ Ջահուկյանը։

Ուսանողական տարիներին Ստեփան Մալխասյանցը ակտիվ մասնակցություն է ունեցել հնագիտական արշավախմբերի աշխատանքներին։ Նա մասնակցել է Արագածի հնությունների ուսումնասիրությանը, Գառնիի, Գառնահովիտի, Գեղարդավանքի, Գեղամա լեռների, Ծաղկաձորի, Ծիծեռնավանքի, Հաղարծնի, Հաղպատի, Հառիճի, Հոռոմոսի, Մաստարայի, Մեծամորի, Նորատուսի, Նորավանքի, Սանահինի, Սևանի, Վանի, Վարդենիսի, Տեղի, Քարահունջի, Քասաղի, Օշականի, Պտղնիի, Ռեշտունիի, Ֆիրուզի, Ֆոլադլուի, Ֆոնտանի, Ֆոնտանի, Ֆոնտան

մուլի կոնֆերանսում, անդրադառնալով կառավարության գործունեությունը խոչընդոտող հանգամանքներին, Մանջարին, շահի ռեժիմի տնտեսական, բաղաքական և վարչական սիստեմի մնացուկների պահպանման, կառավարության գործերին ՍԱՎԱՔ-ի և օտարերկրյա հետախուզության գործակալների միջամտության և ուրիշ պատճառների հետ միասին հավասարապես վնասակար համարեց և այն, որ առանձին խմբավորումներ, մասնավորաբար Իսլամական հեղափոխական կոմիտեները հաճախ անտեսում են կառավարության որոշումները և կամայականություն են դրսևորում[63]:

Եվ իրոք, հեղափոխության հիշյալ փուլում Խոմեյնու կողմից նշանակված ժամանակավոր կառավարության գործունեության շրջանակները առավել չափով սահմանափակված էին և, Բազարգանի իսկ խոստովանությամբ, բազմաթիվ կազմակերպություններ և քաղաքական խմբավորումներ դրեթե չէին ենթարկվում կենտրոնական կառավարությանը և դուրս էին նրա հսկողությունից[64]: Իրավիճակով լրջորեն անհանգստացած Բաղարգանը հուլիսի 5-ին հեռուստատեսությամբ իր ելույթում ուղղակի հայտարարեց, որ իր կառավարության առջև դրված նպատակները հնարավոր չի եղել իրականացնել գլխավորապես այն բանի հետևանքով, որ «հեղափոխական կոմիտեները մշտապես անարգել միջամտում են կառավարության գործերին և առաջ են քաշում «հակասական պահանջներ»[65]:

Պատահական չէ, որ այս շրջանում Բազարգանի բազմաթիվ ելույթների հիմնական թեման կառավարության և Իսլամական հեղափոխական խորհրդի բացահայտ անհամաձայնությունն էր՝ իր ամենատարբեր արտահայտություններով: Նա չէր դադարում արձանագրել այն իրողությունը, որ կառավարության և Իսլամական հեղափոխական խորհրդի փոխհարաբերություններում գոյություն ունեն մի ամբողջ շարք պրոբլեմներ, և որ առկա է «վերջինիս չափից դուրս միջամտությունը պետական գործերին»[66]:

Նոյեմբերի 6-ին Բազարգանը հրաժարական տվեց[67]: Պետական բոլոր գործերի վարումը Խոմեյնին հանձնարարեց Հեղափոխական խորհրդին, որի վրա էր դրվում նաև սահմանադրություն ընդունելու համար հանրաքվեի անցկացման նախապատրաստությունը, պրեզիդենտի և մեջլիսի ընտրությունները:

Իսլամական հեղափոխական խորհրդի նիստում կայացված որոշման համաձայն Խորհուրդն իր վրա էր վերցնում երկրի կառավարման

գործը, իսկ հրաժարական տված պրեմյեր-մինիստր Բազարգանի կառավարության անդամները առայժմ պետք է շարունակեին իրենց պարտականությունների կատարումը՝ Իսլամական հեղափոխական խորհրդի անմիջական հսկողության տակ[68]։

Բազարգանի հրաժարականով 1978—79 թթ. իրանական հեղափոխության մեջ ազգային բուրժուազիայի Ազգային ճակատ կազմակերպության մասնակցությունն, իրականում, ավարտվեց։ Այն, նախ և առաջ, տրամաբանական հետևանքն էր հեղափոխության մեջ հոգևոր և լիբերալ բուրժուական ուժերի կոնֆլիկտի, ուժեր, որոնք իրենց սոցիալ-տնտեսական և քաղաքական ըմբռնումների տարբերությամբ հանդերձ, հավասարապես ձգտում էին պետական և տնտեսական գերիշխանության։

Իսլամական ղեկավարները լավ էին գիտակցում, որ դեմոկրատիայի պայմաններում ազգային բուրժուազիան իր տնտեսական առավելության բերումով ժամանակի ընթացքում դուրս կմղեր կրոնական գործիչներին նաև պետական իշխանությունից։ Այդ պատճառով էլ հեղափոխության զարգացման որոշակի փուլում համագործակցելով ազգային բուրժուազիայի կազմակերպության՝ Ազգային ճակատի հետ, և հաջողությամբ օգտագործելով նրա լիբերալ-բուրժուական միտումները, Իսլամական հանրապետության հաստատումից հետո անցան նրան մեկուսացնելու քաղաքականության։

Մյուս կողմից, Ազգային ճակատը, որն սկզբնապես նույնիսկ ակնկալում էր ժողովրդական շարժման ղեկավարությունն իր ձեռքը վերցնել, հաջողության չհասավ, քանի որ հոգևոր օպոզիցիայի համեմատությամբ հեղափոխության մեջ նրա նպատակներն առավել սահմանափակ էին, որը և նրան դրկեց ժողովրդական լայն զանգվածների աջակցությունից։ «Ազգային ճակատը և Սանջաբին այսօր այնպիսի վիճակում են,—ասում էր Իրանի ժողովրդական կուսակցության քարտուղար Ն. Քիա-Նուրին Իսլամական հանրապետության հաստատման նախօրյակին,—որ նրանց պաշտպանող ուժերը հեռացան նրանցից։ Նրանք լրենց քաղաքական կշիռը միանգամայն կորցրել են և նրանց միայն մնում է մնացել»[69]։

Հետագայում, Իսլամական Հանրապետության քաղաքականությունն իր ընույթով ընդհանրապես բացառեց Ազգային ճակատի ակտիվության վերականգնման որևէ հնարավորություն։

А. Г. СТАМБОЛЦЯН

УЧАСТИЕ НАЦИОНАЛЬНОГО ФРОНТА В ИРАНСКОЙ РЕВОЛЮЦИИ 1978—1979 гг.

Резюме

Изучение и освещение вопросов, касающихся участия организации национальной буржуазии Ирана—Национального Фронта в иранской революции 1978—1979 гг. в качестве одной из основных оппозиционных сил, имеет безусловно важное значение.

Претендуя первоначально на роль руководителя народного движения, Национальный Фронт, на определенном этапе развития революционных событий, в силу ряда обстоятельств был вынужден прекратить свою деятельность.

1 احمد ملکی، تاریخچهٔ جبههٔ ملی، تهران، ۱۳۳۲، ص ۱۷
2 A. Faroughy, J. L. Reverier, L'Iran contre le Chah. Paris, 1979. p. 167.
3 P. Balta, Cl. Rulleau, L'Iran insurge. 1789 en Islam? Paris, 1979, p. 181.
4 H. Fürtig, The Upswing and the Reformation of Petty-Bourgeois and Democratic, Bourgeois and Religious Opposition Groups and Organizations in the 1970 as a Basic Precondition for the Eruption of the People's Anti-Monarchist Revolution in 1978/79—„Iran: From Monarchy to Republic", Berlin, 1983, p. 17.
5 С. Л. Агаев, Иран в прошлом и настоящем. М., 1981, с. 192.
6 H. Fürtig, *նշվ. աշխ., էջ 17։*
7 Նույն տեղում, էջ 18։
8 „اطلاعات". 28.XI.1978.
9 „اطلاعات", 6.XI.1978.
10 H. Fürtig, *նշվ. աշխ., էջ 19։*
11 Նույն տեղում։
12 Նույն տեղում։
13 „اطلاعات", 15.XI.1978.
14 «Правда». 13.XI.1978.
15 P. Balta, Cl. Rulleau, *նշված աշխ., էջ 66։*
16 «Правда». 15.XII.1978.
17 «Правда». 15.XII.1978.
18 «Правда». 26.XII.1978
19 F. Hoveyda, The Fall of the Shah. New York, 1980, p. 192.
20 Նույն տեղում, էջ 193։
21 H. Nahavandi, Iran. Deux rêves brisés. Paris. 1981, p. 189.

22 F. Hoveyda, *Նշված աշխ., էջ 195։*
23 E. Abrahamian. Iran Between Two Revolutions. Princeton-New Jersey, 1982, p. 524.
24 H. Nahavandi, *Նշված աշխ., էջ 203։*
25 „اطلاعات", 6.1.1979.
26 „اطلاعات", 6.1.1979.
27 „اطلاعات", 6.1.1979.
28 «Правда», 3.I.1979.
29 „اطلاعات", 6.1.1979.
30 «Правда», 5.I.1979.
31 «Правда», 6.I.1979.
32 „اطلاعات", 11.1.1979
33 „اطلاعات", 11.1.1979.
34 „اطلاعات", 16.1 1979
35 „اطلاعات", 16.1.1979.
36 «Правда», 21.I.1979.
37 «Правда», 22.I.1979.
38 «Правда», 22.I.1979.
39 „اطلاعات", 24.1.1979.
40 F. Hoveyda, *Նշված աշխ., էջ 203։*
41 „اطلاعات", 24.1.1979.
42 „اطلاعات", 1.11.1979.
43 „اطلاعات", 1 11.1979.
44 „اطلاعات", 1.11 1979.
45 „اطلاعات", 5.11.1979
46 „Правда", 7.11.1979.
47 „اطلاعات", 8.11.1979.
48 „اطلاعات", 10.11.1979.
49 „اطلاعات", 11.11.1979.
50 „اطلاعات", 12.11.1979.
51 «Правда», 14.II.1979.
52 «Правда», 14.II.1979.
53 «Правда», 14.II.1979.
54 «Правда», 15.III.1979.
55 „اطلاعات", 1.X.1979.
56 «Правда», 20.II.1979.
57 «Правда», 6.III.1979.
58 «Правда», 24.II.1979.
59 «Правда», 29.II.1979.
60 „کیهان", „اطلاعات", „Tehran Journal", 28.III·1979
61 „اطلاعات", 31·III·1979.
62 „اطلاعات", 16·IV·1979.

63 „اطلاعات", 18.IV.1979.
64 „اطلاعات", 30.V.1979.
65 «Правда», 6.VII.1979.
66 «Правда», 27.IX.1979.
67 „اطلاعات", 6.XI.1979.
68 „اطلاعات", 6.XI.1979.
69 نورالدین کیانوری، حزب تودهٔ ایران چه میگوید، تهران، ۱۹۸۰، ص. ۵۳

1963 թ. մարտին Մոսկվայում լրկասեր գիտնականների միջազգային հանդիպում էր կազմակերպել Ջավահարլալ Նեհրուի ծննդյան հարյուրամյակին նվիրված միջոցառումների շրջանակում։ Ես ևս հրավիրված էի այդ հանդիպմանը մասնակցելու։ Ինձ համար հետաքրքրական էր տեսնել, թե ինչպես են հնդիկ գիտնականները պատրաստվում նշել իրենց մեծ հայրենակցի հոբելյանը։

Ներքաշվեցի նրանց հետաքրքրական զրույցների մեջ, որոնք ծավալվում էին հանդիպման սկզբնական շրջանում, մինչև որ ինձ ասացին, թե ինչ է ասել Նեհրուն Ռուսաստանի մասին։ Ես ասացի, որ ինձ համար հետաքրքրական է ոչ այնքան Նեհրուի ասածը, որքան այն, թե ինչպես է նա ընկալվում Հնդկաստանում։ Ինձ պատասխանեցին, որ Նեհրուն ընկալվում է որպես մեծ հայրենասեր, որպես ազգային ազատագրական շարժման առաջնորդ, որպես ժողովուրդների բարեկամության ջերմ պաշտպան։ Ինձ ասացին, որ Նեհրուն ընկալվում է որպես մեծ մարդասեր, որպես մեծ հումանիստ։

Ես ասացի, որ Նեհրուն ընկալվում է նաև որպես մեծ գրող, որպես «Հայրը դստերը», «Աշխարհի գյուտերը» և «Ցասումն Շիվայի» հեղինակ։ Ասացի, որ Նեհրուի գրական ժառանգությունը ոչ միայն հնդիկ ընթերցողների, այլև ամբողջ աշխարհի ընթերցողների համար է հետաքրքրական։ Ասացի, որ Նեհրուի գրական ժառանգությունը ոչ միայն հնդիկ ընթերցողների, այլև ամբողջ աշխարհի ընթերցողների համար է հետաքրքրական։

Հ. Ս. ՏԻՄՈՖԵՅԵՎ

ՄԱՐԴԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԸ ԱՅԺԵՐՈՒՄ ՄԻՄԻՆԻՆ ՀԱՄԱՐ

ՄՈՍԿՎԱ, «ՀՐԱՏ ՓԱՓԻՐՈՒՄՈՒ ԳՐԱՏՆԵՐ»

իմպերիալիստական տերությունների դիրքերն արմատախիլ անելուն ուղղված քայլեր։

Սիրիայի արտաքին քաղաքականության այն դիծը, որն արմատական դարգացում ապրեց 1966 թ. Բաաս կուսակցության ձախ թևի իշխանության գլուխ անցնելուց հետո, չէր կարող լուրջ անհանգստություն առաջ չբերել նավթային մոնոպոլիաներում և նրանց հետևում կանգնած իմպերիալիստական շրջաններում, Իսրայելում և արաբական հետադիմական երկրներում։ Այս անհանգստությունը տագնապի վերածվեց այն բանից հետո, երբ Սիրիան «Իրաք փեթրոլիում քոմփանիի» նավթային կոնսորցիումի դեմ մեղադրանք հարուցեց Սիրիայի տարածքով իրաքյան նավթի տեղափոխման կոնցեսիոն համաձայնագրի կոպիտ խախտումների վերաբերյալ։

Այդ մեղադրանքը մանրամասն հիմնավորված էր «Իրաք փեթրոլիումի» դիրեկտորների խորհրդին ուղղված 1966 թ. օգոստոսի 28 թվագիր հուշագրում։ Դրանում մասնավորապես ընդգծվում էր, որ ընկերությունը կեղծ հաշվետվություններ ներկայացնելով, տաս տարվա ընթացքում միտումնավոր իջեցնում էր Սիրիայի օգտին կատարված կոնցեսիոն մասնահանումները և արդյունքում՝ չի վճարել նրան 40 միլիոն անգլիական ֆունտ ստեռլինգ։ Այս կապակցությամբ, և ելնելով սիրիական ժողովրդի ազգային շահերը պաշտպանելու պահանջից, Սիրիական կառավարությունը կտրականորեն պահանջում էր կոնցեսիոն մասնահանումների բարձրացում 50%-ով և պարտքի մարում[3]։

«Իրաք փեթրոլիում» նավթային ընկերությունում նավթային մոնոպոլիաների մասնակցությունը հետևյալ հարաբերությամբ էր. անգլիական «Բրիթիշ փեթրոլիում»՝ 23,75%, անգլո-հոլանդական «Ռոյալ Դատչ-Շելլ»՝ 23,75%, ֆրանսիական «Կոմպանի ֆրանսիզ դը պետրոլ»՝ 23,75%, ամերիկյան «Սթանդարդ օյլ քոմփանի օֆ Նյուջերսի» և «Մոբիլ օյլ»՝ 11,75-ական % և «Շելլին» հարող «Փարթիքոս»՝ 5%[4]։ Հարկ է նշել, որ «Բրիթիշ փեթրոլիումի» բաժնետոմսերի վերահսկիչ ծարրը (մոտ 56%) պատկանում էր Անգլիայի կառավարությանը, իսկ ֆրանսիական կառավարությունը վերահսկում էր «Կոմպանի ֆրանսեզ դը պետրոլի» բաժնետոմսերի 35%-ը և վարչության ձայների 40%-ը[5]։

Այդ երկրները շահագրգռված էին կոնսորցիումի գիրքերի ամրապնդման մեջ, ելնելով և՛ իրենց մերձավորարևելյան ստրատեգիայի և՛ եկամուտների բաժանման մեջ իրենց անմիջական մասնակցության պահանջներից։

Դեռևս 40-ական թթ. «Բրիթիշ փեթրոլիում» և անգլիական կառավարության միջև գաղտնի համաձայնագիր էր կնքվել, ըստ որի ընկերությանը հնարավորություն էր տրվում կոնցեսիոն ծախսերի մի մասը վճարել այն գումարի հաշվին, որը հաշվարկվում էր որպես անգլիական գանձարկղ մտնող եկամտահարկ։ Համանման համաձայնագրեր էին կայացվել նաև կոնսորցիումի մյուս մասնակիցների հետ։ Միայն այդ համաձայնագրի միջոցով 1952—1972 թթ. «Իրաք փեթրոլիումը» լրացուցիչ շահել էր 7 միլիարդ ֆունտ ստեռլինգ[6]։ Այսպիսով արհեստականորեն իջեցվում էր ընկերության փաստացի շահերի գումարը, ինչը և նրան հնարավորություն էր ընձեռում էականորեն կրճատել Իրաքի և Սիրիայի կառավարություններին կատարվող կոնցեսիոն մասնահանումները[7]։

Սիրիայի և «Իրաք փեթրոլիումի» միջև բանակցությունների առաջին փուլը տեղի ունեցավ Դամասկոսում 1966 թ. սեպտեմբերի 10-ից 17-ը։ Սեպտեմբերի 18-ին ընկերության ներկայացուցիչները ընդհատելով բանակցությունները մեկնեցին Լոնդոն, որն իբրև կապված էր դիրեկտորների խորհրդի հետ խորհրդակցելու և անհրաժեշտ փաստաթղթեր պատրաստելու հետ[8]։

Պարզ է, սակայն, որ այդ ընդհատումը իրականում բոլորովին այլ պատճառ ուներ։ Ընկերության ներկայացուցիչների գրաված դիրքը անմիջապես և համոզիչ կերպով ցույց տվեց, որ ընկերությունը ոչ միայն չի ձգտում լուծել խնդիրը, այլ նաև մտադիր է ամեն կերպ ձգձգել բանակցությունները, որպեսզի ժամանակ շահի սիրիական կառավարության վրա քաղաքական ճնշում գործադրելու համար։ Դեռ ավելին, այժմ արդեն կասկած չի հարուցում այն, որ խուսափելով Սիրիային ուղղակի պատասխան տալուց, «Իրաք փեթրոլիումի» ղեկավարությունը ելնում էր երկրի քաղաքական կուրսում արմատական փոփոխման հնարավորություններից։ Ընդ որում խոսվում էր ինչպես պետական հեղաշրջման, այնպես էլ դեպի աջ որակական տեղաշարժի մասին, որոնց կարող էր հանգեցնել այդ շրջանում նկատվող երկրի ներքաղաքական իրադրության խիստ սրումը և հարևան երկրների հետ Սիրիայի հարաբերություններում լարվածության աճը։

Այսպես, հոկտեմբերի սկզբին Սիրիայում բացահայտվեցրն երկու դավադրություններ, նախապատրաստված 1966 թ. փետրվարին իշխանությունից հեռացված աջ բասխստներ Մ. Աֆլաղի և Ս. Բիտարի, ինչպես նաև Բաաս կուսակցության ռեգիոնալ ղեկավարության նախ-

կին անդամ մայոր Ս. Հատումի կողմից[3]։ Սիրիայի պրեզիդենտ Ն. Ասատին, նշելով «Իրաք փեթրոլիումի» մասնակցությունը այդ դավադրություններին, ընդգծեց, որ նրանց նպատակն էր «ճանապարհ բացել հետադիմության, նավթային մոնոպոլիաների և իմպերիալիզմի համար, հարված հասցնել հեղափոխությանը և ի չիք դարձնել նրա նվաճումները ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ասպարեզներում»[15]։

Սիրիայում առանձնահատուկ մտահոգություն առաջացրին նաև սեպտեմբերի վերջին ի հայտ եկած հաղորդագրությունները իր սահմաններում թուրքական զորքերի համակենտրոնացման մասին, որը կրում էր բացահայտ պրովոկացիոն բնույթ[11]։

Բանակցությունների երկրորդ փուլը Դամասկոսում նույնպես կոնկրետ արդյունքներ չտվեց։ Եվ նորից ընկերության ներկայացուցիչների մեկնումը Լոնդոն ուղեկցվեց սիրիա-իսրայելական սահմանում ռազմաքաղաքական լարվածության սրմամբ[12]։ Այսպիսի «համընկնումների» կրկնությունը նաև հետագայում, իրավունք էր տալիս կառավարող կուսակցության օրգան «Ալ Բաաս» թերթին պնդելու, որ զուտ ֆինանսական կարգի հարց քննարկելիս «Իրաք փեթրոլիումը» ներկայանում է ոչ թե որպես նավթարդյունահանող ընկերություն, այլ որպես մի քաղաքական կազմակերպություն, որը փակուղու առջև է կանգնեցնում և հետաձգում բանակցություններն «ամեն անգամ, երբ նոր դավադրություն է պատրաստվում (Սիրիայի դեմ—Հ. Գ.), և վերսկսում է դրանք, երբ այդ դավադրությունը խափանվում է...»[13]։

Մի շարք միջոցներ նախատեսելով Իսրայելի նախահարձակողական քաղաքականությանը դիմագրավելու համար, սիրիական ղեկավարությունը միաժամանակ միջոցառումներ իրականացրեց չեզոքացնելու համար Թուրքիայի պրովոկացիաները։ Այսպես, Սիրիայի վարչապետ Յու. Ջունյնը հոկտեմբերի 23-ին որոշեց կալանք դնել երկրում ապրող թուրքահպատակների սեփականության վրա[14]։ Ընդունելով այդ որոշումը Սիրիան մասնավորապես ելնում էր նրանից, որ այդ շրջանում Թուրքիան ակտիվորեն միանում էր իմպերիալիստական շրջանների՝ սիրիական ժողովրդի և նրա ղեկավարների վրա ռազմաքաղաքական ճնշում գործադրելու բոլոր փորձերին։

Պարզ է նաև, որ Թուրքիան ինքն էլ շահագրգռված էր «Իրաք փեթրոլիումին» աջակցելու գործում, քանի որ ներկայացնելով իրեն որպես այդ ընկերության շահերի չերմեռանդ պաշտպան, Անկարան հույս ուներ համագործակցության հաստատել նավթային բիզնեսի հետ։ Այդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԽԹԻՒՐԻ ՀԱՅՐԱՊԵՏ ՀԱՅՐԱՊԵՏՈՎ

1966 թ. հոկտեմբերի 26-ին «սիսյան բանաստեղծների երեկո փուլ, որի ժամանակ նախաձեռնողները հանդիսատեսի ներկայությամբ կարդացին ներկայացրեն «Հայ գրականության մասին» ելույթներ, որոնցում «հայ գրականության մասին» ելույթներ, որոնցում «հայ գրականության մասին» ելույթներ, որոնցում «

Ավելի մանրամասն այս դրույթը վերլուծվեց Սիրիայի արտաքին գործերի մինիստր Ի. Մախուսի հայտարարությունում։ Նա նշեց, որ Իսրայելը, նավթային մոնոպոլիաների ետևում կանգնած իմպերիալիստական շրջանների կողմից նախապատրաստված, նախահարձակում է պատրաստում Սիրիայի դեմ։ Սիոնիստական պետության ակտիվացման հիմնական պատճառները Մախուսը համարում էր Սիրիայի «իրաք փետրոլիումին» ներկայացրած պահանջները և Բաաս կուսակցության ժողովրդադեմոկրատական պատերազմի միջոցով Պաղեստինն ազատագրելու կուսակցությունը[22]։

Նոյեմբերի սկզբին Սիրիային պարզ դարձավ, որ բանակցությունների արդյունավետ շարունակումն անհնար է առանց արմատական միջոցներ ձեռնարկելու և որ ստեղծված իրավիճակում մնում է միայն մեկ ալլընտրանք...պայքար բոլոր ձևերով, ընդհուպ մինչև նավթամղման դադարեցումը»[23]։

Սիրիայի գիրքերի ընդհանուր ամրապնդմանը, մասնավորապես «Իրաք փետրոլիումի» հետ վարվող բանակցություններում, նպաստեց Սիրիայի և Եգիպտոսի միջև Կահիրեում 1966 թ. հոկտեմբերի 4-ին համատեղ պաշտպանության պայմանագրի կնքումը։ Այդ պայմանագիրը արաբական աշխարհի առաջադիմական ուժերի Սիրիական ժողովրդի օրինական իրավունքների համար մղվող արդարացի պայքարի հետ համերաշխության ամրապնդման գործոն էր։ Այս առիթով «Ալ Բաասը», նշում էր. «Հեղափոխական ուժերը, միավորելով արաբական զանգվածներին միասնական շարքերում, վճռական հակահարված են տալիս իմպերիալիզմի այդ նախահարձակողական պլաններին»[24]։

Նոյեմբերի 26-ին Սիրիան «Իրաք փետրոլիումին» վերջնագիր ներկայացրեց, հայտարարելով, որ եթե ընկերությունն անմիջապես սպառիչ պատասխան չտա իր պահանջներին, ապա նրա նկատմամբ կձեռնարկվեն խիստ միջոցներ[25]։ Այդ որոշումն ընդունվեց հաշվի առնելով Սիրիայի համար հնարավոր բոլոր հետևանքները, այդ թվում նաև Իսրայելի հետ ռազմական առճակատումը։ «Սիրիական ժողովուրդը,— շեշտում էր այս կապակցությամբ սիրիական ղեկավարությունը,— անվախորեն դիմագրավում է «Իրաք փետրոլիումին» և նրա ետևում կանգնած արտաքին ուժերին...։ Այսօր ժողովուրդն այդ առճակատմանը պատրաստված է ավելի լավ, քան երբևէ անցյալում»[26]։

Սիրիայի վերջնագրին ի պատասխան «Իրաք փետրոլիումը» փորձեց վեճի մեջ ներքաշել Իրաքին և, օգտագործելով վերջինիս շահա-

ցրգրախծոմքյունը նայուածքները շատուածները ցրտրտալ, եռկսկատա-
քիլյա. սերտնել արաբերի մրգի[27]։ Ինչպես ցույց տվեցին մեր
նոյեմբերի 22-ին Դարմանոցում տեղի ունեցած սկսված-Իրագիտ ժամա-
ցուքյամբ[28], որոց ընթացքում կողմերը քննարկեցին սկզբունք-
նեպի բոլոր հնարավոր հեռանկարները, «Իրագ փրթիլուրյա կազմա-
տեղամի ու ծրագրերը իրավունքի հիմք դնելու, ֆունկցիա «Ալ Ֆիլա
քերքեր, մեծապատճառով Դարմանոցի բաժնետերերի և ընդհանուր
մոտալուտ առաջադրանքների հարցի քննարկման Իրագ մասնակցու-
թյան հարցը, նախատեսվում հեռացնել Ինչ, որ ընդհանրապես
ֆունկցիայի տեսանկյունից հեռու չէր, որ Ինչ ֆիրմա ունենար
3,7 մլն ֆունտ ստեռլինգ՝ հունվարի 1-ից սեպտեմբերի 30-ը ընկած
ժամանակաշրջանում հաշվետու տարում[30]։

Սկսվում գործունեության Իրագի կողմից ընդունված հա-
ղորդագրությունները 9-ին իրագյան հասարակության ներկայացուցիչ Ս. Տալբոտը, արձանագրեց փաստական Սկսվում ձեռնարկած
մեծացառարկելը, մեծաժամանակ ընդգծեց, որ Սկսվում կողմից «Իրագ
փրթիլուրյա ռեցեպտի մասին որոշ կասկածներ ի, որ իրագյան
ներքին արտահայտումը կատեգորիաներ հայ նյութ արտահայտու-
փրթիլ հասարակության[31]։

«Իրաք փեթրոլիումի» ոլնցվածքի վրա կալանք դնելու մասին լուրերը ԱՄՆ-ում և Անգլիայում շատ լուրջ անհանգստություն առաջացրնցին։ Այսպես, ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի ներկայացուցիչն այդ առիթով հանդես եկավ հատուկ հայտարարությամբ, որում նշվց, որ ԱՄՆ-ը շատ ուշադիր և անհանգստությամբ է հետևում դեպքերի ղարգացմանը, և միաժամանակ հասկացրեց, որ ամերիկյան կառավարությունը ծայրահեղ բացասական կգնահատի նավթարդյունաբերող երկրների և նավթային մոնոպոլիաների միջև գոյություն ունեցող հարաբերությունների բնույթն արմատականորեն փոխելու ցանկացած փորձը[32]։

Այնուամենայնիվ, Սիրիայի վճռական գործողությունները հանգեցրին այն բանին, որ «Իրաք փեթրոլիումը» ստիպված եղավ որոշ զիջումներ անել և առաջարկեց վեճը լուծել Սիրիայի օգտին տարեկան կոնյեսիոն մասնահանումները մոտավորապես 2,55 մլն ֆոնտ ստեռլինգի չափով ավելացնելու միջոցով։ Սիրիան, սակայն, հրաժարվեց այդ «նպաստից», կրկին հաստատելով իր սկզբունքային պահանջները՝ իրեն հասանելիք մասնահանումները 50%-ի չափով ավելացնելու և 40 մլն ֆունտ ստեռլինգ իրեն հասցրած վնասներն հատուցելու մասին[33]։ Ի պատասխան՝ «Իրաք փեթրոլիումի» ղեկավարությունը դեկտեմբերի 10-ին դադարեցրեց իրաքյան նավթի տեղափոխումը սիրիական Բանիաս նավահանգիստը[34]։

Չնայած նրան, որ նավթամղման դադարեցումը զգալի հարված էր Իրաքի շահերին, Բաղդադը պաշտոնապես շարունակում էր պաշտպանել սիրիական պահանջները։ Դեկտեմբերի 10-ին վարչապետ Ն. Տալեբն հայտարարեց, որ Իրաքը ցանկացած պարագաներում «Իրաք փեթրոլիումից» պիտի պահանջի իր հասույթի վճարումը նավթի տարեկան սովորական հանույթի չափերով[35]։ Իրաքի այսպիսի դիրքորոշումը Սիրիային թույլ տվեց իր հերթին լրացուցիչ ճնշում գործադրել ընկերության վրա, և դեկտեմբերի 13-ին փակել իր տարածքով դեպի լիբանանյան Տրիպոլի նավահանգիստն անցնող նավթամուղը[36]։

Ողջունելով Իրաքի դիրքորոշումը և ընդգծելով իր գործողությունների համատարաբական բնույթը, Սիրիան կոչ արեց նավթարդյունաբերող թևլադրանքի վերացման մեջ շահագրգռված բոլոր ուժերին աջակցել իր իրավացի պահանջներին։ Ինչպես նշվում էր սիրիական կառավարության պաշտոնական հայտարարությունում «...Իրաքի արաբ ժողովուրդն ու արաբական մյուս երկրների ժողովուրդները Սիրիային

աջակցում են, քանի որ լավ են հասկանում նրա դիրքորոշման սկըզբունքային դրդապատճառները, որը թելադրվում է ոչ թե մասնավոր նկատառումներով, այլ որոշվում է համաարաբական շահերից ելնելով»[37]։

«Իրաք փեթրոլիումի» փորձերը՝ բախել Սիրիայի և Իրաքի շահերը ոչ միայն ցանկացած նպատակին չհանգեին, այլ ընդհակառակը. նպաստեցին այն բանին, որ երկու արաբական երկրներն հանդես դան միացյալ ճակատով։ Նրանց դիրքորոշման միասնականությանը հավանություն տալով բաղդադյան «Աս-Սաուրա ալ-Արաբիյան» ընդգծում էր, որ Իրաքը նավթային մոնոպոլիաների վրա է դնում» նրանց օբստրուկցիոնիստական դիրքորոշման, քաշքշուկի և Սիրիայի պահանջներին պատասխան տալուց խուսափելու պատճառով առաջացած լարված իրադրության ստեղծման» պատասխանատվությունը[38]։ Իր հերթին Սիրիան, նշելով սիրիա-իրաքյան հարաբերություններում երկպառակտության սերմանելու իմպերիալիստական շրջանների փորձերի անհաջողությունը, ընդգծում էր, որ Իրաքն ի վիճակի է ինքնուրույն մշակել իր նավթային հարստությունները, և որ «Իրաք փեթրոլիումի» գործողությունները միայն կարագացնեին նրա սեփականության ազգայնացման վերաբերյալ իրաքյան կառավարության որոշումը[39]։

Դեկտեմբերի 16-ին Իրաք ժամանեց Սիրիայի արտաքին գործերի մինիստր Ի. Մախուսը, որին իրաքյան ղեկավարները նորից հավաստիացրեցին իրենց դիրքորոշումը[40]։ Իր հերթին Ի. Մախուսը հայտարարեց, որ Սիրիայի տարածքով անցնող «Իրաք փեթրոլիումի» նավթամուղն իրականում իրաքյան ժողովրդին է պատկանում և միաժամանակ նշեց ընկերության աղգայնացման հարցը քննարկելու անհրաժեշտության մասին։ Նա ընդգծեց նաև, որ ստեղծված իրադրությունում առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում արաբական երկրների ակտիվ հակաիմպերիալիստական դիրքորոշումը, և որ այդ առումով նրանց դերն այսօր «չի տարբերվում 1956 թ. սուեզյան պատերազմում նրանց կատարած դերից»[41]։

Բաղդադում Սիրիայի կողմից «Իրաք փեթրոլիումի» աղգայնացման հարցի բարձրացումը տագնապ առաջացրեց ոչ միայն ընկերության ղեկավարությունում, այլ նաև բրիտանական կառավարությունում։ Նեթ նախկինում Անգլիայի ղեկավար շրջանները խուսափում էին որևէ հայտարարություն անելուց, միտումնավոր ձևով ընդգծելով Սիրիայի և «Իրաք փեթրոլիումի» միջև ծագած տարաձայնությունների զուտ տնտե-

սական և ֆինանսական բնույթը, ապա այդ պահին նրանք որոշեցին իրենց վերաբերմունքը դրսևորել բանակցությունների նկատմամբ և սիրիական կառավարության վրա քաղաքական ճնշում գործադրել։ Այդ բանն այնվհետ բավականին քողարկված ձևով։ Այսպես, Դամասկոսում Անգլիայի դևսպան Ռ. Էվանսը Սիրիայի Արտաքին գործերի մինիստրությանն հայտարարեց. քանի որ «Իրաք փեթրոլիումը» Անգլիայում պաշտոնապես հաշվառված ընկերություն է, ապա անգլիական կառավարությունն իրեն իրավունք է վերապահում մեկնաբանել բանակցությունների ընթացքը առաջիկա փուլերում[42]։

Իր հերթին «Իրաք փեթրոլիումը» իրաքյան կառավարությանը տեղյակ պահեց, որ նավթամուղի փակման կապակցությամբ չի կարող ընթացիկ տարում Իրաքին ամբողջությամբ վճարել կոնցեսիոն մասնահանումները։ Պարզ է, որ «Իրաք փեթրոլիումի» հայտարարությունը Սիրիա-իրաքյան համերաշխությունում երկպառակտության սերմանելու նոր փորձ էր[43]։ Այս հայտարարության հակաօրինական լինելու մասին նշեց Ասոսիավորպես բաղդադյան «Սաութ ալ-Արաբը», որը գրեց, թե «Իրաք փեթրոլիումն» իրավունք չունի ոտնահարել իրաքյան ժողովրդի շահերը միայն այն բանի համար, որ Բաղդադը պաշտպանում է Սիրիայի իրավացի պահանջները[44]։

Իրաքի՝ Սիրիային պաշտպանելու կուրսի ուժեղացմանը նպաստեց եգիպտական ղեկավարությունը, որը տեղեկացրեց իրաքյան կառավարությանն այն մասին, թե Եգիպտոսն իրեն համարում է վեճի մեջ ներքաշված անմիջական կողմ[45]։ Միաժամանակ Ազգային ժողովի հատուկ հրավիրված նիստում Եգիպտոսի վարչապետ Ա. Սիդկին նշելով Եգիպտոսի համերաշխությունը Իրաքի արդարացի պահանջների հետ միաժամանակ, ընդգծեց, որ իր երկիրն «ամբողջովին պաշտպանում է Սիրիայի կառավարությանը ժողովրդի շահերի պաշտպանության գործում»[46]։

Նավթային մոնոպոլիաների տնտեսական թելադրանքի, «Իրաք Պեթրոլիումի» ետևում կանգնած ԱՄՆ-ի և Անգլիայի իմպերիալիստական շրջանների՝ արաբական առաջադիմական վարչակարգերի, առաջին հերթին Սիրիայի, վրա ռազմաքաղաքական ճնշում գործադրելու դեմ ուղղված պայքարում միջարաբական համագործակցության ամրապնդման հարցերը քննարկվեցին 1967 թ. փետրվարին Իրաքի ղեկավարների կահիրե և Դամասկոս կատարած այցելությունների ընթացքում։ «Այդ այցելությունները,—նշում է Օ. Գերասիմովը,—որոնց ըն-

քացքում քննարկվեցին առաջին հերթին նավթային պրոբլեմները, ակընհայտորեն ազդեցին նավթային ճգնաժամի կարգավորման վրա»[47]:

Արդյունքում «Իրաք փեթրոլիումը» ստիպված եղավ վերսկսել բանակցությունները Սիրիայի հետ: 1967 թ. մարտի 2-ին Դամասկոսում ստորագրվեց Սիրիայի տարածքով Իրաքյան նավթի տեղափոխման նոր համաձայնագիր: Սիրիայի օգտին կոնցեսիոն մասնահանումները բարձրացվեցին 50%-ով, որը ուժի մեջ էր մտնելու հետին թվով՝ 1966 թ. հունվարի 1-ից և Սիրիայի կառավարությանը լրացուցիչ տալիս էր 11 միլիոն դոլար: Միաժամանակ «Իրաք փեթրոլիումը» պարտավորվում էր Սիրիային վճարել 1955—1965 թթ. առաջացած պարտքը 40 միլիոն ֆունտ ստեռլինգի չափով[48]:

Վերջում նշենք, որ Սիրիայի հաջողությունը «Իրաք փեթրոլիումի» հետ կոնցեսիոն համաձայնագրի վերանայման համար մղված պայքարում ոչ միայն կարևոր տնտեսական, այլև քաղաքական մեծ նշանակություն: Հասնելով իր օրինական պահանջների ամբողջական բավարարմանը, Սիրիան ամբողջ արաբական աշխարհին ցույց տվեց նևոգաղութարարության քաղաքականությանը դիմակայելու խնդիրների արմատական լուծման հնարավորությունը և, այդպիսով, ոչ մեկին նպաստեց արաբական ժողովուրդների նավթային հարստությունների աղգայնացման կուրսի ամրապնդմանը[49], *այլև ղգալի հարված հասցրեց Մերձավոր արևելքում իմպերիալիզմի դիրքերին:*

Г. М. ГРИГОРЯН

БОРЬБА СИРИИ ЗА ПЕРЕСМОТР КОНЦЕССИОННОГО СОГЛАШЕНИЯ С «ИРАК ПЕТРОЛЕУМ КОМПАНИ»

Резюме

В августе 1966 г. сирийское правительство потребовало от империалистического нефтяного консорциума «Ирак Петролеум Компани» увеличить на 50% отчисления за транзит нефти из района Киркука (Ирак) в сирийский порт Баниас, а также выплатить Сирии долг в размере 40 млн. ф. ст., образовавшийся в период 1955—1965 гг. в результате различных финансовых махинаций совета директоров консорциума.

Добившись в марте 1967 г. полного удовлетворения своих законных требований, Сирия наглядно продемонстрировала все-

му арабскому миру возможность коренного решения задач по оказанию противодействия политике неоколониализма и тем самым не только активно способствовала укреплению курса на национализацию нефтяных богатств арабских народов, но и нанесла ощутимый удар по позициям империализма на Ближнем Востоке в целом.

1 Л. И. Медведко. К востоку и западу от Суэца. М., 1980. с. 74.
2 Р. Н. Андреасян, А. Я. Эльянов, Ближний Восток, Нефть и независимость. М., 1961; Л. И. Коплев. В борьбе с нефтяными спрутами. М., 1976.
3 ١٩٦٦ـ٢٢ ،"البعث"
4 The Middle East and North Africa 1966—67. Europa Publications Limited, London, 1966, p. 65
5 Р. Н. Андреасян, А. Я. Эльянов, *նշվ., աշխ., էջ 10։*
6 J. Kimche. Palestine or Israel. The untold story of why we failed, 1917—1923: 1967—1973. London, 1973, p. 231.
7 Նավթային մոնոպոլիաների նման խախտումների մասին մանրամասն տե՛ս Р. Н. Андреасян А. Д. Казюков ОПЕК в мире нефти. М., 1978, с. 27—40.
8 The Middle East Journal, Winter 1967, vol. 21, № 1.
9 Современная Сирия (справочник). М., 1974, с. 217.
10 „The Daily Star", 8·10·1966.
11 ١٩٦٦ـ١٠ـ٢٥ ،"البعث".
12 Select Chronology and Background Documents relating to the Middle East. Washington, 1975, p. 20.
13 ١٩٦٦ـ١١ـ١٦ ،"البعث".
14 The Midle East Journal, Winter 1967, vol. 21, № 1.
15 ١٩٦٦ـ١٠ـ٢٥ ،"صوت العرب"
16 ١٩٦٦ـ١٠ـ٢١ ،"الثورة"
17 ١٩٦٦ـ١٠ـ٢٧ ،"الثورة"
18 Նույն տեղում։
19 ١٩٦٦ـ١٠ـ٣١ ،"الاشتراكي"
20 Statement of the National Command About the Achievements of the 9th National Congress. The Arab Baath Socialist Party. National Command. Damascus, 31·10·1966, p. 55.
21 Նույն տեղում, էջ 35։
22 „The Daily Star", 25·10·1966.
23 ١٩٦٦ـ١١ـ١٠ ،"البعث".
24 ١٩٦٦ـ١١ـ٢٢ ،"البعث"
25 „The Daily Star", 21·10·1966.
26 ١٩٦٦ـ١١ـ٢٢ ،"البعث"

27 Նավթամուղով լիբանանյան Տրիպոլի և Սիրիական Բանիաս նավահանգիստներ էին մղվում իրաքյան նավթի մոտ 70%-ը, ինչ որում Բանիաս էր մղվում տարբեր. 26 միլիոն տոննա հում նավթ, այսինքն՝ նավթամուղով անցնող նավթի մոտ 60%-ը. նավթամուղի փակումը կհանգեցներ իրաքյան նավթի արդյունահանման ընդհանուր անկմանը։ („The Daily Star", 11.12.1966.
28 1966—11—22 ،„البلد"
29 „The Daily Star", 26.11.1966.
30 „The Daily Star", 9.12.1966.
31 „The Daily Star", 10.12.1966.
32 „The New York Times", 8.12.1966
33 „The Daily Star", 10.12.1966.
34. О. Герасимов, Иракская нефть. М., 1969. с. 139.
35 „The Daily Star", 11.12.1966.
36 The Middle East Journal, Spring 1967, vol. 21, № 2
37 1966—12—13 ،„البعث"
38 1966—12—13 ،„الثورة العربية"
39 „The Daily Star", 14.12.1966.
40 О. Герасимов Նշված աշխ., էջ 140.
41 1966—12—17 ،„البعث"
42 „The Daily Star", 16.12.1966.
43 О. Герасимов Նշված աշխ., էջ 141.
44 1966—12—18 ،„صوت العرب"
45 „The Daily Star", 19.12.1966.
46 1966—12—21 ،„الاهرام"
47 О. Герасимов Նշված աշխ., էջ 142.
48 The Middle East Journal. Summer 1967, vol. 21, № 3.
49 Resolutions of Sixth Arab Oil Conference (Baghdad, March 13)—Arab Political Encyclopedia. Documents and Notes. Fifteenth Year, January—June 1967, Cairo, p. 127—128.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ
1943 Թ. ՅՈՒՆԱՍ–ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Սիմոյի հուշերում պատմվում է Լեռնային Ղարաբաղի հայ շարք ու սպա ֆաշիստների մասին։ 1944 թ. սկսած Լևաշովի բժիշկներից մեկը հաճախ էր հանդիպում Տեղապահ բանակային խմբի հրամանատարության մոտ գտնվող «Ռիխտհոֆեն» գերմանական հետախուզական ջոկատի հրամանատար Ֆրանցին։ Տեղեկանալով, որ Ֆրանցը հայ է, նա հետաքրքրվում է նրա ծագումով, ընտանիքով, կրոնական հայացքներով։ Ֆրանցը պատմում է, որ իր հայրը Ղարաբաղի Ղազանչի գյուղից է եղել, 1943 թ. մայրով սկզբին հայտնվել է Գերմանիայում, որտեղ ամուսնացել է գերմանուհու հետ։ Ֆրանցը հավատացնում է Սիմոյին, որ ինքը և իր ընտանիքի անդամները պահպանում են հայկական ավանդույթները։ Ֆրանցի հետ զրույցի ընթացքում Սիմոյին հետաքրքրում է, թե ինչպես են ապրում հայերը Ղարաբաղում։ Ֆրանցը պատասխանում է, որ հայերը ապրում են լավ, ունեն իրենց դպրոցները, եկեղեցիները, հոգևորականները։ Ֆրանցը նշում է, որ Ղարաբաղում ապրում են նաև ադրբեջանցիներ, որոնք ունեն իրենց դպրոցները, մզկիթները, հոգևորականները։ Ֆրանցը նշում է, որ Ղարաբաղում ապրում են նաև ադրբեջանցիներ, որոնք ունեն իրենց դպրոցները, մզկիթները, հոգևորականները։

Ահմոյի հետաքրքրությունն առաջացնում է նաև Ֆրանցի ընտանիքի անդամների ազգությունը։ Ֆրանցը պատասխանում է, որ իր կինը հայ է, նրա հայրը Ղարաբաղի Ղազանչի գյուղից է եղել, 1943–1944 թթ. այդ երկրին հայերեն սովորեցրել է իր աղջկան։ Ֆրանցի կինը հայերեն գրել-կարդալ չգիտի, բայց հասկանում է հայերեն խոսքը։ Ֆրանցը նշում է, որ իր կինը հայերեն սովորեցրել է նաև իր աղջկան։ Ֆրանցի կինը հայերեն գրել-կարդալ չգիտի, բայց հասկանում է հայերեն խոսքը։ Ֆրանցը նշում է, որ իր կինը հայերեն սովորեցրել է նաև իր աղջկան։

ռանձնակի դաժանությամբ աչքի ընկան Դամասկոսում մայիսի 29—31-ին ֆրանսիական զորամիավորումների ձեռնարկած գործողությունները, որոնց ընթացքում զոհվեց 400 մարդ[4]։

Դեռ մինչ այդ՝ մայիսի 27-ին կայացած Սիրիայի և Լիբանանի արտաքին գործերի մինիստրների հանդիպման ժամանակ որոշվեց դիմել Արաբական երկրների լիգային՝ խորհրդի արտահերթ նստաշրջան հրավիրելու պահանջով[5]։ Բեյրութում և Դամասկոսում հավանաբար ակնկալում էին, որ իրենց մղած պայքարի հաջողությանը կնպաստի նաև արաբական երկրների համերաշխությունը Սիրիայի և Լիբանանի հետ։

1945 թ. հունիսի 4-ին Կահիրեում բացվեց Արաբական լիգայի խորհրդի նստաշրջանը։ Դա արաբական այդ կազմակերպության բարձրագույն մարմնի առաջին նստաշրջանն էր, որով և փաստորեն սկսվում էր նրա գործունեությունը։ Լիգայի անդամ պետությունների մեծ մասի պատվիրակությունները գլխավորում էին այդ երկրների վարչապետները։ Հունիսի 7-ին տեղի ունեցած 4-րդ նիստից հետո հրապարակվեց խորհրդի որոշումը ֆրանս-լևանտյան ճգնաժամի կապակցությամբ։ Դրա առաջին կետում Ֆրանսիայի գործողությունները որակվում էին որպես «նախահարձակում» և նշվում էր, որ Փարիզը «պատասխանատվություն է կրում մարդկային կորուստների և հասցրած նյութական վնասի համար»[6]։ Երկրորդ կետում ասվում էր, որ ֆրանսիական զորքերի ներկայությունը Սիրիայում և Լիբանանում խախտում է այդ երկրների սուվերենությունն ու անկախությունը։ Խորհուրդը միաժամանակ պաշտպանում էր ֆրանսիական զորքերի անհապաղ էվակուացման վերաբերյալ Սիրիայի և Լիբանանի պահանջը։ Որոշման երկրորդ կետի վերջում նշվում էր, որ «խորհուրդը վճռականորեն մերժում է այդ երկու հանրապետությունների տարածքում օտարերկրյա ուժերի մնալու պայմանների անորոշության մասին պնդումը» և ավելացվում, որ «բրիտանական պաշտոնական անձինք հավաստիացրել են, որ նրանք մտադիր են ետ քաշել իրենց զորամասերն այդ երկու երկրներից»[7]։ Այսպիսով, Արաբական լիգան խնդրին համապարփակ մոտեցում էր ցուցաբերում, արծարծում ոչ միայն տվյալ պահին սրությունն ստացած ֆրանսիական զորամիավորումների դուրս բերման հարցը, այլ նաև հերքում պատերազմական պարագաների բերումով դեռևս 1941 թ. Լևանտում գտնվող անգլիական զորամիավորումների տեղում հիմնավորվելու մասին ասեկոսները։ Որոշման երրորդ կետը վերաբերում էր հատուկ զորամասերին։ Արաբական լիգայի խորհրդի համոզմամբ

«այդ զորքերը, նրանց սպառազինությունը, հանդերձավորումը, ռազմամթերքը և զորանոցները պետք է վերադարձվեն Սիրիային և Լիբանանին ու ենթարկվեն նրանց հրամանատարություններին, այդ երկրների կառավարությունների տրամադրության ներքո դրվելու համար»[8]։ Վերջին, չորրորդ, կետում Լիգայի խորհուրդը իր պատրաստակամությունն էր հայտնում անել ամեն ինչ, որպեսզի «հանանի երկու հանրապետությունների նպատակների իրականացմանը», այն է. «պահպանել նրանց անկախությունը և դուրս բերել օտարերկրյա զորամասերը նրանց տարածքից»[9]։ Այս որոշման ընդունումից հետո գումարվեց խորհրդի ևս երկու նիստ։ Հունիսի 14-ին տեղի ունեցած վերջին նիստից հետո հրապարակված հայտարարությունում նշվում էր, որ «խորհուրդը քննարկեց այն միջոցները, որոնք ձեռնարկվել են խանգարելու համար ֆրանսիական նախահարձակումը և պաշտպանելու Սիրիայի և Լիբանանի անկախությունն ու ամբողջական սուվերենությունը»[10]։ Կահիրեի իրազեկ շրջանակներում ենթադրում էին, որ խոսքն այն միջոցների մասին է, որոնք ձեռնարկվելու էին, եթե Ֆրանսիան հրաժարվեր դուրս բերել իր զորքերը Սիրիայից ու Լիբանանից[11]։

Ֆրանս-լևանտյան ճգնաժամի նկատմամբ Արաբական լիգայի որդեգրած գիծը միանշանակ չի գնահատվել սովետական պատմագրությունում։ Է. Պ. Պիր-Բուդաղովան մանրամասն տալիս է Լիգայի ընդունած որոշման շարադրանքը, սակայն պարզ չի ճշտորոշում իր վերաբերմունքը դրա նկատմամբ[12]։ Կարելի է ասել, որ նա, համենայն դեպս, բացասականորեն չի գնահատում Լիգայի որոշումը, Պ. Վ. Միլոգրադովը, խոսելով Արաբական Լիգայի առաջին քայլերի, այդ թվում նաև ֆրանս-լևանտյան ճգնաժամին անդրադարձած խորհրդի նստաշրջանի մասին, գրում է, որ դրանք «հեռու էին ստեղծված իրադրության պահանջած կտրուկ բնույթն ունենալուց», բայց այնուամենայնիվ «աղգային-ազատագրական շարժմանն օժանդակող էին»[13]։ Վ. Բ. Լուցկու գրքույկում նույնպես տրված է Արաբական Լիգայի որոշման տեքստը, սակայն դա կատարված է էական աղճատումներով, որի պատճառով էլ թույլ է տրվել որոշման սխալ գնահատում։ Բանն այն է, որ Վ. Բ. Լուցկին, անտեղյակ լինելով երկրորդ կետի այն հատվածին, որտեղ խոսվում էր Լևանտում գտնվող անգլիական զորամիավորումների մասին, պնդում է, որ Արաբական Լիգան «շնորհակալություն հայտնեց Անգլիային սիրիական խնդրում նրա դիրքորոշման համար և սույնիսկ անգլիական զորքերի դուրս բերում չպահանջեց Լևանտի տա-

մասին»[14]։ Ա. Լուցիկն ասում է, որ Սիրաքանչյուր Լիպսեն «սահմանեց Հեղինե ատաջնային սիմֆոնիկ-լիրական նվագախումբ՝ ընդարձակ տեմբրային, ներդաշնակային, ճոխացված ընդունակությամբ ու ընդ-ի ֆունկցիայի ամրապնդմամբ, որոնք բոլորովին փոխում էին ատաջվա դասական նվագախմբի կազմությունը»։ Ա. Հովհաննիսյան իր հայտնի «Լիպսեն և նրա դրամատիկական պոեմները» գրքում ասում է, որ Լիպսեն «ստեղծեց նոր, նախկին արտահայտության ձևերից ազատ, ինքնատիպ ոճ»[15]։ Սակայն, ինչպես տեսանք վերևում, Լիպսեն ոչ միայն չի հրաժարվում ավանդական ձևերից, այլ հաճախ նրանց հիման վրա ստեղծում է նորերը։

Լիպսեի նկատմամբ հետաքրքրություն առաջացավ նաև Ռուսաստանում։ Ռուսական առաջին սիմֆոնիկ նվագախմբերից մեկի՝ Ռուսական երաժշտական ընկերության համերգներում Լիպսեի ստեղծագործությունները հնչում էին դեռևս նրա կենդանության օրոք։ Ռուսական մամուլում Լիպսեի մասին հրապարակումներ սկսեցին հայտնվել 1870-ական թվականներից։ Ռուսական առաջին սիմֆոնիկ նվագախմբերից մեկի՝ Ռուսական երաժշտական ընկերության համերգներում Լիպսեի ստեղծագործությունները հնչում էին դեռևս նրա կենդանության օրոք։ Ռուսական մամուլում Լիպսեի մասին հրապարակումներ սկսեցին հայտնվել 1870-ական թվականներից։ Ռուսական առաջին սիմֆոնիկ նվագախմբերից մեկի՝ Ռուսական երաժշտական ընկերության համերգներում Լիպսեի ստեղծագործությունները հնչում էին դեռևս նրա կենդանության օրոք։ Ռուսական մամուլում Լիպսեի մասին հրապարակումներ սկսեցին հայտնվել 1870-ական թվականներից։

4-րդ նիստից հետո, երբ հրապարակվեց վերոհիշյալ որոշումը, տեղի ունեցավ Խորհրդի ևս երկու նիստ, որոնց ընթացքում որևէ նոր էական որոշում չկայացվեց, վկայում է, որ Լիգայի որոշ անդամներ դեռ որոշակի ակնկալիքներ ունեին նստաշրջանից։ Իսկ հարցն այն էր, ինչպես այդ մասին նշում է Վ. Բ. Լուցկին, որն ի դեպ հավաստվում է այլ աղբյուրներով էլ, թե սիրիական պատվիրակությունը, չբավարարվելով ընդունված որոշումով, առաջարկում էր որոշակի պատժամիջոցներ կիրառել Ֆրանսիայի դեմ. այն է՝ 1. խզել դիվանագիտական հարաբերությունները Ֆրանսիայի հետ, 2. արաբական երկրներում դադարեցնել ֆրանսերենով տրվող ռադիոհաղորդումները, 3. արգելել Ֆրանսիրենի դասավանդումը և 4. Սիրիային ու Լիբանանին Ֆրանսիայի հասցրած վնասի չափով ֆրանսիական ունեցվածքներ կոնֆիսկացնել արաբական երկրներում[19]։ Այս առաջարկը, սակայն, գլխավորապես Եգիպտոսի ընդդիմության պատճառով չընդունվեց[20]։ Իսկ ինչո՞վ էր պայմանավորված Կահիրեի նման կեցվածքը։ Ամենայն հավանականությամբ Եգիպտոսի վրա ճնշում էր գործադրել Ֆրանսիան։ Ջպետք է բացառել, որ Լոնդոնը նույնպես ընդդիմանար Արաբական լիգայի կողմից կտրուկ միջոցառումների դիմելուն, վախենալով, որ այդպիսի որոշումը վատ նախադեպ կհանդիսանա և հետագայում որևէ այլ խնդրի կապակցությամբ արդեն կարծարծվի Անգլիայի դեմ պատժամիջոցներ կիրառելու հարցը։ Այսպիսի ենթադրությունը ավելի հավանական կթվա, եթե հաշվի առնեն 1945 թ. մայիսի վերջի, հունիսի սկզբի անգլո-ֆրանսիական հարաբերությունների մանրամասները լևանտյան խնդրի առնչությամբ։ Մայիսի 31-ին, երբ ֆրանս-սիրիական հակամարտությունը հասել էր իր կիզակետին, անգլիական կառավարությունը մի նոտա հղեց Ֆրանսիային, որում պահանջում էր անմիջապես դադարեցնել կրակը և զորքերը զորանոցներ վերադարձնել։ Ելնելով ուժերի իրական հարաբերակցությունից, Փարիզն ստիպված էր ենթարկվել և կատարել Անգլիայի ներկայացրած պահանջները. դադարեցնել կրակը և ֆրանսիական զորքերը ետ քաշել Դամասկոսից ու մի շարք այլ վայրերից[21]։ «Նրանց տեղը,— շարունակում է Ն. Հովհաննիսյանը,— գրավեցին անգլիական զորքերը, որոնք արդեն մայիսի 31-ին Բեկաայան մտան Սիրիայի մայրաքաղաքը»[22]։ Անգլիայի այսպիսի դիրքորոշումը «արդյունք էր նրա այն քաղաքականության, որի նպատակն էր թույլ չտալ Ֆրանսիային իր դիրքերն ամրապնդել Սիրիայում ու Լիբանանում...»[23]։ Ինչպես ցույց տրվեց, այս ուղղությամբ

Լոնդոնը զգալի հաջողություններ արձանագրեց մայիսի վերջին։ Ուստի և հունիսի 4-ից 11-ը Արաբական լիգայի խորհրդի նստաշրջանի ժամանակ անգլո-ֆրանսիական առճակատումը լևանտյան խնդրում շահարկելու համար օբյեկտիվ պատճառներ չկային և նրանց համատեղ հանդես գալը միանգամայն հավանական էր։ Եվ, վերջապես, դժվար է հավատալ, որ Լոնդոնից զգալի կախման մեջ գտնվող եգիպտական կառավարությունը պատժամիջոցներին դեմ արտահայտվեր միայն Փարիզի դրդմամբ։ Իհարկե սիրիական պատվիրակության առաջարկների ընդունումը կլիներ անչափ օգտակար թե՛ լևանտի երկրների ազգային-ազատագրական պայքարի, թե՛ արաբական նորաստեղծ կազմակերպության հեղինակության բարձրացման համար։ Իրավացի է Վ. Բ. Լուցկու այն դիտողությունը, թե լիգայի դիրքորոշման բացասական կողմն այն էր, որ դրանում չէին նախատեսվում ակոնկրետ միջոցառումներ ֆրանսիական նախահարձակման դեմ պայքարելու համար[24]։ Միաժամանակ պետք է նշել, սակայն, որ ընդհանուր առմամբ Արաբական լիգայի որոշումը դրական նշանակություն ուներ։ Առաջին անգամ լինելով, իմպերիալիստական մի երկրի քաղաքականությունն միջպետական այդ կազմակերպության միջոցով աներկբայորեն քննադատվում էր։ Ճիշտ է ոչ կոնկրետ, բայց այնուամենայնիվ արտահայտվում էր արաբական երկրների համերաշխությունը Սիրիայի և Լիբանանի հետ։ Լևանտում օտար զորքերի մնալուն ցուցաբերվում էր համապարփակ մոտեցում, դրվում էր և՛ ֆրանսիական, և՛ անգլիական զորքերի դուրս բերման հարցը։

Սիրիական և լիբանանյան ժողովուրդների պայքարը ֆրանսիական իմպերիալիստների դեմ, վերջիվերջո, պսակվեց հաջողությամբ։ 1945 թ. հուլիսին Ֆրանսիան հայտարարեց հատուկ զորամասերը Սիրիայից ու Լիբանանից փոխանցելու մասին։ Իսկ 1946 թ. ընթացքում օտարերկրյա բոլոր զորքերը դուրս բերվեցին Լևանտից։ Այս հաղթանակում իրենց ներդրումն ունեցան նաև համաշխարհային առաջադիմական ուժերը, մանավանդ ՍՍՀՄ-ը, որը թե՛ 1945 թ. մայիսյան իրադարձությունների ժամանակ, թե՛ 1946 թ. փետրվարին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում, Լևանտում գտնվող օտարերկրյա զորքերի դուրս բերման հարցը քննարկելիս, հանդես եկավ Սիրիայի և Լիբանանի պաշտպանությամբ։ Լևանտի ժողովուրդների հաջողությանը նպաստեց նաև արաբական համերաշխությունը, որը դրսևորվեց Արաբական լիգայի 1945 թ. հունիսյան որոշման մեջ։

Ш. Л. КАРАМАНУКЯН

К ВОПРОСУ ОБ ОЦЕНКЕ ПОЗИЦИИ АРАБСКОЙ ЛИГИ В ОТНОШЕНИИ ФРАНКО-ЛЕВАНТИЙСКОГО КРИЗИСА 1945 г

Резюме

Агрессивные действия французских империалистов в Сирии в мае 1945 г. вызвали широкий резонанс в арабском мире, стал, в частности, предметом специального обсуждения во вновь созданной Лиге арабских государств (ЛАГ).

Позиция Арабской лиги по этому вопросу не получила однозначной оценки. Однако ход июньской (1945 г.) сессии Совета ЛАГ и принятые на ней решения убедительно показывают, что Лига решительно выступила в защиту интересов народов Сирии и Ливана, потребовав вывода из этих арабских стран не только находившихся там французских, но и английских войск. И несмотря на то, что Совет ЛАГ не пошел навстречу требованиям Сирии применить санкции в отношении Франции, принятые на сессии решения во многом способствовали дальнейшему успеху национально-освободительной борьбы народов Леванта.

1 Ն. Հ. Հովհաննիսյան, Հ. Ս. Սարգսյան. Սիրիան անկախության համար մղված պայքարում, Երևան, 1975, էջ 261։
2 Նույն տեղում, էջ 272։
3 Նույն տեղում, էջ 274։
4 Նույն տեղում, էջ 283։

5Центральный Государственный архив Октябрьской Революции, (ЦГАОР), ф. 4459, оп. 27/1. д. 3981, л. 53.

6 Cahiers de l'orient contemporain, 11, Paris. 1945, p. 158.

7 Նույն տեղում։
8 Նույն տեղում։
9 Նույն տեղում։
10 Նույն տեղում, էջ 159։

11 ЦГАОР, ф. 4459, оп. 27/1, д. 3981. л. 64.

12 Э: П. Пир-Будагова, Сирия в борьбе за независимость (1945—1966 гг.), М., 1978, с. 23.

13 П. В. Милоградов, Арабский Восток в международных отношениях, М, 1946. с. 11.

14 В. Б. Лукин, Лига арабских государств, М., 1946, с. 16—17.

15 Նույն տեղում, էջ 17։

16 П. В. Милоградов, *Նշված աշխ., էջ 16։*

17 Ю. Н. Щербаков, Лига Арабских государств (автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук), М., 1954. с. 7.

18 Boutros—Ghali, The Arab League.--„International Conciliation", № 498, May 19—54, p. 395—397.

19 В. Б. Луцкий, *Նշվ. աշխ., էջ 17։*

20 ЦГАОР. ф. 4459. оп. 27/1, д. 3981, л. 68.

21 Ն. Հ. Հովհաննիսյան. Հ. Ս. Սարգսյան. Նշվ. աշխ., էջ 284։

22 Նույն տեղում։

23 Նույն տեղում, էջ 285։

24 В. Б. Луцкий, Նշվ. աշխ., էջ 17։

Հ. Ս. ԿՈՐԻՄԱՑՅԱՆ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1941—1943 ԹԹ.)

Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին և պատերազմի տարիներին Թուրքիան, շնորհիվ իր ստրատեգիական և ռազմաքաղաքական բացառիկ կարևոր նշանակության, դարձավ իմպերիալիստական մեծ տերությունների քաղաքական մեծ ակտիվության նշանակետը։ Թուրքիան, իր հերթին, արտաքին քաղաքականության ասպարեզում համառորեն իր շահերն էր հետապնդում։ Այս հանգամանքը, հզոր տերությունների հետ Թուրքիայի հարաբերությունները ուսումնասիրելիս, շատ հաճախ բավարար ուշադրության չի արժանանում։ Այդ իսկ պատճառով մասամբ բացառվում է Թուրքիայի միանգամայն ինքնուրույն քաղաքականություն վարելու հանգամանքը, իսկ թուրքական կառավարության քաղաքական անհետևողականությունը բացատրվում է տվյալ ժամանակաշրջանում քաղաքական այս կամ այն դաշինքի՝ «առանցքի» երկրների և կամ հակահիտլերյան կոալիցիայի ազդեցության ուժեղացմամբ։ Շատ զգայուն կերպով արձագանքելով ուժերի հարաբերակցության յուրաքանչյուր փոփոխությանը և հետևողականորեն «սրբագրելով» երկրի արտաքին քաղաքական դիրքորոշումը պատմական և միջազգային իրավիճակին համապատասխան՝ թուրքական կառավարությունը քաղաքականության կեռմաններում դրսևորել է որոշակի տրամաբանություն՝ պայմանավորված նախ և առաջ թուրքական կառավարող շրջանների աղգայնական, դասակարգային և հասարակական տրամադրվածությամբ։

Անգլիական դիվանագիտության նշանակալից հաջողությունը պիտի համարել Թուրքիայի միացումը անգլո-ֆրանսիական դաշինքին[1] նախապատերազմյան վերջին գարնանը[2]։ Արևմտյան երկրների հետ

համաձայնագիրը, որոնց ռազմական գերազանցությանը, «առանցքի», երկրների նկատմամբ թուրքական կառավարությունն այդ ժամանակ համոզված էր, թվում էր շահեկան է Թուրքիայի համար, քանզի ուղեկցվում էր սովետա-թուրքական պայմանագրի կնքման բանակցություններով՝ ՍՍՀՄ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի միջև նախատեսվող համաձայնագրին զուգահեռ[3]։ Թուրքական կառավարությունը, հավանաբար, ենթադրում էր, որ սովետա-թուրքական պայմանագիրը կստեղծի իր համար բարենպաստ իրավիճակ. ՍՍՀՄ-ից Թուրքիան կստանա անվտանգության առավել ազդեցիկ երաշխիք, իսկ ՍՍՀՄ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի միջև համաձայնագիրը կդյուրացնի մանևրումը Սովետական Միության և արևմտյան երկրների միջև և միաժամանակ թույլ կտա հետևելու վերջիններիս՝ ՍՍՀՄ-ի դեմ գերմանական ագրեսիա հրահրելու մյունխենյան կուրսին։ Սակայն թուրքական կառավարությունը, որոշելով չսպասել սովետա-անգլո-ֆրանսիական բանակցությունների ավարտին, ՍՍՀՄ-ից առանձին, պայմանավորվեց Անգլիայի և Ֆրանսիայի հետ։ Անգլիան և Ֆրանսիան, հավատարիմ իրենց հակասովետական քաղաքականությանը, Սովետական Միությանը կանգնեցրին Գերմանիայի հետ չհարձակվելու պայմանագիր կնքելու անհրաժեշտության առջև։ 1939 թ. օգոստոսի 23-ի սովետա-գերմանական պայմանագրի կնքմամբ արմատապես փոխվեց միջազգային իրավիճակը[4]։ Այն օբյեկտիվ հնարավորություն տվեց Թուրքիային, Սովետական Միության հետ բարեկամական հարաբերություններ պահպանելով հանդերձ, բռնկվող միջազգային կոնֆլիկտի ժամանակ[5] մնալ չեզոք՝ չհրելով պատերազմող իմպերիալիստական խմբավորումներից և ոչ մեկին։ Սակայն թուրքական կառավարությունը չօգտագործեց այս հնարավորությունը և 1939 թ. հոկտեմբերի 19-ին՝ դաշնագիր ստորագրեց Գերմանիայի հետ արդեն պատերազմական վիճակում գտնվող Անգլիայի և Ֆրանսիայի հետ[6]։

Այլ կերպ ավարտվեցին Մոսկվայում տեղի ունեցող սովետա-թուրքական երկկողմանի փոխօգնության բանակցությունները։ Համաշխարհային պատերազմի մեջ ներքաշվել չցանկացող Սովետական Միության պայմանները թուրքական կողմը հրաժարվեց ընդունել[7]։ Անգլո-ֆրանսո-թուրքական դաշնագրի ստորագրումը և Թուրքական կառավարության դիրքորոշումը սովետա-թուրքական բանակցությունների ժամանակ զգալիորեն բարդացրին սովետա-թուրքական հարաբերությունները, որոնք, սակայն, շարունակում էին կարգավորվել 1925 թ. բարեկամության և չեզոքության պայմանագրի համաձայն։

Այսպիսով, երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբին Թուրքիան Անգլիայի և Ֆրանսիայի չպատերազմող դաշնակցի դիրք էր գրավել և մնաց այդպիսին մինչև 1940 թ. ամառը, ավելի ստույգ՝ մինչև Ֆրանսիայի պարտությունը։ Այնուհետև, պատերազմական հաջորդ տարվա ընթացքում՝ 1940 թ. հունիսից մինչև 1941 թ. մայիսը Թուրքական կառավարությունը պահպանում է Անգլիայի նկատմամբ բարեհաճ չեզոքություն։ 1941 թ. հունիսից Թուրքիայի արտաքին քաղաքականության զարգացման նոր շրջան է սկսվում։ Մինչև Հայրենական մեծ պատերազմի տարիներին Սովետական Միության նկատմամբ Թուրքիայի կառավարող շրջանների քաղաքականության հարցին անդրադառնալը, հարկ ենք համարում նշել Թուրքական դիվանագիտության հակասովետական բնույթը՝ ՍՍՀՄ-ի վրա Գերմանիայի հարձակումից առաջ։

Այդ է վկայում 1940 թ. գարնանը անգլո-ֆրանս-թուրքական բանակցությունների բովանդակությունը[9]։ Թուրքական կառավարող շրջանները աջակցում էին դաշնակիցներին և բաժանում նրանց հակասովետական ծրագրերը, թաքցնելով իրենց շահագրգռվածությունը արևմտյան տերությունների Սովետական Միության ներխուժման հարցում (սովետա-ֆիննական պատերազմի առնչությամբ)։ Թուրքիայի միակ ցանկությունն էր իրեն չկապել ՍՍՀՄ-ի դեմ պատերազմական գործողություններին անմիջական մասնակցության պարտավորություններով, պատճառաբանելով թուրքական բանակի ոչ ժամանակակից սպառազինության և Անգլիայի՝ այդ բացը վերացնելու անկարողության փաստով[9]։ Նա ցանկանում էր, Անգլիան և Ֆրանսիան, սկսելով պատերազմը ՍՍՀՄ-ի դեմ, առանց Թուրքական կառավարության պաշտոնական համաձայնության իրագործեն իրենց ռազմաօդային ուժերի տարանցումը[10]։ Թուրքական կառավարության կարծիքով ՍՍՀՄ-ի հաղթանակի դեպքում Թուրքիայի նման դիրքորոշումը բավականին պարկեշտ կնկատվեր։ Հակառակ դեպքում, Թուրքիայի ոչ պաշտոնական համաձայնությունը և լուռ համագործակցությունը մոռացության չէր մատնվի Անգլիայի և Ֆրանսիայի կողմից։ Փաստաթղթերը վկայում են, որ Թուրքական կառավարող շրջանները, Սովետական Միության դեմ պատերազմից անշափ վախենալով հանդերձ, Կովկասի նկատմամբ զավթողական ծրագրեր են փայփայել[11]։ Ֆինլանդիայի հետ Սովետական Միության խաղաղության դաշնագրի կնքումը հօդս ցնդեցրեց արևմտյան տերությունների և Թուրքիայի հաշվարկները։

Թուրքական դիվանագիտության հակասովետական էությունը ավելի ցայտուն դրսևորվեց 1941 թ. մայիս-հունիս ամիսներին գերմանա-թուրքական բանակցությունների ժամանակ։ Թուրքական կառավարությունը բանակցությունների ընթացքում Սովետական Միության նկատմամբ բացառիկ անբարյացակամություն հանդես բերեց։ Այսպես օրինակ, Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Սարաջօղլուն Թուրքիայում Գերմանիայի դեսպան Պապենին հայտարարեց, որ Գերմանիան «Մարդկությանը ծառայած կլինի, եթե կործանի ժամանակակից Ռուսաստանը և ընդմիշտ վերացնի բոլշևիզմը»[12]։ Պրեզիդենտ Ինենյուն և Սարաշօղլուն հավաստիացնում էին, որ սովետա-գերմանական կոնֆլիկտի դեպքում Թուրքիան Գերմանիայի կողմում կլինի[13]։ Բանակցությունների ամբողջ ընթացքը ուղեկցվել է նման հայտարարություններով[14]։ Թուրքական կառավարությունը կանգ չառավ նաև իր պատրաստակամությունը հայտնելու և թույլատրելու՝ նախատեսվող գերմանա-սովետական պատերազմի ժամանակ ցանկացած թվով զինվորներով բեռնավորված գերմանական առևտրական նավերի անցումը նեղուցներով[15]։ ՍՍՀՄ-ի վրա Գերմանիայի ներխուժումից մեկ օր առաջ, հունիսի 21-ին, Թուրքիայի արտաքին գործերի մինիստրության գլխավոր քարտուղար Ն. Մենեմենջիօղլուն ամերիկյան դեսպանին հայտարարեց այն մասին, որ Թուրքիայի հետ բարեկամության և չհարձակվելու պայմանագիրը, իրենց կարծիքով, անհրաժեշտ էր Գերմանիային՝ ապահովելու իր բալկանյան թևը՝ ՍՍՀՄ-ի դեմ հնարավոր ագրեսիայի դեպքում։ Նման իրավիճակում թուրքական կառավարությունը հնարավոր է համարում խոստանալ Գերմանիային, որ չի հարձակվի նրա վրա[16]։

Անգլիան, որ Թուրքիայի միջոցով տեղյակ էր Գերմանիայի հետ նրա բանակցությունների ընթացքին, սկզբունքորեն դեմ չէր Թուրքական դաշնագրի ստորագրման՝ այն համարելով անհրաժեշտ տուրք Գերմանիային՝ Սովետական Միության վրա հարձակվելու համար և դիտելով որպես պատերազմին ռեյխի դիվանագիտական նախապատրաստման մի մասը[17]։

Այսպիսով, Գերմանիայի՝ Սովետական Միությունն ներխուժելուց դեռ շատ առաջ ակնհայտ էր, որ թուրքական դիվանագիտության առանցքային ուղղությունը հակասովետիզմն է։ Թուրքական կառավարող շրջանները պատրաստ էին օժանդակելու ուռածդ իմպերիալիստական դաշինքի ագրեսիային՝ ՍՍՀՄ-ի դեմ։

Ավելին, բարձր գնահատելով ՍՍՀՄ-ի ռազմական ուժը[18], Թուրքական կառավարությունը նման դեպքում լավագույնն էր համարում անգլո-գերմանական կոնֆլիկտի փոխզիջողական կանոնավորումը։ «Մենք վախենում ենք, որ եթե գերմանա-ռուսական ընդհարումները տեղի ունենան մինչև Անգլիայի հետ Գերմանիայի փոխըմբռնումը, պատերազմը տարիներ կտևի և նրա ավարտին երկիրը հյուծված և ավերված կլինի։ Արդյունքը կլինի Եվրոպայի բոլշևիկացումը»,—պնդում էին Թուրք քաղաքագետները[19]։

Թուրքիայի արտաքին քաղաքական գծի վերը նշված առանձնահատկությունները և մի շարք այլ նկատառումներ հանգեցրին այն բանին, որ արդեն 1941 թ. հունիսի 22-ի նախօրեին Թուրքիան յուրաքանչյուր պատերազմող կողմի հետ պաշտոնապես դաշնակից էր կամ բարեկամական հարաբերությունների մեջ էր, որոնք, ինչ խոսք, դժվարությամբ էին զուգակցվում միմյանց։

Սովետական Միության վրա Գերմանիայի հարձակման առիթով թուրքական բուրժուազիայի խանդավառությունը անպատշաճության աստիճան այնքան մեծ էր, որ Սաքաջօղլուն ստիպված էր հունիսի 22-ին անջատել հեռախոսը՝ աղատվելու համար այն անթիվ անհամար շնորհավորանքներից, որ ուղղված էին գերմանա-թուրքական պայմանագիրը ճիշտ ժամանակին կնքելու, ինչպես նաև դրան հետևած ՍՍՀՄ-ի վրա Գերմանիայի հարձակման առիթով[20]։ Այդ լուրը ուրախությամբ ընդունեց նաև պրեզիդենտ Ինենյուն[21]։ Նույնիսկ այն բանից հետո, երբ հայտնի դարձավ Անգլիայի դիրքորոշումը, թուրքական կառավարությունը Գերմանիայի նկատմամբ հետագա բարեհաճ քաղաքականության խոստումներ տվեց և պատրաստակամություն հայտնեց արդեն ներկայումս հնարավորին չափ օգնել ռեյխին։ Նա խոստացավ Գերմանիային հայտնել ՍՍՀՄ-ի սևծովյան այն բոլոր գործողությունների մասին, որոնք հայտնի կլինեն Թուրքիային։ Հավաստիացրեց, որ կարգելի սովետական ռազմանավերի անցումը նեղուցներով, ինչպես նաև թույլ չի տա ռազմական նյութերի տարանցումը ՍՍՀՄ[22]։ ՍՍՀՄ-ի նկատմամբ թուրքական կառավարող շրջանների վերաբերմունքը և սուր հակասովետիզմը ի հայտ եկան նաև թուրքական մամուլի էլույթներում։

Գերմանա-սովետական պատերազմի հետ Թուրքիայում ուժեղացան պանթուրքիստական[23] կազմակերպությունների և նրանց հարող մուսուլմանական սպիտակ էմիգրանտական կենտրոնների գործունեությա-

ներըւ Պանթուրքիզմի գաղափարները բաժանում էին թուրքական բազմաթիվ քաղաքական ու զինվորական գործիչներ[24], որոնք սակայն ևթաթուրքի ժամանակից պաշտոնապես ժխտվում էին թուրքական կառավարության կողմից։ Գերմանիային ի գիտության ներկայացված պանթուրքիստական ծրագրերը, ի մի են բերված Գերմանիայի արտաքին գործերի մինիստրության քաղաքական բաժնի ղեկավար Վերմանի կողմից՝ հետևյալ կերպ. «Պանթուրքիստական շարժումը նպատակ ունի ստեղծել անկախ պետություններ բոլոր թյուրքական ժողովուրդների համար, որոնք ապրում են այսօրվա Թուրքիայի տարածքից դուրս։ Այսպիսով, այս տարածքները չեն կարող բոնի միացվել, բացառելով սահմանների հայտնի փոփոխությունները, սակայն քաղաքականորեն պիտի կառավարվեն Թուրքիայի կողմից... Այսօրվա սովետական տարածքների վերաբերյալ պահանջները վերաբերում են գլխավորապես Ադրբեջանին, Դաղստանին, ինչպես նաև Ղրիմին, Վոլգայի և Ուրալի միջև ընկած հսկա տարածությանը, որը ձգտում է հյուսիս՝ մինչև Թաթարական Սովետական Հանրապետություն... Բացի դրանից, այդ տարածքի մեջ են մտնում ողջ հին Թուրքեստանը՝ ներառյալ նախկին Արևելյան Թուրքեստանի Արևմտյան մասը՝ այսօրվա Սինցզյանը... Բացի դրանից, Նուրին[25] պահանջում է Իրանի հյուսիս-արևմտյան մասը մինչև Համադան... Կասպից ծովի վերին մասը սովետական հին սահմանով։ Վերջապես այստեղ ներառվում են Իրաքի տարածքից Կիրկուկը և Մոսուլը, ինչպես նաև մի շերտ Սիրիայից»[26]։ Այսպիսով, պանթուրքիստների հավակնությունները ունեին ոչ միայն հակասովետական, այլև հակաարաբական և հակաիրանյան ուղղվածություն։ Նուրի փաշան հայտնեց, որ Թուրքիայում այս գաղափարները մեծ տարածում ունեն, և շարժման մեջ ներգրավված անձանց թվում է «Կովկասյան ռազմաճակատի հրամանատարը», իսկ «բանակի մեծ մասը համակրում է նրանց»։ Նուրի փաշան ընդգծեց, որ թուրքական կառավարության քիկոմքում չէ որ գործում է։ Այդ մասին նա տեղեկացրել է պրեմիեր մինիստր Սայդամին նախքան իր բեռլին ուղևորությունը։ Գնահատելով այդ շարժման զարգացման հեռանկարները, նա այնքան հեռու գնաց, որ նույնիսկ հայտարարեց. «Համապատասխան հարմար պահի. իշխանության գլուխ, անկասկած, կանցնի մի կառավարություն, որը կընդունի այս գաղափարները»[27]։

Գերմանիայի վերաբերմունքը զուսպ էր, և Նուրի փաշան «ինչ-որ չափով հիասթափված էր», որ իր առաջարկությունը «առանց խանդա-

«Ստալինյան ընդհանուր դիմակոծության ժամանակ ոչնչացվեցին հայ հոգևոր և մշակութային գործիչների ամբողջ սերունդներ։ Ոչնչացվեցին հայ գրականության, արվեստի, գիտության, տնտեսության, կրթության, լուսավորության, պետականության, զորքի և ոստիկանության գրեթե բոլոր գործիչները։ Ոչնչացվեցին հայ կոմունիստական կուսակցության գրեթե բոլոր ղեկավարները։ Ոչնչացվեցին հայ կոմերիտական կազմակերպության գրեթե բոլոր ղեկավարները։ Ոչնչացվեցին հայ կոլտնտեսությունների, սովխոզների, մեքենատրակտորային կայանների, գյուղատնտեսական արտելների, գյուղական խորհուրդների, գյուղական կոոպերատիվների գրեթե բոլոր ղեկավարները։ Ոչնչացվեցին հայ կոլտնտեսությունների, սովխոզների, մեքենատրակտորային կայանների, գյուղատնտեսական արտելների, գյուղական խորհուրդների, գյուղական կոոպերատիվների գրեթե բոլոր անդամները։ Ոչնչացվեցին հայ կոլտնտեսությունների, սովխոզների, մեքենատրակտորային կայանների, գյուղատնտեսական արտելների, գյուղական խորհուրդների, գյուղական կոոպերատիվների գրեթե բոլոր աշխատավորները։

Ոչնչացվեցին հայ կոլտնտեսությունների, սովխոզների, մեքենատրակտորային կայանների, գյուղատնտեսական արտելների, գյուղական խորհուրդների, գյուղական կոոպերատիվների գրեթե բոլոր անդամները, նաև նախագահ և գլխ. հաշվապահ ՍՍՀՄ-ի ԳԱՊ-ի նախագահության կողմից հրավիրված Ամենահայկական ժողովի մասնակիցները։ Ոչնչացվեցին հայ կոլտնտեսությունների, սովխոզների, մեքենատրակտորային կայանների, գյուղատնտեսական արտելների, գյուղական խորհուրդների, գյուղական կոոպերատիվների գրեթե բոլոր անդամները, նաև նախագահ և գլխ. հաշվապահ ՍՍՀՄ-ի ԳԱՊ-ի նախագահության կողմից հրավիրված Ամենահայկական ժողովի մասնակիցները։

ռոնացնել իր զորքերը սովետա-թուրքական սահմանում։ Այն նշանակում էր անուղղակի կերպով ապահովել Կովկասում առաջիկա ռազմական գործողությունների օժանդակությունը։ Թուրքական կառավարությունը համաձայնեց[33], քանզի ՍՍՀՄ-ի սահմանում զորքերի կենտրոնացումը բացի Գերմանիային աջակցելուց, առաջին հերթին համապատասխանում էր թուրքական կառավարող շրջանների ցանկություններին, այն է՝ Սովետական Միության պարտության պահին և կամ անմիջապես հետո՝ բռնի միացնել Սովետական Անդրկովկասը[34]։ 1942 թ. աշնանն արդեն այստեղ կենտրոնացել էին թուրքական 26 դիվիզիաներ, որոնց պատճառով Անդրկովկասում պահվեց սովետական զորքերի մի նշանակալի մասը։ Այն նպաստեց գերմանական ուժերի հաջողությանը Ռոստովում, նրանց առաջխաղացմանը դեպի Կուրան, Մայկոպի նավթային դաշտերի գավթմանը և այլն[35]։ Ի պատասխան 1942 թ. ամռանը ռեյխի նրա հետ ռազմական-քաղաքական դաշինք կնքելու համարյա ուլտիմատիվ[36] պնդմանը՝ Թուրքիան, հրաժարվելով հանդերձ, նորից ու նորից պնդում էր թուրքական կառավարության անփոփոխ Քշնամական վերաբերմունքը Սովետական Միության նկատմամբ։ Մենեմենչիօղլուն հայտարարեց, որ «Թուրքիան, ինչպես նախկինում, այնպես էլ այժմ, չափազանց որոշակիորեն շահագրգռված է բոլշևիկյան Ռուսաստանի հնարավորին չափ լիակատար պարտությամբ...»[37]։ Սարաջօղլուն արդեն որպես պրեմիեր մինիստր, իր համոզմունքն հայտնեց, որ «Ռուսական պրոբլեմը կարող է լուծվել Գերմանիայի կողմից միայն այն դեպքում, եթե աչքի առնվի Ռուսաստանում ապրող ռուսների առնվազն կեսը»[38]։ «Ռուսաստանի կործանումը,—շարունակում էր Սարաջօղլուն,—ֆյուրերի հերոսություն է, որի նմանը կարող է հարյուր տարին մեկ կատարվել և այն թուրքերի. էլ վաղեմի երազանքն է»[39]։ Միևնույն ժամանակ Թուրքիան կտրականապես դեմ էր Գերմանիայի կողմից Կովկասի զավթմանը[40]։ Այն ոչ մի կերպ չէր համապատասխանում նրա շահերին։ Այդ ժամանակ, ոչ միայն թուրքական կառավարությունը, այլև պանթուրքիստական և կովկասյան էմիգրանտական կազմակերպությունների գործիչները արդեն համոզվեցին, որ Գերմանիան բոլորովին էլ հակված չէ ստեղծելու կովկասյան անկախ պետություններ, առավել ևս թուլլ չի տա այդ շրջաններում մի երրորդ պետության որևէ ազդեցություն[41]։ Հարկ է նշել, որ փաստաթղթերը հավաստում են Թուրքիայի փորձերը՝ բանակցություններ վարելու Անգլիայի հետ՝ Սիրիայում իր տարածքային ձգտումները բավարարելու վերաբերյալ[42]։

Իր հերթին, անգլիական կառավարությունը դիմեց Սովետական Միությանը առաջարկով՝ ուղարկել իր զորքերը Բաքվի պաշտպանությանն աջակցելու համար[43]։

Թուրքիայի դիրքորոշումը 1942 թ. ամռանը և աշնանը, թույլ է տալիս ենթադրելու, որ թուրքական կառավարությունը, Սովետական Միության պարտության պահին կամ անմիջապես հետո, անգլո-գերմանական կոմպրոմիսի հույսով, պատրաստ էր օկուպացնելու Կովկասյան շրջանը, գուցե և հավակնելով Անգլիայի փոխըմբռնողությանը։ Քանդի նման իրավիճակում թուրքական զորքերի առաջխաղացումը նախ և առաջ պիտի նշանակեր նոր ամրակետի առաջացում Մերձավոր և Միջին արևելքի բրիտանական տիրույթների ճանապարհին։

Այս կամ այն կերպ, Թուրքիան կենտրոնացնելով իր զորքերը Սովետական Միության սահմանի վրա և ՍՍՀՄ-ի պարտության դեպքում պատրաստ լինելով ներխուժելու Կովկաս, սպասում էր դեպքերի հետագա զարգացմանը[44]։

Թուրքիան, 1943 թ. գարնանը, որոշակի քայլեր կատարեց մերձենալու համար Անգլիային, ԱՄՆ-ին։ Նա նույնիսկ մտահոգություն ցուցաբերեց ՍՍՀՄ-ի հետ իր հարաբերությունների վիճակի նկատմամբ։ Թուրքական դիրքորոշման նման փոփոխությունները հարուցված էին սովետա-գերմանական ճակատում գերմանական բանակի պարտությամբ, թեև թուրքական կառավարող շրջանները շարունակում էին փայփայել այն հույսը, թե Գերմանիան կկարողանա «ընդարձակ մի օպերացիայով վերջին և ուժգին հարված հասցնելու սովետներին»[45]։ Թուրքական քաղաքականության հակասովետիզմը արդեն հիմք հանդիսացավ անգլո-թուրքական փոխըմբռնման համար։ Այս իմաստով շատ բնորոշ են Ադանայում 1943 թ. հունվարի 30—31-ին Անգլիայի պրեմիեր մինիստր Վ. Չերչիլի և Թուրքիայի պրեմիեր մինիստր Շ. Սարաջօղլուի միջև տեղի ունեցած բանակցություններն։ Այստեղ եկան նաև պրեզիդենտ Ինենյուն, մարշալ Ջաքմաքը, արտաքին գործերի մինիստր Ն. Մենեմենջիօղլուն[46]։ Թեև Ադանայի կոնֆերանսի արդյունքներն առաջին հայացքից հիասթափեցնող էին թվում Անգլիայի համար, և թուրքական կառավարությունը Անգլիային ոչ մի հիմք չէր տվել ենթադրելու, թե ինքը երբևէ կմտնի պատերազմի մեջ, այսուհանդերձ Չերչիլը թուրքական քաղաքականության հետագա զարգացման վերաբերյալ լի էր լավատեսությամբ[47]։

Ավելին, Չերչիլը ստիպված էր հանգստացնել թուրքական պետական գործիչներին, խոստանալով անգլիական պառլամենտում բացահայտորեն հայտարարել թե ինքը «առաջարկել է Թուրքիային զենքի անհատույց մատակարարում», որ ինքը «հույս ունի, թե Թուրքիան հավատարիմ կմնա Անգլիայի հետ պայմանագրին», և որ ինքը «ցանկանում է պատերազմից հետո ևս Թուրքիան շարժակի մնալ անվտանգության ու կարգի այնպիսի մի ամրոց, որի վրա Անգլիան կարողանա հենվել, բայց և որ այդ խնդրի լուծման համար, նա համապատասխան ուժով ապահովված պիտի լինի»[48]։

Ինչ վերաբերում է իրերի իսկական դրությանը, ապա Չերչիլը առաջ քաշելով երկրորդ ճակատի «բալկանյան տարբերակը», որն իր բնույթով ոչ պակաս հակասովետական էր, քան հակագերմանական և իր հաշվարկներով կոչված էր միաժամանակ դուրս շպրտել Գերմանիային այդ շրջանից և փակել սովետական զորքերի մուտքը Եվրոպա, հասկանում էր, որ դա չի հաջողվի առանց Թուրքիայի աջակցության։ Ուստի նա Ադանայում ձգտում էր ապահովել թուրքական կառավարության աջակցությունը առաջին հերթին հենց այս ծրագրի իրականացման համար։ Որպեսզի սովետական կառավարությանը որևէ կերպ բացատրի Թուրքիային ծայր աստիճան ուժեղացնելու և զինելու Անգլիայի ձգտումը, Չերչիլն աշխատում էր հավատացնել Սովետական Միությանը, որ Թուրքիայի մուտքը պատերազմ հակահիտլերյան կոալիցիայի կողմից՝ ռեալ է[49]։ Հետաքրքրական է, որ այդ ժամանակ «արքանյակ» երկրների բազմաթիվ պետական գործիչներ համոզված էին, որ «Արևմտյան դաշնակիցները ավելի շահագրգռված էին կանխելու սովետական ուժերի մուտքը Եվրոպա, քան թե ոչնչացնելու հիտլերյան ռեժիմը»[50]։ Նրանք հասկանում էին, որ Սովետական Միությունը պատճառներ ունի անհանգստանալու համար Թուրքիայի զինումից։ Ադանայի կոնֆերանսի առիթով շատ բնորոշ է Անկարայում հունգարական դեսպանորդ Վերնյոյի կարծիքը. «Այլ բան է, թե ինչպես կվերաբերվի այդ կոնֆերանսին Ստալինը, որն արդեն բողոք էր հայտնել Վաշինգտոնում Թուրքիային զինելու դեմ, իրավամբ գտնելով, որ ի վերջո այն իր դեմ է ուղղված»[51]։ Ինչպես հաստատում է իր հուշերում Թուրքիայի Ռումինիայի նախկին դեսպանորդ Կրեցյանոմն, Ադանայի բանակցություններում Անգլիայի և Թուրքիայի գլխավոր շտաբների բարձրագույն ներկայացուցիչների մասնակցությունը բալկանյան երկրների կողմից գնահատվել է որպես կարևոր փուլ երկրորդ ճակատի «բալկանյան

տարբերակին» նախապատրաստման գործում[52]։ Ինչ վերաբերում է թուրքական պետական գործիչներին, ապա նրանց մեջ՝ հակահիտլերյան կոալիցիայում հնարավոր ճեղքվածքի հույս ծագեց՝ դրանից բխող արդյունքներով։ Ադանայի բանակցությունների ընթացքում Չերչիլի դիրքորոշումը թուրքական կառավարությունը դիտեց որպես «թուրքիայի հետ համագործակցելու Լոնդոնի ձգտում՝ միասին կանխելու հեղափոխական շարժումների զարգացումը Բալկաններում և բալկանյան երկրների ազատագրումը Սովետական բանակի կողմից»[53]։ Ինչպես վկայում է Չերչիլը, իր հետ զրույցի ժամանակ, թուրքիայի պրեմիեր մինիստրը հայտարարել է, թե «ողջ Եվրոպան սլավոններով և կոմունիստներով լեցուն է» և ավելացրել. «Եթե Գերմանիան ջախջախվի, բոլոր պարտված երկրները կդառնան բոլշևիկյան և սլավոնական»[54]։

Մոտավորապես այդ նույն ժամանակ Ռումինիայի արտաքին գործերի մինիստր Ռ. Անտոնեսկուն Բուխարեստում իտալական դեսպանորդին հաղորդեց, որ «թուրքական դեսպանը հատկապես այցելեց ինձ, որպեսզի հաղորդի, որ Ամերիկան և, մասնավորապես, Անգլիան Եվրոպա են շտապում՝ ավարտելու պատերազմը, սակայն ամեն կերպ կցանկանային հօգուտ Ռուսաստանի եվրոպական սիստեմի տապալումից խուսափել»[55]։ 1943 թ. գարնանից Թուրքիան սկսեց ակտիվորեն նախ և առաջ դիվանագիտական մանակցություն ցուցաբերել Չերչիլի փայփայած երկրորդ ճակատի «բալկանյան տարբերակին» նախապատրաստման գործում՝ թուրքական կառավարությունը դիվանագիտական լարված ակտիվություն ցուցաբերել սկսեց Բալկանյան երկրներում «պետությունների ինքնապաշտպանական բլոկ», ստեղծելու նպատակով[56]։ Նշված երկրների քաղաքական գործիչների մոտ աստիճանաբար թուրքական քաղաքականության զարգացման հեռանկարի մասին որոշակի կարծիք սկսեց կազմվել։ «Մենք կարծում ենք,— հայտնում էր իր կառավարությանը հունգարական դեսպանորդը Սոֆիայում,—որ Թուրքիան հանդես կգար միմիայն այն դեպքում, եթե անգլիական և ռուսական ուժերի ճնշման ներքո գերմանացիները ստիպված լինեին հանելու իրենց զորքերը Էգեյան ծովի կղզիներից և Բալկանյան Թերակղզուց։ Թուրքիան, որին կաջակցեին անգլիական զորքեր, գերմանացիների գնալուց հետո առաջացած դատարկությունը կլցներ խաղաղ օկուպացնելով Բալկանները։ Թուրքիան այնտեղ կմնար մինչև Բալկանյան Թերակղզու քաղաքական վերակազմավորման ավարտը։ Այդ

ժամանակաընթացքում կավարտվեր հարավ-արևելյան բլոկի ձևավորումը, որի մեջ կմտներ և Հունգարիան»[57]։

Թուրքական կառավարությունը լիարժեք ըմբռնում և արձագանք գտավ Բալկանյան երկրների կառավարող շրջաններում, որոնք առիթ էին փնտրում պայմանավորվելու արևմտյան դաշնակիցների հետ։ Թուրքական բանակցությունները գնալով ավելի ընդարձակ բնույթ էին կրում։ Նրա դիվանագիտական աշխուժությունը ընթանում էր անգլո-թուրքական շտաբների բանակցություններին զուգահեռ՝ համաձայն Ադանայում ընդունված որոշումների[58]։ Երկրորդ ճակատի «բալկանյան տարբերակի» հետ կապված Չերչիլի ծրագրերի խորտակումը վերջ տվեց այս ուղղությամբ թուրքական կառավարության գործունեությանը։

Գնալով աճում էր ԱՄՆ-ի և Անգլիայի ճնշումը՝ հասնելու այն բանին, որ Թուրքիան մասնակցի պատերազմական գործողություններին[59], իսկ ավելի ուշ՝ Գերմանիայի հետ դիվանագիտական հարաբերությունների խզմանը և ռեյխին պատերազմ հայտարարելուն։ Այն պիտի ապահովեր Թուրքիայի անդամությունը Միավորված ազգերի կազմակերպությունում[30]։ Առանց մանրամասն կանգ առնելու Սովետական Միության նկատմամբ Թուրքիայի ունեցած դիրքորոշման վրա, հարկ է նշել, որ սովետական զորքերի հաղթական առաջխաղացումը[61] և ԱՄՆ-ի ու Անգլիայի վերը նշված որոշակի նկատառումներով աճող ճնշումը ստիպեցին թուրքական կառավարությանը իր դիրքորոշումը համապատասխանորեն սրբագրելու[62]։ Եվ վերջապես 1945 թ. փետրվարի 23-ին, Թուրքիան պատերազմ հայտարարեց Գերմանիային և Ճապոնիային՝ չթաքցնելով, որ անում է այն ԱՄՆ-ի և Անգլիայի ուղղակի ճնշման տակ[63]։

Թուրքիայի դիրքորոշումը պատերազմական բոլոր տարիների ընթացքում վկայում է թուրքական կառավարող շրջանների անփոփոխ հակասովետական դիրքորոշման, պանթուրքիզմին թուրքական պետական գործիչների նվիրվածության և թուրքական քաղաքական կուրսի բացառիկ շահադիտական էության մասին։ «Սառը պատերազմի» տարիներին Թուրքիան ակտիվորեն ներգրավվեց նրա մեջ՝ մինչև օրս էլ շարունակելով մնալ իմպերիալիզմի և ռեակցիայի կարևորագույն պատվար Մերձավոր արևելքում։

Р. С. КОРХМАЗЯН

ПОЗИЦИЯ ТУРЦИИ ОТНОСИТЕЛЬНО СОВЕТСКОГО СОЮЗА В ПЕРИОД ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ (1941—1943 гг.)

Резюме

Анализ публикаций архивных документов различных стран позволяет проследить позицию турецких правящих кругов относительно Советского Союза в течение всех военных лет. Документы констатируют, что еще до нападения Германии на СССР, Турция, официально занимавшая позицию невоюющего союзника Англии и Франции, разделяла и поддерживала антисоветские планы своих союзников, готовившихся к военному выступлению против СССР (в связи с советско-финляндской войной), питала захватнические планы относительно территории Кавказа.

Позиция Турции в течение 1941—1943 гг. свидетельствует об антисоветской направленности политики турецких правящих кругов, о приверженности турецких государственных деятелей идеям пантюркизма. Антисоветизм турецких правящих кругов носил не эпизодический характер, а был основным направлением их политики. Турция была готова содействовать агрессии против СССР любого империалистического блока—стран «оси» или западных держав,—рассчитывая осуществить аннексию территорий Кавказа в момент или непосредственно после поражения СССР в войне.

Последовательный антисоветизм турецкой политики позднее, в период «холодной войны», привел Турцию в лагерь империализма и реакции, чьим важнейшим оплотом на Ближнем Востоке она продолжает оставаться до сегодняшнего дня.

1 1939 թ. մայիսի 12-ին Թուրքիայի պրեզիդենտը Ազգային մեծ ժողովում և Անգլիայի պրեմիեր մինիստրը Համայնքների պալատում հայտարարեցին, որ Միջերկրական ծովի շրջանում ագրեսիայի դեպքում, Թուրքիայի և Անգլիայի կառավարությունները պատրաստ կլինեն համագործակցության և իրենց տրամադրության տակ գտնվող ամեն ինչ կօգտագործեն միմյանց օգնելու և աջակցելու համար։ (Documents on British Foreign Policy, 1919—1939, Third ser., vol. V, doc. 506 (*այսուհետև* DBFP).

2 Дж. Батлер, Большая стратегия, Сентябрь 1939—июнь 1941, М., 1959, с. 81; DBFP, ser. D, vol. V, doc. 144; Akten zur Deutschen Auswärtigen Politik 1918--1945, Ser. D: 1937—1945, Bd. 6, Dok. 413 (*այսուհետև* ADAP).

3 **G. Gafencu.** Last days of Europe, N. Y., 1948, p. 195—196.

4 «СССР в борьбе за мир накануне второй мировой войны». Документы и материалы, М., 1971, док. 234, 246, 265. 269, 273; «СССР и Турция. 1917—1979», М., 1981, с. 150—156: Н. Жуковский. На дипломатическом посту. М., 1973, с. 318—335.

5 *Անգլո-ֆրանս-թուրքական պայմանագիրը ստորագրվեց հակառակ լայնորեն տարածում գտած այն կարծիքի, թե Թուրքիան ոչ մի պատճառ չունի հանդես գալու որևէ մեկի կողմից* (ADAP, Ser. D. Bd. 7, Dok. 446: E. Vere—Hodge. Turkish Foreign Policy 1918—1950, London, 1951, p. 130).

6 *Թուրքիան, ըստ պայմանագրի, խոստացել էր օգնել իր դաշնակիցներին, եթե նրանք Միջերկրական ծովի շրջանում ագրեսիայի հետևանքով ներքաշվեն պատերազմի մեջ։ Պայմանագրով չնախատեսված ագրեսիայի դեպքում Թուրքիան, համաձայն նրանց կողմից տրված երաշխիքների, պարտավոր էր՝ ամենաքիչը, բարեհաճ չեզոքություն պահպանել Անգլիան և Ֆրանսիան, իրենց հերթին, պարտավոր էին ամեն տեսակի օգնություն ցուցաբերել, եթե Թուրքիան հարձակման ենթարկվեր եվրոպական պետություններից որևէ մեկի կողմից և կամ այն դեպքում, եթե Թուրքիան ներքաշվեր պատերազմի մեջ՝ Միջերկրական ծովի շրջանում ագրեսիայի հետևանքով։ Պայմանագրին կից № 2 արձանագրությունը իրավունք էր վերապահում Թուրքիային հրաժարվելու իր պարտականություններից, եթե նրանց իրագործումը կարող էր Սովետական Միության դեմ պատերազմի մեջ ներքաշել* (Great Britain Treaty of Mutual Assistance between His Majesty in Respect of the United Kingdom, the President of the French Republic and the President of Turkish Republic, Angora, October 19, 1939).

7 «Международное положение и внешняя политика СССР». Сб. документов и материалов, М., 1939, с. 170.

Ինչպես ցույց տվեցին այս բանակցությունները, թուրքական կառավարությունը առաջարկելով Սովետական Միությունը փոխօգնության պայմանագիր կնքել՝ նպատակ ունենալով Բալկանների և Նեղուցների շրջանները, նախ և առաջ գտում էր չեզոքության քաղաքականություն վարող ՍՍՀՄ-ին անուղղակիորեն ներքաշել Անգլիայի և Ֆրանսիայի հետ անուղղակի դաշինքի մեջ։ Թուրքական կառավարության առաջարկած սովետա-թուրքական դաշնագրի հետևանքով ՍՍՀՄ-ը կարող էր ներքաշվել Գերմանիայի և Իտալիայի դեմ պատերազմի մեջ՝ չունենալով որևէ երաշխիք Անգլիայի և Ֆրանսիայի կողմից (История дипломатии т. IV., М., 1975, с. 23—24; СССР и Турция. 1917—1979, с. 154—156).

8 *Տե՛ս՝* „Die Geheimakten des französischen Generalstabes" (Auswärtiges Amt 1939/41. № 6), Berlin, 1941; Р. Юрьев. Подготовка Англии и Франции к нападению на Советский Союз с юга в 1939—1940 годах, „Вопросы истории", 1949, № 2; Я. К. Караосманоглу, Дипломат поневоле (Воспоминания и наблюдения), М., 1966.

9 Die Geheimakten..., dok. 20.

10 Die Geheimakten..., dok. 26, 28.

11 Die Geheimakten..., dok. 20.

12 Documents on German Foreign Policy 1918—1945 (*այսուհետև՝* DGFP), Ser D: 1937—1945, vol. XII. doc. 514.

13 DGFP, ser. D, vol. XII, doc. 514, 523.
14 DGFP, ser. D, vol. XII, doc. 514 523, 595.
15 DGFP, ser. D, vol. XII, doc. 556.
16 Foreign Relations of the United States. Diplomatic Papers *(այսուհետև՝* FR), 1941, vol. 3. British Commonwealth. The Near East and Africa, Washington, 1959, p. 867. *Մաքմիքրեյ հեռլին 1941 թ. 21—հուլիսի. Տե՛ս նաև Թուրքական դեսպանի հետ Հիտլերի զրույցի գրառումը 1941 թ. հունիսի 19—ին։* („Staatsmänner und Diplomaten bei Hitler". Zweiter Teil. Frankfurt M., 1970. S. 53 - 541).
17 FR, 1941, vol. III, p. 854. H. Knatchbull—Hugessen, Diplomat in Peace and War, London, 1949, p. 169—170.
18 *Թուրքական թերթերը մատնանշում էին Սովետական Միության ռազմական հզորությունը,* „Ulus", „Yeni Sabah", „Tan" *և այլն՝ 1941թ. հունիսի 23—ից։*
19 DGFP, ser. D, vol. XII, doc. 514.
20 L. Krecker. Deutschland und die Türkei im Zweiten Weltkrieg, Frankfurt /Main, 1964, S. 190; DGFP, ser. D, vol. XII, doc. 670.
21 „Milliyet", 8·10·1967.
22 DGFP, ser. D, vol. XIII, doc. 2; J. Glasneck, Die Türkei im deutsch-anglo-amerikanischen Spannungsfeld, J. Glasneck, I. Kircheisen, Türkei und Afghanistan—Brennpunkte der Orientpolitik im zweiten Weltkrieg, Berlin 1968, p. 149.
23 *Գերմանական փաստաթղթերում և գրականության մեջ հիմնականում օգտագործվում է «Բուրանիոն» տերմինը։*
24 *Գերմանիայի Արտաքին գործերի մինիստրության ուշագրությունը հրավիրելով այդ հարցի վրա, Պապենը նշում է, որ «Թուրքական կառավարող շրջանները գնալով ավելի շատ են սկսում զբաղվել Թուրք-ռուսական սահմանի այն կողմում գտնվող իրենց հայրենակիցների, մանավանդ՝ ազրբեջանական թուրքերի ճակատագրով»։* („Документы Министерства иностранных дел Германии", вып. 2. Германская политика в Турции (1941—1943), 1946, док. 10, с. 34) *Գլխավոր շտաբի Ակադեմիայի պետ Ալի Ֆուադ Էրդենը հավատիացրեց Պապենին, որ Թուրքիան դեռ կլինենք, եթե հովկասում ստեղծվեր տեղի ժողովուրդների ֆեդերացիա «ոտքերիցատև կախված Թուրքիայից, իսկ հովկասից Աբխազը անկախ Թուրքական պետության կազմավորումը՝ լավագույնը կհանդիսանար որոշումներիդ»։* (DGFP, ser. D, vol. XIII, doc. 125. *Պապենը Ռիբբենտրոպին, 1941 թ. հուլիսի 18—ին)։*
Ավելի ուշ, Գերմանական արտաքին գործերի մինիստրության պետական քարտուղար Վեյցզեկերի հետ զրույցի ժամանակ, Բեռլինում Թուրքական դեսպանը «բավականին բացահայտ ասել էր այն մասին, որ հետագայում հնարավոր է հովկասյան ժողովուրդներին միավորել մեկ բուֆերային պետության մեջ և ակնարկել, որ Կասպից ծովից արևելք ևս հնարավոր էր ստեղծել անկախ Թուրքական պետություն... Էրդենը չկապտեց շոշափել հիմնական հարցը՝ բնութագրելով Բաքուն որպես մի՝ քաղաք, ուր ողջ բնակչությունը խոսում է Թուրքերենով»։ („Документы МИДа Германии", док. 11, с. 40—41; DGFP, ser. D, vol. XIII, doc. 179. *Վեյցզեկերը՝ Ռիբբենտրոպին, 1941 թ. օգոստոսի 5-ին)։*

25 Նույնիսկ Նուրի փաշան (Քյուչուք) էնվեր փաշայի եղբայրը, որը կազմակերպության ղեկավարներից էր, հասկանում էր, որ անհնարին է պահանջել Գերմանիայից Թուրքիային անմիջապես միացնելու արդեն գրավված կամ գրավվելիք շրջանները:

26 DGFP, ser. D, vol. XIII. doc. 361. *Վեհմանի 1941 թ. սեպտեմբերի 26-ի մեմորանդումը, տե՛ս նաև* doc. 194. *Ծանոթագրություն* 5; doc. 298; „Документы МИДа Германии", док. 10, с. 34—39.

27 DGFP, ser. D, vol. XIII, doc. 361. *Թուրքիայում պանթուրքիստական կազմակերպությունների գործունեության մասին տե՛ս* Р. П. Кондакчян. Внутренняя политика Турции в годы второй мировой войны, 1978, с. 164—219.

28 Գերմանիային նախ և առաջ զսպում էր իր և Թուրքիայի միջև սերտորեն դաշնակցելու հարցում պաշտոնական կառավարող շրջանների դիրքորոշման և պանթուրքիստական կազմակերպությունների գործունեության միջև եղած տարաձայնությունը: Գերմանիային շահավետ չէր նաև պանթուրքիստների ծրագիրը: (Տե՛ս „Нюрнбергский процесс", Сб. материалов в семи томах, т. II, с. 584) *Ինքնատրոպին ուղղված իր հուշագրում Վեհմանը՝ համահնչուն Հիտլերի գաղափարներին ուղղակիորեն նշում է. «Սովետական Միության պարտությունից հետո նախկին Ռուսաստանի տարածքը պետք է դառնա միմիայն Գերմանիայի, ոչ թե այլ պետությունների տիրապետության ներքո»: «Նավթային շահերի տեսակետից» Վեհմանը անցանկալի էր դառնում Մոսուլի շրջանի հանձնումը Թուրքիային, թեև որոշակի հանգամանքների դեպքում հնարավոր էր համարում նման քայլը: Մինչդեռ Բաթումի և Քաքվի շրջանների Թուրքիայի ձեռքն անցնելը միանգամայն բացառում էր:* (DGFP ser. D, vol. XIII, doc. 361).

Թերևս միայն Թուրքեստանում էր հնարավոր համարում «քաշալերել Թուրքիային դաշնակից թուրքական պետության ստեղծումը»:

29 DGFP, ser. D, vol. XIII, doc. 475. *Հիվելի 1941 թ. Նոյեմբերի 18-ի մեմորանդումը:*

Հետագա ողջ ժամանակաընթացքում Գերմանիայի արտաքին գործերի մինիստրությունը, աչակցելով և ֆինանսավորելով պանթուրքիստական կազմակերպություններին՝ նրանց օգտագործել է թուրքական կառավարության վրա ճնշում գործադրելու և լրտեսության համար: („Новейшая история Турции", М., 1968, с. 191).

30 «Внешняя политика Советского Союза. 1946 год». 1952, с. 167—168.

31 Дж. Батлер, Дж. Гуайер. Большая стратегия. Июнь 1941—август 1942, М., 1967, с. 155.

32 1941—43 թթ. թուրք-գերմանական հարաբերությունների մասին մանրամասն տե՛ս

Корхмазян Р. С., Турецко—германские отношения в годы второй мировой войны, Ереван, 1977, с. 91—133.

33 «Документы МИДа Германии», док 16, стр. 58—59; док. 18, стр. 73; ADAP, Ser. E, Bd. 1, Dok. 97.

34 Գերմանա-ֆաշիստական զորքերի չախչախումը Մոսկվայի մատույցներում, Սովետական Միության գեմ, ընդհանրապես պատերազմի ծրագրի խորտակումը, գուցե և առաջին անգամ Թուրքիային բերեց այն հետևության, որ անգլո-ամերիկա-սովետական լիակատար հաղթանակը հնարավոր է: Այս տարբերակը նույնպես

Թուրքիային նպատակահարմար չէր։ Բացատրելով Թուրքական կառավարության վիրքորոշումը, Պապենը դեկուցում էր Բեռլին. «... Հնարավոր եղը Սովետական Միությանի օգնությամբ անգլո-ամերիկյան դաշինքի լիակատար հաղթանակն է։ Թուրքիայի կարծիքով դա համազոր էր Եվրոպայի լիակատար կործանման, քանզի ո՛չ Անգլիան և ո՛չ էլ ԱՄՆ-ը ի վիճակի չեն լինելու կանգնեցնել ոչ ռուսների հնշումը տարածքային հարցում և ո՛չ էլ կարողանալու են կանխել պատերազմից հետո, տանջված ու աղքատացած Եվրոպայի բոլշևիկացումը»։
(Документы МИДа Германии", док. 16, с. 55; ADAP, Ser. E, Bd. 1, Dok 97).
Հակահիտլերյան կոալիցիայի մասնակիցներից միայն Սովետական Միության պարտությունն էր շարունակում երաչել Թուրքական կառավարությունը։
Այսպես, Մենեմենջողլուն պնդում էր, որ ինքը և արտաքին գործերի մինիստր Սարաջօղլուն ծրինդ անգլիացի բարեկամների մոտ կասկած անգամ չեն թողել, որ Թուրքիան ցանկանում է պարտված տեսնել սովետներին։ Թուրքիան երբեք և ոչ մի տեսակետից չի կարող ցանկանալ, որ Ռուսաստանի հաղթանակն գնպգում, Եվրոպայում նոր կարգերի հաստատման գնպգում Սովետական Միությունը որոշակի ազդեցություն ունենա։ Միևնույն ժամանակ, Թուրքական այդ հայացքների կոնկրետացումը այսօր քաղաքական ակտ կնշանակեր, որը Թուրքիան չի կարող իրեն թույլ տալ։ (Документы МИДа Германии", док. 18, с. 72—73. Պապենը արտաքին գործերի մինիստրությանը. 1942 թ. դեկտեմբերի 16-ի քաղաքական գեկույց).

35 С. М. Штеменко, Генеральный штаб в годы войны, кн. I, М; 1968, с. 54.
Այստեղ էր գտնվում սովետական 45-րդ բանակը։ Իրանա-Թուրքական սահմանին կանգնած էր հրաձգային և տանկային բրիգադներով ուժեղացված 15-րդ հեծելազորային կորպուսը, եթե Թուրքիան հաքվի վրա հարձակվեր Իրանի վրայով։

36 Գերմանական դիվանագետների հայտարարություններում կրկին երևան եկած սլաստնալիքներն արդեն սոսկ սովորական գերմանական դիվանագիտական գործնելաոճ չէին։ Դրանց եռևում աքողված էին գերմանական դիրքորոշման զգալի փոփոխությունները՝ Թուրքիայի հետ հետագա հարաբերությունների հարցում։ 1942 թ. ամռանը Գերմանիայի արտաքին գործերի մինիստրությունը կազմեց մի ծավալուն փաստաթուղթ «Թուրքիայի դատապարտելի քաղաքականությունը ասանդքի» երկրների նկատմամբ՝ պատերազմում»։ Այստեղ տեղ էին գտել Թուրքական կառավարության նկատմամբ ունեցած Գերմանիայի բոլոր պահանջները՝ սկսած 1939 թ. հոկտեմբերի 19-ի անգլո-ֆրանս-Թուրքական պայմանագրից։
(DZA Potsdam, A. A., Pol. № 61173, Bl. 82 ff.)

37 «Документы МИДа Германии», док. 26, с. 92: Պապենը՝ արտաքին գործերի մինիստրությանը, 1942 թ. օգոստոսի 26—ին։

38 «Документы МИДа Германии», док. 27, с. 98. Պապենը՝ արտաքին գործերի մինիստրությանը, 1942 թ., օգոստոսի 27—ին։

39 «Документы МИДа Германии», док. 27, с. 98.

40 «Документы МИДа Германии», док. 26, с. 91; док. 29, с. 110—111.

41 «Документы МИДа Германии», док. 25, с. 88. Դիտմանը՝ Տեպպել-սկիրբեին, 1942 թ. օգոստոս 6—ին։

42 ADAP, Ser. E, Bd. 2, Dok. 120. Ռիբբենտրոպը՝ Պապենին, 1942 թ. ապրիլի 8-ին։

43 «Переписка Председателя Совета Министров СССР с президентами США и премьер-министрами Великобритании во время Великой Отечественной войны 1941—1945 гг.». т. I, док. 77, с. 69. *Չերչիլը՝ Ի. Վ. Ստալինին, 1942 թ. հոկտեմբերի 9-ին։*

44 *1942 թ. հոկտեմբերի 25-ին Ռումինիայում Թուրքիայի դեսպան Թանրյովերը այդ երկրի պրեմիեր մինիստրի տեղակալի հետ զրույցի ժամանակ նշեց, որ «Ռուսաստանը, ինչպես և առաջներում, Թուրքիայի համար առաջին թշնամին է և որ Թուրքիան կշարունակի խիստ չեզոքություն պահպանել»։*

(„Документы МИДа Германии". док 32, с. 124).

45 J. Glasneck, op. cit. s. 137.

Ստալինգրադի մոտ և Հյուսիսային Աֆրիկայում գերմանական բանակի պարտությունը Թուրքական կառավարող շրջաններում երկակի ռեակցիա առաջ բերեց։ Գերմանական դեսպանի վկայությամբ, դաշնակիցների հաղթանակը էլ-Ալամեյնի մոտ, Թուրքիայի պետական գործիչների կողմից ընդունվեց «մեծագույն թեթևությամբ»։ Քանզի նրանք, ինչպես նշում է Պապենը, երբեք երջանիկ չեն զգացել գերմանական բանակի մոտիկությունից իրենց երկրի հյուսիսում, արևմուտքում և հարավում։ (F. von Papen, Memoirs, London, 1952, p. 493.)

Ընդհակառակը, Սովետական Միությունում գերմանական բանակի նահանջը Թուրքական կառավարող շրջաններում մեծ հիասթափություն առաջ բերեց։ Թուրքիայի Գլխավոր շտաբի պետի տեղակալ Ասըմ Գյունդուզը Գերմանիայի զինվորական կցորդից չէր թաքցնում «այն մեծ մտահոգությունը», որ «Ռեյխին երևի չի հաջողվի ավարտին հասցնելու գործողությունը Արևելյան ճակատում, որը պիտի ապահովեր Եվրոպայի անվտանգությունը»։ („Документы МИДа Германии". док. 33, с. 126. *Պապենը՝ արտաքին գործերի մինիստրությանը, 1942 թ. դեկտեմբերի 2-ին)։ Դաշնակիցների հաղթանակի նկատմամբ Թուրքիայի նման ռեակցիայի մասին է նշում Ստամբուլում գլխավոր հյուպատոս Չեյլերը. «Թուրքիան բոլորովին չէր ցանկանա տեսնել Անգլիայի դուրս մղումը Միջերկրական ծովից (Սուեզի նեղուցը), մյուս կողմից հաջողություններ է ցանկանում Ռուսաստանի դեմ մեր արշավանքի ժամանակ և անկեղծորեն մտահոգված է նրանով, որ շատ քիչ երկարատև պայքարում մեր ուժերը գուցե չբավականացնեն՝ հաղթելու համար ռուսներին։ Այս իմաստով նա ավելի քիչ է շահագրգռված, քան երբևէ՝ քանզի պատերազմի վերջնական հաղթանակի վերաբերյալ Թուրքական տեսակետը ծայրաստիճան կասկածելի է»։* („Документы МИДа Германии", док. 35, с 132: *Չեյլերը՝ արտաքին գործերի մինիստրությանը, 1942 թ. դեկտեմբերի 9-ին)։*

46 *«...Եթե անգլիական համաշխարհային կայսրության պրեմիեր մինիստրի այցը Թուրքիա ինքնին շատ նշանակալից դեպք է, ապա ավելի շատ մտածելու տեղիք է տալիս նրան ուղեկցող անձանց կազմը։ Օրենքով, նման շքախումբ ընդունված է ունենալ արտակարգ ռազմական իրավիճակներում։ Այդ իսկ պատճառով,—հաղորդում էր Անկարայում հունգարական դեսպանորդ Յանոշ Վերնյյոն Հունգարիայի պրեմիեր մինիստրին և արտաքին գործերի մինիստր Միկլոշ Կալլային,—սկզբում ես չէի ուզում հավատալ, որ Ադանայում, իրականում ոչինչ էլ չի կատարվել։*

(„Венгрия и вторая мировая война". Секретные и дипломатические доку-

менты из истории кануна и периода войны. Док. 157, с. 232. *Վերջնագրի հեռագիրը Մ. Կալլաիին, 1943 թ. փետրվարի 10-ին)։*

47 «Переписка...», т. I, док. 109, с. 88—89. *Վ. Չերչիլը՝ Ի. Վ. Ստալինին, 1943 թ. փետրվարի 1-ին։*

48 «Венгрия и вторая мировая война», док. 157, с. 291.

49 «Переписка...», т. I, док. 109, с. 88—89.
Սովետական կառավարությանը ուղղված Անգլիայի պրեմիեր մինիստրի հայտարարությունների «կոնսպեկտը» և անգլո-թուրքական կոնֆերանսի համաձայնեցված հետևությունները պարունակում էին Աղանայի բանակցությունների բնույթի մասին ոչ լրիվ տեղեկություններ։ Այնուհանդերձ Թուրքիայի քաղաքականության անգլիական գնահատման բացառիկ լավատեսությունը ընդունվեց բավականին դուրս։ («Переписка ...», док. III, էջ 90—91. Ի. Վ. Ստալինը՝ Վ. Չերչիլին)։

50 «Венгрия и вторая мировая война», док. 157, с. 292.

51 «Венгрия и вторая мировая война», док. 157, с. 292.

52 A. Cretzianu. The lost opportunity, London (1957). p. 87.

53 *Ըստ* **В. Л. Израэляна, Л. Н. Кутакова,** Дипломатия агрессоров. Германо-итало-японский фашистский блок. История его возникновения и краха, М., 1967, с. 280.

54 **У. Черчилль.** Вторая мировая война, т. 4, М., 1955, с. 693.
Թուրքական պետական գործիչները պնդում էին, որ «Գերմանիայի լիակատար պարտությունը ամիջ կտար Ռուսաստանին դառնալու մեծագույն վտանգը Թուրքիայի և Եվրոպայի համար» (F. von Papen, op. cit., p. 494—495; T. Ataöv Turkish Foreign Policy 1939—1945. Ankara, 1965. p. 107)։

55 *Ըստ* **В. Л. Израэляна, Л. Н. Кутакова,** указ. соч. с. 280.

56 *Թուրքիայի ղեկավար գործերի մինիստրը մի անգամ չէ, որ այն միտքն է արտահայտել, թե «Գերմանիայի հնարավոր պարտությունը կխաթարի հավասարակշռությունը Եվրոպայում և քաոս կառաջացնի։ Ատի անհրաժեշտ է ինչ-որ կերպ կանխել դրա տարածումը։ Մենեմենջիօղլուն գտնում էր, որ այն երկրները, որոնք ըստ էության կապ չունեն ներկայիս իմպերիալիստական պատերազմի հետ, պետք է կարողի և անվտանգության բլոկ կազմակերպեն՝ սահմանափակելու համար քաոսի տարածումը։ Նկատի են առնվում Թուրքիան, Հունաստանը, Բուլղարիան, Հարավսլավիան, Ռումինիան և Հունգարիան»։* («Венгрия и вторая мировая война, док. 157, с. 291).

57 «Венгрия и вторая мировая война». док. 157. с. 291.

58 «Переписка...», т. I, с. 392.

59 **Дж. Эрман.** Большая стратегия. Август 1943—сентябрь 1944, М., 1958, с. 232—233, 241; Documents on American Foreign Relations, vol. VI, с. 2 ৎ

60 *Միավորված ազգերի կազմակերպությունում Թուրքիայի անդամակցության հարցը լուծվեց 1945 թ. հետրվարի 4—11-ը Յալթայում տեղի ունեցած ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի կառավարությունների ղեկավարների Ղրիմի կոնֆերանսում։* («Тегеран—Ялта—Потсдам". Сб. документов, М., 1971, с. 157—158)

61 *1944 թ. գարնանը, թուրքական դիրքորոշման փոփոխությունը գերմանական գլխա-*

վոր շտաբի կարծիքով հետևանք էր սովետական զորքերի Ղրիմում և Սև ծովում տարած հաղթանակների։ (Kriegstagebuch des Oberkommados der Wenrhmacht 1941—1945. Bd. IV/1, S. 810—811.)

62 1944 թ. ապրիլի 20-ին Մեջլիսում Մենեմենջիօղլուն խոսում էր Թուրքիայի մասին ոչ թե իբրև չեզոք պետության, այլ ինչպես «Մեծ Բրիտանիայի և նրա դաշնակիցների դաշնակցի»։ «Եթե այնպես պատահի, որ թուրքական ազգի շահերը պահանջեն, որ մենք մեկ անգամ ևս զենք վերցնենք, դա մեզ համար անակնկալ չպիտի լինի։ Մենք գիտակցաբար և նյութապես միշտ պատրաստ կանվենք.— շարունակեց հայտարարել Մենեմենջիօղլուն (ըստ T. Ataöv, cit., p. 121—122).

1944 թ. օգոստոսի 2-ին հետևեց Գերմանիայի հետ Թուրքիայի դիվանագիտական հարաբերությունների խզման մասին հայտարարությունը։ Այդ քայլին թուրքական կառավարությունը ցուցադրաբար ստիպողական բնույթ տվեց։ Մի հանգամանք, որ լիովին համապատասխանում էր իրերի իսկական դրությանը, ինչպես ասում են՝ Թուրքիան և Գերմանիան «բաժանվեցին որպես բարեկամներ» („Правда". 30.8.1944; „Большевик" № 16. 1944; H. Knatchbull—Hugessen, op. cit., p. 202; F. von Papen, op. cit., p. 527; KTB OKW, Bd. IV/1 p. 679). Ճապոնիայի հետ Թուրքիայի դիվանագիտական հարաբերությունների խզումը 1945 թ. հունվարի 5-ին, իսկ հունվարի 12-ին՝ ըստ լենդ-լիզի սովետական Միության բեռներ տեղափոխող դաշնակիցների նավերի համար նեղուցների բացումը ևս արդյունք էր Արևմտյան դաշնակիցների չբուլացող ճնշման։

63 1945 թ. փետրվարի 20-ին Անկարայում անգլիական և ամերիկյան դեսպանները տեղեկացրին Թուրքական կառավարությանը Ղրիմի կոնֆերանսի որոշմանը։ Փետրվարի 23-ին թուրքական կառավարությունը պատերազմ հայտարարեց Գերմանիային և Ճապոնիային։ Թուրքական կառավարությունը բացահայտորեն ընդունեց, որ այդ քայլին է դիմել իրեն առաջարկած պայմանների ճնշման տակ։ «...Մենք պատերազմի մեջ մտանք գերմանացիների և ճապոնացիների դեմ՝ միմիայն դաշնակիցների պահանջով,—հայտարարեց Թուրքիայի պրեզիդենտը,—նրանց համար դա երևի ինչ որ նշանակություն ուներ, որի համար էլ պնդում էինն (İnönü'nün Söylev ve Demeçleri, İstanbul, 1946, p. 394).

Ա. Լ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՊԱԼԵՍՏԻՆԻ ՀԱՐՑԸ ԳՖՀ-Ի ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Մերձավոր արևելքում ԳՖՀ-ի ազդեցության ուժեղացումն ու շըրջանի երկրներում նրա տնտեսական էքսպանսիայի չափերի մեծացումը արդյունք էին արևմտագերմանական մի շարք կառավարությունների 70-ական թթ. և 80-ական թթ. սկզբին մերձավորարևելյան «հավասարակշռված» քաղաքականության։ Ընթանալով զարգացող երկրների նկատմամբ իմպերիալիստական տերությունների ընդհանուր քաղաքականության հունով, ջանալով խանգարել հեղափոխական պրոցեսների զարգացումն ու նրանց պահել կապիտալիզմի ուղեծրում, ԳՖՀ-ը արաբական, հատկապես նավթարդյունահանող երկրների հետ փոխհարաբերությունների ավելի ճկուն մեթոդների ու ձևերի տևական որոնումների մեջ էր, որը երբեմն, թեկուզ և ձևականորեն, կարծես թե հակասում էր իր գլխավոր դաշնակցի՝ Միացյալ Նահանգների շահերին։

Ժամանակակից փուլում ԳՖՀ-ի արաբական քաղաքականության մեջ կարևոր տեղ է գրավում մերձավորարևելյան ընդհարման կարևորագույն հարցերից մեկը՝ պաղեստինյանը։ Եվ հենց պաղեստինյան հարցի նկատմամբ ֆեդերալ կառավարության դիրքորոշման հայելում էլ անհրաժեշտ է դիտել ինչպես մերձավորարևելյան կոնֆլիկտի նկատմամբ ԳՖՀ-ի դիրքորոշման էվոլյուցիան, այնպես էլ ընդհանրապես նրա մերձավորարևելյան քաղաքականությունը։ Արևմտյան Գերմանիայի կառավարության առաջ ժամանակակից փուլում հանապազօր կանգնում է մերձավորարևելյան համապարփակ կարգավորման շրջանակներում պաղեստինյան հարցի լուծման ուղիները հստակորեն ձևակերպելու խնդիրը։ Ներկայումս գործնականում ԳՖՀ-ի քաղաքական բոլոր ուժերի կողմից գիտակցվում է այդպիսի կապը։

8—635

Սովետական պատմաբան է. Դմիտրիևը դիտել է տվել, որ «պաղեստինցի արաբների որպես պաղեստինյան ժողովուրդ համախառնարը պատմական մի գործընթաց է, որի վկաները մենք ենք[1] և այդ պրոցեսի հետ մեկտեղ երկու տասնամյակ է, որ շարունակ հարկ է լինում հիմնավորել պաղեստինյան ժողովրդի ինքնորոշման, ընդհուպ սեփական պետականություն ստեղծելու իրավունքը»[2]։ Այժմ Իսրայելից բացի ոչ ոք չի համարձակվում բացահայտորեն հերքել պաղեստինյան ժողովրդի այդ իրավունքը։ Ձևականորեն այժմ այդ իրավունքի գործադրման օգտին է հանդես գալիս նաև ԳՖՀ-ի կառավարությունը։

Սակայն «պաղեստինյան հարցը» որպես այդպիսին, ԳՖՀ-ի ուշադրությունը գրավեց լոկ 70-ական ԹԹ.։ Մինչ այդ, հետևելով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1967 թ. նոյեմբերի 22-ի բանաձևին, Բոննում խոսում էին սոսկ «գաղթականների հարցից» կարգավորման անհրաժեշտության մասին և ընդգծում, որ պաղեստինցի գաղթականների խնդիրը մերձավորարևելյան կոնֆլիկտի առանձնապես ողբերգական շերտն է։ Ինչպես հետագայում կանցլեր Վ. Բրանդտը նկատեց, այդ ձևակերպման մեջ առաջին հերթին շեշտվում էր հարցի մարդկային կողմը և ԳՖՀ-ը ակտիվորեն մասնակցում էր գաղթականներին օգնություն ցույց տալու ՄԱԿ-ի հատուկ ծրագրերին՝ 1967 թ. տրամադրելով 50 միլիոն մարկ[3]։ Պաղեստինյան հարցի վերաբերյալ առաջին ու բնութագրական հայտարարություններից մեկը 1972 թ. մայիսին արտաքին գործերի մինիստր Վ. Շեելի ելույթն էր, որում նշվում էր, որ մերձավորարևելյան կոնֆլիկտի կարգավորումը «անհնարին է թվում առանց պաղեստինյան հարցի արդարացի լուծմանն»[4], այլ խոսքով՝ Պաղեստինի հարցն արդեն չէր տարանջատվում մերձավորարևելյան կարգավորման մյուս խնդիրներից, ինչպես նախկինում։ Պաղեստինի հարցում ֆեդերալ կառավարության դիրքն ավելի հստակ ձևակերպմամբ սահմանվեց 1973 թ. հոկտեմբերյան պատերազմից հետո, երբ նավթարդյունահանող արաբական երկրների նավթային բոյկոտի սպառնալիքը, անկասկած նաև ԱՄՆ-ի պրոիսրայելյան կուրսն անվերապահորեն աջակցելու հարցում չկամությունը, հանգեցրին այն բանին, որ ԳՖՀ-ը կողմ քվեարկեց Եվրոպական տնտեսական միության (ԵՏՄ) 1973 թ. նոյեմբերի 6-ի հայտնի հայտարարությանը։ Այդ հայտարարության մեջ նշվում էր, որ Մերձավոր արևելքում խաղաղության հաստատելիս «անհրաժեշտ պիտի լինի հաշվի առնել պաղեստինցիների օրինական իրավունքները» և ոչ թե լոկ «ուշադրության առնել գաղթականների հարցը» ինչպես Անվտանգության խորհրդի № 242 բանաձևում

էր՞։ Այդ հայտարարությունը հետագայում հիմնարար դարձավ պաղեստինյան հարցին ԳՏՀ-ի մոտեցման համար և երբեմնակի, այս կամ այն չափով, լրացվեց ու մեկնաբանվեց պաշտոնական անձերի կողմից։

1974 թ. ապրիլին կանցլեր Բրանդտն արդեն հիշեցնում էր այն մասին, որ «պաղեստինցիների կյանքը, իրավունքն ու ապագան» կայուն և արդարացի խաղաղության անբաժան տարրերն են, ոչ թե երկրաշրջանում ճգնաժամի քաղաքական կարգավորման մի մասը, Պաղեստինի հարցը «մարդկային» խնդրից վերաճեց «քաղաքական» հարցի։ Անդրևրալ կառավարությունը դա կապակցեց «այն մարզերի քաղաքական կառուցվածքի» հարցի հետ, որտեղ ապրում են պաղեստինցիները և կամ «որտեղ վերադառնալու են», այլ խոսքով՝ Հորդանան գետի արևմտյան ափի և Ղազայի գոտու քաղաքական վարչակառույցի խնդրի հետ։ Դրա հետ մեկտեղ ԳՏՀ-ի կառավարությունը խուսափեց աջակցել պաղեստինյան սեփական պետություն ստեղծելու «կարծիքին» գտնելով, որ դա կնշանակեր «իրադարձությունների կանխում» մինչդեռ ԳՏՀ-ին «անհրաժեշտ է հաշվի առնել այդ ուղղությամբ անմիջականորեն մասնակից կողմերի նախաձեռնությունները»[6]։

Էրզրումից հետո ամերիկյան բողոքական միսիայի ներկայացուցիչները երևացին Բիթլիսում[22]։ Միաժամանակ սկսվեց նրանց «քարոզչությունը» Խարփութի հայերի շրջանում։ Նրանց գործունեության սկիզբը այստեղ վերաբերում է 1852 թ., երբ Դենմորը Խարփութում հիմնեց բողոքական եկեղեցի և դպրոց։ Հատուկ ուշադրության են արժանի միսիոներներ Հյուլլերն ու Ալենը, որոնց 1859 թ. Խարփութում հիմնած աստվածաբանական դպրոցը հետագայում տվեց Թուրքիայում «ամերիկանիզմի» տարածմանը մեծապես աջակցած մի շարք միսիոներներ[23]։ Քիլիսայում, Մարաշում, Ուրֆայում և այլ քաղաքներում բողոքականության պրոպագանդման գործում մեծ դեր խաղաց Այնթափի միսիան։ 1855 թ. վերջինիս միացավ Նախկինում Սիրիական միսիայի մեջ մտնող Անտիոքի մարզը՝ Հալեպից մինչև Քեսաբ, որտեղի քրիստոնյա բնակչության մեջ մեծ թվով թուրքախոս հայեր կային։ Սիրիայում միսիայի ընդլայնումը հանգեցրեց «Հարավ-հայկական միսիայի» ստեղծմանը, որի մեջ մտան Այնթափի, Մարաշի, Անտիոքի, Հալեպի և Ուրֆայի կայաններն։ Ադանան և Հաջընը ունեին առանձին կենտրոններ։ 1860 թ. «Հարավ-հայկական միսիայի» մեջ մտան այլ քաղաքների միսիոներական կայանները և այն կոչվեց «Կենտրոնական թուրքական միսիա»։

Քննված փաստերը ակնհայտորեն վկայում են, որ արդեն XIX դ. 30-ական թթ. սկզբին Փոքր Ասիայի Արևելյան ամբողջ տարածքը ծածկված էր միսիոներական կենտրոնների ցանցով, որտեղից ամերիկյան միսիոներները տարածում էին իրենց պրոպագանդան, քրիստոնյաների շրջանում ավելի ու ավելի ընդլայնելով սեփական ազդեցության ոլորտը։ Այդպիսի կենտրոնների թիվը շուտով հասավ 115-ի (որոնցից 5-ը գլխավոր կենտրոններ էին, իսկ 110-ը՝ դրանց բաժանմունքները)։ Նրանցից գրեթե յուրաքանչյուրն ուներ իր տպարանը[24], Արևելյան միսիան բացել է 160 դպրոց, որոնք ունեին 4320 աշակերտ, 208 ուսուցիչ։ Վերջիններիս մեջ կային ոչ միայն ամերիկացիներ, հույներ, այլև տեղացի բողոքական հայեր։ Միսիան ուներ 36 եկեղեցի[25]։ Նշանակալից նյութական միջոցների շնորհիվ ամերիկյան միսիոները թափանցեցին Արևմտյան Հայաստանի բոլոր անկյուններն։ Նրանց գործունեության շնորհիվ 1822—1885 թթ. բողոքականությունն ընդունածների թիվը այստեղ հասավ 45 հազարի[26]։ Առանձին կենտրոնների գործունեությունը կոորդինացնելու նպատակով կենտրոնական միսիոներական ընկերությունը գումարում էր ամենամյա համագումարներ, որոնք հերթականությամբ անց էին կացվում միսիայի 5 գլխավոր կենտրոններում։ Այդ համագումարների կազմակերպման համար հատկացվում էին խոշոր գումարներ։ Այսպես, օրինակ, 1885 թ. Էրզրումում կայացած համագումարի համար ծախսվեց 10 հազար ռուբլի։ Ընդորում մինչ այդ Թուրքիայում բողոքական պրոպագանդայի նպատակով արդեն ծախսվել էր 25 միլիոն ռուբլի[27]։ Այդ գումարները տրամադրվում էին ինչպես անհատ «բարեգործների» կողմից, այնպես էլ արտասահմանյան կառավարական աղբյուրներից։ Բողոքական միսիոներների գործունեությանը ըստ ամենայնի աջակցում էին ԱՄՆ-ի կառավարող շրջանները։ «Արևելքում միսիաները օգտվում են Կոստանդնուպոլսում և Թեհրանում իրենց դեսպանների աջակցությունից»,—գրում էր Ա. Մ. Կոլյուբակինը[28]։

Իրենց դրամական հսկայական միջոցներով, օգտագործելով գիտելիքների նկատմամբ բնակչության ձգտումը, բողոքական կազմակերպությունները Թուրքիայում ընդլայնված-սլրոպագանդիստական դործունեություն ծավալեցին։ Բավական է ասել, որ միայն 1888—1900 թթ. Ամերիկայի միսիոներները հրատարակել և Թուրքիայում տարածել են կրոնական բովանդակությամբ տարբեր լեզուներով 50000 գիրք և 100000 բրոշյուր։ Պրոպագանդիստական նպատակներով նրանք հրատարակում

էին 13 պարբերական (այդ թվում և մանկական, հայերեն «Ավետաբեր» ամսագիրը)։ Իրենց գործունեության սկզբից մինչև 1900 թ. միսիոներները ԱՄՆ-ից Թուրքիա են առաքել 7 միլիոն գիրք, ընդ որում նրանց գործունեության ամբողջ հատկացումների գումարը հասնում էր 10 միլիոն դոլարի (որից միայն վերջին տաս տարում ծախսվել էր 700000 դոլար)[29]։

Անդրադառնալով միսիոներների բուն նպատակներին, Թիֆլիսում լույս տեսնող «Արձագանք» թերթը գրում էր. «Միսիոներները ամեն կերպ աշխատում են մեռցնել հայոց մէջ հայրենիքը և ազգը սիրելու բնական զգացումները։ Նոքա հայերէն տառերով մեղ համար 300-ից աւելի գիրք ունին տպագրած, բայց դոցանից և ոչ մեկի մէջ կայ «ազգ» և «հայրենիք» բառերը»[30]։

Դիտության ծարավ մարդկանց ձեռքը կրոնական գրականության խցկելով նկատում էր ռուս հեղինակներից մեկը, միսիոներները «հողագործության, արդյունաբերության, հիգիենայի և կենսագործունեության այլ բնագավառների օգտակար դիտելիքների վերաբերյալ հանրամատչելի երկեր չեն հրատարակում։ Այդ իսկ պատճառով, եզրակացնում է նա, բողոքական միսիոներների պրոպագանդան ընդհանրապես շատ քիչ հաջողություն ունի[31]։ Եվ դրա բացատրությունը պարզ է՝ միսիոներական կազմակերպությունների գործունեությանը առաջադրվում էր ոչ թե բնակչության շահերով, այլ իրենց դոգմաները տարածելու և խարված մարդկանց իրենց հավատին բերելու դիտավորությամբ, այդ նպատակին ծառայեցնելով ամեն մի միջոց՝ ընդհուպ նրանց առանձին խմբերի և հոգևորականության միջև տարաձայնությունների հրահրումը։ Անդրադառնալով «ամեն ինչ քանդելու ձգտող անկոչ բարեփոխիչների» գործունեությանը Ա. Կոլյուբակինը դիպուկ նկատում էր, որ միսիոներները փոխարենը նոր ոչինչ չեն ստեղծում և որ այդ իսկ պատճառով, նրանց ջանքերը ժողովրդի մեջ ոչ հազվադեպ հակառակ արդյունքն են տալիս[32]։ Նայած պայմաններին այդ պայքարը զանազան ձևեր էր ստանում։ Այսպես, օրինակ, ի պատասխան Ներսիսյանի անվան դպրոցի (հաս. գյուղում) ուսումնական ծրագրում ամերիկացիների կողմից լանկաստերի ուսմունքը մտցնելուն, որն ընկալվեց որպես բողոքականության պրոպագանդա, դպրոցը փակվեց։ Հայտնի են բնակչության միսիոներների և նրանց կամակատարների դեմ ուղղված ավելի ակտիվ գործողություններ։ Այսպես, 1848 թ. զեյթունցիները դիմադրեցին միսիոներներին, որոնք փորձում էին այստեղ դպրոց հիմ-



այլև հաճախ՝ բողոքականների համակրանքը»[36]։ Դրանում իրենց ոչ փոքր վաստակն ունեին նաև դպրոցական ուսուցիչները, որոնք իրենց սաներին դաստիարակում էին հարազատ ժողովրդի, նրա ավանդույթների նկատմամբ սիրո ու նվիրվածության ոգով։ Ընդ որում նշենք, որ չնայած ուսուցիչներին իրենց կողմը գրավելու բազմաթիվ փորձերին, այդ թվում և բողոքական վերնախավի համագումարներին հրավիրելուն, նրանք բոյկոտում էին այդ համագումարները՝ բացահայտելով դրանց նպատակներն ու էությունը։

Փաստերը վկայում են, որ արդեն XIX դ. կեսերին ժողովուրդը ոչ միայն տարերայնորեն էր դիմադրում միսիոներների շարժմանը, այլև առկա էին այդ շարժման կազմակերպման որոշակի միտումներ։ Այսպես, 1846 թ. Կոստանդնուպոլսում ստեղծվեց «Համազգային ընկերություն», որը նպատակ էր դնում պայքարել հայերին բողոքականության հավատադարձելու դեմ։

Այդ կազմակերպության անդամները ջանում էին ամրացնել ժողովրդի հավատը լուսավորչական եկեղեցու նկատմամբ, ուժեղացնել նրա ազգային զգացումները և խորացնել սերը հայ ժողովրդի անցյալի ու նրա մշակույթի վերաբերմամբ։ Նրանք ժողովրդին բացատրում էին, թե ինչ վնաս է բերում ռենեգատությունը իրենց ազգային շահերին։

Չնայած դիմադրությանը, ամերիկյան միսիոներներին հաջողվում էր որոշակի գործունեություն ծավալել իրենց կենտրոնների միջոցով, որոնց թիվը 1869 թ. հասել էր 21-ի, նույն 1869 թ. Օսմանյան կայսրությունում կար ամերիկյան բողոքականների 185 դպրոց[37], ապա 1884 թ. դրանց թիվը հասել էր 374-ի[38]։ Նրանք իրենց գործունեությունը հատկապես ուժեղացրին առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին։ Մինչև 1910 թ. երկրում գործում էր 430 ուսումնական հաստատություն, որոնցից 6-ը բարձրագույն դպրոց՝ 1219 ուսանողներով, 29 միջնակարգ դպրոց՝ 3012 աշակերտներով։ 1914 թ. Օսմանյան կայսրությունում արդեն գործում էր բողոքականների 675 դպրոց՝ 34317 աշակերտներով[39]։

Ընդ որում առաջին համաշխարհային պատերազմի սկզբին երիտթուրքերի կողմից կապիտուլացիաների չեղյալ հայտարարվելու հետևանքով օտարերկրյա, այդ թվում ամերիկյան դպրոցների մեծ մասը դադարեցրեց իր գործունեությունը։ Սակայն պատերազմի ավարտից և Մուդրոսի զինադադարի ստորագրումից հետո (1918 թ.) Անատոլիայի պետությունները վերականգնեցին իրենց արտոնությունները և վերաբացեցին այդ դպրոցները։ Սակայն ազգային պատերազմի ավարտից

հետո քեմալականները կրկին վերացրին նշված արտոնությունները՝ Թուրքիայի սուվերենության հետ դրանց անհամատեղելիության պատճառաբանությամբ։

Լողանի 1923 թ. պայմանագրում արտասահմանյան դպրոցների հարցը չարծարծվեց։ Բայց Իսմետ-փաշայի նամակում, որտեղ նա հատուկ անդրադառնում էր այդ խնդրին, խոստում էր տրվում պահպանել մինչև 1914 թ. հոկտեմբերի 30-ը եղած դպրոցները, պայմանով, որ դրանք անցնեն Թուրքիայի լուսավորության մինիստրության ենթակայությանը։ Միաժամանակ նշում էր, որ այդ ենթակայությունը չընդունող դպրոցները կփակվեն։ Բացի այդ, առաջարկվում էր օտարերկրյա դպրոցներում պարտադիր դարձնել թուրքերենի և Թուրքիայի պատմության ուսուցումը և արգելել ազգային փոքրամասնությունների լեզուների դասավանդումը[40]։

1914 թ. Օսմանյան կայսրությունում գործող ամերիկյան բողոքականների դպրոցներում կրթության համակարգն ընդգրկում էր ուսուցման բոլոր աստիճանները՝ մանկապարտեզից մինչև բարձրագույն ուսումնական հաստատություններ։ Այնտեղ ուսուցումը տարվում էր ամերիկյան համապատասխան ուսումնական հաստատությունների ծրագրերով։ Միաժամանակ բողոքականների դպրոցներում, անգլերենից բացի, անցնում էին մայրենի լեզու, ազգային գրականություն և պատմություն։

Ուշագրավ է այն հանգամանքը, որ կոլեջներում անցնում էին համընդհանուր պատմության լրիվ դասընթաց և այդ այն դեպքում, երբ թուրքական լուսավորության մինիստրությունը այդ դասընթացից հանել էր ֆրանսիական 1789—1794 թթ. հեղափոխությունից հետո ընկած ամբողջ ժամանակաշրջանը՝ Օսմանյան կայսրության ավատակրեական միապետության շահերին չհամապատասխանելու պատճառով։

Ցանկանալով շահել, օրինակ, հայ ժողովրդի համակրանքը, հակառակ Աբդուլ Համիդի բռնակալական արգելքներին, երբ թուլլ չէր տրվում նույնիսկ արտաբերել «հայ» բառը, շատ կոլեջներում ոչ միայն հայոց լեզուն, այլև Հայաստանի պատմություն էին ուսումնասիրում։ Չնայած սուլթանական գրաքննությունը բծախնդրորեն հսկում էր պարբերական մամուլի նյութերը, արգելում պատմական ուսումնասիրությունները և եվրոպական դասականների երկերը, այդ կոլեջներում ստեղծվում էին գրադարաններ, որտեղ հավաքվում էին ձեռագրեր, հայերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով պարբերական հրատարակություններ[41]։

Միսիոներական դպրոցների սովորողների հիմնական մասը ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներն էին։ Դրա պատճառը այն էր, որ Թուրքիայի մուսուլման հոգևորականությունը հերձվածողական էր համարում «անհավատներից» որևէ բան փոխառելու միտքը, թուրքերին արգելում էր հաճախել այլ դպրոցները։

Սակայն XIX դ. վերջերից «տնտեսական և քաղաքական հայտնի գործոնների ազդեցության տակ այդ դրությունը սկսեց փոխվել»[42], նկ եթե 1890 թ. օտարերկրյա դպրոցներում սովորողների մեջ թուրքերը կազմում էին ընդամենը 1%, ապա 1911 թ. նրանց քանակակազմը հասավ 56%-ի[43]։ Այդ պատճառով էլ միսիոներական դպրոցների թիվը ավելացավ. այն շրջաններում, որտեղ «հայտնի տնտեսական և քաղաքական գործոնները» հատկապես գալի էին։

«Անհավատների» մոտ առաջինը սովորելու գնացին արտոնյալ դասերից սերվածները։ «Լուսավորության պատմությունը Թուրքիայում» հինգհատորյա աշխատության հեղինակ Օսման էրգինը գրում էր, որ օտարերկրյա դպրոցների թուրք սովորողները հիմնականում այն երեխաներն են, որոնց ծնողները քաղաքական ու սոցիալական բարձր դիրքեր են գրավում»[44]։ Ռուս հետազոտող Ն. Կարինցևը 1910 թ. նշում էր, որ «...այդ հոգևոր և աշխարհիկ դպրոցներն են ընդունվում ոչ թե բնակչության լայն զանգվածների, այլ միայն նրա ընտիր խավերի ներկայացուցիչները»[45]։

Օտարերկրյա ուսումնական հաստատությունները ավարտածները դառնում էին առ եվրոպական տերությունները կողմնորոշված պետական պաշտոնյաներ, առևտրականներ, դիվանագետներ։

Ամերիկյան ուսումնական հաստատություններից մեծ ճանաչում էր ստացել 1863 թ. Կոստանդնուպոլսում Ս. Համլինի բացած «Ռոբերտ կոլեջը»[46]։ Ուսուցումն այնտեղ տարվում էր երկու աստիճանով, առաջին աստիճանը տալիս էր ընդհանուր, երկրորդը (նորամյա ժամկետով) մասնագիտական պատրաստվածություն։ Կոլեջում անցնում էին անգլերեն, ֆրանսերեն և մայրենի լեզուներ, կրոն, ինչպես նաև թվաբանություն, աշխարհագրություն, պատմություն, ճարտասանություն, քաղտնտեսություն, քաղաքացիական իրավունք, արվեստից պատմություն, բնական գիտություններ, միաժամանակ, ինչպես վերր նշվեց, ուսումնասիրում էին աղգային գրականություն և պատմություն[47]։ «Ռոբերտ կոլեջ» ընթացավարներն իրավունք ունեին ընդունվել ԱՄՆ-ի բարձրագույն ուսումնական հաստատությունները։

Կոլեջը կարևոր դեր էր խաղում բողոքականության պրոպաոանդ-

զարմացած ձայնի՝ «Ինքն է արեղան վստահությունը ա-
նել, որ ծայրահեղ հարկերը հրշակերտ ֆիքրիների
անհրաժեշտություն չեն դրել նրանց ստիպում է
իրենց երեխաներին տալ արհեստներ»[53]։

Ըստնից բացի, արհեստներ ուսումնասիրելը իրենց զործունեության
շեզ տատուկ տեղ չէին հատկացնում, այլ արվեստ, ինչը
XIX դ. սկզբներին արևմուտքում եղ ռոմանտիզմ։ Ռոսլեր վերա-
րում է մարդկանց ուշադրությունը «ատոսպերոյի իմպոնե-
ձերու հարաբերության վրա»։

«Մինչև ուսումնասիրեն զործի բոլոր տեսակետները և հիշողներ
գիշով,—հարց է նա։ Կոլյարակինը,—հարմար ձեվի նրանց անցնում է
ատոսպերոյի ձգտումը և անբարյացակամ վերաբերմունքը այլ ու-
սումնասիրողների նկատմամբ։ Ընդեց զործունեության ի նաս ծանոթա-
նալը դեռ բնավ նշանակում է, որ ատոսպերոյին հարմարվելը և
ընդունելը։ Ես ձգտում եմ ցույց տալ, թե ինչպես անհրաժեշտ
արհեստ սովորելու ժամանակ հիշողները ենթարկվում են ոչ իրենց
հատկություններին, այլ ուրիշների նպատակներին։ Ես ձգտում եմ
ցույց տալ, թե ինչպես ուսուցիչները հարմարեցնում են իրենց
հիշողությունը աշակերտների պահանջներին»[54]։ Ով ինչ, բայց
Ռոսլերը ոչ մի ժամանակ չէր կարող մեղադրել ֆիքրիներին
ուսումնասիրելու մեջ։ Ինքն էլ ամբողջ կյանքում ուսումնասիրում
էր մարդկանց հիշողությունը, ինչպես նաև նրանց ստեղծագործա-
կան հնարավորությունները։ Ռոսլերի ուսումնասիրությունները
ցույց են տալիս, որ ատոսպերոյի ֆիքրիները ոչ միայն ստեղծա-
գործում էին, այլև ընդունակ էին ստեղծագործությունները
ընկալելու։ Ռոսլերը ուսումնասիրում էր ատոսպերոյի ֆիքրիների
հիշողությունը, նրանց ստեղծագործական ընդունակությունները,
ինչպես նաև նրանց հետաքրքրությունները։ Ռոսլերի ուսումնասի-
րությունները ցույց են տալիս, որ ատոսպերոյի ֆիքրիները ոչ
միայն ստեղծագործում էին, այլև ընդունակ էին ստեղծագործա-
կան ընդուն





լուսավորական գործի դրվածքը շատ ավելի բարվոք էր, քան Թուրքերինը։ Դրանում նրանք պարտական էին իրենց մշակույթի լուսավորական վաղեմի ավանդույթներին, բայց ոչ միսիոներական դպրոցներին։ Մի խոսքով, բանն այն է, որ ամերիկյան և այլ միսիոներների գործունեությունը շրջափուլ չէր ինչպես Արեմտյան Հայաստանի, այնպես էլ ամրողջ Օսմանյան կայսրության լուսավորական շարժման պատմության մեջ։ Այդ իսկ պատճառով, չժխտելով Թուրքիայի լուսավորության զարգացման մեջ միսիոներների գործունեության նշանակությունը, չի կարելի համամիտ չլինել հայ մեծ լուսավորիչ, հեղափոխական-դեմոկրատ Մ. Նալբանդյանի այս առթիվ արտահայտած կարծիքին. «Ամերիկյան միսիոներների չարաշար ընթացքը Տաճկաստանի մեջ, մեր խնդճ աղգին տված հարվածներր, և Քրիստոսի ավետարանը իրենց ձեռքում խաբեության գործիք շինելը դոքա տակավին հարյուրից մեկը չեն, ինչ որ հայտնի է լուսավոր մարդոց առհասարակ որսորդ միսոներների վերաբերությամբ, նոցա ասածների հարյուրերորդ մասը տակավին չէ...»[64], Եվ իրոք, միսիոներների լուսավորական, բարեգործական, մարդասիրական և այլ գործունեությունը հարյուր երրորդական մասն է կազմում այն ամեն բացասականի, որ նրանք բերեցին Արևելք։ Իզուր չէր, որ բնորոշելով միսիոներների գործունեությունը, Վ. Ի. Լենինը նշում էր, որ նրանք «...կողոպուտի քաղաքականությունը կեղծավորությամբ քողարկում էին քրիստոնեության տարածումով»[65]։

Վերը քննված փաստերը այս եզրակացության ևս մի խոսուն հաստատումն են։

Р. С. ДАНИЕЛЯН

ИЗ ИСТОРИИ ДЕЯТЕЛЬНОСТИ ПРОТЕСТАНТСКИХ МИССИОНЕРОВ В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ
(конец XIX—начало XX вв.)

Резюме

Статья посвящена проблемам идеологической экспансии капиталистических стран в Османской империи. Первоначально она проходила в форме учреждения в Турции миссионерских, филантропических и просветительских организаций, которые при непосредственной поддержке их государств занимались пропагандой культуры и языка своих стран. В статье подчеркивается, что их филантропические декларации скрывали далеко не альтру-

пстические интересы колониальных держав—обеспечить свое экономическое и политическое влияние в Турции.

Автор подробно останавливается на деятельности американских миссионеров в Османской империи.

Объектом особого внимания капиталистических стран стали окраинные районы Турции угнетенные христианские национальности которой в результате ассимляторской, шовинистической политики султанского правительства постоянно находились под угрозой исламизации. Используя тяжелое положение нацменьшинств Османской империи и, в частности армян, миссионеры вели широкую пропаганду, обещая христианам, что с принятием протестанства они перейдут под покровительство их правительств, и тем самым отпадет угроза их насильственного уничтожения.

Деятельность протестантских миссионеров находила поддержку со стороны султанского правительства. Турецким правящим кругам было выгодно поддерживать религиозную разобщенность среди нацменьшинств, с тем чтобы расколоть их единство и таким образом ослабить национально-освободительное движение угнетенных народов.

1 Ա. Ալպոյաճեան, Պատմութիւն հայ դպրոցի, Գահիրէ, 1947, էջ 548։

2 **В. И. Семенов**, Поездка в Малую Азию в 1901—1902 гг., СП., 1904, с. 136.

3 **E. Mears**, Modern Turkey, New York, 1924, p. 130.

4 **М. Кемаль**, Путь новой Турции, М., 1929, т. 1. с. 406.

5 **В. Духовская**. Из дневника русской женщины в Эрзеруме во время военного занятия его в 1878 г, СП., 1879, с. 23.

6 **С. М. Акопян**, Западная Армения в планах империалистических держав, Ереван, 1967, с. 632.

7 Ա. Ալպոյաճեան, Պատմութիւնը նուռկիոյ հայոց, Գահիրէ, 1952, էջ 852։ **Kirsehirlioglu E.**, Türliyede misyoner faaliyetleri, Istanbul, 1962, s. 29:

8 Ա. Ալպոյաճեան, նշված աշխ., էջ 834—835։ **Kirsehirlioglu E.**, *Նշված աշխ., էջ 25,*

9 Ա. Ալպոյաճեան, նշված աշխ., էջ 852։

10 Նույն տեղում, էջ 852—853։

11 **E. Mears**, *նշված աշխ., էջ 135։*

12 Ա. Ալպոյաճեան, Պատմութիւնը նուռկիոյ հայոց, Գահիրէ, 1952, էջ 853։ **L. J. Gordon**, American Relations With Turkey, 1830—1930. An Economic Interpretation, London—Philadelphia, 1932, p. 221:

13 Թուրքիայում գործում էին նաև այլ երկրների միսիոներական դպրոցներ։ Միայն Կոստանդնուպոլսում առաջին համաշխարհայինն պատերազմի տարիներին կային չորս իտալական, մեկ իրանական, երկու ռուսական, երեք ավստրիական և չորս գերմանական դպրոց։

հոլորից ավելի ուշ Մերձավորարևելյան մրցապարեզ մտած Գերմանիան նույնպես ձգտում էր իր ռազմաքաղաքական և տնտեսական տիրապետությունը հաստատել Թուրքիայում։ Նա իր էքսպանսիան սկսեց Թուրքիային պարտադրված ռազմական օգնությամբ։ Շուտով Գերմանիան Բաղդադի երկաթուղագծի կառուցման կոնցեսիա ստացավ։ Գերմանիան ևս գաղափարախոսական ներթափանցումն իրագործում էր եկեղեցու և դպրոցի միջոցով։ 1896 թ. ստեղծվեց «Արևելքի քրիստոնեաների օգնության գերմանական մարդասիրական ընկերությունը», որի կենտրոնը գտնվում էր Մայնի Ֆրանկֆուրտում։ Գերմանական մեկ այլ «Արևելյան միսիա» անունը կրող ընկերությունը գլխավորում էր մեծ հայասեր դոկտոր Ե. Լեփսիուսը։

1913 թ. Թուրքիայում կային 5 գլխավոր բարեգործական և կրթական կայաններ (Խարփուքում, Մարաշում, Մեղրիեում, Մուշում և Վանում), որոնց նպաստով գործում էին 10 միջնակարգ և 29 տարրական դպրոցներ (3400 աշակերտներով և 109 ուսուցիչներով)։ Տե՛ս Osman Ergin, Türkiye maarff tarihi, Istanbo 1943, č. IV. s. 1233–1234; АВПР, Ф. Посольство в Константинополе 1898—1913. д 5187, л 53, 61; *«Արձագանք», 1892, № 32,* E. Kirşehirioglu, *նշված աշխ., էջ 37—38;* Վահրէ Տալի. *Խարբերդ և անոր ոսկեղէն գաշտը, Նիւ Եորք, 1939, էջ 463—466։*

24 Ա. Ալպոյաճեան, *Պատմությունը նորագիր հայոց, Գահիրէ, 1952, էջ 843—844,* V. N. Artinian, The formation of Catolic and Protestant Millets in Ottoman Empire.—„The Armenian Review," vol. 28, № 1(109), 1975, p. 9.

15 Невзат Устюн, Америка и американцы в Турции ,М., 1971, с. 9; *Մանրամասն տե՛ս* L. J. Gordon, *նշված աշխ., էջ 191—193, 210—211։*

16 Հ. Գալուստեան, *Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զէյթուն, Նիւ-Եորք, 1934, էջ 655,* H. G. O. Dwight, Christianity in Turkey: A Narrative of the protestant Reformation in Turkey: Church Constantinople—London, 1854, p. 32.

17 А. Убичини и П-де-Куртель, Современное состояние Оттоманской империи, перевод с француз., СП., 1877, с. 198—199.

18 Ա. Ալպոյաճեան, *նշված աշխ., էջ 840—847։* H. G. O. Dwight, *նշված աշխ., էջ 44։*

19 А. Д. Ерицев, Список населенных пунктов бывшей Эрзерумской области, находившейся во временном управлении России, Тифлис, 1882, с. 73.

20 H. G. O. Dwight, *նշված աշխ., էջ 291—292։*

21 E. Kirşehirlioglu, *նշված աշխ., էջ 93;* K. A. Sarafian, History of Education in Armenia, Caliphornia, 1939, p. 165:

22 АВПР, ф. Политархив, оп. 482, д. 538, 1904, л. 133, 135.

23 АВПР, Политархив, оп. 482, д. 540, 1906, л. 147. Վահէ Հայկ, *Նշված աշխ., էջ 322,* L. J. Gordon, *նշված աշխ., էջ 244։*

24 А. М. Колюбакин, Деятельность протестантских миссий в северо-восточной части Азиатской Турции. — «Известия Кавказского отдела императорского русского географического общества», т. 9, вып. 1, Тифлис, 1885, с. 107.

25 *Նույն տեղում, էջ 107։*

26 Նույն տեղում, էջ 108, V. H. Artinian, Նշված աշխ., էջ 12։

27 А. М. Колюбакин, Նշված աշխ., էջ 126—127. 130; АВПР. ф. Турецкий стол (новый), 1911. д. 207, л. 5.

28 Նույն տեղում, էջ 104, АВПР, Турецкий стол (новый), 1911, д 207) л 3.

29 Kirchirlioglu E., Նշված աշխ., էջ 32։

30 «Արձագանք», 1882, № 9, էջ 131։

31 А. Колюбакин, Նշված աշխ էջ 127։

32 Նույն տեղում, էջ 132։

33 Я. С. Проскуряков, Заметки о Турции, — «Записки Кавказск. отд. императорского русского географ. общества», кн. XXV, вып. 1, Тифлис. 1905, с. 27.

34 Հ. Գալուստեան, Նշված աշխ., էջ 658։

35 Տ. Տ. Զագմագճեան, Ընդարձակ պատմություն հայոց սկզբեն մինչեւ մեր օրերը պատկերազարդ, Պոստըն, 1917, էջ 567, V. H. Artinian, Նշված աշխ., էջ 10—11։

36 А. Колюбакин, Նշված աշխ., էջ 111, 136։

37 М. Кемаль, Նշված աշխ., էջ 405։

38 А. Колюбакин, Նշված աշխ., էջ 107—108։

39 E. Mears, Նշված աշխ , էջ 131—132, A. Sarafian, Նշված աշխ., էջ 170—171, Чернолуская, Несколько слов о народном образовании в Турции,— „Учитель и школа, „1914, № 19—20. с. 56; F. Ross, The Near East and American philanthropy, New-York, 1929. p. 156:

40 Северский мирный договор и акты, подписанные в Лозанне. Под ред. проф. Ключникова и проф. А. В. Сабанина, М., 1927. с. 254; Mukerrem Kamil Su, Türkiye cumhuriyet tarihi, Istanbul, 1957. էջ 134; „Մարմարա", 22-VIII. 1925. W. Gerard, The Chester oil Concession and the Lausane Treaty: „The Armenian Review", vol. 28, № 1(109), էջ 29։

41 Լ. Զոլմիսեան, Նշված աշխ., էջ 560; Վաճի Հայկ. Նշված աշխ., էջ 409—411, 420։

42 А. Д. Желтяков, Ю. А. Петросян, История просвещения в Турции (конец XVIII—начало XX в.), М., 1965. с. 134.

43 O. Ergin, Նշված աշխ., էջ 1751, «Որբերա-կոլեջում», օրինակ. 1863—1903 թթ. ո. մի թուրք չի սովորել։ Այդ նույն ժամանակաընթացքում հիշյալ կոլեջն ավարտել են 195 բուլղարացի, 144 հայ, 76 հույն, 2 հրեա և 17 ամերիկացի։ Ամերիկյան կանանց դպրոցի շրջանավարտների մեջ արձանագրված էին երկու ընդհանուր անուններ։ Միայն երիտթուրքական հեղափոխությունից հետո թուրքերի թիվը նկատելի չափով ավելացավ։ ԱՄՆ-ի կառավարող շրջաններր հրգտում էին մեծ թվով թուրքերի ներգրավել ամերիկյան դպրոցների մեջ, որպեսզի հանձինս նրանց ունենան ամերիկյան մշակույթի և գաղափարախոսության կրողներ։ Մյուս կողմից թուրքական կառավարող շրջանները ևս շահագրգռված էին ավելի մեծ թվով թուրքադգի գրագետ կադրեր ունենալ։ Թուրքիայում հանրապետական հարգերի հաստատումից հետո օտարերկրյա դպրոցներում սովորողների ազգային կազմը արմատապես փոխվեց։ Այսպես, արդեն 1928—1929 թթ. «Որբերտ-կոլեջի» 700 ուսանողներից 532-ը թուրք էին (սովորողների 76%)։

„The Middle East Journal," 1951, № 3 p. 293 М. Кемаль, Путь новой, Турции, т. 1, с 313.

44 O. Ergin, *Նշված աշխ., էջ 648։*

45 Բաղված է՝ А. Д. Желтянов. Ю. А. Петросян, *Նշված աշխ., էջ 134։*

46 Մանրամասն տե՛ս А. Д. Желтяков, Ю. А. Петросян, *Նշված աշխ., էջ 140—143։*

47 К. Д. Мачавариани, Колледж Роберта в Константинополе. Батум. 1902, с. 4—9.

48 Е. Чернолуская, *Նշված աշխ., էջ 358—359,*

49 Վահե Հայկ, Նշված աշխ., էջ 358—359։

50 АВПР, ф. Посольство в Константинополе, 1901, д. 5893, л. 15.

51 Լ. Սարգսեանց, Ալը Թուրքաց Հայաստանին,—«Մուրճ», 1889, № 11, էջ 1726։

52 Е. Чернолуская, *Նշված աշխ., էջ 50։*

53 А. Колюбакин, *Նշված աշխ., էջ 112.*

54 Նույն տեղում, էջ 120—121։

55 Նույն տեղում, էջ 115։

56 Նույն տեղում, էջ 116։

57 «Արեւելք», 1860, № 91, էջ 222—223, «Ժամանակ», 1864, № 44, էջ 141։

58 Ա. Ալպոյաճեան, Նշված աշխ., էջ 869։

59 А. Колюбакин, *Նշված աշխ., էջ 111։*

60 L. J. Gordon, *Նշված աշխ., էջ 244։*

61 Լ. Սարգսեանց, Նշված աշխ.,«Մուրճ». 1889, № 11, էջ 1721—1722։

62 K. A. Sarafian, *Նշված, աշխ., էջ 169։*

63 Վահե Հայկ, Նշված աշխ., էջ 427, 320։

64 Մ. Նալբանդյան, երկ, Երևան, 1949, հ. 4, էջ 304

65 Վ. Ի. Լենին, երկ, հ. 4, էջ 476։

Հ. Գ. ԻՆՃԻԿՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Իմպերիալիզմի դարաշրջանը իր հետ բերեց ոչ միայն համաշխարհային պատերազմներ, խաղաղությանը սպառնացող մշտական վտանգ, այլ նաև այնպիսի արյունալից, հաճախ կրկնվող կամ հարատևող երևույթներ, ինչպիսիք են ցեղասպանությունը և ապարթեյիդը, ռասիզմը և մոլի շովինիզմը ու այդ երևույթներին համապատասխանող մարդատյաց տեսակետներ, օրենքներ, քաղաքականություն, ինչպես նաև մշակված աշխարհայացք։

Անցյալի համապատասխան փաստերը ցույց են տալիս, որ հիշյալ մեծագույն ողբերգությունների, մարդկության դեմ կատարված հանցագործությունների գլխավոր պատճառները եղել և մնում են՝ ակվորնեբի կամ զավթիչների ձգտումը տեղացի ժողովուրդների, տեղաբնակների ձեռքից խլել նրանց հայրենի հողը, կուտակած հարստությունը, դուրս վանել նրանց երկրի տնտեսության, մշակույթի, քաղաքականության մեջ գրաված դիրքերից, այդ ամենը ձեռք բերելով նույնիսկ տեղի ազգաբնակչությանը ֆիզիկապես ոչնչացնելու գնով։

Դժբախտաբար, քիչ չեն վերոհիշյալ դրույթը հաստատող օրինակները։

Այդ մասին են վկայում Օսմանյան կայսրության պանթյուրքական շրջանների, գերմանական ֆաշիզմի, ԱՄՆ-ի, Հարավաֆրիկյան Հանրապետության վերնախավերի քաղաքականությունն ու հանցագործությունները, քխմերների ցեղասպանությունը և այլն։

Ավելի լայն իմաստով ցեղասպանությունը, ինչպես ճշմարտորեն նշում է Լ։ռավաբան Ի. Ն. Արցիբասովը, հատուկ է եղել «քաթար-մոնղոլների, թուրքական սուլթանների, չինական կայսրերի նվաճողական քաղաքականությանը»[1]։

Սակայն, ակներև է, որ նախապես պլանավորված, հատուկ միջոցառումներով հասունացված ամբողջ ցեղերի, ժողովուրդների և աղ-





ցած ազգերը՝ անհարազատ և վնասակար խոտերն արմատախիլ ընե-
լով, մէր հողը մաքրելու ստիպված ենք»[7]։

Հիշյալ նիստի մեկ ուրիշ մասնակից՝ Հասան Ֆեհմին պահանջելով հայերի լրիվ բնաջնջումը, գանում էր, որ գործը հեշտացնելու համար անհրաժեշտ է երիտասարդներին ուղարկել ռազմաճակատ,-որտեղ հեշտությամբ կարելի կլինի նրանց ոչնչացնել, իսկ «տունը մնացող տակր ու ծերերը, կին ու երեխաներն ալ կհրամայենք և մեր հավատացյալները կմաքրեն, ինքներնին կկողոպտեն... այս ձևը հարմար կտեսնվի»[8]։

Ցնղասպանության «ասպետներիս» վերոհիշյալ մտքերն ու ծրագրերը ցույց են տալիս ֆաշիստների ու երիտթուրքերի հոգեհարազատ կապերը և գործելակերպի հաջորդական փոխանցումը։ Այդ երևույթի հիմքում, ինչպես իրավացիորեն նշում է անգլիական պատմաբան Քրիստոֆեր Ջ. Ուոքերը իր «Հայաստան։ Ապրող ժողովուրդ» աշխատության մեջ, ընկած են երկու կողմերի քաղաքական և փիլիսոփայական հավատամքը՝ նացիզմը և պանթյուրքիզմը։ Երկու գաղափարախոսություններն էլ «պաշտպանում են բարձր ռասայի հասկացությունը և կողմնակից են ոչնչացնելու բոլոր նրանց, ովքեր դրան չեն պատկանում»[9]։

Մեկ հոդվածի շրջանակներում դժվար է համատեղել կատարված ցեղասպանությունների վերլուծությունը, դրանց պատմական արմատներն ու հետևանքները։ Այդ պատճառով, և լինելով քաջածանոթ Օսմանյան կայսրության պատմության նոր շրջանի պրոբլեմներին, նախընտրելի ենք համարում տալ միայն հայկական ցեղապանության հետ կապված «ինչո՞ւ և ինչպե՞ս» հարցերի պատասխանները։ Դրանց անդրադառնալու անհրաժեշտությունը ելնում է թե՛ գիտական նոր մեկնաբանում տալու և թե՛ թուրք ղեկավարների, մտավորականների, գրողների, լրագրողների և այլ կեղծարարների ելույթներին ինչ-որ ձևով հակահարված հասցնելու ցանկությունից։

Ինչպես վերևում նշվեց, մարդկանց խմբային ու անհատական գործողությունները կապված են սոցիալական միջավայրի, դասակարգային փոխհարաբերությունների և հասարակական կյանքի որոշակի պահանջների հետ։ Օսմանյան կայսրությունում պատմականորեն փոփոխության ենթակա այս գործոնները, իրենց հիմնական գծերով պահպանվեցին մինչև նրա անկումը և ունեցան վճռական ազդեցություն հսկայական երկրի հասարակական հարաբերությունների վրա։ Սոցիալական պայմանների ու հիշյալ գործոնների շարքում որոշիչ դեր խաղացին ռազմաֆեոդալական վարչակարգը և նրա գլխավոր հիմքը

հանդիսացող թուրք վերնախավի տիրապետությունն ու քաղաքականությունը, ինչպես նաև մահմեդական կրոնի անառարկելի ազդեցությունը սոցիալական ու քաղաքական հարաբերությունների վրա։

Իսկ ի՞նչ կոնկրետ գործոններ կամ պատմական պայմաններ ստեղծեցին ու ձևավորեցին հիշյալ իրավիճակը Օսմանյան կայսրությունում։

Ամենից առաջ՝ թուրքական վաչկատուն ցեղերի հաղթարշավներն էին դեպի Արևմուտք և դրանց հասարակական հետևանքները XV—XVI դարերում, երբ բազմաթիվ պետությունների փլատակների վրա բարձրացավ օսմանյան բռնապետությունը։ Հաղթողի իրավունքով թուրք նվաճողները ենթարկեցին տեղական ժողովուրդներին, մտցրին իրենց օրենքները, զենքի ուժով հաստատեցին իրենց գերիշխանությունը։

Մինչև XVII դ. կեսերը պատերազմն էր նրանց հարստության հիմնական աղբյուրը, ինչպես նաև հպատակ ժողովուրդների ու մահմեդական աշխատավորության վրա դրված հարկերն ու տուրքերը, մշտական երևույթ դարձած բռնագրավումներն ու թալանը։ Դարեր շարունակ գոյություն ունեցող այդ փոխհարաբերությունները սովորական և օրինական դարձրին հպատակ ժողովուրդների՝ ռայայի իրավազուրկ վիճակը և տիրապետողի արտոնյալ, լիիրավ լինելու հանգամանքը։ Այդ ամենը հիմք ծառայեցին թե՛ համապատասխան քաղաքականության և թե՛ հասարակական մտայնության ձևավորմանը։

Համաձայն սոցիալական հոգեբանության մեկ այլ դրույթի, հոգեբանական դիրքավորումը ապահովում է համապատասխան վերաբերմունք դեպի տվյալ երևույթը։ Իսկ այդ վերաբերմունքը «սերտորեն կապված է սովորույթի ու սովորությունների հետ, հաճախ չգիտակցված՝ անհատի կողմից»[10]։

Երիտթուրքերի ղեկավարներից Ջենաբ Շեհաբէդդինը, արտահայտելով տիրապետող կարծիքը, գտնում է, որ երկիրը գրավել էին թուրքերը, «նրանք էլ պետք է պաշտպանեին ու կառավարեին այն», ոչ մահմեդական հպատակներին թողնելով առևտուրը և տնտեսությունը վարելը[11]։ Աշխատանքի նման «հասարակական բաժանումը»՝ մեկը հրամայում է, մյուսը կատարում, պահպանվեց կայսրության գոյության համարյա ամբողջ ընթացքում և հանդիսացավ նրա պատմության սոցիալական հիմնական գործոններից մեկը։

Մյուս չափազանց կարևոր գործոնը մահմեդական կրոնն էր և նրա օրենքների, կարգ ու կանոնի, մարդկային փոխհարաբերությունների օրենսգիրքը հանդիսացող շարիաթը։ Իսլամն ու շարիաթը մարդկային հասարակությունը բաժանում են երկու դասի՝ մահմեդական

Մ յուս կողմից ինքը. ծոսքը շատ մեծ փնտիսնօր ապատյալ նսիկիսկան ապատյալ ապատասխանել էր Իսուսին, որ ասել էր, թե ինքը պիտի վերադառնար, սակայն ոչ ոք չգիտեր, թե երբ պիտի դառնար։ Ուստի ասում էր. «Ես ձեզ ասում եմ, որ այս սերունդը չի անցնի, մինչև որ այդ բոլորը կատարվի» (Մատթ. 24։34)։ Ուրեմն ինքը կարծում էր, որ Իսուսի երկրորդ գալուստը տեղի կունենա շատ կարճ ժամանակում։ Ինչպես տեսանք, Պողոսը նույնպես կարծում էր, որ Տիրոջ գալուստը մոտ է։ Նա գրում է. «Ահա խորհուրդ եմ ձեզ տալիս. մենք բոլորս չենք քնելու, այլ բոլորս պիտի փոխվենք, մի ակնթարթում, աչքի թարթման միջոցին, վերջին շեփորի ձայնի հետ։ Որովհետև շեփորը պիտի հնչի, և մեռելները անապական պիտի հառնեն, և մենք պիտի փոխվենք» (Ա Կորնթ. 15։51-52)։ Նա նաև ասում է. «Որովհետև Տիրոջ հրամանով մենք ձեզ այս կասենք, որ մենք, որ կենդանի ենք և մնացել ենք Տիրոջ գալուստին, չենք կանխելու քնածներին։ Որովհետև Տերը ինքը հրամանով, հրեշտակապետի ձայնով և Աստծո շեփորով պիտի իջնի երկնքից, և Քրիստոսով մեռածները նախ պիտի հառնեն։ Ապա մենք, որ կենդանի ենք և մնացել ենք, միասին նրանց հետ պիտի առնվենք ամպերի մեջ՝ Տիրոջ դիմավորելու օդում, և այդպես միշտ Տիրոջ հետ պիտի լինենք» (Ա Թեսաղ. 4։15-17)։

Մենք տեսանք իրականում, որ Պողոսի ուսուցումը Տիրոջ գալստյան մասին ամբողջովին տարբերվում էր Իսուսի ուսուցումից։ Իսուսը ասում էր, որ Տիրոջ գալուստը տեղի կունենա շատ հեռավոր ապագայում, մինչդեռ Պողոսը կարծում էր, որ այդ տեղի կունենա շատ մոտ ապագայում։ Ինչպես տեսանք, Պողոսի այդ սխալ ուսուցումը հիմնված էր Հին Կտակարանի մարգարեությունների սխալ մեկնաբանության վրա։ Մարգարեները ասում էին, որ Տերը պիտի գա, որպեսզի հաստատի Իր հազարամյա թագավորությունը։ Պողոսը կարծում էր, որ այդ հազարամյա թագավորությունը պիտի հաստատվի շատ կարճ ժամանակում։ Նա կարծում էր, որ Տերը պիտի գա, որպեսզի հաստատի Իր հազարամյա թագավորությունը

մյուսին, ձևավորվել էր որպես այդ ժողովրդի հոգեբանական կերտվածք, որպես նրա ազգային բնավորություն։

Սոցիալական հոգեբանությունը ուրիշներից վեր ու գերազանց լինելու ձգտումը կամ մարմաջը համարում է բարձր ռասային պատկանելու անզուսպ զգացմունքի հոգեբանական աղբյուրը, որի ակունքը պատմական պայմաններն են, տիրապետող սոցիալական միջավայրը։ Անհրաժեշտ է նշել նաև, որ ազգային հոգեբանությունն արտահայտող երևույթները չափազանց կենսունակ ու վարակիչ են, գալիս են վաղ ժամանակների ցեղային սովորույթներից և հարատևում են ժողովրդական զանգվածների նիստ ու կացի մեջ։ Այս ամենը չափազանց բարեբեր հող են պատրաստում հետզհետե ձևավորվող էթնոցենտրիզմի համար, իսկ վերջինս, որպես մնայուն գործոն, խանգարում է ժողովուրդների մերձեցմանը, նոր սերունդների ինտերնացիոնալ դաստիարակությանը։

Քրիստոնյաների բռնի կամ ակամա իսլամացումը, ազգային մշակույթի ու լեզվի զարգացման ճանապարհին ստեղծած դժվարությունները, ազգային հալածանքներն ու կոտորածները, այնուամենայնիվ, չսվեցին տիրող վերնախավի և ընդհանրապես թուրքերի ցանկացած արդյունքները։

Այդ միտքը հաստատում են 1911 թ. հոկտեմբերին երիտթուրքական համագումարի որոշումները՝ Թուրքիան իրապես ու ամբողջապես մահմեդական երկիր և թուրքերենը միակ տիրապետող լեզու դարձնելուն վերաբերյալ։ Օսմանյան պետության կառավարիչները նրա 500 տարվա գոյության վերջին ստիպված էին խոստովանել, «բոլոր թուրքական հպատակների օսմանցիացումը պիտի գործադրվի ուշ կամ կանուխ, սակայն, պարզ է թե ասիկա չի կրնար իրականացվել համոզումով, այլ պետք է զինված ուժերու դիմենք»[15]։ Այսուհանդերձ, հավատացած չլինելով, որ նրանց կհաջողվի լիովին հասնել իրենց նպատակներին, երիտթուրքերը տողանցք են թողնում, նշելով, որ այլազգիները «կրնան պահել իրենց կրոնը, բայց ոչ լեզուն»։ Թուրք լեզվի տարածումը գերազանց միջոց է «մահմեդականությունը հաստատելու և մյուս տարրերը ձուլելու»[16]։ Եվ այս քաղաքականությունը, լինելով սահմանադրական պահանջ, տարվում է ամենայն հետևողականությամբ մինչև օրս՝ Թուրքիայում բնակվող բոլոր այլազգի ժողովուրդների նկատմամբ։

Այսպիսով, պատմական ու սոցիալ-տնտեսական պայմանները, թուրք բռնատիրության քաղաքականությունը, ազգային ու կրոնական խտրականությունը հանգեցրել էին մի իրավիճակի, երբ քրիստոնյա և

ոչ-թուրք մյուս ժողովուրդները կամ նրանց ներկայացուցիչները արժեղրկվել կամ դեվալվացիայի էին ենթարկվել որպես մարդիկ, նրանց գոյությունը չէր պահպանվում ու բացակայում էր օրինականությունը մարդկանց փոխհարաբերությունների մեջ՝ այս բոլորից դեպի ցեղասպանությունը մնացել էր մի քայլ, որի իրագործելը միայն ժամանակի խնդիր էր։

Սակայն այդ երևույթների դեմ ընդվզեցին հպատակ ժողովուրդները, որոնց ազգային-ազատագրական պայքարը ընդլայնվում էր Օսմանյան կայսրության ճգնաժամի խորացմանը զուգընթաց։ Անցյալ դարի սկզբին այն անկախության բերեց հերոսական հույն ժողովրդին։ Դարի վերջին քառորդին հետզհետե ազատագրվեցին բալկանյան ժողովուրդները, ակտիվացավ իրենց ազգային վերելքն ապրող հայերի պայքարը։ Ջենքի ուժով հաստատված պետության կառավարիչները հասկանում էին, որ երկրի միասնությունը հին ձևով պահպանել այլևս անհնար է։ Բարեփոխումների փորձերին զուգորդեց օսմանիզմի, ապա պանիսլամիզմի և պանթուրքիզմի կամ թուրքական մեծապետական շովինիզմի քաղաքականությունը։ Մկսած 1860-ական թթ. պաշտոնական մարդկանց բազմաթիվ հայտարարություններ, գրագրություններ, ուղղակի ցուցումներ՝ պահանջում էին խեղդել ինքնավարության ամեն մի ձգտում։ Երբեմնի մեծ վեզիր և արտաքին գործերի մինիստր Ֆուադ փաշան իր քաղաքական կտակում պահանջում էր երկրի բոլոր «ցեղերի համաձուլում»։ Տասը տարի հետո, 1879 թ. մեկ այլ մեծ վեզիր, Քյամիլ փաշան հայտարարում էր՝ «հայ ազգը վերացնելու, անհետ և անձին ընելու ենք։ Եվ այդ ի գլուխ հանելու համար բան չի պակսիր մեզ. ամեն գործիք պատրաստ ունինք—չերքեզները, քրդերը, կուսակալները, դատավորները, հարկահանները, ոստիկանները, վերջապես ամենայն ինչ. կրոնական պատերազմ մը կհայտարարենք, և դուրին պատերազմ այնպիսի ազգի մը դեմ, որ ոչ զենք ունի, ոչ զինվոր և ոչ պաշտպան»[17]։

Թուրքիայի ղեկավարները, համոզված, որ նախապատրաստական շրջանը ավարտվել է հաջողությամբ, խոսքից անցան գործի։ Գոյություն ունեցող մի շարք միջազգային փաստաթղթեր, դեսպանների նոտաներ, ուսումնասիրություններ. ուղղակի նշում են, որ վիճակը հայկական շրջաններում խիստ սրվել է և այն կարող է հանգեցնել «քրիստոնյա ամբողջ բնակչության ոչնչացմանը»[18]։ Լուսավորության բնագավառում ղեկավարներից Մուրադ բեյը 1910 թ. Ժնևում լույս ընծայած «Թուրքիայի ուժը և թուլությունը» գրքում գրում է, որ դեռևս 1882 թ.

հրապարակվել էին հայերին հետապնդելու գաղտնի կարգագրություններ, որոնք պահանջում էին կրճատել հայկական հրատարակությունները, կազմակերպել բռնություններ, ինչքերի բռնագրավում և այլն[19]։

Իսկ 90-ականների սկզբին «Համիդիե» անկանոն հեծելազորի կազմակերպման հիմնական նպատակը հայկական ազատագրական շարժումը խեղդելն էր, որ և մասամբ իրականացրին թուրքական կանոնավոր բանակի զորամասերի հետ՝ Սասունի ապստամբության տարիներին։ Մի քանի տասնյակ քաղաքների և այլ բնակավայրերի ղեկավար պաշտոնյաներից ուղղակի պահանջվում էր կազմակերպել ջարդեր և գույքի ու հարստության բռնագրավում։

Կոնկրետ, բազմաթիվ փաստերով՝ «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» ժողովածուի մեջ ցույց են տրված Աբդուլ Համիդի կառավարության կազմակերպած այս հանցագործության դրդվագները։ «Տեղական՝ աշխարհիկ, հոգևոր և ռազմական իշխանությունները,—նշված է ֆրանսերեն լեզվով մի փաստաթղթում,—որոշ տեղերում բացարձակ ղեկավարում են ջարդերը կամ ուղղակի մասնակցում դրանց... Պալու քաղաքում մասնակցում էին՝ կայմակամը, մուֆտին, ոստիկանության կոմիսարը... ղորքը և ամբոխը հրալիրում էին մասնակցելու ջարդերին, ինչպես պատերազմի պահին՝ փողեր հնչեցնելով»[20]։ 1894—1896 թթ. զանգվածային կոտորածները մայրաքաղաքում, գավառներում և հատկապես Արևմտյան Հայաստանում 300 հազար զոհերից և հսկայական հարստությունների կորստից բացի երկրում ստեղծեցին չափազանց լարված վիճակ՝ քրիստոնյաների և մասնավորապես հայերի համար։ Այնուհետև շարունակվեցին հետապնդումները։

Որպեսզի չստեղծվեն պատրանքներ՝ 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո վերոհիշյալ քաղաքականության փոփոխման վերաբերյալ, ազատության չափազանց կարճ շրջանին հաջորդեց 1909 թ. Ադանայի ջարդը։ Խիստ սրվեցին ազգային փոխհարաբերությունները։ «Երիտթուրքերը,—նշում է «Պրավդան» 1912 թ. ամռանը,—հենց առաջին քայլերից, կարծեք թե դիտմամբ, իրենցից վանում էին Օթոմանյան կայսրության ժողովուրդներին... Նրանց ձգտումը թուրքացնել սլավոններին, հայերին, հրեաներին, հույներին և ուրիշներին. ընդունել է ավելի կոպիտ ու հետևողական բնույթ, քան Աբդուլ Համիդի օրոք էր»[21]։ Ո՛չ մեշլիսի անդամ Գրիգոր Զոհրապի ու այլ գործիչների, ո՛չ էլ հոգևոր առաջնորդների ու կուսակցությունների ղեկավարների դիմումները ու բողոքները չմնեցան որևէ դրական հետևանք։ Հայերին ոչնչացնելու



թյունում տիրող իրավիճակը, որպեսզի խանգարեն Ռուսաստանի հնարավոր առաջխաղացումը։ Մյուս կողմից այդ իրավիճակը քրիստոնյա հպատակների համար ընձեռնակում է պարզապես հավերժացնել Թուրքիայի կողմից նրանց կեղեքումը»[23]։

Այդպիսով «թուրքական կարգերը» և՛ օբյեկտիվ պատճառներով և՛ սուբյեկտիվ գործոնների ազդեցության հետևանքով ցեղասպանությունը դարձրել էին անխուսափելի։ Ինչպես ասվեց, քաղաքական ու սոցիալական իրադրությունը, թուրք կառավարիչների ակտիվ միջամտությամբ գնալով սրվում էր։ Նրանք մտադիր էին օգտագործել մոտալուտ պատերազմը իրենց ծրագրերը իրականացնելու համար։ Ըստ էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոսի 1914 թ. հոկտեմբերի 9-ի հեռագրի, Արևմտյան Հայաստանի շրջաններում կենտրոնացված էին «300 հազար մարգ, որոնցից 100 հազարը՝ կանոնավոր զորք... Հայկական զարդը հետաձգվել է հարուստ մահմեդականների պահանջով, որոնք նախապես ցանկանում են երաշխիք ունենալ, որ չեն պատժվի Ռուսաստանի կողմից»[24]։ Զինված ուժերի կենտրոնացմանը զուգահեռ փոթորիկի նման անցավ բռնագրավումների ու թալանի համպանիան։

Զորքը մեծ կարիք ուներ հագուստի, մթերքի, զորանոցների, վենքի և այլն ու այս բոլորը պետք է կատարվեր հնարավորին չափ քրիստոնյա բնակչության հաշվին։ Հայտարարություններ զորահավաքի՝ «սեֆերբերլիքի» մասին կպցվեցին փողոցներում 1914 թ. հուլիսի 30-ին և մոտակա ամիսներին, դեռևս մինչև տեղահանումը, կողոպտված էին խանութները, արհեստանոցները, տները, որոնց վերջնական բռնագրավումները ավարտվեցին բռնագաղթի ժամանակ, որը շուտով սկսվեց։

«Օսմանյան հպատակներ հանդիսացող բոլոր հայերին, հինգ տարեկանից վեր, դուրս տանել բնակավայրից և ոչնչացնել» այս էր երիտթուրքական Թալաաթ, Էնվեր, Ջեմալ փաշաների կառավարության հրահանգը, որը հեռագրով հաղորդվել էր 1915 թ. փետրվարի 27-ին տեղական իշխանություններին[25]։

Հայերը հայտարարվել էին օրենքից դուրս և ենթակա էին բնաջնջման։ Այս նպատակին հասնելու համար մոբիլիզացվել էին՝ պետության բոլոր մարմինները, կանոնավոր ու անկանոն զորքը, ոստիկանությունը և ամբոխը։ Բանտից ազատվել էին մոտ 30 հազար քրեական հանցագործներ, լրացրել խուժանի շարքերը։ Այլումոտ հանցագործությունները կատարվում էին անողոքաբար, կառավարական մարմինների մշտական հսկողության տակ, որոնք հետևաբար իրենց վրա էին վերցրել մեր դարի առաջին ցեղասպանության ամբողջ պատաս-

նենում գաղափարական և սոցիալ-հոգեբանական ազդեցությունների միացում և պրակտիկ կենսագործում, կամ սերտաճում մարդկանց իրական վարքագծի մեջ։ Զանգվածային հիստերիայի, ռազմական, կեղծ հայրենասիրական մոլուցքի, նացիոնալիստական ու շովինիստական տրամադրությունների հետևանքով ստեղծված իրավիճակը, անկասկած, դառնում է ֆոն, որի վրա, երբեմն ծավալվում են ամենաողբերգական գեպքեր»[28]։

Այդ ամենը, լիովի արտահայտվեցին մեր ազգային ողբերգության՝ մեծ Եղեռնի տարիներին։

Հայ ժողովրդի բարեկամ գերմանական հումանիստ Իօհաննես Լեփսիուսի, ականատեսի ու ցավակցողի հայտարարության համաձայն, Թուրքական իշխանությունների կարգադրությամբ, երկիրը պատերազմի մեջ մտնելուց հետո բոլոր հայ պետական ծառայողները ազատվեցին աշխատանքից։ Հայ ժողովրդին գլխատեցին՝ անջատելով և հեռացնելով նրանից հասարակական, քաղաքական ու կուսակցական գործիչներին[29]։

Ամենից առաջ, 1915 թ. ապրիլի 24-ին Կ. Պոլսում ձերբակալեցին պառլամենտի անդամներին, հայտնի հասարակական գործիչներին, լրագրողներին, գրողներին, ուսուցիչներին, հոգևորականներին և այլ հայ մտավորականների, մոտ 250 մարդ։ 20 օրից հետո այդ թիվը անցավ 3000-ից։

Պատերազմի սկզբին ավելի քան 50 հազար տղամարդկանց տարան բանակ։ Բոլոր ձերբակալվածներին և զենքի կոչվածներին հետոհետե ոչնչացրին։ Հետո սկսվեցին բռնի արտաքաղքը, թալանը, սպանությունները։ Տղամարդկանց հեռացրին առաջին հերթին։ Մնացած ծերերին, կանանց, երեխաների մի մասին տարան և մահմեդականացրին, ջարդին մասնակցող թուրք և քուրդ մեծահարուստներ։ Մյուս մասը ոչնչացվեց երկար ու տանջալից ճանապարհորդության ընթացքում։ Թափվեր 1,5 միլիոն անմեղ զոհերի արյուն։ Մի փոքր մասը միայն հասավ Սիրիայի անապատները, կամ դժվարությամբ գաղթեց երկրից դուրս։ Ոճրագործությունը կատարվեց ըստ ծրագրված չափերի, ձևերի, օգտագործվեցին ֆաշիստական կարգերին հատուկ բոլոր միջոցները։ Մեծ Եղեռնը գրկեց հայերին իրենց հայրենիքի մեծ մասից՝ Արևմտյան Հայաստանից և կենդանի մնացածներին ցրեց աշխարհով մեկ։

Սակայն, հայ ժողովուրդը ի դեմս Սովետական Հայաստանի վերածնվեց, բարգավաճեց և դարձավ հզոր Սովետական Միության անբաժանելի մասը։

Բայց ազգային ողբերգությունը խոր ու ծանր հետքեր թողեց հայ ժողովրդի պատմության ու մշակույթի վրա, նրա հոգեբանության մեջ։ Նվ նա պահանջել ու պահանջում է ցեղասպանության հանցավորներին և նրանց պաշտպաններին ենթարկել խիստ պատասխանատվության, որպեսզի մարդկությունը մշտապես ազատվի, բացի պատերազմներից, իր համար լուրազանց մեծ վտանգ ներկայացնող մյուս երևույթներից՝ ռասիզմից ու ցեղասպանությունից, որից դեռևս տառապում են բազմաթիվ ժողովուրդներ։

О. Г. ИНДЖИКЯН

СОЦИАЛЬНАЯ ПСИХОЛОГИЯ И ГЕНОЦИД

Резюме

Геноцид—как ряд преднамеренных, специально подготовленных действий по ликвидации отдельных групп людей, племен, народностей по национальным, религиозным и другим признакам, является порождением империалистической эпохи. Цель подобных преступных действий со стороны пришельцев или захватчиков—лишение местного населения исконной земли, накопленного богатства, занимаемых позиций в экономике, политике и культуре страны.

На примере геноцида армян в Османской империи, с позиций марксистской социальной психологии анализируется национальная трагедия армянского народа.

Существовавшее веками неравенство между покорителями и покоренными, исповедующими ислам и неверными («гяурами»), турками и нетурками—создало соответствующую общественную атмосферу и социальную среду, при которых граждане одного и того же государства делились на полноправных и неполноправных. А развитие капиталистических отношений и вмешательство империалистических держав еще более обострили внутренние противоречия. Военно-феодальный режим, будучи явным противником новых буржуазных порядков, ожесточил великодержавно-шовинистическую политику в отношении христианских народов—основных носителей капиталистических отношений.

Веками продолжавшиеся турецкими властями государственная политика угнетения и репрессивные мероприятия создали умонастроения, психологию превосходства среди мусульманского населения. Используя вышеизложенные обстоятельства ту-

рецкие верхи подготовили и, начиная с 1890-х провели ряд массовых избиений армян и других групп населения, а свою антиармянскую политику завершили геноцидом в годы первой мировой войны. Признание этого факта, со всеми вытекающими мерами, требует возрожденный армянский народ.

1 И. Н. Арцибасов. За пределами законности, М., 1981, с. 246.
2 Проспер Мериме, Избр. соч. в двух томах. т I, М., 1956, с. 401.
3 М. Н. Андрюхин, Геноцид в политике империалистических государств. М., 1967. с. 5—6.
4 Основы социальной психологии и пропаганды, М., 1982, с. 32.
5 Нюрнбергский процесс, т. 3, М., 1966, с. 125—126.
6 Մեվլանզադե Ռիֆաթ, *Թուրքական հեղափոխության մութ ժալքերը, Բեյրութ, 1938, էջ 161։*
7 *Նույն տեղում, էջ 162։*
8 *Նույն տեղում, էջ 165։*
9 СИ ИНИОН, Геноцид армян 1915 г. в зарубежной литературе (1975—1985), М., 1985, с. 25.
10 Основы социальной психологии..., с. 43.
11 **Maurice Pernot,** La quetion turque. Paris, 1923. p. 125.
12 К. Маркс и Ф. Энгельс. соч., т. 10, с. 167.
13 Сборник, Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г., изд. 2-е, М., 1896, с. 145.
14 К. Маркс и Ф. Энгельс, соч., т. 9, с. 6.
15 Հավճ. Հախարյան, *Թուրքիա գերմանական հանկերուն ժեղը, Բիթլիս, 1918, էջ 28։*
16 *Նույն տեղում, էջ 29։*
17 *«Փորձ», 1879, № 7—8, էջ 204։*
18 Сборник. Положение армян..., с. 97.
19 **Mourad—Bey,** La force et la faiblesse de la Turquie, Jènève, 1910, p. 50.
20 Геноцид армян в Османской империи, сборник документов и материалов, под ред. М. Г. Нерсисяна, 2-е изд., Ереван, 1982, с. 146—147.
21 «Правда», 1912, 27 июня, № 76.
22 Е. Ф. Людшувейт. Турция в годы первой мировой войны 1914—1918 гг., М., 1966, с. 309.
23 К. Маркс и Ф. Энгельс, соч. т. 9, с. 31.
24 Архив ВМФ, фонд 418, оп. 1, ед. хран. 4270, л. 93.
25 Р Г. Саакян, Документы младотурецкого комитета о геноциде западных армян в 1915—1916 гг., *«Լրաբեր հաս. գիտ.» 1965, № 3,* с. 74.
26 *Նույն տեղում, էջ 76։*
27 Б. Ф. Поршнев. Социальная психология и история, М., 1966, с. 91.
28 Основы социальной психологии..., с. 168, 177—178.
29 Ъобшъьи Ъьфъфпш, *Հայաստանի չարդերը, Կ. Պոլիս, 1919, էջ 23։*

Ս. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ XIX Դ. 80–ԱԿԱՆ ԹԹ.

1882 թ. սեպտեմբերին բրիտանական զորքերը գրավեցին Եգիպտոսը՝ իր դիրքերն ամրապնդելու և անսահմանափակ տիրապետություն հաստատելու համար Անգլիային անհրաժեշտ էր հաղթահարել Եվրոպական տերությունների հակազդեցությունը, թուլացնել նրանց ներգործությունը և խափանել միջամտությունը Եգիպտոսի ներքին գործերին։ Անգլիացիների այս նպատակը հիմնավորված էր այն հանգամանքով, որ Եգիպտոսում դեռևս պահպանվում էր եվրոպական տերությունների համատեղ ազդեցությունը, որը արտահայտվում էր մի շարք միջազգային հաստատություններ գոյությամբ։

Ֆինանսական վերահսկողության հաստատումը և վարչակառավարման առանձին օղակների օտարերկրացիների ձեռքն անցնելը, այլ խոսքով՝ Եգիպտոսի եվրոպական տերությունների կիսագաղութի վերածումն սկսեց բրիտանական գրավումից շատ առաջ՝ Մոհամմեդ Սաիդի (1854—1863) և Խդիվ Իսմայիլի (1863—1879) իշխանության տարիներին։ Արաբագետ Ն. Իվանովն իրավամբ գրել է, «Երկրում (Եգիպտոսում—Ս. Հ.) չկար արդյունաբերական մի ձեռնարկություն, մի բանկ կամ առևտրական խոշոր ֆիրմա, որ չվերահսկվեր օտարերկրացիների կողմից։ Նրանք էլ կոնցեսիաների կամ կապալների հիմամբ կառուցում էին երկաթուղիները, կամուրջներն ու նավահանգիստները։ Նրանց ձեռքին էին կոմունալ ծառայությունները, փոստ-հեռագրական կապի կազմակերպումը և այլն»[1]։ 1876 թ. Խդիվ Իսմայիլի կողմից Եգիպտոսը ֆինանսապես սնանկ հռչակումից հետո ստեղծվեց Խդիվական պարտքի վարչությունը, որը վերահսկողության հաստատեց եգիպտական կառավարության եկամուտների ու ծախսերի վրա և որին կառավարությունը վճարում էր պարտքերի տոկոսները։ Վարչության քննիչ-կոմիսարներ նշանակվեցին Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի,

Ռուսաստանի, Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի մշտական ներկայացուցիչները։ Նույն թվին, եվրոպական տերությունների անցկացրած դատական բարեփոխման միջոցով, Եգիպտոսում հաստատվեցին միջազգային դատարաններ։ Երկու տարի անց, եգիպտական ֆինանսներն ստուգելու նպատակով, ստեղծվեց Միջազգային հանձնաժողով և հաստատվեց կապիտուլացիաների ռեժիմ։

Գրավման պահից Անգլիան բոլոր ճիգերն ի գործ գրեց նշանակալրկելու, իսկ հետագայում լրիվ լուծարքի ենթարկելու Եգիպտոսում պահպանվող միջազգային հաստատությունները, որոնց միջոցով եվրոպական տերությունները կարող էին վերահսկել երկրում բրիտանական իշխանությունների գործունեությունը։ Այդ նպատակով Մենթ—Ջեյմսի կառավարությունը, որպես արտակարգ լիազորներ, Եգիպտոս գործուղեց լորդ Նորտբրուկին, սըր Հենրի Դրումմոնդ-Վուլֆին և էվելին Բերինգին (1892-ից լորդ Կրոմեր)՝ որպես դիվանագիտական գործակալ, ընդհանուր հյուպատոս և Եգիպտոսի փաստական կառավարիչ 1883-ից ընդհուպ մինչև 1907 թ.։

1884-ին Նորտբրուկի առաքումը կապված էր Եգիպտոսում գործող միջազգային դատարանների եթե ոչ ոչնչացման, ապա առնվազն նրանց բնույթը փոփոխելու և նրանցում ընդգրկված անգլիացի աստիճանավորների ազդեցությունն ուժեղացնելու ծրագրի հետ։

Միջազգային կամ խառը դատարանները հաստատվել էին Կահիրեում, Ալեքսանդրիայում և ալ-Մանսուրայում, ըստ որում վերաքննիչ ատյանը գտնվում էր Ալեքսանդրիայում։ Այդ դատարաններն էին լուծում քաղաքացիական բոլոր հայցերը, եթե կողմերից թեկուզ մեկը եվրոպացի կամ էլ Միացյալ Նահանգների հպատակ էր։ «Հանդես գալով իսկական գաճաճ մի թագավորություն»[2] նրանք չէին ենթարկվում անգլիական իշխանություններին։ Դատարանները վերածվել էին եգիպտական պարտքերի տոկոսների նվազեցումը խափանող խոչընդոտի, այլ խոսքով՝ պարտքերի լիկվիդացման օրենքի անթերի օգտագործման երաշխիքի և խդիվի ստորագրած հրամանագրերի օրինականությունն ընդմիում էին այն դեպքում միայն, եթե դրանք կանխորոք համաձայնեցված լինեին վերոհիշյալ օրենքը մշակած տերությունների ներկայացուցիչների հետ։ Միջազգային դատարանների հաստատման կանոնագրության հիմամբ վերաքննիչ ատյանը բաղկացած էր 4 եգիպտացի և 7 օտարերկրացի անդամներից, ըստ որում դատավոր-



սահմանյան հպատակների նկատմամբ քրեական իրավազորություն է տրվելու»։ Այնուամենայնիվ, առաջին խոշոր զիջումը կատարվեց վարչապետ Ռիագի կողմից. անգլիական ներկայացուցիչը Լոնդոն տարավ մինիստրության կողմից մշակված նախագիծն այն փոփոխությունների, որոնք Մեծ Բրիտանիան կցանկանար մտցնել միջազգային դատարանների կազմակերպման մեջ[6]։ Ռիադր մտադրվել էր Լոնդոնի կողմից հաստատվելուց հետո միայն այդ նախագիծը ներկայացնել մյուս տերությունների քննարկմանը, որոնք մասնակցություն էին բերել Եգիպտոսում միջազգային դատարանների հաստատմանը։ Նշանակում է, որ միջազգային բնույթ ունեցող մի հարցում եգիպտացի մինիստրները չվարանեցին խոնարհվել անգլիացիների ցանկությունների առաջ և ընդգծել երկրում նրանց գերակշռությունը։

Այնուհետև անգլիացիները ճիգերն ուղղեցին տեղական դատարանների իրենց ազդեցությանը ենթարկելու նպատակին, վերջինս լուրջ սպառնալիք ստեղծեց գոյություն ունեցող կապիտուլացիոն ռեժիմի և միջազգային դատարանների համար։ Նրանք կարողացան հասնել այն բանին, որ տեղական դատակազմի մեջ նշանակվեցին երկու անգլիացիներ։ Այս կապակցությամբ Ա. Կոյանղերը նշում է. «Անծանոթ լինելով Նապոլեոնի օրենսգրքին և նույնիսկ Եգիպտոսում վարվող արդարադատության սկզբունքներին, որոնք դրված էին տեղական ատյանների կազմակերպման հիմքում, նոր խորհրդականները հազիվ թե ի վիճակի լինեն ղեկավարելու իրենց ծառայակիցների գործունեությունը»։

1889 թ. ապահովելով երկու անգլիացիների նշանակումը տեղական վերաքննիչ ատյանի կազմում, բրիտանական կառավարությունը 1890 թ. պնդեց նաև իր մի երրորդ հպատակի նշանակման վրա։ Նույն թվին անգլիական կառավարությանը հաջողվեց նաև արդարադատության նախարարությունում որպես ժամանակավոր խորհրդական նշանակել Ջոն Սքոթին, որը Հնդկաստանում վարել էր միանձնյա վերաքննիչ դատավորի պաշտոնը[8]։ Այնքան, որքան Եգիպտոսում գործող դատավարման կարգը քիչ ծանոթ էր անգլիական իրավագետներին և միաժամանակ զգալի խոչընդոտ էր օտարերկրյա մրցակիցների միջամտությունները խափանելու ճանապարհին Սքոթի նման փորձառու իրավաբանի նշանակումը դրսևորումն էր անգլիացիների ցանկության՝ եգիպտական դատարանները իրենց գաղութներում գոյություն ունեցողների օրինակով հիմնական վերափոխության ենթարկել, հեռացնելով անգլիական օրենքներին և սովորություններին անգետ մյուս բոլոր օտարերկրացիներին։

Սքոթն իր պաշտոնավարման առաջին իսկ օրից արդարադատական պաշտոնատան իսկական տերն ու տիրակալը դարձավ, քանի որ Եգիպտական մինիստրության գլխին ձևականորեն կանգնած մարդիկ ո՛չ բավականաչափ գիտելիք, ո՛չ էլ կամք և ընդունակություն ունեին իրենց կարծիքն ու տեսակետը անցկացնելու և պայքարելու անգլիացիների ամենաղոր ազդեցության դեմ։ Մի տարի անց Սենթ-Ջեյմսի կառավարությունը պահանջեց Սքոթին նշանակել Եգիպտոսի արդարադատության մինիստրությանը կից արդեն մշտական խորհրդական[9]։ Այդօրինակ պահանջներն սկզբում տեղական կառավարական շրջաններում խիստ, համաձայն ոչ անկեղծ դժգոհանք առաջ բերեցին։ Լիադը հայտարարեց, որ ավելի շուտ հրաժարական կտա, քան թե կստորագրի նման նշանակման հրամանագիրը ու նույնիսկ մերժեց ընդունել բացատրվելու համար իր պաշտոնատանը հայտնված Սքոթին[10]։ Սակայն այդպիսի վերաբերմունքը չշփոթեցրեց Բերինգին։ Շրջանցելով այդ հակառակամտությունը, նա միևնույն պահանջով դիմեց խդիվին։ Մեհմեմետ-Թաուֆիքն ըստ իր սովորության ենթարկվեց գլխավոր հյուպատոսի կարգադրությանը։ Հրամանագիրն ստորագրվեց 1891 թ. փետրվարի 3-ին և «ալ-Վակաի ալ Մըսրիյյա» պաշտոնաթերթում հրապարակվեց մինիստրական որոշման հետ, որը Սկոթի նախագահության ներքո հաստատում էր նախադատ ատյանների գործունեությունը վերահսկող, մի մարմին՝ անդամակցությամբ տեղական դատարաններին կից բելգիացի գլխավոր դատախազի, ներքին գործերի մինիստրության իտալացի իրավախորհրդատուի և վերոհիշյալ անձնավորությունների կողմից ընտրվելիք դատախազության երկու անդամների[11]։ Այդ կոմիտեի կազմում չընդգրկվեց արդարադատության մինիստրության ազգությամբ ֆրանսիացի իրավախորհրդատուն։ Վերջինիս բացորոշապես զանցառումը ընդունված որոշման դեմ հասկանալիորեն առաջ բերեց ֆրանսիական շրջանների դժգոհանքը։ Ֆրանսիայի ներկայացուցիչ դը Օբինյին հայտարարեց, որ իր կառավարությունը բողոքում է հօգուտ մի այլ տերության ֆրանսիական իրավունքների ոտնահարման դեմ, ըստ որում միաժամանակ պահանջեց կասեցնել խդիվի հրամանագրի գործողության մեջ դրվելը[12]։ Խդիվը մերժեց Ֆրանսիայի բողոքը։

Բացի դրանից, արտաքին գործերի մինիստր Զուլֆիկար փաշան ապրիլի 28-ին հրապարակեց № 365 շրջաբերական-հուշագիրը, որով կառավարությունը Եգիպտոսում եվրոպական բոլոր ներկայացուցչու-

թյուններից խնդրում էր միջնորդել իրենց ղեկավարների մոտ՝ հավանություն տալու հուշագրին կցված հրամանագրին, որը վերաբերում էր Ալեքսանդրիայի վերաքննիչ խառը ատյանի կազմում 5, 8 կամ 9 անգլիացիների հաստիքային անգամ նշանակելուն և խառը դատարանների շրջանակներում անգլերենը դատավարման լեզու հայտարարելուն[13]։

Սքոթի նպատակը հրավիրման պահից խզվի կամ նրա մինիստրների կողմից անգլիացիների պարզորոշապես բացահայտված կամքին ու ցանկությանը որևէ լուրջ դիմադրություն ցույց չտրվեց։ Օտար տերությունները ցանկության դեպքում կարող էին Սկոթի նշանակման դեմ բողոքի օրինավոր հիմքեր գտնել։ Այդ աստիճանի ազդեցիկ մի պաշտոնում անգլիացու ներկայությունը խախտում էր ինչպես նախկինում գոյությունն ունեցած կարգը, այնպես էլ դատական բարեփոխումներին մասնակցություն բերած բոլոր պետությունների դիրքի և ազդեցության հավասարաչափության սկզբունքը։

Մեծ Բրիտանիայի կառավարությունն այդպիսով հող էր նախապատրաստել երկրի գերագույն իշխանությունը փաստորեն իր ձեռքը վերցնելու և միաժամանակ եգիպտական դատարանների գործունեությունը մրցակից օտարերկրյա ամեն մի միջամտությունից կատարելապես զերծելու համար։ Բերինգը Կոլանդերին ասում էր, որ 1894 թ. կառավարությունը լուծարքի կենթարկի խառը դատարանները, եթե նրանց գործունեության երկարաձգված ժամկետի ավարտի կապակցությամբ իր ներկայացնելիք նոր պայմանները տերությունների համաձայնության չարժանանան[14]։

Անգլիացիների բացահայտ աննախադեպ միջամտության գլխավոր խոչընդոտը Եգիպտոսում գործող կապիտուլացիաներն էին, որոնք երաշխավորում էին օտարահպատակների անձեռնմխելիությունն ու տեղական դատարանների իրավասությունից զերծությունը։ Արդարադատության մինիստրության անգլիացի խորհրդական Ջոն Սքոթի իրավասությունները տեղական դատական հիմնարկների վրա տարածումն, ահա, սպառնալիք էր կապիտուլացիաների ռեժիմի համար։ Այդ ռեժիմի աստիճանական վերացման մյուս միջոցը հանդիսանում էր հրապարակումը պարտադիր բնույթ ունեցող այն որոշումների, որոնք եգիպտական կառավարության կողմից մշակվել էին օտարահպատակների համար և որոնք հավանություն էին գտել Ալեքսանդրիայի ատյանի անդամների անգլիացիներին նվիրյալ մեծամասնության կողմից։ Ֆրանսիայի դիվանագիտական ներկայացուցիչ մարքիզ Ռեվերսոն հոր-



լինի միջազգային վերահսկողության փոխարինումը Անգլիայի ֆինանսական վերահսկողությամբ»[17]։

Սենթ-Ջեյմսի կառավարությունն այդ նպատակով 1884 թ. որպես ֆինանսների մինիստրության կից խորհրդական նգիպտոս գործուղեց էդգար Վինսենտին։ Վերջինս պետք է ինքնիշխան տնօրիներ վարչակառավարման ֆինանսական ամբողջ մարզը, ըստ որում նրա գլխավոր առաջադրանքը պիտի լիներ աշխատել կանխելու բյուջեի ամեն մի դեֆիցիտ, որը կարող էր հանգեցնել անգլիացիների համար անցանկալի արդյունքի՝ Միջազգային ստուգող հանձնաժողովի գումարման։

Զգտելով ավելացնել պետական գանձատան հասույթները, Վինսենտը պնդեց հաստատել նոր հարկեր։ 1888 թ. ծխախոտի մշակության հատկացվող հողակտորներն ենթարկվեցին նոր հարկի՝ ֆեդանից նախկին 2,5 եգիպտական ֆունտի փոխարեն 30 ֆունտի չափով։ Բարձրացվեցին նաև երկաթուղային սակերը, փոխադրվող ծխախոտի մաքսը և Նեղոսով նավարկության տուրքը[18]։

Օրըստօրե ծանրացող հարկերը լրիվ քայքայման մատնեցին եգիպտացի գյուղացիներին՝ ֆելլահներին։ «Հարկագանձման եղանակը հիշեցնում է խդիվ Իսմայիլի հոռետուն ժամանակները,—գրել է Կոլյանդերը։—Դանձատունը բռնագրավում և համարյա ձրի վաճառում է դեռ չհնձված բերքը, դրանով վերջնականապես քայքայելով հողամշակների բարեկեցությունը։ Եգիպտոսում հողը երբևէ այնքան պարտքերով ծանրաբեռնված չի եղել, ինչպես այժմ... և ներկա վարչակարգի ներքո երկիրը բավականին արագաքայլ դեպի քայքայում է գնում»[19]։

Վինսենտի վարած քաղաքականության հետևանքով բացն ու պակասորդը, որոնցով եգիպտոսը մինչ այդ տառապում էր, 1886 թ. արդեն անհետացել էին պետական բյուջեի հաշվեցուցակներից[20]։

Հոգալով միայն այն մասին, որ պետական բյուջեի տարեկան հաշվեցուցակներում պակասորդի բացակայությամբ «Եվրոպայի աչքին փոշի փչվի»[21], անգլիացիները Պարտքերի վարչության քննիչներին հնարավորություն չէին տալիս գործերի իսկական վիճակին հաղորդվել այն նահանգներում, որոնց հասույթներն ուղղակի գանձատուն էին մուտքագրվում և ապահովում պետական պարտքերի տոկոսների վճարումը։ Պարտքերի լիկվիդացման օրենքը Պարտքերի վարչությանը իրավունք չէր տալիս վերահսկել գավառներում եգիպտական կառավարության գործողությունները ու դրանով իսկ դուռ էր բաց անում տարբեր չարաշահությունների առաջ։ Վարչության ռուս լիազոր-քննիչ իշխան Մու-

րուզիի առաջարկությունը՝ վարկատուների շահերն ապահովող հաստատությունների գլխավոր աղբյուր լորս նահանգներում վերահսկողության սահմանել կառավարության գործողությունների վրա, չարժանացավ եվրոպական մյուս տերությունների լիազոր-քննիչների պաշտպանությանը[22]։ Այդ տերությունների կառավարող շրջանները նախընտրեցին բավարարվել Եգիպտոսի ֆինանսների վերաբերյալ անգլիացի խորհրդականի կողմից հանուր հասարակության ի գիտություն պատրաստվող և հրապարակվող փայլուն հաշվետվություններով, հոգ չտանելով այն մասին, որ այդ հաշվետվություններն ինչքանո՞վ էին համապատասխանում երկրի տնտեսական իրավիճակին և խորամուխ չլինելով այն իսկական հնարքներին, որոնք տեղական կառավարությանը թույլ էին տալիս տարեկան բյուջեն ելքի ու մուտքի մարզերում հավասարակշռել։

1886 թ. անգլիական ֆինանսական խորհրդատուն Պարտքերի վարչության համաձայնությանն ստացավ այն հարցում, որ ինչպես արտադրական պարհակների՝ վարձու աշխատանքով փոխարինման, այնպես էլ նավթային աղբյուրների որոնման և այլ համանման գործերի համար ծախսումներն օրինական ճանաչվեն, հակառակ այն իրողության, որ դրանք կատարվել էին առանց կանխօրոք տերությունների հավանության ենթարկվելու[23]։ Նմանօրինակ որոշումները բացահայտորեն դեմ ընթաց էին Պարտքերի վարչության կանոնագրությանը, որի համաձայն եգիպտական ֆինանսիստներին չէր թույլատրվում իրենց հայեցողությամբ տնօրինել ընթացիկ տարվա հասույթները, այն էլ առանց տերությունների համաձայնության կանխապես ստանալու։

Անգլիացիների պնդումով Պարտքերի վարչությունը մերժեց ֆրանսիացի քննիչի առաջարկությունը, որի համաձայն վարչության անդամները պետք է վերահսկողություն սահմաներին եգիպտական կառավարության կողմից հասարակական աշխատանքների համար նախատեսված գումարներին, ինչպես նաև Սուեզի ջրանցքի մաքրման համար հատկացված 250 հազար եգիպտական ֆունտի ծախսումների վրա[24]։

Այս բոլոր փոփոխությունների և որոշումների նպատակն էր թուլացնել Պարտքերի վարչության ազդեցությունը որպես Եգիպտոսի ֆինանսների վերահսկողության ենթարկող միշազգային հաստատության։ Անգլիացիները հնարավորություն ստացան առանց հակակշռի տնօրինել Պարտքերի վարչության գանձարկղ մուտքագրվող գումարները։

Ուշագրավ է նկատել, որ 1886 թ. արդեն կարշավ սկսվեց քննիչներին ամբողջովին ճանապարհից վերացնելու համար»։ Սըր Հենրի Դրումմոնդ-Վուլֆը հայտարարեց, որ «Պարտքերի վարչությունը բոլորովին հակընդդեմ է գործում ֆինանսական խորհրդականից ուղղություն ստացող կառավարության ֆինանսական քաղաքականությանը։ Պարզ է, որ անհրաժեշտ է վերանայել այն հարցը, թե ինչքա՞ն նպատակահարմար է այդպիսի լիազորություններ տալ օտարերկրացիների մի խմբի...»[26]։ Իսկ 1890 թ. դեկտեմբերին Ալեքսանդրիայում լույս տեսնող և ոչ առանց հիմքի Եգիպտոսի իսկական կառավարողների խոսնակը համարվող «Դի էշիպշըն գազետտա» հրապարակվեց մի հոդված, որ ուղղված էր ընդհանրապես Պարտքերի վարչության գոյության ու գործունեության դեմ[27]։

Մեծ տերությունների գրաված դիրքը բնավ էլ չխանգարեց անգլիացիների հետագա գործողություններին։ Քանի զեռ գոյատևում էր Ռուսաստանի համաձայնությունը Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի հետ, այդ տերությունների ներկայացուցիչները Պարտքերի վարչության գործունեության միջոցով ընդհուպ մինչև 1887 թ. հակազդում էին Եգիպտոսում Անգլիայի հարաճող ազդեցությանը։ Եռյակ միության ստեղծմամբ իրավիճակը փոփոխվեց։ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի ներկայացուցիչները եգիպտական հարցերի նկատմամբ չեզոք դիրք գրավեցին, բավարարվելով իրենց փոխատվությունների տոկոսները կանոնավորաբար ստանալով։ Ավստրո-Հունգարիայի դիվանագիտական ներկայացուցիչն իր ֆրանսիական պաշտոնակցին հայտնում էր, որ իր կառավարությունն իրեն կարգադրել է չբարձրացնել այնպիսի հարցեր, որոնք կարող են տհաճ լինել Անգլիային և որ իրեն հրահանգված է գործել միայն ու միայն Լոնդոնի ներկայացուցչի հետ համախորհուրդ[28]։ Իսկ Պարտքերի վարչությունում Գերմանիայի լիազոր բարոն Ռիխտգոֆենը իշխան Մուրուզիի այն դիտողությանը, որ վարչության նշանակությունն օրըստօրե ընկնում է, պատասխանում էր. «Ի՞նչ անել, երբ կարգադրություն ունես թիկունք տալ անգլիացիներին. անհրաժեշտ է բառացիորեն հետևել կարգադրությանը»[29]։

Միջերկրական ծովի շրջանում ստատուս քվոն պահպանելու վերաբերյալ համաձայնության հիմամբ միջերկրածովյան ափերին վերաբերող բոլոր հարցերում Իտալիան, եռյակ միության երրորդ անդամը, նույնպես թիկունք էր տալիս Անգլիային։

Վարչությունում Ռուսաստանի և Ֆրանսիայի ներկայացուցիչները, թախվելով իրենց ձայնը Անգլիայի բոլոր առաջարկությունների օգտին տվող մյուս չորս տերությունների ներկայացուցիչների մեծամասնական խմբին և ուրեմն չկարողանալով ոչինչ անել՝ հարկադրվում էին միանալ ընդհանուր կարծիքին։

Այսպիսով, Եգիպտոսում իրենց դիրքերն ամրապնդելու նպատակով անգլիական իշխանություններին հաջողվեց հաղթահարել եվրոպական տերությունների հակադեցությունը՝ երկրում գոյություն ունեցող միջազգային հաստատությունների իրավունքները սահմանափակելու և ներգործությունը թուլացնելու, նրանց կազմում անգլիացի աստիճանավորներ տեղաբաշխելու և դրանով իսկ այդ վարչություններն իր ազդեցությանը ենթարկելու ճանապարհով։

Արդեն 1880-ական թթ. վերջին Անգլիային հաջողվեց ոչ միայն ամրապնդել իր դիրքերը Եգիպտոսում, այլև անգլիական և ընդհանրապես եվրոպական հասարակական կարծիքը նախապատրաստել այն մտքին, որ Նեղոսի գրավումը երկարատև է լինելու։

С. А. АРУТЮНЯН

УКРЕПЛЕНИЕ АНГЛИЙСКОГО ГОСПОДСТВА В ЕГИПТЕ В 80-ых ГОДАХ XIX ВЕКА

Резюме

В 1882 году британские войска оккупировали Египет. В целях укрепления своих позиций и установления неограниченного господства Англии необходимо было преодолеть противодействие европейских держав, выражавшееся главным образом в деятельности существующих в Египте международных учреждений.

В статье сделана попытка показать, как путем ограничения прав этих учреждений, ослабления их влияния к концу 80-ых годов XIX века, англичанам удалось не только укрепить свои позиции, но и подготовить европейское общественное мнение к мысли о продолжении оккупации на длительное время.

1 Н. А. Иванов, История национально-освободительной борьбы народов Африки в новое время. М., 1976, с. 189.

2 Colvin A., The Making of Modern Egypt, L., 1906, p. 202:

3 Архив внешней политики России Историко-дипломатического управления Министерства иностранных дел СССР. Москва (այսուհետև՝ АВПР), ф. «Политархив», оп. 482, д. 825, л. 41, Кояндер-Гирсу. 9/IV. № 16.1887, Каир.

4 АВПР. ф. «Политархив», оп. 482, д. 825. л. 61. Кояндер-Гирсу. 21/V. № 23. 1887; Каир.

5 АВПР. ф. «Политархив», оп. 482, д. 827. л. 96, Кояндер-Гирсу. 25/V. № 29. 1889. Каир.

6 АВПР. ф. «Политархив», оп. 482, д. 826. л. 99, Щеглов-Гирсу. 7/VII. № 31 1888, Каир.

7 Նույն տեղում, թ. 100։

8 АВПР, ф. «Политархив», д. 828. л. 30. Кояндер-Гирсу, 21/IV. II 11, 1890. Каир.

9 АВПР, ф. «Политархив», д. 829, л. 21, Кояндер-Гирсу. 11/II. № 10. 1891, Каир.

10 Նույն տեղում, թ. 23։

11 Նույն տեղում, թ. 27։

12 Նույն տեղում, թ. 30։

13 АВПР, ф. «Политархив», д. 828, л. 78, Кояндер-Гирсу. 1/V. № 17, 1890 Каир.

14 АВПР, ф. «Политархив». д. 829, л. 43, Кояндер-Гирсу, 18/II. № 13, 1891. Каир.

15 АВПР, ф. «Политархив», д. 829. л. 133. Кояндер-Гирсу. 18/VII. № 33. 1891. Каир.

16 АВПР, ф. «Политархив», оп. 482, д. 825, л. 82, Кояндер-Гирсу, 4/VI. № 25, 1887, Каир.

17 Մեջբերում բուտ՝ Ротштейн Ф. А. Захват и закабаление Египта. М.—Л. 959. с. 215:

18 АВПР, ф. «Политархив», оп. 482, д. 827, л. 145, Кояндер-Гирсу, 24/IX7, № 49. 1889, Александрия.

19 АВПР, ф. «Политархив». оп 482, д. 827, л. 167, Кояндер-Гирсу, 14/XI. № 55, 1889, Каир.

20 АВПР, ф. «Политархив» оп. 482, д. 827, л. 150, Кояндер-Гирсу, 24/IX. № 49. 1889, Александрия

21 АВПР, «Политархив», оп. 482, д. 827, л. 191, Кояндер-Гирсу, 12/XII. № 16. 1889, Каир.

22 Նույն տեղում, թ. 196։

23 АВПР, ф. «Политархив», оп. 482, д. 825, л. 23. Кояндер-Гирсу, 5/III. № 11. 1887, Каир.

24 АВПР, ф «Политархив», оп. 482, д. 825, л. 27, Кояндер-Гирсу, 12/111. № 12. 1887, Каир.

25 Ф. А. Ротштейн, Захват и закабаление Египта, М.—Л., 1959, с. 220.
26 Մեջբերում բատ՝ Ֆ. Ա. Ռոտշտեյնի նշված աշխատության, նույն տեղում, էջ 220։
27 АВПР, ф. «Политархив», д. 828. л. 199. Коядер-Гирсу, 25/XI. № 50, 1890, Каир.
28 АВПР, ф. «Политархив», д. 828, л. 42, Кояндер-Гирсу, 21/IV. № 12, 1890, Каир.
29 Նույն տեղում։

Ա. Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 717—718 ԹԹ. ՊԱՇԱՐՈՒՄԸ ԱՐԱԲՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ՝ ԸՍՏ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

Արաբական խալիֆայության գոյության առաջին տարիներից սկսած, նրա արտաքին քաղաքականության կենտրոնում եղել է Բյուզանդական կայսրության բոլոր նահանգների նվաճումը և նույնիսկ վերացումը։

Դեպի Բյուզանդիայի տիրույթները կատարած բազմաթիվ արշավանքներից երեքի ընթացքում արաբներին հաջողվել է ընդհուպ մոտենալ Կոստանդնուպոլսի պատերին և պաշարել այն։ Սակայն, բոլոր դեպքերում էլ նվաճողների ծրագիրը՝ ներխուժել կայսրության սիրտը, անհաջողության է մատնվել։

Օմայանների կողմից Կոստանդնուպոլիսը նվաճելու վերջին փորձը տեղի է ունեցել 717—718 ԹԹ., երբ խալիֆայությունը գտնվում էր իր հզորության գագաթնակետին, իսկ Բյուզանդիան, ընդհակառակը, ծայրաստիճան թուլացած էր՝ հաճախակի տեղի ունեցող հեղաշրջումներից, գահի ու իշխանության համար մղվող արյունալի պայքարից։ Չնայած այդ ամենին, 717 թվականի մարտի 25-ին գահ բարձրացած Լևոն Գ Իսավրացի կայսրին (717—741) հաջողվեց հմտորեն կազմակերպել Կոստանդնուպոլսի պաշտպանությունը և պարտության մատնել թշնամուն։ Բյուզանդացիների տարած հաղթանակը արգելակեց արաբների հետագա առաջխաղացումը դեպի արևմուտք։

Կոստանդնուպոլսի 717—718 ԹԹ. պաշարման մասին տեղեկություններ առաջին հերթին քաղում ենք բյուզանդական պատմական աղբյուրներից։ Շնորհիվ Թեոփանես (752—818)[1] և Նիկեփոր (մահ, 828 թ.)[2] պատմիչների, այս, անկասկած մեծ նշանակություն ունեցող իրադարձության մասին հայտնի են դառնում բազմաթիվ կարևոր ու հետաքրքիր մանրամասներ։ Արաբական պատմաղբյուրներից հարկ է նշել անհայտ հեղինակի «Ականատեսների և այգիների գիրքը», որտեղ զետեղված է վերոհիշյալ պաշարման հանգամանալից պատմու-

թյուներ[5]։ Սպասվածից ավելի սեղմ են այս հարցում մյուս արար պատմիչները։ Ալ-Բաբարին (838—923)[6], Իբն ալ-Ասիրը (1160—1233)[7] դժկամությամբ են խոսում խնդրո առարկա իրադարձության մասին։ Ուշադրության արժանի են նաև ասորական աղբյուրներում տեղ գտած նկարագրությունները[8]։

Կոստանդնուպոլսի երրորդ պաշարման փաստը չի վրիպել միջնադարյան հայ մատենագիրներից շատերի ուշադրությունից։ Այսպես՝ Ղևոնդը (VIII դ.), Ասողիկը (X—XI դդ.), Անանուն գրուցագիրը (կեղծ Շապուհ Բագրատունի) (X—XI դդ.), Վարդան Արևելցին (XIII դ.), նաև Հեթումը (XIII դ.) հանգամանորեն կամ թռուցիկ կերպով անդրադարձել են այս իրադեպին[9]։

Չնայած հայկական պատմաղբյուրներում Կոստանդնուպոլսի երրորդ պաշարմանը վերաբերող նյութերի առկայությանը, հաճախ ուսումնասիրողները աչքաթող են արել դրանք և բավարարվել միայն այլապիի հեղինակների հաղորդումներով։ Ֆրանսիացի արևելագետ Մարիուս Կանարը, իր «Արաբների արշավանքներն ընդդեմ Կոստանդնուպոլսի» ուշագրավ աշխատության մեջ, բերելով 717—718 թթ. պաշարումը հիշատակող պատմական սկզբնաղբյուրների մի ստվար ցանկ, տեղ չի հատկացնում այնտեղ և ոչ մի հայ հեղինակի պատմության[10]։ Պնդել, որ նա ծանոթ չի եղել վերոհիշյալ հայ պատմիչների գործերին, դժվար թե ճշմարտացի լինի։ Հիշենք, որ Ղևոնդի «Խալիֆաների պատմությունն» արդեն 1856 թ. հրատարակվել էր Ֆրանսերեն լեզվով և մատչելի դարձել եվրոպացիների համար։ Հավանաբար Կոստանդնուպոլսի պաշարման մասին հայ պատմիչների թողած տեղեկությունների, առաջին հայացքից հեքիաթային թվացող բնույթն է, որ պատճառ է դարձել Կանարի և այլոց կողմից ցուցաբերած անտարբերության։ Ճիշտ է, այս պաշարմանը վերաբերող հատվածներում հայ հեղինակները թույլ են տվել մի շարք սխալներ, աղավաղումներ, գործողությունների հերթականության ու ժամանակագրության որոշակի խախտումներ ու անճշտություններ, առկա են առասպելական դրվագներ, սակայն այդ հաղորդումները բոլոր դեպքերում իրենց հիմքում պատմական են և մեր խորին համոզմամբ կարող են օգտակար լինել քննարկվող իրադարձության ամբողջական ուսումնասիրության համար։

Ք. Պատկանյանը ժամանակին զուգահեռներ է անցկացրել օտար աղբյուրների հիման վրա ստեղծված Կոստանդնուպոլսի երրորդ պա-

շարման պատմության և Ղևոնդի պատմության համապատասխան հատվածի միջև և հանգել այն եզրակացության, որ չնայած ժամանակագրական տարբերություններին, ռազմական գործողությունների վերաբերյալ մանրամասներում նրանց միջև չկան տարաձայնություններ։ Նա «առավել վստահություն» է պահանջում նաև Ղևոնդի ժամանակագրության համար[9]։ Այսպիսի անվերապահ մոտեցումը նույնպես կարող է վնասել խնդրին և բազմաթիվ անճշտությունների պատճառ դառնալ։

Հայ հեղինակներից հնագույնը, որն իր մատյանում զետեղել է Կոստանդնուպոլսի երրորդ պաշարման պատմությունը, հենց Ղևոնդն է։ Այդ առթիվ նրա հայտնած տեղեկությունները հիմնական աղբյուր են հանդիսացել նաև մյուս հայ պատմիչների համար։ Այսպես, Ասողիկը փաստորեն համառոտ կերպով վերապատմում է մեծ պատմիչին։ Անանուն զրուցագրի պատմության կմախքը նորից հիշեցնում է նրան, սակայն այն իր հերթին բավականին ինքնուրույն է, հավանաբար Ղևոնդի գործին աղոտ ծանոթ լինելու պատճառով։ Ինչ վերաբերում է Վարդանին, ապա նրա հայտնած այս ծայրաստիճան համառոտ տեղեկությունը՝ «Եւ եկաց յետ նորա (Նզիդից—Ա. Մ.)։ Հէշմ, որ առաքեաց զեղբայր իւր Մսլիմ մինչեւ ցԲիւթանիա ոգիս եօթն բիւր։ Եւ միւս անգամ գնաց դարձեալ և ծովասոյզ լինի ի զօրութենէ խաչին յիսուն բիւր արանց։ Եւ կայսր արձակեաց զՄսլիմ պատմել զփառս Աստուծոյ»[10], Ղևոնդի տարբերակի ամփոփումն է մեկ-երկու նախադասությամբ։

Բացառություն է կազմում Հեթումը, որի հայտնած քուրցիկ տեղեկություններն անկասկած քաղված են բյուզանդական պատմական աղբյուրներից։ Իր ժամանակագրության մեջ նա ասում է. «ՉՀ (708 թ.)։ Ի սորա ժամանակին Տաճիկք եկեալ ի Կոստանդնուպոլիս պաշարեցին զԳ (3) ամս»[11]։ Այն, որ Հևոն Գ թագադրվել է 708 թ. և իշխել 25 տարի, հիշեցնում է Թեոփանեսին, ըստ որի Հևոնը թագադրվել է Քրիստոսի մարդեղության 709-րդ տարում և իշխել 25 տարի[12]։ Տարբերությունը միայն մեկ տարվա մեջ է։ Իսկ այն կարծիքը, որ պաշարումը տևել է երեք տարի, ըստ երևույթին քաղված է Նիկեփորից, որն այդ առթիվ գրում է. «30 ամիսների ընթացքում նրանք պահեցին այն (արաբները՝ Կոստանդնուպոլիսը—Ա. Մ.) պաշարման մեջ»[13]։

Ըստ հայ միջնադարյան մատենագիրների, բացառությամբ Հեթումի և Անանուն զրուցագրի, արաբների կողմից դեպի Կոստանդնուպոլիս կատարած արշավանքը և նրա պաշարումը տեղի է ունեցել Օմայան խալիֆա Հիշամ իբն Աբդ ալ-Մալիքի (724—743) օրոք։ Այս սխալը սկսվում է Ղեոնդից և տեղ գտնում թե՛ Ասողիկի և թե՛ Վարդանի մոտ։ Ինչպես արդեն վերը նշվել է, Ք. Պատկանյանը անվերապահորեն ընդունել է Ղեոնդի ժամանակագրությունը տվյալ հարցում՝ պահանջելով նրա համար առավել վստահություն, պատճառաբանելով, որ մինչ այդ հատվածը պատմիչի ժամանակագրության մեջ հակասություններ չեն նկատվել։ Սակայն նման փաստարկը բավարար լինել չի կարող։ Սխալն անկասկած թույլ է տրված։ Օտար աղբյուրներում եղած բոլոր փաստերը խոսում են այն մասին, որ պաշարումն սկսվել է Սուլեյման իբն Աբդ ալ-Մալիք խալիֆայի (715—717) օրոք և ավարտվել Օմար իբն Աբդ ալ-Ազիզի (717—720) գահ բարձրանալուց հետո, ավելի ստույգ 717—718 թթ. ընթացքում։

Դժվար է կռահել, թե որոնք են Ղևոնդի թույլ տված նմանօրինակ անճշտության իրական պատճառները։ Ն. Ակինյանն այս հատվածում Ղևոնդի ժամանակագրության ընթացքի խախտումը բացատրում է նրանով, որ մի անհայտ անձնավորության, որը Ղևոնդի «Պատմության» մեջ ներմուծել է Լեոն կայսեր և Օմարի թղթակցությունները, միաժամանակ, դիտավորյալ Կոստանդնուպոլսի պաշարմանը նվիրված հատվածը տեղափոխել է Հիշամի ժամանակները։ Նա գրում է. «Անիկա Օմարի «առ ազգս քրիստոնէից ցոյց տուած բարեխառնութեան եւ բարեմտութեանն» բոլորովին անհամաձայն նկատելով Կ. Պոլսի պաշարումը... փոքրիկ ետեւառաջութեամբ յաջողած է պատմութիւնը համաձայնեցնել իր ճաշակին»[14]։ Սակայն, նման բացատրությունը համոզիչ չէ, քանի որ Օմար խալիֆան եղել է ոչ թե դեպի Կոստանդնուպոլիս կատարած արշավանքի նախաձեռնողը, այլ այն անձնավորությունը, որը հրամայել է մահմեդականներին լքել քաղաքի մատույցները և ետ վերադառնալ։ Նրա քաղաքականությունը Բյուզանդիայի նկատմամբ հենց սկզբից հաշտվողական է եղել։ Այն, որ նրա խալիֆա հռչակվելուց հետո գեռ որոշ ժամանակ շարունակվել է պաշարումը, ամենևին չի փոխում գործի էությունը, քանի որ նա, բնականաբար, չէր կարող անմիջապես դադարեցնել այդքան հեռու գնացած արշավանքը, իսկ որոշ աղբյուրներ հաստատում են նաև, որ Մասլամանստանալով Օմարի հրամանը ետ դառնալու մասին, երկար ժամանակ

թաքցրել է այն իր ենթականերից՝ չցանկանալով ձեռնունայն վերադառնալ արշավանքից[15]։ Այնպես որ, բոլորովին հարկ չի եղել տեղափոխել պաշարման հատվածը Օմարի ժամանակներից դէպի Հիշամը՝ սոսկ այն պատճառով, որ այդ փաստը կարող էր հակասել նրա «բարեպաշտ» կերպարին։ Ընդհակառակը, այն, որ նա է դադարեցրել բյուզանդական մայրաքաղաքի պաշարումը, կարող էր նպաստել նրա «բարեպաշտության» առավել հաստատմանը։

Հայ միջնադարյան պատմիչներից միայն Անանուն զրուցադիրն է, որ Կոստանդնուպոլսի պաշարումը վերադրում է Օմարի (Ամբ խալիֆայության տարիներին[16]։ Սակայն այս Օմարը պատմիչի համար ոչ թե որոշակի մի անձնավորություն է, այլ խալիֆների մի հավաքական կերպար։ Խոսել այս պատմիչի ժամանակագրական հայացքների մասին դժվար է, քանի որ նա չի հիշատակում ստույգ տարեթվեր, իսկ դեպքերի հերթականությունը հաճախ խախտված է։

Անդրադառնալով Ղևոնդին, պետք է ենթադրել, որ նա ստույգ չիմանալով, թե երբ է տեղի ունեցել Կոստանդնուպոլսի սուն պաշարումը, այն շփոթել է Հիշամի օրոք տեղի ունեցած բազմաթիվ արաբբյուզանդական ընդհարումներից որևէ մեկի հետ։ Նա արշավանքի սկիզբը համարում է արաբա-խազարական հայտնի պատերազմին (730—731) հաջորդած տարին, այսինքն մոտավորապես 731—732 թթ., որը և նշում է Ք. Պատկանյանը[17]։ Այդ տարիներին, իրոք տեղի է ունեցել մի կողոպտչական արշավանք դեպի Բյուզանդիայի փոքրասիական տիրույթները, որն ի դեպ, առաջնորդել է նույն Մասլաման՝ Հիշամի եղբայրը, սակայն այն լուրջ բնույթ չի ստացել և ավարտվել է Կապադովկիայում գտնվող Խաբսիանոն բերդի գրավումով[18]։

Քննարկվող արշավանքին նվիրված հատվածը Ղևոնդը, ինչպես նաև Ասողիկը սկսում են նրանով, որ Իսմայելի իշխանն սպառնում է հռոմների թագավորին՝ պահանջելով նրանից հարկատու դառնալ իրեն. «Ես յետ այսորիկ (խազարների դեմ մղած պատերազմից հետո—Ա. Մ.) սկսաւ գոռալ ընդդէմ թագաւորին Յունաց և յղէր դեսպան առ Լևոն կայսր հռոմոց՝ գալ նմա ի հնազանդութիւն հարկատուութեան»[19]։

Իրոք, մինչև պատերազմի սկսվելը Բյուզանդիայի և խալիֆայության միջև փոխանակվել են դեսպանություններ։ Սակայն, օտար աղբյուրները հիշատակում են միայն բյուզանդականի մասին։ Ինչպես վկայում են Թեոփանես և Նիկեփոր պատմիչները, Անաստասիոս Բ

Կայսրը (713—715) սեղեկանում, որ մահմեդականները Իլուսնկիայի դեմ ցամաքով ու ծովով արշավելու նախապատրաստվելիս են, նաև, գնում Խալիֆայի կամքով (705—715) մոտ Խոլմ քաղաքի Ընդհատ(ակ)ում (Մալաստա) գտած գերեզմանի վրա «Ասուածի» մոնումենտի հետևից մոգերի և այլ սրճեղ մեր արուեստագետների մոգությունների մասին շատ բան գրի և ասելիք ունենալով հանդերձ, ոչ միայն չի ցանկանում, այլև ասում է, որ սեղ գտած լինելն և հափտակ սեղեկից հոգևոր գեղագիտական ընդհանրություններ։ Ալեքսանդրիայի մոգերի մասին Ամմիանոսը չի բացառում, որ նրանց մեջ կարող են լինել նաև իսկական իմաստուններ, որոնք ունակ են ներգործելու ոգիների վրա։ Ամմիանոսը նաև նշում է, որ Ալեքսանդրիայում մոգերի հետ միասին ապրում են նաև աստղագետներ, որոնք ունակ են կանխատեսելու ապագան։ Ամմիանոսը նաև նշում է, որ Ալեքսանդրիայում մոգերի հետ միասին ապրում են նաև աստղագետներ, որոնք ունակ են կանխատեսելու ապագան։

Ալեքսանդրիայում մոգերի հետ միասին ապրում են նաև աստղագետներ, որոնք ունակ են կանխատեսելու ապագան։ Ամմիանոսը նաև նշում է, որ Ալեքսանդրիայում մոգերի հետ միասին ապրում են նաև աստղագետներ, որոնք ունակ են կանխատեսելու ապագան։

Ք. Պատկանելը, փաստերն, նուիրացնում է Ղևոնդի նկարագրած այս արշավանքը Դուռնաբուղոսի դեմ արարքի արշավանքի սկզբում՝ Ներմրոտ քաղաքում տան մեկ ուրիշ ոչնչացած հեթանոսական հնություններ, որոնք հիշեցնում են Դուռնաբուղոսի տան ախտ արարքի փայտակերտ պղնձագործ արհեստանոցները, ջրմրմիկ, նա նշում է Ալեքսանդրի ցուցաբերած գթասրտությունը, որ նա ոչ միայն չի ավերում այդ հեթանոսական տաճարները, այլև հրամայում է նորոգել դրանք։ Ալեքսանդրի այս վարքագիծը հակադրվում է Դուռնաբուղոսի վարքագծին։

Ալեքսանդրի հետ միասին ապրում են նաև աստղագետներ, որոնք ունակ են կանխատեսելու ապագան։ Ամմիանոսը նաև նշում է, որ Ալեքսանդրիայում մոգերի հետ միասին ապրում են նաև աստղագետներ, որոնք ունակ են կանխատեսելու ապագան։

Մկրտիչ, ըստ հայկական աղբյուրների, ապրելով ճգնակեցության մեջ, ձեռնարկեց քարոզել ապաշխարության եւ հոգեւոր մաքրության մկրտության վճռակամ անհրաժեշտությունը եւ իր քարոզը ուղղեց ոչ միայն ամբոխին, այլեւ հարուստներին եւ իշխանավորներին։ Նա հանդիմանեց Հերովդես Անտիպասին, որ իր եղբոր կնոջ՝ Հերովդիայի հետ ապրում էր անօրինաբար, եւ Հերովդիայի հրամանով նա ձերբակալվեց եւ գերի ընկավ։ Հերովդիան ատում էր Մկրտչին, որովհետեւ նա հանդիմանում էր նրան, եւ ուզում էր սպանել նրան, բայց չէր համարձակվում, որովհետեւ գիտեր, որ ամբոխը սիրում էր Մկրտչին։ Հերովդիան հնարեց մի նենգ միջոց։ Հերովդես Անտիպասը մեծ խնջույք սարքեց իր ծննդյան օրը եւ հրավիրեց իր զորավարներին, հազարապետներին եւ Գալիլեայի նշանավոր մարդկանց։ Հերովդիայի դուստրը՝ Սողոմեն, ներս մտավ հյուրերի մեջ եւ պարեց։ Նրա պարը այնքան հաճելի եղավ Հերովդեսին եւ հյուրերին, որ թագավորը երդվեց տալ աղջկան ամեն ինչ, որ նա կուզենա, մինչեւ անգամ իր թագավորության կեսը։ Աղջիկը գնաց մոր մոտ եւ հարցրեց նրան, թե ինչ խնդրի թագավորից։ Հերովդիան պատասխանեց, որ խնդրի Մկրտչի գլուխը։ Աղջիկը վազեց թագավորի մոտ եւ ասաց նրան իր մոր խորհուրդը։ Թագավորը տխրեց, բայց երդումի համար եւ հյուրերի առաջ չուզեց մերժել աղջկան խնդրանքը։ Նա ուղարկեց մարմնավոր մի զինվոր եւ հրամայեց բերել Մկրտչի գլուխը։ Զինվորը գնաց, կտրեց Մկրտչի գլուխը եւ բերեց մի նկարի վրա եւ տվեց աղջկան, իսկ աղջիկը տարավ մորը։ Մկրտչի աշակերտները, իմանալով այդ, եկան եւ վերցրին նրա մարմինը եւ թաղեցին։

տանդնուպոլիս, և դղանազան հիմնարկութիւնս սրբոյն Սոփիայ, որ ի վերնոյն իմաստութենէ շինեցաւ յերկրի տուն Աստուծոյ՝ պղծալից դիցապաշտութեանն շինել տեղի երկրպագութեան»[25]։ Օտարազգի հեղինակներից այսպիսի երդման մասին հիշատակում է միայն Միքայել Ասորին, ըստ որի Մասլաման արշավանքից առաջ երդում էր տվել Սուլէյման խալիֆային չվերադառնալ, մինչև որ չնվաճի Կոստանդնուպոլիսը[26], իսկ ալ-Թաբարին վկայում է, որ Սուլէյմանը հրամայել էր Մասլամային նոր չվերադառնալ մինչև որ չնվաճի քաղաքը կամ էլ ինքը նրան ետ չկանչի[27]։ Ինչպես նկատել է Մ. Կանարը, սա էէ եղել պատճառն այն բանի, որ երբ Մասլաման Կոստանդնուպոլսի պատերի տակ ծանր դրության մեջ է ընկել չի համարձակվել ինքնակամ լքել դիրքերը[28]։

Հայ հեղինակները չեն տարվում Մասլամայի անցած ճանապարհի նկարագրությամբ, և նա անմիջապես հայտնվում է Պոնտոսի ափին, որտեղ և բանակ է դնում։ Անանուն ղրուցագիրը որպես արաբների բանակատեղի նշում է Խրիսոպոլիս քաղաքը, որը գտնվել է Բոսֆորի ափին՝ Կոստանդնուպոլսին դեմ դիմաց։ Այս հարցում հայկական աղբյուրները հակասության մեջ են օտար աղբյուրների հետ։ Վերջիններիս հաղորդումներից պարզվում է, որ արաբական բանակի մի մասը անցել է Արյուդոսը և Թրակիայի կողմից մոտեցել քաղաքին, իսկ ծովով օգնության է հասել նավատորմը[29]։ Միքայել Ասորին հիշում է նաև, որ մայրաքաղաքը հացով մատակարարելը դժվարացնելու նպատակով, արաբները գրավել են նաև Քաղկեդոնը[30]։

Այնուհետև հայ մատենագիրները վկայում են սպառնալիքներով ողողված մի հրովարտակի մասին, որ Մասլաման ուղղել է Լևոն կայսրին, իսկ վերջինս իր պատասխանում, վկայակոչելով աստծուն, խորհուրդ է տալիս նվաճողին սթափվել և հեռանալ քաղաքի մատուցներից, աստծո ցասումից խուսափելու համար[31]։ Այլազգի մատենագիրներից շատերն իրենց պատմություններում հաստատում են Լևոնի և Մասլամայի միջև եղած փոխադարձ կապի իրական լինելը[32]։ Լևոնը բանեցնելով նուրբ դիվանագիտություն, գաղտնի կապ է ստեղծում իր և Մասլամայի միջև՝ ցանկանալով օգտագործել վերջինիս հովանավորությունը կայսերական թագը զավթելու համար։ Իր հերթին Մասլաման համաձայնվում է օգնել Լևոնին այն պայմանով, որ վերջինս թագադրվելուց հետո իրեն հանձնի մայրաքաղաքը։ Ի վերջո Լևոնը հասնում է իր նպատակին և կայսր հռչակվում՝ լիովին մոռացության

մատնելով տված խոստումները։ Ահա այսպիսի պարագաներում միանգամայն հնարավոր է, որ խարված ու գազազած Մասլաման սպառնալիքներ հղեր իր նախկին դաշնակցին, արդի ախոյանին։ Այս հրովարտակի, ինչպես նաև Լևոնի պատասխանի տեքստերը պահպանվել են միայն հայկական աղբյուրներում, մասնավորապես Ղևոնդի մոտ։ Դժվար է պնդել դրանց վավերական լինելը, սակայն բոլոր դեպքերում հակված ենք այն տեսակետին, որ Ղևոնդը ծանոթ է եղել Լևոն Գ-ին ուղղված և նրա ձեռքով գրված տարբեր նամակների, որոնցից ամենանշանավորը կայսեր և Օմար խալիֆայի միջև եղած թղթակցությունն է, որի վավերական լինելը ընդունում են Ա. Ջեֆրին, Ն. Ակինյանը, Ա. Տեր-Ղևոնդյանը[33]։

Քանի որ բանակցություններն անարդյունք են ավարտվում, Մասլաման սկսում է հարձակումը քաղաքի վրա՝ ծովով։ Լևոն կայսրը, տեսնելով թշնամու բանակի բազմությունը, ամրանում է քաղաքի պարիսպներից ներս. «Իբրև ետես կայսրն Լևոն զբազմութիւն զօրացն անտառացեալ ի վերայ ծովուն՝ տայր հրաման կազմել զանդակակապ կազմած երկաթեղէն պարսպին, և աղխեալ զդուռն շղթայագործ ամրոցին...»[34]։ Քաղաքը պաշտպանության նախապատրաստելու վերաբերյալ Թեոփանեսը գրում է. «Վերջինիս (Կոստանդնուպոլսի,—Ա. Մ.) բնակիչները ամրացրել էին ցամաքային պարիսպը՝ մի մեծ խրամատ փորել, որի եռևում առանց շաղախի մի ցածր շրջապարիսպ կառուցել»[35]։

Ղևոնդը, որին հետևել են նաև մյուս հայ պատմիչները, խուսափում է պատերազմական գործողությունների մանրամասներից՝ բյուզանդացիների հաղթանակի պատճառը տեսնելով միայն աստծո զորության մեջ։ Այսպիսի մոտեցումը բնորոշ է Ղևոնդի ողջ «Պատմությանը», ինչը և նշում է Ա. Տեր-Ղևոնդյանը[36]։ Այն առասպելը, որ պատմում է Ղևոնդը՝ կապված աստծո կողմից արաբական նավատորմի կործանման հետ, զարմանալիորեն հիշեցնում է Սեբեոսի հիշատակած մի առասպել՝ արաբների կողմից Կոստանդնուպոլսի հավանաբար առաջին պաշարման մասին[37]։ Ինչպես Ղևոնդի տարբերակում, այնպես էլ այստեղ, բարեպաշտ կայսեր և քաղաքի բնակչության երկարատև աղոթքները պատճառ են դառնում այն բանին, որ աստված ցույց է տալիս իր զորությունը և կործանում թշնամու նավատորմը։

Սեբեոսի և Ղևոնդի մեջբերած կիսառասպելական պատմությունների բովանդակության նմանության պատճառն ըստ երևույթին հետև-

...ւոյն ի. Կոստանդնուպոլսոյ ասաշտմուիղ Հայս սրճոգակել ի ...ալն առասաւել, որք ի գիտցեալ ի վիճակս։ Ըոտ սրեկ գաւ...ցեալ ...ին, կարծելով, որ սրճ ի ոչնցեալ բյուրեղոգակաւ մեշտաջաւթե ...ն գասել վիճակս ասաշտմուիղ, հարմարեցեալ ի վիճակոյն 216—218 քք. արշակունեաց, հրամարեաց զնա ի նոյնիսկ ժամանակի, յորում Կոստանդիանոս Հայոց աշխարհին տիրեաց։ Ոչ միայն զայս ինչ ասեն պատմագիրք, այլ եւ զի ի գաւառսն Ասպահանայ եւ ի Ռշտունիս գտանին մինչեւ ցայսօր ժամանակի ...ք ...ք, որ ի ժամանակս Կոստանդիանոսի եւ յետ նորա շինեցան։ Ոչ ...ք ...ք ...ք

Համաձայն օտար աղբյուրների, Կոստանդնուպոլսի երրորդ պաշարումն ավարտվում է նրանով ,որ Օմար խալիֆան համոզվելով Բյուզանդիայի մայրաքաղաքը գրավելու անհնարինության մեջ, ետ է կանչում Մասլամային, որը և որոշ ժամանակ անց վերադառնում է Ասորիք[42]: Հայ հեղինակների մոտ այս վերջաբանը այլ կերպ է ներկայացվում: Ըստ նրանց, ընկնելով պաշարման մեջ, Մասլաման գիտե է աղերսում Լևոնից: Վերջինս իր մոտ է կանչում Մասլամային, նախատում նրան, ապացուցում Տիրող զորությունը, ապա ներում շնորհում և թույլատրում վերադառնալ իր երկիրը: Մահմեդականները զգուշորեն անցնում են Միջերկրական ծովը և գալիս Ասորիք: Այստեղ հայրենակիցների կշտամբանքներին ու նախատինքներին Մասլաման պատասխանում է. «Ոչ կարծի ընդ Աստուծոյ կռուել»[43]: Այս արշավանքից հետո նա այլևս երբեք սուր չի վերցնում ձեռքը[44]:

Դիոնիսիոս Թելմահրացին, ինչպես նաև Կարամանին հաղորդում են, որ Մասլաման ետ վերադառնալու մասին Օմարի հրամանը ստանալուն պես, խնդրում է Լևոնին թույլ տալ իրեն մուտք գործել քաղաք՝ նրան այցելելու նպատակով: «Նա երեսուն ձիավորներով քաղաք մտավ, երեք օր շրջեց և հիացավ քաղավորական գործերի վրա»[45]:

Համադրելով հայ և վերոհիշյալ հեղինակների տարբերակները այս առթիվ, կարելի է ենթադրել, որ Մասլամայի և նրա զինակիցների հայտնվելը Կոստանդնուպոլսում պայմանավորված է ուղղակի նրանց գերի հանձնվելով: Այն, որ եղել են արաբներին գերելու դեպքեր հաստատում են Թեոփանեսը, ըստ որի, վերադարձի ճանապարհին մահմեդականների նավերից միայն տասը փրկվեցին, որոնցից հինգն ընկան բյուզանդացիների ձեռքը և Միքայել Ասորին, որը նույնպես հաստատում է բյուզանդացիների և բուլղարների դեմ վարած մարտերում արաբներից շատերի գերի ընկնելու փաստը[46]: Այն, որ Լևոնն ազատությունն է շնորհել Մասլամային և նրա զինակիցներին, պետք է բացատրել նրա ցանկությամբ՝ հաշտության գալ խալիֆայության հետ՝ կայսրության ներքին գործերը կարգավորելու և իր գահի հիմքերը ամրապնդելու համար ժամանակ շահելու նպատակով:

Այսպիսով, հայկական աղբյուրների Կոստանդնուպոլսի երրորդ պաշարման մասին հաղորդումները՝ բացի առասպելականից ու հեքիաթայինից, իրենց մեջ պարունակում են պատմական արժեք ներկայացնող դրվագներ:

А. А. МЕЛКОНЯН

ОСАДА КОНСТАНТИНОПОЛЯ АРАБАМИ В 717—718 гг. ПО АРМЯНСКИМ ИСТОЧНИКАМ

Очередная арабская военная кампания в Малой Азии обернулась осадой Константинополя в 717—718 гг., но благодаря умелой оборонительной тактике византийцев и некоторым объективным причинам, завоевателям не удалось взять город. Кроме византийских, арабских и сирийских исторических источников, об этой осаде Константинополя сообщают и некоторые средневековые армянские авторы, в частности, Гевонд, Асолик, Вардан и т. д. По той причине, что эти сообщения, на первый взгляд, носят характер преданий, они не были удостоены внимания исследователей. Однако, их подробное изучение выявляет, что они в основе своей историчны и во многом могут способствовать всестороннему освящению вопроса.

1 Թևոփանես Խոստովանող, Ժամանակագրություն, թարգմ. և ծանոթ. Հր. Բարթիկյանի, Երևան, 1983, էջ 98—101 և 105—108։

2 Никифора (патриарха конст.) Краткая история (перевод Е. Э. Липшица), «Византийский временник». 111, 1950, с. 363.

3 Սրա անգլերեն թարգմ. տե՛ս Brooks E. W., The Campaign of 716—718 from Arabic Sources, „The Journal of Hellenic Studies", vol. X, London, 1899, p 20—29:

4 Tarikh al-Tabari, vol. VI, Cairo 1971, *էջ 523, 530—513, 533։*

5 Իբն ալ-Ասիր, թարգմ. և ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981, էջ 70—72։

6 *Տե՛ս* Chronique de Michel le Syrien, vol. 2, Paris, 1963, *էջ 483—480*; Chronique de Denys de Tell—Mahre, Paris, 1895, p. 12—14:

7 Տե՛ս Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի վարդապետի Հայոց, ՍՊր, 1887, էջ 103—112, Ոսկեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, ՍՊր, 1885, էջ 128—130, Պատմութիւն Անանուն զրուցագրի Կարծեցեալ Շապուհ Բագրատունի, թարգմ. առաջարան ու ծանոթ. Մ. Հ. Դարբինյան-Մելիքյանի, Երևան, 1971, էջ 78—87, Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն Տիեզերական ի լոյս ընծայեաց Մ. Էմին, Մ. 1861, էջ 102; Հեթում, Պատմութիւն, «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ.» հ. 2, էջ 33։

8 Canard M., Les Expeditions des Arabes contre Constantinople „Journal Asiatique", t. CCVIII, № 1, Paris, 1926, p. 80.

9 Гевонд Вардапет, История халифов, пер. К. Патканяна, СПб, 1862, прим. № 164, с. 153.

10 Վարդան, նշված աշխ., էջ 102։

11 Հեթում, նշված աշխ., էջ 48։

12 Թեոփանես. Նշված աշխ., էջ 101—102։

13 Никифор, Նշված աշխ., էջ 372։ Նիկեփորն այստեղ ընկած է հակասություններին մեջ. պաշարման տևողությունը համարելով 30 ամիս, նա ամրողջ իրադարձությունը ամփոփում է 717—718 թթ. սահմաններում։

14 Ն. Ակինյան. Ղևոնդ երեց պատմագիր, Մատենագրական հետազոտություններ, ՀԻՏ, հ. Գ, Վիեննա, 1930, էջ 93։

15 M. Canard, Նշված աշխ., էջ 89։

16 Պատմութիւն Անանուն ղրուզաղրի, էջ 77։

17 Гевонд, Նշված աշխ., ծանոթ. 169, էջ 155։

18 Թեոփանես, Նշվ. աշխ., էջ 119։ Ըստ Իբն ալ-Ասիրի Խարխանոն (Խարշանա) ամրոցը նվաճել է Մուավիա իբն Հիշամը և ոչ թե Մասլաման։ Տե՛ս Իբե-ալ-Ասիր, Նշվ. աշխ., էջ 82։

19 Պատմութիւն Ղեւոնդեայ, էջ 103, հմմտ. Ստեփաննոս Տարօնեցի. Նշվ. աշխ., էջ 128։

20 Թեոփանես, Նշվ. աշխ., էջ 96, Никифор, Նշվ. աշխ., էջ 370։

21 Պատմութիւն Ղեւոնդեայ..., էջ 104, Ստեփաննոս Տարօնեցի. Նշվ. աշխ., էջ 128։

22 Гевонд, Նշվ. աշխ., ծանոթ. 164, էջ 153։

23 Թեոփանես, Նշվ. աշխ., էջ 101, M. Canard. Նշվ. աշխ., էջ 82։

24 Թեոփանես, Նշվ. աշխ., էջ 96։

25 Պատմութիւն Ղեւոնդեայ..., էջ 105, տե՛ս նաև Ստեփաննոս Տարօնեցի. էջ 128, Անանուն զրուցագիր. էջ 77։ Այս վերջինիս տարբերակում Մահմատ զորավարը երդվում է ջարքա Ամոին հոռոմոց թագավորին շղթայակապ նրա առաջը բերել։

26 Michel le Syrien, Նշվ. աշխ., հ. 2, էջ 483։

27 Tarikh al-Tabari, հ. 6, էջ 530։

28 M. Canard, Նշվ. աշխ., էջ 87։

29 Թեոփանես, Նշվ. աշխ., էջ 105, Brooks, Նշվ. աշխ., էջ 23։

30 Michel le Syrien, Նշվ. աշխ., հ. 2, էջ 484։

31 Մանրամասները տե՛ս Պատմութիւն Ղեւոնդեայ..., էջ 105—109։

32 M. Canard. Նշվ. աշխ., էջ 87, Brooks, Նշվ. աշխ., էջ 23։

33 Տե՛ս Ղևոնդ. Պատմություն, թարգմ. ներած. և ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Հայ մատենագիրներ, Երևան, 1982, էջ 150—151։

34 Պատմութիւն Ղեւոնդեայ..., էջ 109։

35 Թեոփանես, Նշվ. աշխ., էջ 105։

36 Ղևոնդ, Նշվ. աշխ., էջ 15։

37 Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Արզարյանի, Երևան, 1979, էջ 170—171։

38 Թեոփանես, Նշվ. աշխ., էջ 108, նաև Никифор, Նշվ. աշխ., էջ 372, Michel le Syrien, Նշվ. աշխ., հ. 2, էջ 486։ Արաբական ավանդությունը չի պահպանել որևէ հիշատակություններ այս առթիվ։

39 Պատմութիւն Ղեւոնդեայ..., էջ 110։ Անանուն զրուցագիր. էջ 85։ Ըստ այս վեր-

չինի Մասյաֆ և Ամիդ զորավարները 50 հազով ափ են դուրս գալիս մի անմարդաբնակ կղզի, որ կոչվում է Խորտաբանե։

40 Թևփանես, նշվ. աշխ., էջ 107։

41 Brooks, *նշվ. աշխ.*, *էջ 28։*

42 Canard, *նշվ. աշխ., էջ 99։*

43 Պատմութիւն Վեհենդեայ..., էջ 112։

44 Սա թյուրիմացություն է, քանի որ հետագայում Մասլաման բազմիցս հանդես է գալիս որպես ահեղ նվաճող, տարբեր վայրերում։

45 Denys de Tell-Mahre, *նշվ. աշխ., էջ 13*, Canard, *նշվ. աշխ., էջ 100։*

46 Թևփանես, նշվ. աշխ., էջ 108, Michel le Syrien, *նշվ. աշխ., հ. 2, էջ 485։*

Ե. Հ. ՆԱՋԱՐՅԱՆ

ԵԳԻՊՏԱԿԱՆ «ՎԱՖԱՆԻ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ «ՋԻՆՎՈՐԱԿԱՆ ԹԵՎԸ»

1875 թ. փաստորեն սնանկ հայտարարված և անգլիական ու ֆրանսիական գաղութարարների կողմից ֆինանսատնտեսապես ստրկացված Եգիպտոսում 1879 թ. սկզբներին հասարակության լայն խավերում դժգոհանքն ավելի ու ավելի էր վերաճում ընդդիմադրական տրամադրությունների։ Կրքերը ծայր աստիճանի բորբոքվեցին այն բանից հետո, երբ Նուբար փաշայի վարչապետությամբ գործող «եվրոպականն» առաջին դահլիճը որոշեց իբր «հանուն խնայողության» բանակից արձակել 2500 սպաներ, իսկ մնացածների լվճարված աշխատավարձերի վրա խաչ քաշելով, ոռճիկներն էլ կիսովին ցածրացնել[1]։ Որոշումը հիմնականում վերաբերում էր բնիկ եգիպտացի, ուրեմն էթնիկական պատկանելիությամբ ու ծագմամբ... որոշապես շրջագծված սոցիալական մի խմբի[2], որի անդամները, ի տարբերություն հրամակազմի ոչ-տեղաբնիկ բարձրաստիճան սպաների, բանակում ծառայությունն ընկրկել էին որպես զորակոչված ֆելլահ-շարքայիններ և սպայական ցածրը կոչումներ ստացել էին 1860—1876 թթ. սուդանական և եթովպական զինարշավների ընթացքում։ Նշանակում է, որ խնայողության գուգահեռ որոշումը հետապնդում էր նաև քաղաքական նպատակ՝ «ավերել բանակը», ինչպես իր ժամանակին նկատել է եգիպտական գլխավոր շտաբի պետ ամերիկացի գնդապետ Սթոունը[3], վերացնել երկրի գաղութականացման հարաճելիք փորձերին հակազդելու կարևորագույն ուժը։

Թեկուզ սոսկ անձնական-դասային նկատառումների մղմամբ Ռաթիֆ բեյ Սելիմի առաջնորդությամբ 1879 թ. փետրվարի 18-ին բողոքի դուրս եկած սպաները, որոնց թիկունք էին տալիս գինվորներն ու քաղաքացիները, ֆինանսների մինիստրության շենքում արգելափակեցին վարչապետին և մի քանի մինիստրների։ Խդիվ Իսմայիլը, որ հասկանալիորեն առնվազն ամերիկացի Սթոունի չափ տեղյակ էր կա-

ոսկեմոլիայնը ողջունեց նահանգային խորհրդի նախագահ Ս. Ա. Իվանովի պնդումը «ոտնատակ տալ ընդդիմադիրներին»։ Հետո վերլուծելով «ալ-Ահրամ»՝ նշեց վերջին ամիսներին ընդունված նոր օրենքները, որոնք ուղղված են ընդդիմության դեմ։ Ըստ նրա՝ «ալ-Ահրամ»-ը (որի գլխավոր խմբագիրն էր Ջիբրիլ Թուեյնին) ընդգծում է, որ ներկայիս իրավիճակում ընդդիմությունը պետք է ձգտի ոչ թե ուժի կիրառմանը, այլ ժողովրդական զանգվածների աջակցությանը։

Ելույթ ունեցավ «Ալ-Ահրամ»-ական շարժման ղեկավար Ֆուադ Սիրաջ ադ-Դինը։ Նա ընդգծեց, որ ներկայիս իրավիճակում ընդդիմությունը պետք է ձգտի ոչ թե ուժի կիրառմանը, այլ ժողովրդական զանգվածների աջակցությանը։ Նա նշեց, որ ընդդիմությունը պետք է ձգտի ոչ թե ուժի կիրառմանը, այլ ժողովրդական զանգվածների աջակցությանը։

Ելույթ ունեցավ նաև Ալ-Ահրամ կուսակցության ղեկավար Ռիֆաաթ Մահմուդը, որը նշեց, որ ներկայիս իրավիճակում ընդդիմությունը պետք է ձգտի ոչ թե ուժի կիրառմանը, այլ ժողովրդական զանգվածների աջակցությանը։ Նա նշեց, որ ընդդիմությունը պետք է ձգտի ոչ թե ուժի կիրառմանը, այլ ժողովրդական զանգվածների աջակցությանը։

Ելույթ ունեցավ նաև Ալ-Ահրամ կուսակցության ղեկավար Ռիֆաաթ Մահմուդը, որը նշեց, որ ներկայիս իրավիճակում ընդդիմությունը պետք է ձգտի ոչ թե ուժի կիրառմանը, այլ ժողովրդական զանգվածների աջակցությանը։ Նա նշեց, որ ընդդիմությունը պետք է ձգտի ոչ թե ուժի կիրառմանը, այլ ժողովրդական զանգվածների աջակցությանը։

Եթե լսողները, որ եկած լինեին Աբրահամ ծերի մոտ (և ոչ թե Աբրահամ ծերը՝ իրենց մոտ), ինչպե՞ս կարող էին հասկանալ, թե ինչ է նշանակում «Աբրահամ ծերի ոտքերը լվանալ»։ Ինչպե՞ս կարող էին հասկանալ, թե ինչ է նշանակում «Աբրահամ ծերի հետ ուտել և խմել»։

ու տարրեր ձևեր էր գտնելու, ավելին՝ ծագմամբ հայազգի Ադիբ Իսհակի գլխավորած բնույթության արմատական նահդալականների կողմից շուրջ երկու տարի առաջ ասպարեզ նետված «Եգիպտոսը եգիպտացիներին» լոզունգն էլ այդ շրջանակներում տարբեր ընկալումներ ու դրսևորումներ էր ստանալու։ Կարիք չկա առանձնապես ընդգծելու, որ այդ լոզունգն իրականում, գոնե իր հղացողների համար, ուներ համաեղիպտական-աղգային ընդգրկում, քանի որ փաստորեն ուղղված էր ոչ այնքան բանակի առօրյայում «չերքեզ-փաշաներիս» եկվոր մահմեդական դինվորականության գերակայության դեմ, ինչը վերջին հաշվով, թեկուզ և կարևոր, մասնավոր երևույթ էր, որքան՝ երկրի ամբողջ կյանքում այդ զորավարության հետ նաև եկվոր-մահմեդական կալվածատեր ու աստիճանավոր ազնվականության և արևելյան-քրիստոնյա կոմպրադոր առևտրավաշխառուների բացարձակ գերակշռության, հատկապես Եվրոպական դիվանագետների սանձարձակ ոտնձգությունների և ֆինանսատնտեսական թալանաբար գործամոլների անհակակշիռ տիրապետության դեմ։

Շրջանակներից մեկը, որ հեռանկարում կենտրոնականն էր դառնալու, ցածրաստիճան սպայական այն դասն էր, որի հիմքի վրա առաջացել էր «Վաթանի» կուսակցության «զինվորական թևը»։ Սույն հոդվածում մենք փորձելու ենք ուրվագծել այդ դասի դիմապատկերը, քանի որ խնդրո առարկա «զինվորական թևը» ետթաուֆիքյան ժամանակաշրջանում միառժամանակ հանդես էր գալու որպես առավել կամ նվազ ինքնուրույն «Վաթանի» կուսակցություն, 1879 թ. աշնանը «քաղաքացիական թևի» հետ մի անգամ ևս ժամանակավորապես համաձուլվելուց հետո գլուխ էր բերելու 1881 թ. սեպտեմբերյան հեղաշրջումը, վերջապես նույն տարվա վերջին ու հաջորդի սկզբներին ձևավորվելով որպես «Վաթանի» առավել հանրահայտ կուսակցական կազմակերպությունը, 1882 թ. գլխավորելու էր եգիպտական ժողովրդի հակաբրիտանական զինյալ պայքարը։

Սկզբից ևեթ արձանագրենք, որ հիմնականում եգիպտացի արաբներից կազմված ցածրաստիճան սպաների դասը մինչև 1876—1877 թթ. բացառապես, իսկ այնուհետև առնվազն մինչև 1881 թ. սեպտեմբերյան հեղաշրջումը գլխավորաբար նեղ-արհեստակցական խնդիրներ էր առաջադրել ու հետամտել դրանց լուծման։ Եվ իրոք, սպաները, ինչպես մինչև 1879 թ. ապրիլը, այնպես էլ այնուհետև, ընդգծման արժանի համառությամբ ու հարատևությամբ բանակի շրջանակներում եգիպ-

տական արաբների և եկվոր տարրերի միջև «ազգային իրավահավասարության» սահդյան քաղաքականությունը կիրառելու պահանջով էին հանդես գալու։

Բանն այն է, որ փոխարքա Մուհամմեդ Սահդ փաշան (1854—1863) Բարձրագույն Դռնից իրավունք ձեռք բերելով ՀարգելուՄուհամմեդ Ալիին 1841 թ. պարտադրված սահմանափակումները և իր զորքի թվաքանակը հասցնելու երեսուն հազարի, նոր եռանդ էր հաղորդել դեռ իր զորհրամանատար եղբոր՝ Իբրահիմ փաշայի կողմից նախաձեռնված սպայության «արաբականացման» գործին։ Այլ խոսքով նա շարունակել էր 1840-ական թթ. փոխարքայի, իսկ այժմ արդեն սուլթանի հավանության պարտադրաբար ենթակա չեղող սպայական ցածր աստիճանները արաբներին շնորհելու քաղաքականությունը, առավել ընդունակ ֆելլահներին առաջ քաշելով ջոկատների, իսկ համապատասխան պատրաստականություն անցածներին՝ գնդերի ու վաշտերի հրամանատարական պատասխանատու պաշտոնների[3]։ Խդիվ Իսմայիլը, ահա, բարդացող իրադրության մեջ նահանջելով իր նախորդի և սկզբնական շրջանում իր իսկ կիրառած պրակտիկայից, սկսել էր, ի վնաս արաբների, առաջ քաշել ալբանական, քուրդական (նաև միջինասիական թյուրքալեզու), չերքեզական և քրդական ծագմամբ զինվորականների, որոնք, ինչպես վկայում էր ֆրանսիացի մի ժամանակագրող, «նույնքան տգետ և ավելի վախկոտ էին, քան զինվորները, որոնց վրա ծանրացնում էին իրենց բռնակալական լուծը։ Հաստատելով, որ «բանակում օսմանցիներն ու նրանց ստրուկներն են տիրոմ բոլոր աստիճաններին», ականատես հեղինակն ավելացնում էր, որ սպայակույտի դպրոցի 200 ունկնդիրները «մամլուքներ կամ Պոլսից հատկապես ուղարկված քուրքեր էին, այն դեպքում, երբ միայն մի քանի արաբներ, հատուկ շնորհի արժանացած» բացառություններ էին այնտեղ ընդունվում։ Ավելին, մինչդեռ ուսումնարան գործուղվող քուրքերն ու մյուսները անմիջապես ստանում էին լեյտենանտի կոչում, արարներն այդ կոչման կարող էին հավակնել միայն ուսումնառության վերջում, այն էլ՝ ոչ առանց մտավախության, քանի որ դասախոսներին հանձնարարվում էր խոչընդոտել քննական հանձնաժողովի առաջ նրանց հաջողությունը։ «Քուրք սպաներն արագորեն հասնում են բարձր աստիճանի, հաճախ առանց ամենաանհրաժեշտ տարրական գիտելիքներն իսկ ձեռք բերելուն,—արձանագրում էր ժամանակագիրը[9]։

Այս ամենի հետևանքով մեծացել էր լարվածությունն ընդմեջ սպայական երկու դասերի՝ «ֆելլահների» (եգիպտացի արաբների) և «չերքեզների» (այլազգիների), լարվածություն, որը կարևոր դեր էր ունենալու եգիպտական «վաֆդանի»-ազգային շարժման հետագա զարգացման գործում[11]։ Ասենք, որ մեր կարծիքով դժվար թե տեղաբնիկ սպաների դասն իրր կամովին ու հպարտությամբ ինքզինք «ֆելլահներ» անվանած լինի, ինչպես պնդվում է մեր որոշ արաբագետների կողմից։ Մենք ավելի հավանական ենք համարում, որ այդ դասից «չերքեզ-փաշա» անվանված ևկվոր ռազմա-ֆեոդալ ազնվականներն են արար անաղնվական կալվածատեր սպաներին տվել իրենց բառապաշարում անկասկածելիորեն արհամարհական երանգ ունեցող «ֆելլահներ» մակդիրը։ Այդ հավանականությունը որոշակիորեն հիմնավորվում է այն իրողությամբ, որ ժամանակակիցներից Կամերոնը օգտագործել է «տեղարնիկ կամ ֆելլահներ անվանված սպաները» դարձվածքը[11], իսկ Ա. Կոլվինն ավելացրել է. «Եգիպտացի սպաների հպարտությունն ամեն օր խոցվում էր թուրք կամ չերքեզ աստիճանակիցների խրոխտ կեցվածքից և արհամարհալիր վերաբերմունքից»[12]։ Լեյնը, որ XIX դարի երկրորդ քառորդին մի տասնամյակից ավելիապրել է Եգիպտոսում, դրել է. «Կահիրեի տեղաբնիկ ժողովուրդն ինքզինք սովորաբար կոչում է ալ-մըսրիյյին, առվադ Մըսր կամ աՒլ Մըսր, իսկ ավելի հաճախ՝ առվադ ալ-բիլադ, ինչ որ նշանակում է Մըսրի ժողովուրդ, Մըսրի զավակներ, երկրի որդիներ։ Գյուղացիներին սովորաբար կոչում են ալ-ֆելլահին, այն է՝ հողամշակներ։ Թուրքերը հաճախ այդ տերմինով անվանում են Եգիպտոսի բոլոր բնակիչներին, դրա մեջ դնելով նվաստացուցիչ ոգի («կոպիտ, անդաստիարակ մարդիկ», «խեղկատակներ»)։ Նրանք նույնպես օգտագործում են աՒլ ֆաուաուն-Փարավոնի ժողովուրդ արհամարհական որակականը, որին եգիպտացիները, եթե համարձակությունից զուրկ չեն, պատասխանում են աՒլ-Նիմրուր—Նեմրութի ժողովուրդ որակականով»[13]։

Համենայն դեպս փաստ է, որ 1876-ին, դեպի Եթովպիա անհաջող ինարշավից հետո, խդիվ Իսմայիլը գնդերի և վաշտերի մահացած հրամանատար սպաներին փոխարինելիս առաջ էր քաշել մի խումբ եգիպտացիների[14], որոնք արդեն այդ ժամանակ որոշակի նկրտումներ ունեին և իրենք իրենց տվել էին «վաթանի» ինքնանվանումը։

Այնքան, որքան արաբերենում «վաթան» բառը շարունակում էր պահպանել «ծննդյան ու բնակության վայր» ավանդական իր իմաս-

տը, ապա, ինչ խոսք, որ «վաթանին» իր ժամանակին ուներ բուն իսկ «տեղաբնիկ եգիպտացի» նշանակությունը, որը, սակայն, հետզհետե ավելի ու ավելի էր թաթախվում ազգային ծագման հասկացողության մեջ, ստանում եթե ոչ մերօրյա «աղգայնական-հայրենասեր» ընկալումը՝ ապա գոնե հայրենիքի որդի ու տեր» նշանակությունը։ Ժամանակը, որ հենց 1870-ական թվականներին եգիպտական մտավորականությունը «վաթանի» սահմանման մեջ ներդնում էր նոր տարր՝ հայրենաօիրուհյուն, որը հանձնարարում էր ազգային կապը գնրադրել կրոնականին և հաշվատքից ոչ պակաս աշխատել նաև ի փառս հայրենի երկրի[15]։

Բոլոր դեպքերում «վաթանի» սպանները համախմբվել էին «Կահիրեի դպրոցում սովորած և բավականին զարգացած»[16] Ալի առ-Ռուբիի շուրջ և 1876-ին ստեղծել ընդհատակյա մի ընկերություն, որը, ըստ էության նպատակադրած լինելով «հայրենիքի փրկությունը», իր անդամների մեծամասնության դասային թե մտավոր, ուրեմն և գաղափարական-աշխարհայացքային անխուսափելի սահմանափակության հետևանքով նեղ-արհեստակցական պահանջների էր պատշաճեցրել «Եգիպտոսը՝ եգիպտացիներին» լոզունգը։

«Վաթանի» սպանների սոցիալական դիմապատկերից առաջ գանք ուրվանկարել նրանց քաղաքական ներշնչարանի ցարդ արաբագիտության էջերում անտեսված հիմնակետը։

Սկսենք միանալով Ն. Իվանովի այն հաստատմանը, որ 1876-ին իրենց գաղտնի ընկերության հիմնադրումից հետո «ֆելլահ» սպանների մեծամասնությունը, դիրքորոշվելով հանդերձ ոտնձգությունների և «եվրոպական» դահլիճի քաղաքականության դեմ, ընդհուպ մինչև 1879 թ. հունիսին գահընկեց արվելը «լրիվ լոյալ էր խդիվ Իսմայիլի նկատմամբ»[17]։ Ռ. աս-Սաիդը, Թեկուզ և «գյուղացիական հիմք» վերագրելով սպայական կազմակերպության, ըստ երևույթին հենց այդ մեծամասնությունը նկատի ունենալով է, որ խոսել է հունիսի վերջերից կազմակերպության ղեկավարների՝ նոր խդիվ Թաուֆիքին «կաշառելուց», այլ խոսքով «վաթանի»-ազգային ուղղության սիրաշահելու անհաջող փորձի մասին[18]; փորձ, որը կարող է կատարված լինել Թաուֆիքի հետ ներդաշնակ աֆղանիականների միջոցով և որը չէր կարող չձախողվել այն պատճառով, որ հենց այդ օրերին սեյյիդ Ջեմալ ադ-Դին ալ-Աֆղանին փաստորեն երկպառակել էր «Վաթանի» կուսակցությունը՝ հիմնադրելով իր «Վաթանի անկախ կուսակցությունը»։

«Վաքանիա» սպանների շրջանում մինչև 1879 թ. հունիսի 24-ը խդիվ Իսմայիլի դեմ դիրքորոշված փոքրամասնության մասին խոսակցությունն անհրաժեշտ է բացել փոքր-ինչ հեռվից. սպայական գաղտնի ընկերության փաստական ղեկավար Մահմուդ Սամի ալ-Բարուդիի առնչվածից։

Սովևտսկան, Թև ս-բրտասահմանյան արաբագետներից միայն ու միայն Ա. Կիլբերգն է, որ առ այսօր փորձել է լուծել ալ-Բարուդիի առեղծվածը։ Սակայն նա էլ, զորավար փաշայի դեմքի ու դիմակի ինչ-որ տարբերություն կռահելու գծով ճիշտ ուղու վրա ընկնելով, փաստորեն սխալ սլատասխան է առաջադրել, մանավանդ, որ ալ-Բարուդիին հայտարարել է «վաքանիա» սպայության «առավել հետևողական սահմանադրականներից մեկը»[19]։

Ալ-Բարուդին «վաքանիա», ուրեմն տեղաբնիկ-«ֆելլահ» սպաներին դաշնակցած միակ չերքեզը չէր, անշուշտ։ Նրա նման չերքեզական ծագում ունեին, բացի իր եղբայր Յակուբ Սամիից, նաև Ալի առ-Ռուբին, Համիդ Ամինը և ուրիշներ։ Սակայն նա «վաքանիա» ճակատում տվյալ պահին միակ «չերքեզ-փաշան» էր. չերքեզ մամլուք մի բեյի այդ հետնորդը շատ արագ էր առաջ խաղացել ու դարձել զորավար-փաշա[20]։ Ֆրանսիայում և Անգլիայում կատարելագործված զինվորական, արաբերենից բացի նաև օսմաներեն ու պարսկերեն լեզուների և պատմության ու դրականության քաջագիտակ, նա միաժամանակ 1850-ական ԹԹ. վերջերից եգիպտական քերթողության բարձրացող աստղն էր համարվում[21]։ Հեծելազորային դնդի հրամանատար, նա Նուբար փաշայի կառավարության օրոք նշանակվել էր Կահիրեի ոստիկանության պետ, Թաուֆիքի գահակալումից հետո Ռիադ փաշայի կառավարության կազմում վարելու համար սկզբում վակուֆների, ապա և ռազմական մինիստրի պաշտոնները։

Ալ-Բարուդին ավելի հետաքրքրական է շնորհիվ այն իրողության, որ Թող «վաքանիա» սպայական միջավայրի առավել «փայլուն խելքի տեր», առավել «խիզախ ու վճռական» դեմքը լինելը, առավել բազմակողմանի պատրաստականությունը, ավելի բարձր ծագումն ու դիրքը, մանավանդ հավակնոտությունը, այն, որ «ինքն իրեն ղգում էր կարծես բարձր պաշտոնների համար ստեղծված», առաջին օրից մինչև վերջինը կանգնած լինելով հանդերձ եգիպտական «վաքանիա»-ազգային շարժման հենց կենտրոնակետում, պատմագրության կողմից որպես կանոն տեղադրվել է շարժման հետամասում։ Ամերիկացի ղըն-

դապետ Ջարլզ Լենգն ընդգծելով, որ նա եգիպտական ժողովրդի հակաբրիտանական ղինյալ «ապստամբության ոգին էր և առաջնորդը», ուրեմն և «շարժումը ղեկավարեց սկզբից մինչև վերջ», ավելացրել է. «Սակայն խարդավանքներին նրա հակումը պատճառ դարձավ այն բանի, որ Սամին զանգվածների պատկերացման մեջ մնաց պատմության ետնամասում»։ Տ. Բարաքաթն իր հերթին շեշտել է. «Միակ մարդը, որ իր ազդեցության ուժով կարող է հավասարվել Օրաբիին, առանց սակայն ժողովրդի աչքում նրա փառքը կիսելու, Մահմուդ Սամի ալ-Բարուդին էր»[22]։

Ալ-Բարուդի ճամփով էլ հնարավորություն ունենք պարզելու, որ սպայական-կազմակերպության հակախմայիլական փոքրամասնությունն իր ներշնչանքն ստանում էր ուղղակի օսմանյան մայրաքաղաքից։ Սուլթանների նստավայրի դիվանատան եգիպտական հարցին վերաբերող փաստաթղթերն ուսումնասիրած Հասան Աղալին, օրինակ, հաստատելով, որ եգիպտական սպանների գաղտնի կազմակերպության իսկական ղեկավարը ալ-Բարուդին էր, շեշտել է.—1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի մասնակից, նա բազմիցս Պոլիս այցելեց և հիմնականում իր անունից էր, որ իրականացվում էր կապը Աբդ ալ-Հալիմ փաշայի, նաև եգիպտական սպանների դժգոհանքն իր շահերին ծառայեցնել ջանացող Աբդուլ Համիդի նստավայր Յըլդըզի Քյոշկի հետ[23]։ Ի միջի այլոց, հետագային, դատարանի առաջ կանգնած, ալ-Բարուդին խոստովանելու էր (և Օրաբին հաստատելու էր նրա խոստովանությունը), որ հալիմական շարժման գլխավոր ոգեշնչողն ու ղեկավարը ինքն էր եղել։

Աբդ ալ-Հալիմ փաշան Մուհամմեդ Ալիի 95 երեխաներից կրտսերագույն մանչն էր և ոտքեմն 1866-ի սուլթանական հրովարտակով (որ թուլատրում էր խախտել եգիպտական գահը տոհմի ավագին հանձնելու կարգը պահելով ընտանիքի ներսում՝ հորից որդուն փոխանցել) կորցրած լինելով գահաժառանգման ամեն մի հույս, հանկարծորեն այն վերագտել էր ներեգիպտական քաղաքական խառնակուԹյունների ոլորաններում։ Կարիք չկա շեշտելու, որ եգիպտական տագնապի խորացման մեջ իրոք էլ չէր կարող իր որոշակի դերը չունենալ ժառանգման նոր, արդեն ավելի քան մի տասնամյակ իշխող տոհմը երկպառակող կարգը, մանավանդ որ Աբդ ալ-Հալիմը, ինչպես նշել է ժամանակակիցներից Տ. Բարաքաթը, «կողմնակիցներ ուներ երևելիների և իշխանների թվում»[24]։ Տարբեր վկայությունների վրա հենվելով Ն. Իվանովը,

իր հերթին, հաստատել էր, որ «Պոլսում ապրող, քրիստոնյաներին անհաշա թշնամին համարվող և իրեն գահակալման իրավունքից զրկած Իսմայիլին ատող Արդ ալ-Հալիմ փաշան էր կանգնած սպայական դավադրության ակունքների մոտ» և որ «ըմբոստ իշխանը կանխօրոք եգիպտական միջավայրում կարևոր հենարան ստեղծելով հանձին «մասոններին (այլ խոսքով ալ-Աֆղանիի հիմնադրած «Ազգային օթյակին»,—Ն. Ն.) հարած ու նրանց միջոցով իր հետ կապ պահպանող» սպայական փոքրամասնության, «1878-ին ապահովվեց Բարձրագույն Դռան աջակցությամբ և պայքար շղթայազերծեց իր կորովալիր ազգականի դեմ, նրաղևլով գրավել Եգիպտոսի գահը»[25]։ Բնականաբար, Արդ ալ-Հալիմը չէր կարող Բարձրագույն Դռան նկատմամբ հանձն չառնել մի պարտամուրհակ. եգիպտական խդիվությունը շեղել Օսմանյան կայսրությունից առավելագույն չափով ինքնուրույնացնելու իսմայիլական քաղաքականությունից և, թեկուզ առանց համահարթելու արաբական վիլայեթների շրջանակներում, հնարավորին չափ վիրեներքարկել սուլթանի գերիշխանությունը։

Այս ամենից բխում է մի տարրական եզրակացություն. այն, որ 1879 թ. ապրիլին ստորագրելով «Ազգային հայտագիրն» ու հարելով խդիվ Իսմայիլի շուրջ ստեղծված «վաթանի»—ազգային ճամբարին, որ և նույնն է՝ «Վաթանի» նորաստեղծվող կուսակցությանը, վերջինիս «պինվորական թևը» թեկուզ և փոքրամասնական, այլ ղեկավար դերքերում կանգնած մեծազգեցիկ բաբուդիականների ճանապարհով փաստորեն հետապնդում էր «վաթանի»—ազգային ճակատի առաջադրանքներին ու նկրտումներին հակընդդեմ և ըստ էության հակաազգային կուրս, որի զսպանակները գտնվում էին սուլթանի քաղաքական զորակենտրոնի ձեռքում։

Մի ամբողջ շարք արաբագետների կարծիքով «զինվորական դավադրության իսկական ղեկավարը հանդիսացող ալ-Բարուդիի հետ կապեր հաստատելով է, որ 1879 թ. երկրորդ կեսին Օրաբին «իրեն հատուկ էներգիայով օտարերկրացիների դեմ պայքարի մեջ մտավ»[26], այլ խոսքով դարձավ ոչ միայն սպայական կազմակերպության, ուրեմն և «Վաթանի» կուսակցության «զինվորական թևի» պարագլուխը, այլև «վաթանի»—ազգային շարժման առավել պոտենցիալ ղեկավարը։ Ալ-Բարուդիի կողմից Օրաբիի առաջ մղման հարցում անկասկած իր դերն ունեցած պետք է լինի այն իրողությունը, որ ի տարբերություն Ջերքեզ առ-Ռուբիի, նա տեղաբնիկ էր և ուրեմն ավելի հարմար դեմք էր «վա-

*Ինչպես տեսնում ենք, Ղազարոսը ոչ միայն ընդունում է Ռուսաստանի գերակայությունը, այլև ամենայն հավատով ու եռանդով ձգտում է ամրապնդել այդ գերակայությունը։ Ղազարոսի համար Ռուսաստանը ոչ միայն ազատագրիչ է, այլև հայ ժողովրդի հոգևոր ու մշակութային զարգացման միակ հենարան

Մխիթար Գոշի ժամի «Ֆեդերացիոն» վերաբերյալ պետք հաշվի առնել, որ նա իր ասածը չի հիմնավորում և ոչ մի փաստ չի բերում։ Լուցիո՞ւս Վիրիուսը իր գործի շրջանակներում ինչպե՞ս է կարողացել ստանալ «ամենաբարձր» տիտղոսը, եթե նրա ժամանակ Հռոմում կար ընդամենը երկու կոնսուլ։ Ինչպե՞ս է նա, մի կողմից հռոմեական ազնվականության և բարեկեցիկ գյուղացիների ներկայացուցիչ լինելով, միաժամանակ դառնում «ժողովրդական» առաջնորդ։ Ինչպե՞ս է նա, մի կողմից Հռոմի ընդդեմ Հայաստանի պատերազմի ընդդիմախոս լինելով, մյուս կողմից հանդես գալիս որպես Հռոմի զորքերի հրամանատար։ Ինչպե՞ս է նա, մի կողմից Հռոմի ընդդեմ Հայաստանի պատերազմի ընդդիմախոս լինելով, մյուս կողմից հանդես գալիս որպես Հռոմի զորքերի հրամանատար։ Ինչպե՞ս է նա, մի կողմից Հռոմի ընդդեմ Հայաստանի պատերազմի ընդդիմախոս լինելով, մյուս կողմից հանդես գալիս որպես Հռոմի զորքերի հրամանատար։ Ինչպե՞ս է նա, մի կողմից Հռոմի ընդդեմ Հայաստանի պատերազմի ընդդիմախոս լինելով, մյուս կողմից հանդես գալիս որպես Հռոմի զորքերի հրամանատար[35], որպեզի ըստ էության չի կարողանում ներկայացնել ոչ մի ինքնուրույն տեսակետ։

Ինչպես նկատել ենք վերևում, Մ. Խորենացին Լուցիոս Վիրիուսին անվանում է «ամենաբարձր» տիտղոսով, որը, ինչպես հայտնի է, Հռոմում կար միայն կոնսուլներն ու բարեկեցիկ գյուղացիները։ Ինչպե՞ս է նա, մի կողմից Հռոմի ընդդեմ Հայաստանի պատերազմի ընդդիմախոս լինելով, մյուս կողմից հանդես գալիս որպես Հռոմի զորքերի հրամանատար։ Ինչպե՞ս է նա, մի կողմից Հռոմի ընդդեմ Հայաստանի պատերազմի ընդդիմախոս լինելով, մյուս կողմից հանդես գալիս որպես Հռոմի զորքերի հրամանատար[36], որ Լուցիոս Վիրիուսը ոչ միայն չէր կարող լինել կոնսուլ, այլև խոսքիս մեջ ենթադրում եմ, որ նա ընդհանրապես չէր կարող լինել Հռոմի զորքերի հրամանատար։ Ինչպե՞ս է նա, մի կողմից Հռոմի ընդդեմ Հայաստանի պատերազմի ընդդիմախոս լինելով, մյուս կողմից հանդես գալիս որպես Հռոմի զորքերի հրամանատար[37]։ Ա որտեղ էր նա, Գոլոտեին իրավարք տրել չ՞։ «Ընտեղ էին նաև հեղ հեղ նոր կուսակցությունները, հարուստ գյուղացիները, հարուստ գյուղացիները[38]։

Ալյտեղ դատնեղեք ուշադրության արժանի մի պարագա. XIX դարի վերջին քաղաքի սեղանների շուրջ հարցնող բարձրաստիճան հյուրերի ցանկում հաճախ հանդիպում է «եգիպտական» տիտղոսը։ Ինչո՞ւ հյուրերի կազմում հատկապես եգիպտական տիտղոսակիրները այդքան մեծ թիվ էին կազմում։ Պատասխանը շատ պարզ է։ Եգիպտոսի փաշան ամեն տարի Ստամբուլ էր ուղարկում հարկերի մեծ գումարներ, որոնց մի մասը նա թողնում էր իր համար։ Ահա թե ինչու եգիպտական տիտղոսակիրները այդքան շատ էին։ Ինչպե՞ս է նա, մի կողմից Հռոմի ընդդեմ Հայաստանի պատերազմի ընդդիմախոս լինելով, մյուս կողմից հանդես գալիս որպես Հռոմի զորքերի հրամանատար։ Ինչպե՞ս է նա, մի կողմից Հռոմի ընդդեմ Հայաստանի պատերազմի ընդդիմախոս լինելով, մյուս կողմից հանդես գալիս որպես Հռոմի զորքերի հրամանատար[39]։

Ինչպե՞ս է նա, մի կողմից Հռոմի ընդդեմ Հայաստանի պատերազմի ընդդիմախոս լինելով, մյուս կողմից հանդես գալիս որպես Հռոմի զորքերի հրամանատար։ Ինչպե՞ս է նա, մի կողմից Հռոմի ընդդեմ Հայաստանի պատերազմի ընդդիմախոս լինելով, մյուս կողմից հանդես գալիս որպես Հռոմի զորքերի հրամանատար[40]։ Ինչպե՞ս է նա, մի կողմից Հռոմի ընդդեմ Հայաստանի պատերազմի ընդդիմախոս լինելով, մյուս կողմից հանդես գալիս որպես Հռոմի զորքերի հրամանատար։ Ինչպե՞ս է նա, մի կողմից Հռոմի ընդդեմ Հայաստանի պատերազմի ընդդիմախոս լինելով, մյուս կողմից հանդես գալիս որպես Հռոմի զորքերի հրամանատար։

րավային և արևելյան միջերկրականյան) ծագմամբ «եգիպտականացած» կոմպրադորներն էին կազմում։

Կապիտալիստական հարաբերությունների բոմ իսկ եգիպտական կրողների՝ «կիսաբուրժուա», պարզապես գյուղացիության շահագործման ֆեոդալական և կիսաֆեոդալական դեռ գերակշիռ եղանակներին կապիտալիստական եղանակներ խառնող հողատերերի շարքում օտարերկրացիների համեմատությամբ բացարձակ թվաշատը խղիվական տոհմի ներկայացուցիչները, մեծամասնությամբ եկվոր-մամմեդական խոշոր ֆեոդալները և արաբական ծագմամբ մեծ ու միջակ հողատեփականատերերն էին։ Հենց վերջիններս էլ, աճելով քայքայվող հայրենակից ֆելլահների հողակտորների հաշվին, գյուղացիության հարկադրական, ավելի հաճախ կուրբաջ-մտրակի համոզիչ ուժով ապահովվող աշխատանքի հարցում աշակերտելով տեղական խոշոր ֆեոդալ ազնվականներին, շահագործման կապիտալիստական եղանակների հարցում էլ աշակերտում էին օտարերկրացի կալվածատերերին։ Նրանք, այդ թվում և առաջին հերթին իրենց հրամանատարման հանձնված համազգեստավոր ֆելլահների տաբապարհակ քրտինքը հարստացման իրենց եռանդին ծառայեցնող «ֆելլահ» սպաները, կուկու «ազգային դեմոկրատական տարրեր» բնութագրի հետ կարող էին առնչվել միայն այնքան, որքան հանում գոյապահպանման ու պարարտացման-ամրապնդման իրենց պայքարում պիտի բախվելին իրենց հզոր մրցակիցների երկու գնդերի՝ ինչպես տեղացի «ակամա բուրժուա» ֆեոդալ կալվածատերերի, այնպես էլ հատկապես «հարկադրաբար կիսաֆեոդալ» օտարերկրացի խոշոր կալվածատերերի հետ։

«Ֆելլահ» սպաները «ազգային դեմոկրատական տարրեր» բնութագրի, այլ խոսքով «բուրժուականն» մթնոլորտի հետ կարող էին առնչվել նաև խոշոր քաղաքների շրջանակներում։ Այնտեղ, եվրոպական տերությունների գաղութարարական նկրտումների և եվրոպական առևտրական մոնոպոլիստական գերհզոր ընկերությունների ճնշման պայմաններում գործող եգիպտական խոշոր առևտրականությունն իր հոգևարքը դեռ դարասկզբից մի կերպ շարունակում էր ոչ միայն տնտեսական, այլև ներքաղաքական թե արտաքին-քաղաքական ընդհանուր առմամբ անբարենպաստ պայմաններում։ Այդ պայմանների, նաև իր ֆինանսատնտեսական գործելակերպի միջնադարականության ու պետական հովանավորման փշրանքների իսկ անգոյության հետևանքով անխուսափելիորեն անկման դատապարտված

այդ առևտրականության, ինչպես և արհեստավորության համար հոգեվարքը շարունակելու գլխավոր միշոց էր դարձել «ձևականորեն զինվորական կորպուսների մեջ ներգրավվելը», բնականաբար այդ «հովանավորության» ի վաթձահատուցումն,—ինչպես դիտել է տվել Ֆ. Ացամբան,—վճարելով խոշոր գումարներ[39], Եթե դա այդպես էր նախկինում, ապա դա առավել ևս այդպես էր XIX դարի երրորդ քառորդի վերջերին, երբ ռազմական դասից դուրս մնացած առևտրաարհեստավորական երևելիներն արդեն ոչ թե ընդհանրապես կորպուսների, ուրեմն և նրանց «չերքեզ-փաշա» հրամանատարների, այլ ինչ-ինչ ճանապարհներով այդ դասի կազմում տեղ գտած «ֆելլահ» սպաների հովանավորությանն ու պաշտպանությանն էին ապավինում և ուրեմն դարձել էին ուղղակիորեն նրանց «հարկատուները»։ Բնութագրական է, որ «ֆելլահ» սպաները, բացի հնչուն փողից, նաև «վաթանի»—ազգային կապիտալի, ունևոր «հայրենասերներին» օտարների ճնշումից ու ոտնձգություններից պաշտպանողի պատմուճանին էին հետամտում, ժամանակակիցներից Բարաքաթի վկայությամբ իրենց վահանը ամպհովանի դարձնելով բուրժուական ամենատարբական նորմերն ու կապիտալիստական հարաբերությունների ամենասրբազան կանոնները կոպտորեն ոտնակոխող եգիպտացի առևտրականների համար[40]։

Ավելացնենք, որ «ֆելլահ» սպանների համար հատկապես փոխգնդապետությունից վերև ձգտելը նախ և առաջ նյութական շատ կարևոր իմաստ ուներ։ Բանն այն է, որ եթե բինբաշին (հազարապետը) ամսական ստանում էր 30 հազար, իսկ կայմակամը (փոխ-գնդապետը) 36 հազար ղուրուշ, ապա միրալայի (գնդապետի) ռոճիկը միանգամից ցատկ էր կատարում 100 հազար, իսկ միրլիվայինը (բրիգադային գեներալինը) 150 հազար ղուրուշի պատկառելի գումարի[41]։ Ինչ վերաբերում է Օբաբիի նման արդեն իսկ միրալայական հարյուր հազարին հասածներին, ապա նրանց համար հետագա առաշխաղացքը ոչ միայն աշխատավարձի հիսուն տոկոսով լրացուցիչ հավելման հարց էր, այլև ու մանավանդ տիտղոսի խնդիր, քանի որ միրլիվայությունն ինքնաբերաբար ենթադրում էր նաև փաշայություն։ «Մեծամասնությամբ գավառացիներ,—հաստատել է Վ. Ջեմովսկայան,—նրանք ռազմական ծառայությունը դիտում էին որպես մի այլ՝ ավելի բարձր սոցիալական կատեգորիայի անցման հնարավոր տարբերակ»[42]։

Ոչ միայն 30—36 հազար ղուրուշից 100—150 հազարի, այլև ու մանավանդ բնյությունից հետո փաշայության, հարստություն-կալվա-

ծատիրությունից հետո ազնվականության և «էրքեզ-փաշաների» ազնվականական առանձնաշնորհներին ձգտող եգիպտացի արաբ սպայական դասը, ահա, իր «ֆելլահությանն» վերաբերյալ հակառակորդների ակնարկներով թե սեփական հավաստիացումներով և իր համար անկասկածելիորեն նեղ-դասային բովանդակություն ունեցող «Ճդիպտոսը եգիպտացիներին» լոզունգի «ազգային» կախարդիչ ներգործությամբ որոշ, արհեստակցական իր պայքարում բոլոր դեպքերում խիստ անհրաժեշտ ժողովրդականություն էր ձեռք բերել զինվորների շրջանում։ Ջ[illegible]որ շարքային զինվորականությունն իր հիմնական զանգվածով իսկական ֆելլահական միջավայրից էր հավաքագրված, հետևաբար ոչ թե նեղ դասային-արհեստակցական, այլև՝ սոցիալ-տնտեսական և որպես «ազգային» գիտակցվող հիմնավոր դժգոհանք ուներ, հետևաբար «Ճդիպտոսը եգիպտացիներին» լոզունգին տալիս էր ժողովրդական-դեմոկրատական իղձերի խտացման բովանդակություն։ «Բանակը հիմնականում բաղկացած էր եգիպտացիներից, որոնք դժբախտ հարկատունկերի [illegible]ղբայրներն ու զավակներն էին,—հաստատել է Կոլվինը, ավելացնելով,—բոլոր աստիճաններում բանակի համակրանքը անպայման հայրենակիցների կողմում էր»[43]։

Կոլվինի վերջին խոսքերի հետ կապված, թե ընդհանրապես, առաջնայնորեն անհրաժեշտ է ընդգծել մի շատ կարևոր հանգամանք։ Ֆելլահների համար բանակում ծառայության կանչվելը համազոր էր ցկյանս տաժանակրության դատապարտվելուն։ Արաբական, թե օտար անխտիր բոլոր սկզբնաղբյուրներից (Աբդ առ-Ռահման ալ-Ջաբարթի, Բազիլի, Պուժուլա, Լեյն են) վավերագրվող ճշմարտություն է դա, ինչպես և այն, որ ֆելլահ շարքայինների զանգվածի համար սպայական դասը մտրակի առօրեականության խորհրդանիշն էր։ Այս պայմաններում ավելի քան հասկանալի է, թե «վաթանի»—ազգային կապիտալի հետամտող և միայն ու միայն այդ պատճառով մտրակից որոշապես ձեռնպահ մնացող Օրաբիի և ընկերների համար ինչքա՞ն անհրաժեշտ էին նաև «ազգային» երկնառաք լոզունգի շեփորահարումն ու մաժսայականացումը՝ «էրքեզ-փաշաների» դեմ պայքարում սոցիալական վստահելի հենարանով ապահովվելու տեսակետից։

Այդ այդպես լինելով հանդերձ, արար սպայական դասի սոցիալական, թե տնտեսական նկրտումները, բախվելով «էրքեզ-փաշաների» դիմադրությանը, կարող էին առ առավելն զորանոցային խռովության կերպարանք ստանալ։ 1879 թ. ապրիլին, ահա, «Ազգային հայտագրի»

շուրջ գոյացած համրարին ու «Վաթանի» կուսակցությանը հարելը սպայական նկրտումներին ապահովում էր ոչ միայն ազգայնության ամպհովանին, այլև խդիվ Իսմայիլի շուրջ համախմբված ֆեոդալ ազնվականության, այլ խոսքով նորածնվող կազմակերպության «քաղաքացիական թևի» հզոր աջակցությունը։

Սպայության շրջանում «Եգիպտոսը եգիպտացիներին» լոզունգի որդեգրումը, սակայն, կապված էր ակնբախ մի պարադոքսի հետ։ Այդ դասի «հակաթուրքությունը» (եկվոր թուրքախոս տարրերի՝ բուն օսմանցի թուրքերի հետ նաև օսմանականացած չերքեզների, ալբանացիների, քրդերի ու մյուսների նկատմամբ թշնամանքը) չէր խանգարում համողմունքային թե շահախնդիր օսմանականության աշխուժությանը, սուլթանականության նկատմամբ առնվազն ցուցադրական հավատարմությանը այն մարդկանց շրջանում, ովքեր մաս չէին կազմում սուլթանապաշտ փոքրամասնության, բանը միայն սուլթան-խալիֆի հանդեպ բարնպաշտ մահմեդականությունից թելադրվող խոնարհությունը չէր, ոչ էլ՝ տեղական «թուրքերին» ամրապինդ. և եկվոր գյավուր-ֆրանքների ամրապնդվող գերակայության դեմ ընդդիմադրական նկրտումների հաջողության համար Պոլսից «ակնկալվող թևարկության կենսականությունը։ Կար և ավելի անմիջական-աոօրեական» մի հանդամանք, որը նեղ դասային-արհեստակցական շահերին էր ծառվում. անազնվական բեյական սպայությունից միրլիվա-փաշայության կամ ազնվական սպայության կարելի էր անցնել միայն ու միայն սուլթանի սանկցիայով[44]։

Հենց այստեղ էլ բացահայտվում է պարադոքսի մյուս, առավել ուշագրավ երեսը։ Սպայական դասի համար «Եգիպտոսը եգիպտացիներին» լոզունգն ուղղված լինելով տեղական «թուրքության» ազնվական-սպայության հարցում մենաշնորհի դեմ, այն իր սուր ծայրով չէր կարող փաստորեն ուղղված չլինել նաև այդ մենաշնորհը սրբագործող-կիրառող սուլթանության դեմ։ Օսմանականության ոչ թե սոսկ հավատարիմ, այլ ուղղակի սուլթանապաշտ տարրերի համար «Եգիպտոսը եգիպտացիներին» լոզունգի ընդգրկումների լայնացումը և միտումների խորացումը, հակաքրիստոնեական տրամադրություններից բխող այլ գաղութարարական ոտնձգությունների փաստից օբյեկտիվորեն անվող հակաեվրոպական տրամադրությունների սուբյեկտիվորեն հրահրումը, որ անկասկած կհեշտանար «Վաթանի» կուսակցության շրջանակներում, կնպաստեր լոզունգի հակասուլթանական երանգի տարրալուծմանն ու

մեղմացմանը և ընդհակառակը բարձրագույն Դռան աջակցության ապավինելու տրամադրությունների շեշտավորմանը։ Այդ ազդակն անպայման պիտի ի մտի ունենալ՝ սպայական դասի բարուդիական հատվածի որպես «զինվորական թև» «Վաթանի» կուսակցության Տարելուն, առնվազն ցածրաստիճան սպաների մեծամասնության «վաթանի»—ազգային ճամբարին հարելը չխոչընդոտելուն դրդապատճառները որոնել փորձելիս։

Վերջ ի վերջո, նաև, 1879 թ. գարնանը Համախմբվող «վաթանի»—ազգային ճամբարը ավելի շուտ Անգլիայի և Ֆրանսիայի ոտնձգությունների դեմ էր ծառանում և սուլթանը դրանից կարող էր լո՛ւ բարին ակնկալել, առնվազն հրճվել իր եգիպտական վասալի և եվրոպական իր բարեկամների սրվող վեճում իր համար հեռանկարում հաշտարար միջնորդի, ինչ-որ դեր կանխատեսելով։

Այդպիսի ենթադրության անելու համար մեզ որոշակի հիմք են տալիս 1879 թ. աշնանը «Վաթանի» կուսակցության «քաղաքացիական» և «զինվորական» թևերի վերամիավորման հանգամանքները։

Խեդիվ Թևֆիքյան ժամանակաշրջանում Երևելիների ժողովի ցրումից հետո «Ազգային հայտագիրն» ստորագրած ֆեոդալ ազնվականները իրավիճակը քննարկելու համար հաճախ էին գաղտնի հավաքներ գումարում Իսմայիլ Ռազիբի կահիրեի, կամ էլ Ալի ալ-Բաքրիի Հելուանի արվարձանային ապարանքում, նույնիսկ շարունակում էին իրենց համախումբն անվանել «Վաթանի» կուսակցություն։ Այդ հավաքներում է, որ որոշվեց «ազգային կառավարության» ի խնդիր, այլ խոսքով Ռիազի դահլիճի դեմ պայքարում ավելի հիմնավորապես օգտագործել «ֆելլահ» սպայությունը։ Մի կողմից Մուհամմեդ Սուլթան, Սուլեյման Արազա և Մահմուդ Ֆահմի ազնվական զորավար-փաշաների ու մյուս կուլմից Ահմեդ Օրաբի, Աբդ ալ-Ալ ալ-Հիլմի (կամ Հաշիշի) և Ալի Ֆահմի «ֆելլահ»—կալվածատեր գնդապետ բեյերի միջև աշնանը Հելուանում կայացած հանդիպումներից էլ ծնվեց «Հելուանի ընկերությունը», որը հաճախ ընկալվում է որպես ոչ թե նվաղելու վրա եղող «Վաթանի» սկզբնական կուսակցության կյանքում մի նոր փուլ ու նոր որակ, այլ առաջինին փոխարինելու եկած էապես նոր մի կուսակցություն։ Մեր կարծիքով այդ տեսակետի կողմնակիցները, այդ թվում նախ և առաջ Գ. Ներսեսովը, իրադարձությունների սոսկ տեսանելի մակերեսից են ելնում և ըստ էության շրջանցում են խորքը, երբ պնդում են, որ Հելուանի «ընկերությունը դարձավ ազգային շարժման քաղաքացիական

(այն է՝ չափավոր) և զինվորական (վաթանիական) թևերի ժամանակավոր միավորման քաղաքական ձևը»[45]։ Այդ տեսակետի առավել ծայրահեղ կողմնակիցը լ. Լաթիմանն անկասկած առավել ակնհայտ թուրիմացության մեջ է, երբ փաստորեն 1879 թ. ամռան ամիսներին է տեղադրում Հելուանում և իրեր «ազգային շարժմանը ընդհանուր հիմք ու ղեկավարություն տալու» ձգտող սպանների նախաձեռնությամբ ապրիլի 2-ի «Ազգային հայտագրի» հիմքի վրա «Վաթանի» կուսակցության ստեղծումը։ Ավելին, Ռաթիմանը «Հելուանի ընկերության» շրջանակներում «մանծամասնություն» է դուրս բերել «բուրժուա-արմատական և հասարակության մեջ իրենց տեղն ապահովել կտրուկ պահանջող տարրերին», երկրորդ տնեը տալով սպայությանը, տարակրոն հոգևորականությանը և հողատեր ազնվականությանը, ըստ որում վերջիններս «մի քանի ամիս անց միայն», նոյեմբերի 4-ի նախօրյակին, «կուսակցության ղեկավար պաշտոններում մթագնվել են սպանների կողմից»[46]։ Իրականությունն այն է, որ «Հելուանի ընկերությունը» դարնանը «ալ-Լահհալի» շուրջ համախմբված և Թաուֆիքի գահակալությունից հետո ժամանակավորապես տարանջատված երկու խմբավորումների (և այս անգամ էլ ոչ-տևական) վերախմբավորումն էր նշանավորում պարզապես։ Այս պայմաններում «վաթանի»—ազգային շարժման երկու ազդեցիկ բևեռների՝ ֆեոդալ ազնվականության և կալվածատեր սպայության ինչպես գարնանային խմբավորման, այնպես էլ աշնանային վերախմբավորման ծրագրային հիմքերի համեմատումը մեզ կարող է օգնել օբյեկտիվորեն բացատրելու իրադարձությունների խորքագաղտնարանը, թույլ տալով նախ և առաջ բացահայտել ամառային տարանջատման հիմքը։

Այդպիսի համեմատության կատարելու գործում մեզ կարող է օժանդակել այն իրողությունը, որ «Հելուանի ընկերությունն» ստեղծեց մի կոմիտե, որը և նույն 1879 թ. նոյեմբերի 4-ին հրապարակեց մի նոր «ալ-Լահհա ալ-վաթանիյյա»՝ պատմագրությանը որպես «Վաթանի (Ազգային) կուսակցության մանիֆեստը» անվամբ ծանոթ փաստաթուղթը[47]։ Նոր «ալ-Լահհալի» մշակման գործում հիմնական ավանդը Օբաբիի կողմից երկրորդ պլան մղված, այլ սպայական կազմակերպության՝ տեսաբանը մնացող Ալի առ-Ռուբիի հետ պատկանում էր ալ-Բարուդիին[48]։ Յոթնամյա հեռավորությունից, ահա, երկրորդ «ալ-Լահհան» փաստորեն, ճիշտ է՝ ավելի ընդհանրորեն և սակայն շեշտադրմամբ, կրկնում էր առաջին «ալ-Լահհալի» հիմնական բոլոր

դրույթները. իսլամին ու շարիաթին հավատարմության, երկրի ներքին գործերին օտարերկրյա միջամտությունների և ֆինանսական ստրկացման փորձերի դատապարտում, դեմոկրատական սահմանադրության ընդունման և «Նեղոսի ազգի» իրավունքների պաշտպանության համար պայքարելու վճռականություն, Եգիպտոսի վարչակառավարումը եգիպտացիների ձեռին տեսնելու և ուրեմն բոլոր օտարերկրացիներին պետական ապարատից հեռացնելու, վարչակառավարման և կրթական սիստեմների ռեֆորմ անցկացնելու, նաև բանակի հզորացման պահանջը։ «Մանիֆեստը» վերջնագրային ձևով դնում էր «ազգային կառավարության» կազմավորման հարցը, ընդգծելով. «Այս կուսակցությունը չի կարող օտար ազդեցությամբ ստեղծված կառավարությունը դիտել որպես երկրի ցանկություններին ու կարիքներին համապատասխանող»[49]։

Եթե զանց առնենք ըստ էության կարևոր այն հանգամանքը, որ նոյեմբերի 4-ի «ալ-Լահհայում» առաջին պլան էր մղված օտարերկրյա ոտնձգությունների երկրի զերծման պահանջը, ապա երկու ծրագրերի միջև կհաստատենք երևութապես անկարևոր թվացող մեկ ու միակ տարբերությունը. նոյեմբերյանը, զանց առնելով ապրիլյանի լոյալության հավաստիքը օսմանականության-սուլթանականության նկատմամբ, շեշտը այս անգամ ևս դնում էր Իսմայիլի հանդեպ հավատարմության վրա, ըստ որում՝ ոչ թե ապրիլյան կառավարող խդիվ Իսմայիլի, այլ արդեն գահընկեց ու վտարանդի Իսմայիլ փաշայի հանդեպ։ Նշանակում է, որ «Վաթանի» կուսակցության «քաղաքացիական» և «զինվորական» թևերի ամառային խզման, ուրեմն և աշնանային վերամիավորման ակունքները նախ և առաջ պիտի որոնել օսմանականության-սուլթանականության հարցում կողմերից մեկի տրամադրությունների բարեշրջման շրջանակներում, ըստ որում Իսմայիլի, որպես օսմանյան-սուլթանական կառավարությունից թեկուզ և հարգալիր, այլ բարձրագույն Դռան համար տհաճ լինելու աստիճան որոշակի հեռավորություն պահպանելու միտող և հենց Յըլդըզի Քյոշկից էլ հարված ստացած պետական գործչի հանգամանքն անշափ օգնում է պարզեցնելու այդ շրջանակները։

Ի դեպ, Ն. Իվանովը պնդել է, որ «Վաթանի» կուսակցության «քաղաքացիական թևի» պարագլուխ ֆեոդալ ազնվականությունը մինչև Իսմայիլի գահընկեցությունը «քաղաքական-կաղմակերպական որևէ կապ չուներ Արդ ալ-Հալիմ փաշայի կողմնակիցների՝ ընդդիմադրորեն տրամադրված սպաների հետ»[50]։ Եթե վերջիններիս նույնացնենք առ-

Ռուրիի դաշտնի ընկերության ներսում թվաքանակով փոքրամասնական, այլ ներգործությամբ գերակշիռ հակահամայիլական-սուլթանապաշտ բարուդիականների հետ, ապա հեղինակին իրավացի չհամարել չենք կարող։ Ավելացնենք, որ Ն. Իվանովն ալ-Բաթուղին ներկայացրել է որպես փաստական ղեկավարը նաև «Հելուանի ընկերության»[1], որի շրջանակներում, սակայն, հարկադրվելով օսմանականության-սուլթանականության հարցում տակտիկական դիջումների գնալ, չերքեզ ղորավար-փաշան նախընտրել է վարագույրի հետևում մնալ և առաջարեմ մղել Օրաբիին։

«Վաթանի» աշնանային վերահամախմբման կապակցությամբ անհրաժեշտ է, վերջապես, ասել նաև հետևյալը. եթե անմիջականորեն Իհադի դահլիճի դեմ ու հանուն «ազգային կառավարության» (իսկ հեռանկարում Թաուֆիքի խդիվության դեմ ու հանուն Իսմայիլի վերականգնման) իր պայքարում «քաղաքացիական թևը» սպայական խմբավորման աջակցության կարիքն ուներ ու դրանից դրդված էլ վերստին միախառնվում էր «զինվորական թևին», ապա ալ-Բարուդին և նրա արբանյակները, այդ թվում Օրաբին, օսմանական-սուլթանական իրենց հրապուրանքից և հակահամայիլական-հալիմասիրական իրենց լոանդից հրաժարված էին ձևանում հավանաբար ոչ առանց Պոլսի թևագրանքի կամ առնվազն համամտության, պարզապես «վաթանի» ֆեոդալ ազնվականությունը սիրաշահելու և «Վաթանի» կուսակցության, որ և նույնն է՝ «վաթանի»-ազգային շարժման ղեկավարում կանգնելու համար։

Е. О. НАДЖАРЯН

«ВОЕННОЕ КРЫЛО» ЕГИПЕТСКОЙ ПАРТИИ «ВАТАНИ»

Партия «Ватани», являющаяся первой крупной национальной общественно-политической организацией Египта и вообще Арабского Востока, появилась на египетской политической арене в апреле 1879 г., как объединенный фронт разнородных «националистических» («ватанистских») элементов.

Значительную часть подписавших «Национальную программу» фронта деятелей составляли коренные египтяне-младшие офицеры, которые и сформировали «военное крыло» партии.

В статье особое внимание автор обращает на вопросы социальной принадлежности и политической ориентации «военного крыла». Подчеркнуто то обстоятельство, что руководящее ядро младших офицеров принадлежало классу новых землевладельцев. Большое воздействие на нее оказывали военные деятели, связанные убеждениями и интересами с султанской столицей.

1 Wilson C. R., Chapters from My Official Life, London, 1916, p. 186.
2 В. В. Черновская, Офицерский корпус Египта как социальная группа (1850—1952 гг.).—«Народы Азии и Африки», 1975, № 3, с. 69.
1850—1952 гг.). —«Народы Азии и Африки», 1975, № 3. с. 69.
3 F. J. Cox, Arabi and Stone.—„Cahiers d'histoire egyptienne", 1956, № 8, p. 163.
4 История национально-освободительной борьбы народов Африки в новое время. М., 1976, с. 197.
5 عبدالرحمن الرافعي، مصر اسماعيل، ج ٢، القاهره، ١٩٣٧، ص ٢١٨ J. M., Landau, Parliaments and Parties in Modern Egypt, N. Y., 1954, p. 89.
6 В. Б. Луцкий, Новая история арабских стран, М., 1965, с. 182.
7 Лотар Ратман, Проблемы восстания Орабн 1879—1882 гг. в Египте—«История и экономика стран Арабского Востока», М., 1973, с. 252.
8 Colvin Auckland, The Making of Modern Egypt, London, 1906, p. 7–9.
9 L'Univers ou Histoire et Description de tous les peuples, de leurs religions, moeurs, coutumes, etc., Paris, 1848, p. III: Egypte Moderne, par P. et H. p. 31, 132, p. 137.
10 В. Б. Луцкий, *цит. раб.*, *с. 144.*
11 D. A. Cameron, Egypt in the Nineteenth Century or Mehmet Ali and His Successors until the British Occupation in 1882, London, 1898, p. 264.
12 Colvin Auckland, *цит. раб.*, *с. 9.*
13 Э. У. Лейн, Нравы и обычаи египтян в первой половине XIX в., М., 1982, с. 71—72.

14 Colvin Aucland. *Նշված աշխ., էջ 9։*
15 З. М. Лекин, Развитие основных течений общественно-политической мысли в Сирии и Египте (Новое время), М., 1972, с. 177. *Տե՛ս նաև* A. Hourani, Arabic Thought in the Liberal Age (1798—1935), London, 1962, p. 19.
16 Х. И. Кильберг, Восстание Араби-паши в Египте (Антибританское национально-освободительное движение в Египте в 1979—1882 гг.), М.—Л., 1937, с. 123.
17 История национально-освободительной борьбы..., с. 195.
18 ivr ،١٩٧٧ ،القاهرة ،الجمعية العربية للحضارة ،رفعة العبد، الاسس الاجتماعية
19 Х. И. Кильберг, *Նշված աշխ., էջ 33։*
20 Colvin Aucland, *Նշված աշխ., էջ 11։*
21 Аль-Фахури Хаина, История арабской литературы, т. 2, М., 1961, с. 335.
22 Х. И. Кильберг, *Նշված աշխ., էջ 109։*
23 Adali Hasan, Documents Pertaining to the Egyptian Question in the Yildiz-collection of the Başbakanlik Arsivi, Istanbul,—, Political and Social Change in Modern Egypt", London, 1933, p. 59.
24 Х. И. Кильберг, *Նշված աշխ., էջ 113։*
25 История национально-освободительной борьбы..., с. 196.
26 Նույն տեղում, էջ 201։
27 Х. И. Кильберг, *Նշված աշխ., էջ 123։*
28 История национально-освободительной борьбы..., с. 201.
29 Ф. Ротштейн, Захват и закабаление Египта, М.—Л., 1925, с. 89.
30 История национально-освободительной борьбы..., с. 201.
31 В. Б. Луцкий, *Նշված աշխ., էջ 175—176։*
32 Տե՛ս օրինակ. А. А. Губер, Г. Ф. Ким, А. И. Хейфец, Новая история стран Азии и Африки, М., 1975, с. 325.
33 Х. И. Кильберг, *Նշված աշխ., էջ 34։*
34 Л. А. Фридман, Развитие капитализма в Египте. М., 1965, с. 34.
35 Х. И. Кильберг, *Նշված աշխ., էջ 3..։*
36 В. В. Черновская, *Նշված աշխ., էջ 60։*
37 Г. А. Нерсесов, Дипломатическая история египетского кризиса 1881—1882 гг. (в свете русских архивных материалов), М., 1979, с. 33.
38 Новая история стран зарубежной Азии и Африки. Л., 1971, с. 473.
39 Ацамба. Социально-экономические позиции крупного купечества в Египте в XVIII—нач. XIX вв., «IV всесоюзная конференция арабистов. Тезисы докладов и научных сообщений». Ереван. 1985, с. 75—77.
40 Х. И. Кильберг, *Նշված աշխ., էջ 116—117։*
41 L'Univers ou Histoire et Description..., p. 135.
42 В. В. Черновская, *Նշված աշխ., էջ 69։*
43 Colvin Aucland, The Making of Modern Egypt, p. 9.
44 Նույն տեղում, էջ 17։ Նաև՝ Henry Dodwell, The Founder of Modern Egypt. A Study of Muhammed Ali Pasha of Cairo, Cambridge, 1931, p. 129.

45 Г. А. Нерсесов, *Նշված աշխ., էջ 33։*

46 Лотар Ратман, *Նշված աշխ., էջ 256։*

47 A. Abdel-Malek, Ideologie et renaissance nationale. L'Egypte Moderne, Paris, 1969, p. 428—435.

48 Лотар Ратман, *Նշված աշխ., էջ 271, նաև. 62։*

49 A. Abdel-Malek, *Նշված աշխ., էջ 429։*

50 История национально-освободительной борьбы.... с. 197.

51 *Նույն տեղում, էջ 201։*

Հ. Հ. ՍԱՐԱՋՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԻՍՄԱՅԻԼԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Իսմայիլականությունը իսլամի շիա ուղղության աղանդներից է, որ VIII դ. առաջացավ խալիֆայության ներսում քաղաքական հակամարտությունների և սոցիալական հակասությունների աճի հետևանքով։ Այդ դարում շիան արդեն բաժանված էր երկու հիմնական հոսանքների՝ «Չափավորականները» (զայդիները և այլք) հեռու չգնացին ուղղափառ իսլամից՝ սուննայից[1]՝ «Մայրահեղականների», այդ թվում առաջին հերթին իսմայիլականների ուսմունքները, բավականին հեռանալով իսլամի հիմնական դրույթներից, փաստորեն վերաճեցին կրոնափիլիսոփայական առանձին ուղղության[2]։

Իսմայիլականությունն իր անվանումն ստացել է շիա 6-րդ իմամ Ջաֆար աս-Սադիկի (մահացած՝ 765-ին) ավագ որդու՝ Իսմայիլի անունից։ Միջնադարյան սկզբնաղբյուրներով վկայված մահմեդական ավանդույթի համաձայն, Ջաաֆարը, խախտելով շիայի կարգը, իմամությունը ժառանգելու և ուրեմն «տիեզերական ոգին» մարմնավորելու իրավունքից զրկեց «գիտնեմոլ» Իսմայիլին և իրեն ժառանգորդ կարգեց կրտսեր որդուն՝ Մուսա ալ-Կազիմին։ Ավագի ժառանգական իրավունքի խախտմամբ շիայի ներսում սկիզբ առավ Մուսային որպես 7-րդ իմամ ճանաչողների՝ չափավորական ուղղությունը, որի հետևորդները, ալիից սկսած մինչև 878-ին Մուհամմեդ ալ-Մունթազարի անհայտացումը, 12 իմամների ընդունումով, հետագայում կոչվեցին տասներկուսականներ։

Իմամ Ջաաֆարի կարգադրության ի հակադարձություն էլ, փաստորեն, ծնունդ առավ իսմայիլական գերհզոր աղանդը։ Նրանում համախմբվեցին այն շիաները, որոնք, որպես օրինական ժառանգորդի, հավատարիմ մնացին Իսմայիլին, իսկ նրա վաղաժամ (հորից 5 տա-

րի շուտ, 760-ին) մահից հետո, որպես 7-րդ իմամ ճանաչեցին նրա որդուն՝ Մուհամմեդին։

Իսմայիլականները, սակայն, շուտով երկճեղքվեցին։ Մուհամմադ Բին Իսմայիլին, որպես հաստատապես վերջին ու որպես մահդի (մեսիա—փրկիչ) երկիր վերադառնալիք իմամ դավանողները կոչվեցին յոթնականներ, իսկ IX դարավերջին ստացան «կարմաթներ» անվանումը։ Ըստ էության նույնպես յոթնական այն իսմայիլականները, որոնք Մուհամմեդ Բին Իսմայիլի հետնորդներին ևս ճանաչեցին որպես իմամների (սակայն Աբբասյանների հալածանքներից խուսափելով գաղտնված իմամների), հետագայում Մուհամմեդ մարգարեի դուստր և առաջին իմամ Ալիի կին Ֆաթիմայի անունով կոչվեցին ֆաթիմյաններ։ Ավելի ուշ, ֆաթիմյան ալ-Հաքիմ խալիֆի անհայտացումից (1021 թ.) հետո նրան մարդացյալ աստված հայտարարող իսմայիլականներից առաջացավ դրուզական աղանդը։ Իսմայիլականության ներսում նմանօրինակ տարանջատումներ ու նոր աղանդների (օրինակ՝ Աղախանին որպես կենդանի աստվածության ընդունողների աղանդի) առաջացում արձանագրվեց նաև հետագա դարերում։ Այստեղ նշենք, որ իր ժամանակին Կ. Մարքսը, ֆաթիմյան խալիֆայության ժամանակաշրջանն ու նրա հետ կապված համաշխարհային պատմության հարցերն ուսումնասիրելիս, ընդգծել է իսմայիլական աղանդի տարբեր ճյուղավորումների՝ հաշշաշինների, դրուզների, կարմաթների չափազանց ակտիվ մասնակցությունն իրենց ժամանակի քաղաքական անցուդարձերին[3]։

Հայտնի է, որ շիա բոլոր հոսանքները փոփոխական հաջողություններով համառ ու երկարատև պայքար մղեցին ուղղափառ Իսլամի աստվածապետական օմայան, այնուհետև աբբասյան խալիֆայության դեմ՝ հանուն պետության ղեկավարումը Ալիի տոհմին հանձնելու։ Առավել եռանդուն պայքար ծավալեցին իսմայիլականները, որոնց հաջողվեց մահմեդական աշխարհի տարբեր ծայրամասերում ստեղծել իրենց պետականությունները։

Հասկանալի է, որ հնարավոր չէ մի հոդվածում, թեկուզ ընդլայնված, պատկերել իսմայիլական աղանդավորական շարժման ընդհանուր պատմությունը։ Եվ մեր առաջադրանքն այստեղ իսմայիլական գաղափարախոսության շրջանակներում սոցիալական արդարության հարցի քննությունն է, լոկ շեշտելով տվյալ հարցի վերաբերյալ իսմայիլական կոնկրետիվ մտքի գագաթնակետ համարվող և իր նշանակությամբ մահմե-

դական աշխարհից դուրս նկող Իխուան աս-սաֆա (Մաքրության եղբայրներ) հանրադիտակների տեսությունն ու իսմայիլական գաղափարախոսությունը իրականացնող կարմաթների պետության պրակտիկան (IX—XI դդ.)։

IX դ. խալիֆների քաղաքական իշխանության և ֆեոդալական դասի շահադործման դեմ բռնկվելիք իրարահաջորդ՝ ժողովրդական երեք խոշոր ապստամբություններ՝ 816—837 թթ. Ատրպատականում և Արեմտյան Իրանում Բաբեկի, 869—883 թթ. Հարավային Իրաքում զինջիների Ալի Բին Մուհամմեդի և IX—XI դդ. Իրաքում, Բահրեյնում, Սիրիայում և այլուր, կարմաթների՝ Համդան Բին Կարմաթի ու հաջորդների գլխավորությամբ։ Զանգվածային այդ շարժումները, անշուշտ, պատահական չէին։ Դրանք օրինաչափ արդյունքն էին արաբ-մահմեդական պետականությունում արձանագրված սոցիալ-տնտեսական որակական փոփոխությունների, աստվածապետական-բացարձակապետական իշխանության իրավաքաղաքական և դաղափարախոսական հիմքերի խարխլման։ Այդ շարժումներին խիստ նպաստեց աբբասյան խալիֆայությունում սուկա «ապակենտրոնացված ֆեոդալիզմը», որը զգալապես խոչընդոտում էր արտաղրոզական ուժերի զարգացումը և պարարտ հող էր նախապատրաստել քաղաքական իշխանության քայքայմանը։ Ինչպես իրավամբ դիտել է տվել արաբ մարքսիստ պատմաբան-փիլիսոփա Հասսան Մրուեն, այդ ամենը հանգեցրեց այն բանին, որ «պետությունը նախ և առաջ ի վիճակի չէր վերահսկելու օրենքների կենսագործումը և ապա անկարող էր ապահովելու ժողովրդական զանգվածների ամենատարրական իրավունքներն ու պահանջները»[1]։ Դժվար չէ, ուրեմն, այն հետևության հանգել, որ նշված ապստամբություններն ունեին սոցիալ-դասակարգային խոր արմատներ, մանավանդ, որ պատմական փաստ է այն, որ զինված շարժումների ընթացքում գլխավոր շարժիչ ուժերը՝ գյուղացիությունն ու արհեստավորությունը, գուլքային հավասարություն էին պահանջում հասարակության բոլոր անդամների համար։

Խնդրո առարկա ժամանակաշրջանում սոցիալ-տնտեսական տեղաշարժերին և ժողովրդական ապստամբություններին զուգընթաց, զարգանում էին նաև ուղղափառ իսլամին ու նրա քաղաքական մարմնավորումը հանդիսացող խալիֆայական պետությանը հակադրվող կրոնափիլիսոփայական տարբեր հոսանքներ, որոնց շարքում առավել երեւելին «Մաքուր եղբայրների» իսմայիլական գաղտնի կազմակերպությունն էր։

Այն երևույթը, որ միջին դարերում հակաֆեոդալական, տնտեսական և քաղաքական շարժումները սովորաբար հանդես են եկել կրոնա-աղանդավորական քողի ներքո, իր ցայտուն արտահայտությունն է դտել նաև իսմայիլականության գաղափարախոսության և գործողությունների շրջանակներում։ Խալիֆայությունում արձանագրված զինված ելույթներն ակնարկելով, Ֆ. Էնգելսը նշել է, որ «կրոնական պատյանի ներքո ընթացող այդ բոլոր շարժումներն առաջ էին եկել տնտեսական պատճառներից»[5], մի այլ կապակցությամբ ավելացնելով՝ «Ֆեոդալիզմի նկատմամբ հեղափոխական օպոզիցիան անցել է ամբողջ միջնադարով։ Ժամանակի պայմանների համեմատ այն հանդես է գալիս մերթ իբրև միստիկա, մերթ իբրև բացահայտ հերետիկոսություն, մերթ իբրև զինված ապստամբություն»[6]։

Սկզբնաղբյուրները տարաբախտաբար պատասխան չեն տալիս բազմաթիվ հարցերի. ե՞րբ և ինչպե՞ս են հայտնվել «մաքուր եղբայրները», ո՞վ է նրանց անվանակոչել այդպես, ինչպե՞ս են ստեղծել իրենց եղբայրությունը, ովքե՞ր են հեղինակել տվյալ ժամանակաշրջանի համար իր ընդգրկումներով ու բազմազանությամբ աննախադեպ երևույթ հանդիսացող նրանց հանրագիտարանը։

XI դ. մեզ հասած միակ աղբյուրը՝ Աբու Հայյան աթ-Թաուհիդիի (մահացած՝ 1023-ին) աշխատությունը տեղեկացնում է, որ «եղբայրությունը ստեղծվել է Բասրայում. «կազմվելով բարեկամության, հավատարմության և անարատության հիմքի վրա, այն ստեղծեց մի ուսմունք... հեղինակեց հիսուն թուղթ իմաստասիրության համընդհանուր օրինաչափությունների մասին և գաղտնի պահելով հեղինակների անունները, հանձնեց գրիչներին և պարգևեց մարդկանց»[7]։ Աթ-Թաուհիդին նաև միակ պատմագիրն է, որ հաղորդել է «եղբայրներից» մի քանիսի անունները, ալ-Մակդիսի, ազ-Զանջանի, ալ-Մահրաջանի, ալ-Աուֆի և այլք[8]։

Մերօրյա արաբ իսմայիլական պատմաբան Արեֆ Թամերը «Թղթերի» հեղինակ է համարում Իսմայիլ Բին Ջաաֆար աս-Սադիկի թոռանը՝ իմամ Աբդուլլա Բին Մուհամմեդին[9]։ Կարծիք է հայտնվել, նաև, որ «Թղթերը» հորինել է ինքը՝ իմամ Ջաաֆարը[10]։ Իր հերթին «Թղթերի» հրատարակիչ Ահմեդ Զաքի փաշան 1928-ին դրանք համարել է կարմաթների ուսմունքի հիմքը և կարծիք հայտնել, որ դրանց իմամ աս-Սադիկին վերագրելը հետապնդել է ժողովրդականացման նպատակ[11]։ Ավելացնենք, որ բոլոր դեպքերում ժամանակակից հետա-

զոտողների ստվար մասը օրգանական կապ է գտնում «եղբայրներ»ի և իսմայիլական վարդապետության միջև[12]։

Հավակնություն չունենք այստեղ ընդգրկել «Մաքուր եղբայրների» կրոնափիլիսոփայական ուսմունքի բոլոր կողմերը։ Այստեղ մեր խնդիրը նրանց սոցիալ-քաղաքական հայացքները և այդ հայացքների շրջագծում սոցիալական արդարության հարցի բացահայտումն է։

«Մաքուր եղբայրների» 51 համապարփակ «Թղթերը»՝ գիտափիլիսոփայական և գաղափարախոսական մի հանրագիտարան են, որոնք, ժամանակակից տերմինով ասած, ունեն գործունեության ծրագրի բնույթ՝ իր տակտիկայով ու ստրատեգիայով։

«Եղբայրության» ստրատեգիան կարելի է ամփոփել այսպես.

Նախ՝ ընդդիմադիր դիրք Աբբասյան խալիֆայության ու նրա գաղափարախոսության հիմքը հանդիսացող շարիաթի նկատմամբ։ Հենվելով իրենց ժամանակի տիեզերածանության (կոսմոգոնիա) պատկերացումների վրա, «Եղբայրները» կանխատեսել են, որ Սատուռն (Երևակ) և Յուպիտեր (Լուսնթագ) մոլորակների «միջին զուգակցության» ժամանակ, 240 տարի անց, «կփոխվեն արքաները, տիրապետությունը կփոխանցվի այլ ժողովրդի ու գերդաստանի»[13]։ «Մեծ զուգակցման» ժամանակ, 960 տարին մեկ, երկրագնդի վրա տեղի են ունենում կարևոր վերափոխություններ, «հայտնվում է նոր մարգարե, առաջանում է նոր կրոն, փոխվում են օրենսդրություններն ու շարիաթները»[14]։ «Եղբայրները», նման մտքերը որպես անխուսափելիորեն կատարվող տիեզերական օրինաչափության «լայն ամբոխ» շրջանում փողհարելով, փաստորեն հիմնահատակ են անում իսլամի այն հիմնաղրույթը, որ Մուհամմեդը վերջին մարգարեն է ու նրա վարդապետությունը՝ երկնառաք վերջին կրոնը։ Դրանով իսկ նրանք բացատում ու հերքում են իսլամական խալիֆայության հավիտենականության վերաբերյալ շարիաթի վրա հենվող գաղափարը։

Երկրորդ՝ կործանվող պետությանը փոխարինելու է գալիս նոր ոյակի մի տերություն։ Մեկ այլ տեղ, դարձյալ կանխագուշակելով, նրանք պնդում են, որ 330 տարի և 4 ամիս անց «պետականությունն անցնելու է Մաքուր եղբայրներին, որոնք տիրելու են 159 տարի», ըստ որում նոր կարգերին տրվում է «բարի մարդկանց պետություն» մակդիրը։ Անդրադառնալով իրենց պետության գաղափարախոսական հիմքերին, նրանք իրենց եղբայրակիցներին կոչ են անում «իրենց սրտերը քացել բոլոր կրոնների, դավանանքների, ուսմունքների ու գիտություն-

ների առաջ, քանզի մեր դավանանքը պարփակում է բոլոր հավատամքներն ու գիտությունները»[15]։

«Մաքուր եղբայրները» գոյություն ունեցող կարգերն ու իսլամական շարիաթը այլաբանորեն պատկերացնում են որպես չարի մարմնացում, որից պետք է աղատվել. «Եղբայր իմ, ցույց տուր ճշմարտությունը, բացահայտիր յուրաքանչյուր կրոնի և դավանանքի թերությունները, մի ապավինիր քո վատ հավատամքին, այլ ընտրիր ավելի լավն ու բարին»[16]։ Սա արդեն բացահայտ մարտահրավեր էր պաշտոնական իսլամին։ Ավելացնենք, որ «Եղբայրները» ընության, հրեշտակների ու սատանաների, մարգարեության, դրախտի ու դժոխքի և հարության հարցերը բխեցնելով Մերկուրիից (Փայլածու), տալիս էին այնպիսի այլաբանական բացատրություններ, որոնք լրիվ հակադրվում էին շարիաթին, մերժում հոգևոր աշխարհի գոյությունը տիեզերքից ու երկրագնդից անկախ, ընդհուպ մոտենալով մատերիալիստական ըմբռնմանը։

Վերոհիշյալ ստրատեգիական նպատակներին զուգահեռ «Եղբայրությունը» գիտակցորեն և ճշգրտորեն սահմանեց նաև իր գործունեության տակտիկան, ըստ որի քարոզչությունը պետք է տարբաժանվեր տարիքային հատկանիշներին համապատասխան փուլերի և հիմունն անց մարդկանց միայն թույլատրվում էր շնորհել չորրորդ՝ «բարձր աստիճանը», որում նրանք ծանոթանում են «կազմակերպության» լրիվ գաղտնիքներին[18]։

Ինչ վերաբերում է իմամությանը, ապա կրոնապետ իմամը պետք է իր մեջ կենտրոնացնի 46 հատկանիշ, որպեսզի դառնա մարգարեին հավասարազոր կամ նրանից գերզոր։ Եթե այդ բոլոր արժանիքները համատեղված չգտնվեն մեկ անհատի մեջ, ապա եղբայրակիցները պետք է անարատության ու սրբության հիմամբ միավորվեն ու կազմեն «խմբակ» կամ «եղբայրություն»՝ ի խնդիր կրոնի և աշխարհի բարօրության[19]։

Եթե դրան ավելացնենք այն պնդումը, որ «անհետացած իմամը» «գտնվում է մեր մեջ և ճանաչում է մեզ»[20], ապա կարող ենք եզրակացնել, որ ըստ «Թղթերի» հեղինակների հենց ինքը՝ «եղբայրությունն» է ներկայացնում իմամին, այլ խոսքով «մաքուր եղբայրներն» իրենք իրենց դիտում էին որպես Աբբասյան խալիֆայության ոչ միայն զաղափարախոսական ախոյան, այլև՝ քաղաքական այլընտրանք։

«Մաքուր եղբայրներին» կամ որ նույնն է՝ տվյալ ժամանակաշրջանի իսմայիլական գաղափարախոսության սոցիալ-քաղաքական և բարոյագիտական հայացքների համակարգը հարազատորեն արտացո-

լում էր աբբասյան հասարակության իրական պատկերը։ Արաբական փիլիսոփայական մտքի զարգացման պատմության մեջ, առաջին անգամ լինելով, «Եղբայրներին» աշխարհայացքում է, որ վերանում է արհամարհական այն վերաբերմունքը, որ գոյություն ուներ ընդհանրապես ձեռքի աշխատանքի, ուրեմն և նրանով զբաղվող հասարակական խավերի նկատմամբ։ Ավելին, նրանք հավասարության նշան են դնում վերջիններիս ու քաղաքական, գիտական և այլ խավերի, այլ խոսքով ֆիզիկական և մտավոր աշխատանքի միջև։ Նրանք, ընդգծելով աշխատանքը որպես մարդկային գոյության առաջին և գլխավոր նախապայման, միաժամանակ անդրադառնում են աշխատանքի հասարակական բաժանման և նյութական խթանների հարցերին։ Հասարակության առաջադիմության և երջանկության համար «որոշ մարդիկ պետք է զբաղվեն գյուղատնտեսությամբ, արհեստներով, շինարարությամբ, առևտրով, իսկ որոշ մարդիկ՝ քաղաքականությամբ ու գիտությամբ»[21]։ Ինչ վերաբերում է աշխատանքի նյութական խթանների հարցին, ապա նրանք ասում են. «Ջափի, կշռի, արժեքի և աշխատավարձի գոյությունը իմաստություն է և ողջախոհություն, ...որպեսզի յուրաքանչյուրն աշխատավարձ ստանա ըստ աշխատանքի (ընդգծումը մերն է—Պ. Ս.)»[22]։ Իհարկե դժվար է ասել, թե «Եղբայրներին» այս դրույթը մատնանշո՞ւմ էր արդյոք աշխատավարձի վճարումն ըստ աշխատանքային արժեքի, այսինքն՝ բացառո՞ւմ էր մարդու աշխատանքի շահագործումը մարդու կողմից։ Այնուամենայնիվ, «Եղբայրների» հայացքները անհամեմատ առաջադեմ բնույթ են կրում իրենց նախորդող կրոնափիլիսոփայական բազմաթիվ ուսմունքներից։

«Մաքուր եղբայրների» հանրագիտարանային հիսունմեկ «Թղթերի»[23] երկու երրորդ մասը վերաբերում է ժամանակի բոլոր գիտություններին և միայն մեկ երրորդը՝ սոցիալ-քաղաքական ու գաղափարական հարցերին։ Դիտելիքների այդ ողջ համակարգն ի սպաս գրվեց դասակարգային տարբեր շերտերի և տարբեր ազգությունների ու դավանանքների ներկայացուցիչների։ «Թղթերում» նշված են այն միջոցները, որոնցով պետք է քարոզել ու տարածել այդ գիտելիքները, ըստ որում անգամ անգրագետ լայն ամբոխի շրջանում նախատեսվում էին առանձին կանխօրոք նշանակված համաժողովներ։ Իսկ դա նշանակում է, որ «Եղբայրները» ձգտել են լուսավորել ժողովրդական զանգվածներին թե՛ քաղաքական ու դավանաբանական և թե՛ գիտական գիտելիքներով։ Իսկ դա՝ նույնպես միտում էր անդուլ պայքար մղել տիրապետող պաշտոնական գաղափարախոսության դեմ։

«Մաքուր եղբայրներն» իրենց սոցիալական-փիլիսոփայական հայացքներում, օբյեկտիվորեն, ելակետ են ընդունում դասակարգային տարբեալին վերաբերմունքը։ Բնական է, որ միջնադարյան դասակարգային հասարակության պայմաններում՝ հասարակական հարաբերությունների սրման, ժողովրդի ստորին խավերի հարստահարման ու ճնշման, տիրապետող կարգերի հանդեպ ժողովրդական զանգվածների դժգոհության կուտակման, և այլևայլ երևույթներ, «Թղթերում» իրենց թեկուզ այլաբանական արտացոլումն են գտել։

Մենք արդեն նշել ենք, որ «Եղբայրները» ձգտում էին ստեղծել «բարի մարդկանց պետություն»։ Նրանց պատկերացմամբ այն բաղկացած է լինելու չորս դասերից՝ արհեստավորներից (արտադրողական ուժերից), ռահվիրաններից (երկրամասերի ամիրաններից, կառավարիչներից, ոստիկաններից), արքաներից և կամոք աստվածաբաններից (փիլիսոփաներից)[24]։ Սա դասակարգային այն նույն կառուցվածքն էր, որ տիրում էր արաբական խալիֆայությունում, միայն թե ավելացրած վերջին՝ կամոք իմաստասերների դասը։ Ուրեմն՝ «Եղբայրները» ընդունում են թագավորական կարգը։ Այդ դեպքում «բարի մարդկանց տերությունը» նախ ինչո՞վ է տարբերվում դասակառուցային տեսակետից, և ապա՝ որտե՞ղ է «Եղբայրների» դասակարգային վերաբերմունքը։

Իրավունք չունենք, անշուշտ, «Եղբայրներից» պահանջելու, որ իրենց ժամանակից առաջ ընկնեն, կամ էլ այն, ինչ Նրանց ուժերից վեր է։ Տվյալ ժամանակաշրջանի համար խիստ բնականոն է հասարակության դասակարգային այդպիսի կառուցվածքը։ Պատմական կոնկրետ-օբյեկտիվ պայմաններն այդ կառուցվածքից հրաժարվելու և նորը առաջադրելու խնդիր չէին դրել ու չէին կարող դնել «Եղբայրների», անգամ Նրանց ավելի առաջավոր-ազատարար մտածողների գիտակցության մեջ։ Այնուամենայնիվ, «Եղբայրների» առաջարկած պատկերը թույլ է տալիս մեզ սահմանել նրանց դասակարգային վերաբերմունքը, որը մեր կարծիքով ունի երկու կարևոր կողմ։

Նախ այն, ինչը մենք տեսանք, կամոք աստվածաբանները (իմա՝ փիլիսոփաները) հասարակության աստիճանակարգում թագավորներից բարձր են դասվում։ Դա գաղափարական առավել առաջադիմական մի քայլ է, որ արժանի է հատուկ ուշադրության։ Որոշ իմաստով նույնիսկ հանկարծակի ենք գալիս հաստատելու, որ միջնադարյան բացարձակապետ ու բռնակալ թագավորի (իմա՝ խալիֆայի) ձեռքից իշխանությունը խլվում է ու հանձնվում փիլիսոփաներին։

Երկրորդն էլ այն, որ Թեպետ արհեստավորների դասը գտնվում է հասարակության ամենաստորին մասում, այնուամենայնիվ «Եղբայրներն» այն բարձր գնահատելով, ասում են. «...Արհեստավորները նման են աշխարհի չորս տարրերին՝ կրակին, օդին, շրին ու հողին»[25]։ Այլ խոսքով նրանք արհեստավորներին համարում են առաջնային դաս, որը արտադրում է այն ամենը, ինչ անհրաժեշտ է «արժանավայել քաղաքի» (հասարակության) համար։

Վերը շարադրվածից պարզ երևում է, որ «Մաքուր եղբայրների» գաղափարախոսությունը հանդիսանում էր աբբասյան խալիֆայության ճնշված ու շահագործված հասարակական լայն խավերի տրամադրությունների, իղձերի և երազանքների դրսևորումներից մեկը։ Նրանք, սերվելով ժողովրդի ստորին խավերից, պահպանում ու շարունակում էին իրենց դասակարգային պատկանելիությունը, Թեպետ «Բղեղները» շարադրելիս նրանք արդեն անկասկած պատկանում էին մտավորական դասին։ Այս ամենից ելնելով կարող ենք պնդել, որ իսմայիլական գաղափարախոսության գագաթնակետը հանդիսացող «Մաքուր եղբայրների» քաղաքական, կրոնական, փիլիսոփայական և իրավական հայացքներն անկասկած նպաստեցին հետագայում առավել առաջադիմական, մատերիալիստական գաղափարախոսության ձևավորմանը, մեծ ազդեցություն Թողեցին միջնադարյան արաբական փիլիսոփայական մտքի հետագա զարգացման վրա։ Այս նույն միտքը «Սովետական փիլիսոփայական հանրագիտարանում» փոքր ինչ այլ ձևով է մատուցվում, այնտեղ մենք կարդում ենք. «Մաքուր եղբայրները» միավելով մուՔազիլիներին, իսմայիլականներին, և կարմաՔներին, ներկայացրեցին հակաֆեոդալական, դեմոկրատական շարժման գաղափարախոսությունը»[26]։

Հարկ ենք համարում նշել նաև, որ իսմայիլական շարժման գաղափարախոսությունը, մի կոնկրետ ժամանակաշրջանի ու միջավայրի արգասիքը չէ, բնավ։ Այն Թե՛ գաղափարական, Թե՛ կազմակերպչական հարցերում, նաև մեՔոդների խնդրում դրսևորում էր երանգային ակընհայտ տարբերություններ՝ ըստ ժամանակի ու աշխարհագրական միջավայրի։ Բայց և այնպես դժվար չէ նրանում միաժամանակ հաստատել համընդհանրական. գծեր։

Սկզբնական շրջանում իսմայիլականների քաղաքական պահանջները չէին տարբերվում շիայի մյուս հոսանքների գլխավոր պահանջից. իշխանությունը հանձնել Ալիի ժառանգներին։ Պայքարն այդ շրջանում

կրում էր բացահայտ բնույթ և նպաստում Աբբասյան խալիֆայության դիրքերի խարխլմանն։

Սակայն, խալիֆայության ճնշման քաղաքականությունը շիաիին ստիպեց հետագայում անցնել ընդհատակյա գործունեության։ Հենց այդ ժամանակաշրջանում էլ շիաների միջավայրում ծագեց խոր հնադարից՝ բաբելական կրոնից գնոստիկականության փոխանցված և արևելյան բոլոր աղանդների համար բնորոշ՝ «փրկչի», «ազատարարի», «Քրիստոսի» գաղափարից սեփական մահդիի գաղափարը առաջ քաշելու միտքը։ «Անհետացած իմամի» գալուստը ապահովելու է շիայի լիակատար հաղթանակն ամբողջ աշխարհում. նրա շնորհիվ կգա ոսկե դարը, սոցիալական հավասարության ու արդարության դարը[27]։

Իսմայիլական շարժման մասնակիցների դասակարգային և էթնիկական բազմազանությունը, որն իր արտահայտությունը գտավ շարժման ներսում ժամանակ առ ժամանակ արձանագրվող պայքարում, արտացոլվեց նաև շարժման գաղափարախոսության շրջանակներում տարբեր հոսանքների առկայության մեջ։ Պահպանված նյութերը վկայում են, որ իսմայիլականությունը եղել է առաջին կրոնաքաղաքական կազմակերպությունը, որի շարքերում, առաջնությունը տալով բանականությանը, ընդգրկված էին տարբեր ազգությունների ներկայացուցիչներ՝ անկախ կրոնի ու հավատքի պատկանելիությունից[28]։

Իսմայիլական կազմակերպությունն իրենից ներկայացնում էր գաղտնի մի միություն, որի անդամները բաժանվում էին 7 աստիճանների։ Ցածրաստիճան անդամներին հայտնի չէին կազմակերպության քաղաքական նպատակները։ Իսկ բարձրաստիճան (4-րդ-ից բարձր) անդամների գործունեությունը լրիվ գաղտնի էր պահվում։ Շարքային անդամները ոչինչ չգիտեին իրենց ղեկավարների մասին, ինչը որ ուժեղ ներգործություն էր թողնում նրանց վրա։ Քարոզիչները գործում էին գաղտնի, ճարպկորեն հարմարվում ժամանակի և տեղի պայմաններին, կազմակերպության շարքերը համալրում նորանոր անդամներով։ Շարքային անդամները պարտավոր էին անվերապահորեն կատարել իրենց ղեկավարների հրամանը[29]։

Ինչ վերաբերում է իսմայիլականության սոցիալ-քաղաքական և տնտեսական հայացքներին, հատկապես դրանց գործնական կիրառմանը, ապա հարկադրված ենք տվյալ խնդրում բավարարվել կարմաթների պետության օրինակով, քանի որ վերջինս համարվում է իսմայիլականների գաղափարների, իղձերի և նպատակների համարյա կատարյալ մարմնավորումը։

IX դ. սկզբում Իրաքում, այնուհետև Սիրիայում, Բահրեյնում և այլուր ծավալված կարմաթների ապստամբության անվանումը, ըստ ենթադրությունների, գալիս է նրա առաջնորդ Համդան Կարմաթի ազգանունից՝ վկայելով հռչակավոր իսմայիլական դար (քարոզիչ), նա կարողացավ շարժման մեջ ներգրավել գյուղացիության և արհեստավորների լայն զանգվածները, մի բան, որ նպաստեց շարժման սոցիալական մոտիվների, հավասարության և արդարության գաղափարների ուժեղացմանը։ Սկզբնական շրջանում Համդանը, բացի գալավարաքաղաքական լայն քարոզչությունից, իսմայիլականների շրջանում բավական խոշորագույնմար հանգանակություններ կատարեց և սկսեց անհատույց նյութական օգնություն ընձեռել կարիքավորներին, զենք ու պինամթերք կուտակել և Քուֆայի մոտ միջնաբերդ կառուցել (890 թ.)[30]։

Բաղդադի խալիֆայության և կարմաթների զինված բախումները չէին դադարում։ 894 թ. Համդանի հանձնարարությամբ գաի Աբու Սաիդ ալ-Ջաննաբին մեծ հաջողություն գտավ Բահրեյնի քաղաքային և բեդուինական բնակչության մոտ, որոնց նա քարոզում էր լիակատար եղբայրության մարդկանց միջև՝ անկախ կրոնական և աղգային պատկանելությունից, և որոնց անդրշիրիմյան երանության փոխարեն խոստանում էր երկրային երջանկություն[31]։ 899 թ. նա հիմք դրեց Բահրեյնի անկախ պետությանը, որը պատմագրության մեջ հայտնի է նաև որպես «Բահրեյնի հանրապետություն»։ «Ստեղծվեց առաջին արաբական հանրապետությունը միջնադարում։ Դա ժամանակակից ըմբռնմամբ՝ աշխարհիկ, ոչ կրոնական մի նոր տիպի պետություն էր, որն ուներ իր գաղափարախոսությունն ու սոցիալ-տնտեսական և քաղաքական ծրագիրը»,—գրում է Հ. Մրուեն[32]։

Ճիշտ է, կարմաթների շարժումն Իրաքում բարձրացրեց կրոնադավանաբանական կարգախոսեր, սակայն Բահրեյնում իշխանությունը գրավելուց հետո պարզվեց, որ դրանք ոչ այլ ինչ էին, եթե ոչ ձևով՝ կրոնական, իսկ բովանդակությամբ՝ սոցիալական լողունգներ։ Կարմաթական պետության հիմնադիրներն ունեին համապատասխան փիլիսոփայական ուսմունք և ոչ թե կրոնական հավատամք։ Նրանք փաստորեն «աստվածացնում» էին բանականությունը, ասելով, որ «գերագույն բանականությունը» աստվածն է[33]։ Ի դեպ, նրանք վերացրեցին ամեն տեսակի կրոնական ծեսերը, թեպետ և չկաշկանդեցին հավատքի ազատությունը[34]։ Արաբական բազմաթիվ աղբյուրներում և արեվելագիտական գրականության մեջ տիրում է այն կարծիքը, որ կարմաթներն անաստված էին, անբարեպաշտ և այլն։ Այդ բանավիճային

հարցին սովետական արևելագետ Ե. Բելյաևը տվել է հետևյալ բացատրությունը. «Կարմաթները չեն եղել և չէին կարող լինել աթեիստներ, երբ կրոնը եղել է տիրապետող ձև ֆեոդալական հասարակության գաղափարախոսության մեջ։ Հետևաբար, հանդես գալով ֆեոդալական կարգերի դեմ, նրանք լիովին չհեռացան կրոնական պատկերացումների ոլորտից»[35]։

Բահրեյնի կարմաթական պետությունը եղել է հողագործական-արհեստավորական համայնք՝ համընդհանուր ստրուկներով։ Համայնք-պետության գլխին կանգնած էր ավագների (սադաթ) վեցյակ խորհուրդը (արաբերեն՝ ալ Ակդանիյա), որի անդամներն ընտրվում էին Սուլայման բին Աբի Տահերի ընտանիքից կամ մերձավորներից ու կազմակերպության բարձրաստիճան մարդկանցից։ Վեցյակն ուներ վեց տեղակալներ (նստում էին ետին թախտին)։ Որոշումներն ընդունվում էին կոլեգիալ[36]։ Քաղաքական այդ կարգը տիրապետող է եղել, 1052 թ., երբ XI դ. պարսիկ ճանապարհորդ Նասիր-ի Խոսրովն այցելեց ալ-Ահսա մայրաքաղաքը։ Այդ աղբյուրը Իբն Հաուկալից հետո համարվում է երկրորդը, որ հավաստի տեղեկություններ է տալիս Բահրեյնի պետության մասին և, որից մեջբերում են կատարում բոլոր պատմաբաններն ու արևելագետները։

Ալ Ակդանիայի առաջին ձեռնարկումներից են եղել հարկերի վերացումը, ավելի շուտ հարկային նոր սիստեմի մշակումը, որը, ըստ պատմական աղբյուրների, որևէ ծանրություն չէր պատճառում համայնքի անդամներին։

Պետության և քաղաքացիների փոխհարաբերությունների մասին Նասիր-ի Խոսրովը գրել է.—«Բահրեյնում կան 80 հազար աֆրիկյան ստրուկներ, որոնք մշակում են դաշտերն ու այգիները։ Քաղաքացիները տասանորդ չեն վճարում։ Եթե մեկնումեկը աղքատանում կամ պարտքի տակ է ընկնում, օժանդակում են այնքան ժամանակ, մինչև բարելավի իր վիճակը։ Պարտքի դեպքում պարտատերը վերցնում է իր հասանելիքը միայն։ Երբ որևէ օտարական արհեստավոր է գալիս, նրան տալիս են այնքան դրամ, որ ձի անհրաժեշտ գործիքներ, իսկ պարտքը վերադարձնում է պետությանը, երբ ցանկանա։ Եթե քաղաքացու տունը կամ աղացը քանդվում է և նա անկարող է այն վերանորոգելու, սուլթաններն հրամայում են իրենց ստրուկներին անվճար վերանորոգել տունն ու աղացը։ Սուլթանն ունի աղացներ, որտեղ անվճար աղացվում է քաղաքացիների հացահատիկը։ Իսկ սուլթանը վճարում է ջրաղացպաններին, հոգում աղացի վերանորոգման ծախսերը»[37]։

Վերը նշվածից պետք է եզրակացնել, որ Բահրեյնում եղել է ինչ-որ համայնական կամ հանրային սեկտորի ձև, որը տիրապետող է եղել սոցիալ-տնտեսական հաստատություններում։ Այսինքն՝ երկրում տիրում էր կարգուկանոնը, որի հետևանքով հաստատվել էր սոցիալական հարաբերական հավասարություն։ Հենց դրանով պետք է բացատրել այդ համայնքային պետության օրինակելի ուժը, նրա հարատևումը ավելի քան մեկ դար, թեպետ այն շրջապատված էր ամենաոխերիմ թշնամիներով՝ ի դեմս Աբբասյան խալիֆայության։

Հասարակական հարաբերությունների բնագավառում խոշոր նշանակություն ստացավ տղամարդու և կնոջ հավասարությունը։ Կինը հրաժարվել է չադրայից, որն ըստ շարիաթի հրահանգի պարտադիր է մուսուլման կանանց համար։ Նա տղամարդու կողքին է եղել թե՛ աշխատանքում և թե՛ պատերազմի դաշտում։ Այստեղից էլ գալիս կարմաթների թշնամիների մեղադրանքները սեռական սանձարձակ անբարոյականության վերաբերյալ։ Մինչդեռ առկա են շատ վկայություններ այն մասին, որ ընտանեկան հարցերը լուծվել են բարձր մակարդակով[38]։

IX—XI դարերում կարմաթների շարժումը լայն տարածում գտավ Իրաքում, Իրանում, Սիրիայում, Միջին Ասիայում և Հնդկաստանում։ Արաբական պատմագրության մեջ տիրում է այն կարծիքը, որ կարմաթական պետությունն իր մոլեռանդության և դաժանության հետևանքով է, որ չկարողացավ իրականացնել արդար հասարակության վերաբերյալ իր գաղափարները։ Նման մեղադրանքների համար հիմք են ծառայել 930 թ. կարմաթների հայտնվելը Մեքքայում, Կաաբայի կողոպուտը և «սև քարի» ջարդումն ու տեղափոխումը Բահրեյն։ Միայն երկու տասնամյակ հետո՝ 950 թ. կարմաթները քարը վերադարձրեցին Մեքքա, ենթարկվելով Ֆաթիմյան ալ-Մանսուր խալիֆի կարգադրությանը, որի հոգևոր գերակայությունը մինչ այդ ընդունում էին[39]։ Իհարկե քաղաքական նպատակներն էին, որ կարմաթներին թելադրեցին դիմել նման քայլի՝ ցույց տալ, որ Աբբասյան խալիֆայությունն անզոր է պահպանելու մուսուլմանական ամենասուրբ Մեքքան անդամ։

Սակայն Աբբասյան խալիֆայության և Ղազնավիների ֆեոդալական պետության կատաղի հարձակումները, ինչպես նաև կարմաթա-Ֆաթիմյան կրոնադավանական և քաղաքական մրցակցությունը թուլացրեցին կարմաթների պետությունը, որը XI դ. կեսերին կորցրեց իր նշանակությունը։ Կարմաթական շարժումը տարաբաժանվեց փոքրիկ աղանդների։

Այսպիսով, կարմաթների պետության կործանումը հարկ է վերագրել ոչ միայն արտաքին թշնամիների հարձակումներին, այլև այն քանին, որ իսմայիլական գաղափարախոսությունն ու պետությունը ծագեցին ու ամրապնդվեցին ֆեոդալական հասարակության ընդերքում, հետևաբար բոն իսկ նրանց զարգացումն էլ այլ ուղի չուներ, բացի ֆեոդալական ուղուց։ Հենց դա է իսմայիլական շարժման ողբերգությունը և պատմական դատապարտվածությունը։

П. А. САРАДЖЯН

ВОПРОС СОЦИАЛЬНОЙ СПРАВЕДЛИВОСТИ В ИДЕОЛОГИИ ИСМАИЛИЗМА

Резюме

Исмаилизм--одна из сект шиитского направления ислама, которая возникла в VIII в. внутри арабского халифата па почве политического противоборства и социального противоречия. Исмаилиты развернули особо яростную борьбу против правоверного ислама омаянского, а затем абасидского теократических халифатов, в результате чего исмаилитам удалось создать в различных частях мусульманского мира свои государства.

В статье в рамках идеологии исмаилизма исследуется вопрос социальной справедливости, при этом подчеркивается, что социальные и религиозно-политические взгляды тайной организации Ихван ас-Сафа («Братья чистоты») (X в.), являются апофеозом коллективной мысли исмаилитов и по своей значимости вышли за пределы мусульманского мира.

1 Տե՛ս سامى العياش، الاسماعيليون في المرحلة القرمطية، بيروت، ب ت، ص ٣٨

2 Տե՛ս بند لي جوزى، من تاريخ الحركات الفكرية في الاسلام، بيروت، ١٩٨٢، ص ١٣٧

3 Архив Маркса и Энгельса, т. V, с. 129.

4 حسين مروة، النزعات المادية في الفلسفة العربية، ج ٢ بيروت، ١٩٧٩، ص ٣٧

5 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 22, с. 468.

6 Նույն տեղում, հ. 7, էջ 361; Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Վ. Ի. Լենին, *Կրոնի մասին, Երևան, 1977, էջ 164։*

7 ابوحيان التوحيدى، الامتاع والمؤانسة، ط مصر، ١٩٥٣، ج ٦، ص ٣-٤

2. Ибрагим, Ахмад. Ат-тарбия ва-т-та'лим. Бейрут, 1957. С. 12.
3. Хадид Тамир, Мактабат ихван ас-сафа ва-халлан ал-вафа, Бейрут, 1957, с. 12.
4. Ат-Тантави Джавхари. Ал-Джавахир фи тафсир ал-Коран ал-карим, т. 1, с. 157, Каир, 1957.
5. Ибрагим, Ахмад. Ат-тарбия ва-т-та'лим, с. 12.
6. Ат-Тантави Джавхари. Ал-Джавахир фи тафсир ал-Коран ал-карим, т. 1, с. 157, Каир, 1957.
7. Ибрагим, Ахмад. Ат-тарбия ва-т-та'лим, с. 12.
8. Ат-Тантави Джавхари. Ал-Джавахир фи тафсир ал-Коран ал-карим, т. 1, с. 157, Каир, 1957.
9. Ибрагим, Ахмад. Ат-тарбия ва-т-та'лим, с. 12.
10. Ат-Тантави Джавхари. Ал-Джавахир фи тафсир ал-Коран ал-карим, т. 1, с. 157, Каир, 1957.
11. Ибрагим, Ахмад. Ат-тарбия ва-т-та'лим, с. 12.
12. Ат-Тантави Джавхари. Ал-Джавахир фи тафсир ал-Коран ал-карим, т. 1, с. 157, Каир, 1957.
13. Ибрагим, Ахмад. Ат-тарбия ва-т-та'лим, с. 12.
14. Ат-Тантави Джавхари. Ал-Джавахир фи тафсир ал-Коран ал-карим, т. 1, с. 157, Каир, 1957.
15. Ибрагим, Ахмад. Ат-тарбия ва-т-та'лим, с. 12.
16. Ат-Тантави Джавхари. Ал-Джавахир фи тафсир ал-Коран ал-карим, т. 1, с. 157, Каир, 1957.
17. Ибрагим, Ахмад. Ат-тарбия ва-т-та'лим, с. 12.
18. Ат-Тантави Джавхари. Ал-Джавахир фи тафсир ал-Коран ал-карим, т. 1, с. 157, Каир, 1957.
19. Ат-Тантави Джавхари. Ал-Джавахир фи тафсир ал-Коран ал-карим, т. 1, с. 157, Каир, 1957.
20. Ат-Тантави Джавхари. Ал-Джавахир фи тафсир ал-Коран ал-карим, т. 1, с. 157, Каир, 1957.
21. Ат-Тантави Джавхари. Ал-Джавахир фи тафсир ал-Коран ал-карим, т. 1, с. 157, Каир, 1957.
22. Ат-Тантави Джавхари. Ал-Джавахир фи тафсир ал-Коран ал-карим, т. 1, с. 157, Каир, 1957.
23. Ат-Тантави Джавхари. Ал-Джавахир фи тафсир ал-Коран ал-карим, т. 1, с. 157, Каир, 1957.
24. Ат-Тантави Джавхари. Ал-Джавахир фи тафсир ал-Коран ал-карим, т. 1, с. 157, Каир, 1957.
25. Ат-Тантави Джавхари. Ал-Джавахир фи тафсир ал-Коран ал-карим, т. 1, с. 157, Каир, 1957.
26. Философская энциклопедия, т. 2, с. 398.
27. Ат-Тантави Джавхари. Ал-Джавахир фи тафсир ал-Коран ал-карим, т. 1, с. 157, Каир, 1957.
28. Исмаил Гуна. Ат-тарбия ал-исламийа фи-л-асрайн, Бейрут, 1960, с. 45, 198.
29. Ат-Тантави Джавхари. Ал-Джавахир фи тафсир ал-Коран ал-карим, т. 1, с. 157, Каир, 1957.
30. Ат-Тантави Джавхари. Ал-Джавахир фи тафсир ал-Коран ал-карим, т. 1, с. 157, Каир, 1957.
31. Ат-Тантави Джавхари. Ал-Джавахир фи тафсир ал-Коран ал-карим, т. 1, с. 157, Каир, 1957.
32. Ат-Тантави Джавхари. Ал-Джавахир фи тафсир ал-Коран ал-карим, т. 1, с. 157, Каир, 1957.
33. Ат-Тантави Джавхари. Ал-Джавахир фи тафсир ал-Коран ал-карим, т. 1, с. 157, Каир, 1957.



Ռ. Ա. ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

ՕՍՄԱՆԻԶՄԻ ԴՈԿՏՐԻՆԱՆ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ (1908—1916 ԹԹ.)

Ազգային հարցում երիտթուրքական կուսակցության հիմնական գաղափարական քաղաքական կոնցեպցիան՝ օսմանիզմի (osmanlılık) դոկտրինան, մինչև օրս ուսումնասիրվել է գլխավորապես հրապարակախոսական բնույթ ունեցող սկզբնաղբյուրների հիմքի վրա։ Միևն հոդվածում որպես օսմանիզմի պատմության սկզբնաղբյուր գիտական շրջանառության մեջ են մտցվում «Միություն և առաջադիմություն» կուսակցության փաստաթղթերը։

Մեր կողմից օգտագործված փաստաթղթերը բաժանվում են երկու խմբի։ Առաջին խումբը կազմում են կոմիտեի քաղաքական ծրագրերը, որոնք ընդունվել են իթթիհադականների 1908 և 1913 թթ. համագումարներում և փոփոխություններ ենթարկվել ու լրացվել 1911 և 1916 թթ. համագումարներում, ինչպես նաև 1909 թ. և 1913 թ. ընդունված ու 1911 և 1916 թթ. մասամբ փոփոխված և լրացված կուսակցական կանոնադրությունները։ Այս փաստաթղթերը հրատարակել է Թուրք պատմաբան Թ. Զ. Թունայան[1]։ Նրանց ուսումնասիրությունը թույլ տվեց բացահայտել այն կոնկրետ ձևերը, որոնցում իրենց մարմնավորումն էին գտնում օսմանիզմի տեսական դրույթները նրա՝ քաղաքական կոնցեպցիայի փոխակերպման ընթացքում։

Հոդվածում օգտագործված փաստաթղթերի մյուս խումբը «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտկոմի շրջաբերական նամակներն են վիլայեթների բաժանմունքներին, որոնցում պարզաբանվում են ներքին քաղաքականության սկզբունքային հարցերը, տրվում է նրա (ներքին քաղաքականության) տեսական հիմնավորումը։ Դրանք հրատարակվել են Ք. Ն. Դուրուի կողմից, որը ժամանակին երիտթուրքական կուսակցության անդամ է եղել[2]։ Այդ փաստաթղթերը, որ ցայսօր դուրս են մնացել մասնագետների տեսադաշտից, եզակի



հպատակներին, անկախ նրանց աղգությունից և դավանանքից հռչակեցին օսմանցիներ (osmanlılar) (կետ. 9 և 20)։ Որպես հոմանիշ ծրագրում օգտագործվում էր նաև «օսմանյան հպատակներ» արտահայտությունը (կետ 17)։ Օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդները ստանում էին «տարրեր» (unsurlar), այսինքն՝ «օսմանյան ազդի տարրեր» անվանումը։ Այսպիսով, ենթակա ժողովուրդները, որոնք ղրկված էին նույնիսկ առանձին էթնոնիմով նշվելու իրավունքից, ծրագրի հեղինակների կամքով մտցվում էին այսպես կոչված «օսմանյան ազգի» մեջ որպես նրա բաղկացուցիչ մասեր։

Բոլոր օսմանցիները, այդ թվում նաև ոչ մահմեդականները հռչակվում էին ազատ և հավասար օրենքի առջև, և առանց որևէ խտրականության կարող էին ընդունվել պետական ծառայության (կետ 9)։ Մրագրում մտցվել էր նաև կետ ոչ մահմեդականներին բանակ ընդգրկելու մասին (կետ 9)։ Այդ դրույթներով ծրագրի հեղինակները ձգտում էին ոչ թուրք ժողովուրդների մոտ ստեղծել այսպես կոչված «օսմանյան ազգի» շրջանակներում հավասարության և ազատության» հասնելու հնարավորության պատրանք, դրանով իսկ օժանդակելով ազատագրական գաղափարախոսությունից նրանց հեռացմանը ու օսմանյան տիրապետության դեմ պայքարի դադարեցմանը։

Օսմանիզմի կարևոր մասն էին կազմում ոչ թուրք ժողովուրդների հրեխաներին «օսմանյան հայրենիքին» հավատարմության ոգով դաստիարակելու մասին դրույթները։ Մեր կարծիքով դա այն՝ պատճառներից էր, որ ստիպեց կոնգրեսին մեծ ուշադրություն դարձնել կրթության հարցերին, որոնք արտացոլվեցին նաև համագումարի կողմից ընդունված որոշումներում։ Այսպես, «Շուրա-ի ումմեթ» թերթում հրապարակված որոշումների 13-րդ կետում հաստատվում էր, որ «հասարակական նախաձեռնություններից ամենակարևորը լուսավորության տարածումն ու զարգացումն է»[9]։

Լուսավորության բնագավառում քաղաքականության գլխավոր նպատակ էր հռչակվում «Օսմանյան հպատակների դաստիարակումը միասնության և կարգի (Intizam) ոգով (կետ 17)»[10]։ Այդ նպատակին հասնելու միջոցներ են՝ պետական վերահսկողության սահմանում կայսրության բոլոր դպրոցների, այդ թվում նաև ոչ թուրք ժողովուրդների դպրոցների նկատմամբ, պետական, այսպես կոչված «խառը դպրոցների» ստեղծում՝ այսինքն դպրոցներ, որոնցում մահմեդականների և ոչ մահմեդականների երեխաները կսովորեին համատեղ, պետական դպրոցներում թուրքական լեզվով պարտադիր ուսուցում (կետ 17)։

Բոլոր այս դրույթները փոխառված են ժողովրդական կրթության մասին օրենքից, որն ընդունվել էր 1869 թ. կայսրության մի խումբ աստիճանավորների՝ «ձուլման» կոնցեպցիայի կողմնակիցների ջանքերով[11]։ Սակայն երիտթուրքերը մտցրին հետևյալ փոփոխությունը. 1869 թ. օրենքով նախատեսվում էր այդ բնակավայրերում, որտեղ ոչ մահմեդականները մեծամասնություն էին կազմում, նրանց երեխաների համար ստեղծել պետական տարրական դպրոցներ[12]։ Երիտթուրքերի ծրագրում այդ մասին ոչինչ չի ասվում, միայն ընդգծվում է, որ տարրական դպրոցներում թուրքերեն լեզուն հանդիսանում է պարտադիր առարկա (կետ 17)։ Դրանով իսկ, երիտթուրքերի, որպես կառավարող կուսակցության գործունեության արդեն սկզբնական շրջանում պարզ դարձավ, որ օսմանիզմի նրանց մեկնաբանումն ավելի հետադիմական է, քան Թանզիմաթի ժամանակաշրջանի գործիչներինը։

Օսմանիզմի կարևոր դրույթներից էր կայսրության ժողովուրդների շրջանում թուրքերենի՝ որպես «օսմանյան ազգի» միասնական լեզվի տարածման գաղափարը։ Այդ նպատակին հասնելում պետք է ծառայեին թուրքերենը որպես պետական լեզու պահպանելու, ինչպես նաև ողջ պաշտոնական գրագրությունը, հետևաբար նաև դատավարությունը թուրքերենով վարելու, դպրոցներում ուսուցումը թուրքերենով տանելու մասին ծրագրի կետերը։

Ծրագրի մեջ կետ էր մտցվել 1876 թ. սահմանադրության 108-րդ հոդվածի ճշգրիտ պահպանման հիման վրա գավառային իշխանությունների իրավասությունների ընդլայնման մասին (կետ 5)։ Հայտնի է, որ երիտթուրքերը այսպես կոչված օսմանիզմի կողմնակիցներն էին։ Սակայն տակտիկական նկատառումներից ելնելով նրանք կոմպրոմիսի գնացին ոչ թուրք ժողովուրդների կուսակցությունների ու կազմակերպությունների և արքայազն Սաբահեդդինի խմբավորման հետ, որոնք պահանջում էին վարչական իշխանության ապակենտրոնացում։ Այդ փոխզիջման արդյունքը եղավ ծրագրի 5-րդ կետը[13]։

Ի.Թ.Ի.հադականների 2-րդ կոնգրեսում (1909 թ.) կուսակցական ծրագիրը որոշ փոփոխությունների ենթարկվեց, չնայած և որոշվեց ընդհանուր առմամբ այն թողնել նույնը[14]։ Մասնավորապես, ոչ թուրք ժողովուրդների ներկայացուցիչների քննադատության ազդեցության տակ ծրագրում կետ մտցվեց այն մասին, որ առաջին աստիճանի տարրական դպրոցներում «ուսուցման լեզու պետք է լինի այս կամ այն ժողովրդի լեզուն» (կետ 10)։ Այդ զիջումը բացատրվում է նրանով, որ 1909 թ. ապրիլի 13-ի (մարտի 31-ի) հետադիմական խռովության

ճնշումից հետո «Երիտթուրքերը ազգային փոքրամասնությունների շրջանում իրենց հեղինակությունն ամրապնդելու նպատակով որոշ փոխզիջման գնացին նրանց հետ»[15]։

Նույն կոնգրեսում հաստատվեց «Միություն և առաջադիմություն» կոմիտեի նոր քին կանոնադրությունը։ Օսմանիզմի հետ կապված հարցերը նրանում չէին շոշափվում[16]։

1908—1909 թթ. երիտթուրքերի ծրագրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իշխանության գլուխ անցնելուց հետո նրանք, հենվելով Թանզիմաթի գործիչների և XIX դ. 60—70-ական թթ. սահմանադրական շարժման առաջնորդների կոնցեպցիաների վրա, մշակեցին Օսմանյան կայսրության տարասեռ բնակչության օսմանացման ծրագիր։

Այդ նպատակին հասնելու միջոցներն էին.

1. «Բոլոր օսմանցիների հավասարության և եղբայրության, «օսմանյան ազգի» (որի մեջ «տարրերի» իրավունքով մտնում էին ոչ թուրք ժողովուրդները) «օսմանյան հայրենիքին» հավատարմության և այլ գաղափարների լայն պրոպագանդան։

2. «Օսմանյան հայրենիքին» հավատարմության ոգով ոչ թուրք ժողովուրդների նպատակաուղղված «դաստիարակությունը» կառավարության հսկողության տակ գտնվող ժողովրդական կրթության հաստատությունների համակարգի միջոցով։

3. Թուրքերենի բռնի տարածումը որպես «օսմանյան ազգի» միասնական լեզվի։

Դա փաստորեն երկրի ոչ թուրք ժողովուրդների թուրքացման ծրագիրն էր։

Զարմանալի չէ, որ այդ ծրագրի իրականացումը զգալի դժվարությունների հանդիպեց, որոնք պայմանավորված էին այդ պլաններին արաբների, հույների, հայերի և այլ ճնշված ժողովուրդների դիմադրությամբ։ Երիտթուրքերի առաջնորդները, հավանաբար, իրենց հաշիվ էին տալիս, որ «օսմանացման» քաղաքականությունը ձախողվում է։ Հոկտեմբերյան հեղափոխության 2-րդ տարեդարձի կապակցությամբ երիտթուրքերի խոսափող «Թանին» թերթը հրապարակեց «Միություն և առաջադիմություն օսմանյան ընկերության» կոչը ազգին, որտեղ փաստորեն ընդունվում էր, որ տարբեր համայնքների միջև միասնության ստեղծման ջանքերը անհաջողության մատնվեցին[17]։ Այդ ստիպված էր խոստովանել նաև Թալեաթ-փաշան 1910 թ. օգոստոսին

երիտթուրքերի փակ խորհրդակցության մասնակիցների առջև իր արտասանած ճառում[18]։

Դրա հետ մեկտեղ երիտթուրքերը դեռևս չէին հրաժարվում 1908 թ. մշակված օսմանացման քաղաքականությունից։ Վերը հիշատակված կռչում հայտարարվում էր, որ միասնության ստեղծման ուղղությամբ ջանքերը կշարունակվեն[19]։

Օսմանացման քաղաքականության հետ կապված հարցերը հիմնականներից մեկն էին 1910 թ. կայացած կուսակցության հերթական կոնգրեսում։ Կոնգրեսը հաստատեց «Իթթիհադի» նվիրվածությունը օսմանիզմին։ Նշվեց, որ երիտթուրքերը ձգտում են կայսրության ժողովուրդների ոչ թե միաձուլմանը, այլ միավորմանը[20]։ Հավանաբար այդ ճշտումն արվել էր Զիա Գյոքալփի հայացքների ազդեցության ներքո։ Բոլոր դեպքերում, ինչպես ցույց կտրվի ներքևում, այդ դրույթը հիմնականներից մեկն էր օսմանիզմի կոնցեպցիայում, որը ձևակերպվել էր 1911 թ. նոյեմբերի 14—15-ի վիլայեթական կազմակերպություններին ուղղված իթթիհադականների Կենտկոմի շրջաբերական նամակում։ Այդ փաստաթղթի հեղինակ է համարվում Զիա Գյոքալփը։

Շարունակելով տակտիկական զիջումների քաղաքականությունը, համագումարը հայտարարեց, որ յուրաքանչյուր ժողովուրդ իրավունք ունի օգտվելու իր ազգային լեզվից[21]։ Այդ հայտարարությունը հակասում էր օսմանիզմի վերևում հիշատակված ասիմիլյատորական միտումներին և նպատակ ուներ քողարկելու երիտթուրքերի ազգային քաղաքականության իրական նպատակասուղվածությունը։

Կոնգրեսի աշխատանքների ավարտից հետո ընկած ժամանակաշրջանը նշանավորվեց իթթիհադականների շարքերում անընդհատ աճող ճգնաժամով։ Երկրում երիտթուրքերի ռեժիմից դժգոհության ուժեղացման, ազգային հարցի սրման պայմաններում երիտթուրքական վերնախավի շրջանում սկսեցին ձևավորվել տարբեր խմբավորումներ, որոնք տարաձայնություններ ունեին, մասնավորապես, ենթակա ժողովուրդներին կայսրության կազմում պահելու առավել օպտիմալ միջոցների հարցում[22]։ Այսպես, 1911 թ. գարնանը «Միություն և առաջադիմություն» կուսակցության պառլամենտական ֆրակցիայի անդամները կազմակերպեցին այլախոհների խմբավորումը, որն սկսեց կոչվել «Հիզբ-ի Ջեդիդ» (Նոր կուսակցություն)։ Այս խմբավորման կողմից առաջ քաշված ծրագրում, որը բաղկացած էր 10 կետերից, ընդգծվում էր, որ անհրաժեշտ է այսուհետև ևս վարել միավորման քաղաքակա-

նութիւն, սակայն «էլեմենտներին» միավորման կոնկրետ միջոցները չէին նշվում[23]։

Օսմանացման նոր ուղիներ առավել ինտենսիվ փնտրում էր կուսակցության մեջ ղեկավար դիրքեր զավթած Թալեաթի խմբավորումը, որի գաղափարախոսը նրա լիակատար վստահությունը վայելող Զիա-րեյն էր (Գյոքալփ)։ Օսմանիզմի ուսմունքի նոր մեկնաբանման ուրվագծերը սկսեցին ավելի պարզորոշ նշմարվել արդեն նույն 1911 թ.։

Այս առումով հետաքրքիր փաստաթուղթ է երիտթուրքերի Կենտկոմի 1911 թ. նոյեմբերի 14—15-ի շրջաբերական նամակը[24]։ Նրանում քննադատության են ենթարկվում «Ազատություն և համաձայնություն» (Հյուրիեթ վե Իթիլյաֆ) կուսակցության անվանման հիմքում դրված գաղափարները, որի կապակցությամբ տրվում է օսմանիզմի նոր բնութագրումը և հիմնավորում է նրա նոր՝ «իթթիհադական» մեկնաբանումը։ Հեղինակը (հավանաբար, դա Զիա Գյոքալփն է) գրում է, որ սահմանադրության վերականգնումից հետո աստիճանաբար բացահայտվեցին օսմանիզմի տարբեր մեկնաբանություններ։ Այդ հարցում խառնաշփոթությունից խուսափելու համար նա առաջարկում է տարբերել օսմանիզմի երկու մակարդակ. սոցիալական և քաղաքական։ Սոցիալական օսմանիզմը միավորում է հասարակության առանձին անդամներին, իսկ քաղաքականը՝ առանձին տարրերին, այսինքն ժողովուրդներին։ «Միաձուլման»[25] և «համաձայնության»[26] կոնցեպցիաների կողմնակիցները խառնում էին այդ մակարդակները։ Միաձուլման կողմնակիցները պնդում էին, որ օսմանիզմը միավորում է առանձին անհատների, իսկ «համաձայնության» կողմնակիցները գտնում էին, որ այն միավորում է միայն առանձին ժողովուրդներին։ Այս երկու տեսակետներն էլ սխալ են, քանի որ հաշվի չեն առնում այնպիսի երևույթներ, ինչպիսիք են «լեզուն, պատմությունը, գրականությունը, դավանանքը»։ Սոցիալական տեսանկյունից այդ երևույթները արժանի են հարգանքի։ Սակայն քաղաքական տեսանկյունից «օսմանյան ազգի տարրերը, ոչ մի առանձին իրավունքներ չունեն։ Ընդունել այդպիսի իրավունքներ՝ նշանակում է ծառայել «օսմանյան միասնության» ոչնչացմանը։

Միակ ճշմարիտը՝ «իթթիհադի» (միություն) տեսակետն է, համաձայն որի «օսմանյան ազգի տարրերը» «սոցիալական օսմանիզմի» տեսանկյունից լեզվի, գրականության և այլ բնագավառներում տարբերության իրավունք ունեն, սակայն, «քաղաքական օսմանիզմի» տեսանկյունից նրանք ոչ մի առանձին իրավունքով օժտված չեն։

Առաջինը, որ աչքի է զարնում վերևում շարադրված կոնցեպցիայի վերլուծության ժամանակ, կայսրության ժողովուրդների լրիվ օսմանացման գաղափարից հրաժարումն է, գաղափար, որի կենսագործման համար երիտթուրքերն այդքան ջանքեր թափեցին և, որը նրանց առաջին ծրագրում արձանագրվել էր որպես գլխավոր նպատակ։

Օսմանիզմի այդ նոր մեկնաբանման մշակման վրա ամենայն հավանականությամբ վճռական ազդեցություն թողեց «օսմանացման» քաղաքականության անհաջողությունը, որը վճռական դիմադրության հանդիպեց ոչ թուրք ժողովուրդների կողմից։ Ոչ թուրք ժողովուրդների լիակատար «օսմանացման» անհնարինության ընդունումը շրջադարձային կետ էր ազգային հարցում երիտթուրքերի քաղաքականության մեջ։ Մի կողմից նրանք շարունակում էին քարոզել բոլոր օսմանցիների եղբայրության և միասնության գաղափարը և իներցիայով շարունակում էին «օսմանացման» քաղաքականությունը, մյուս կողմից գիմում զնաչափարաքաղաքական ուրիշ ուսմունքների՝ պանիսլամիզմին և պանթուրքիզմին[27]։

Նոր քաղաքականության մշակման հարցերը քննարկվեցին երիտթուրքերի 4-րդ համագումարում (1911 թ.)։ Ցավոք, այդ համագումարի որոշումները դեռևս լիովին հրատարակված չեն։ Գրականության մեջ բավական տարածված տեսակետի համաձայն, համագումարի գաղտնի որոշումներով նախատեսվում էր սկսել շրջադարձը օսմանիզմից դեպի պանիսլամիզմի և պանթուրքիզմի դոկտրինաները[28]։

Կոնգրեսում վերանայվեց և զգալիորեն լրացվեց երիտթուրքերի կուսակցության կանոնադրությունը[29]։ Նրա մեջ մտցվեցին մի շարք դրույթներ օսմանիզմի ոգով, որոնք սակայն խիստ կերպով տարբերվում էին 1908 թ. ընդունված կուսակցական ծրագրի համապատասխան կետերից։

Այսպես, երիտթուրքերը պարտավորվեցին «խոչընդոտել... նրանց նպատակների իրականացմանը, ովքեր ձգտում են ազգային և կրոնական տարբերությունները օգտագործելով, ինչպես նաև այլ միջոցներով երկպառակության և խռովության սերմանել բոլոր օսմանցիների շրջանում»[30]։ Այսպիսով, «օսմանցիների միասնության» մասին կոչերը, հավասարության վերաբերյալ դրույթները 1911 թ. կանոնադրության մեջ փոխարինվեցին «անջատողականների» հասցեին սպառնալիքներով։ Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ կանոնադրությունը նախատեսված չէր հրապարակման համար։ Միևնույն ժամանակ

տարրեր տեսակի «կոչերում», «ժողովրդին ուղղված դիմումներում», որոնց հաճախ դիմում էին երիտթուրքերը, հատկապես տրիպոլիտանական 1911—1912 թթ. և բալկանյան 1912—1913 թթ. պատերազմների կապակցությամբ, շարունակվում էին պրոպագանդվել «Օսմանյան հայրենասիրության» գաղափարները[31]։

Այդ առումով բնորոշ են տրիպոլիտանական պատերազմի կապակցությամբ «Իթթիհադի» կոչերը[32]։

1911—1913 թթ. շարունակում էին ուժեղանալ վերոհիշյալ միտումները։ 1913 թ. կեսին «Իթթիհադի» ղեկավարությունը ազգային հարցում ձևակերպեց նոր քաղաքականության հիմքերը[33]։ Դրանք սկսեցին աստիճանաբար դրսևորվել կուսակցական փաստաթղթերում։

1913 թ. համաժողովում ընդունված երիտթուրքերի ծրագրի և կանոնադրության տեքստերի վերլուծությունը վկայում է օսմանիզմից նրանց աստիճանական հրաժարման մասին[34]։ Կուսակցության ծրագրի 42-րդ պարագրաֆում, որը նվիրված էր լուսավորության հարցերին, կարելի է գտնել «օսմանիստական» դրույթ այն մասին, որ երկրում լուսավորության տարածման նպատակն է «օսմանյան ազգի միասնության» ձեռքբերումը։

Նույն եզրակացությանը կարելի է հանգել նաև «Միության և առաջադիմության» կուսակցության շրջաբերական նամակի ուսումնասիրության հիման վրա, որը վերնագրված է այսպես. «Ընկերության («Միության և առաջադիմության»—Ռ. Ս.) կողմից պաշտոնական նախաձեռնությունների ղեկավարման ուղիների մասին»[35] և թվագրվում է մոտավորապես 1913—14 թթ.։ Այդ փաստաթղթում տագնապ է արտահայտվում այն մասին, որ սահմանադրական իրավունքներ և ազատություններ տրամադրելուց ավելի լավ կարողացան օգտվել ոչ մահմեդական ժողովուրդները, իրենց «ավազակային բանդաներըն» վերածելով քաղաքական կուսակցություններ։ «Պետության մեջ, որտեղ պետական կրոնը իսլամն է, վտանգ առաջացավ, որ կառավարման մեքենայի ղեկի մոտ կգան ոչ մահմեդական ժողովուրդները»[36]։ Այդ պատճառով, «Իթթիհադի» առջև կանգնած են հետևյալ խնդիրները՝ պառլամենտի ընտրություններն անցկացնել այնպես, որ նրանք պետության շահերին վնաս չհասցնեն, այսինքն ոչ մահմեդական կուսակցություններին թույլ չտալ մեծամասնության հասնել պառլամենտում և հետո ընտրված դեպուտատների մեծամասնությանը համախմբել իրենց ծրագրի շուրջ։

Այսպիսով, այս փաստաթղթում փաստորեն հռչակվում է, «բոլոր օսմանցիների միասնության» հասնելու ինդրից հրաժարումը։ Կուսակցության առջև նպատակ էր դրվում պաշտպանել կայսրության մահմեդականների «շահերը»։ Օսմանիզմի այսպիսի ըմբռնումը կարելի է անվանել «մահմեդական օսմանիզմ»[37]։

Մյուս երկու շրջաբերական նամակներում, որոնք թվագրվում են մոտավորապես 1914—1915 թթ., արդեն «տեսականորեն» հիմնավորում է այնպիսի քաղաքականության իրականացման անհրաժեշտությունը, որն ուղղված էր «մահմեդականների և թուրքերի շահերի պաշտպանությանը» ի վնաս ոչ մահմեդական ժողովուրդների շահերի[38]։ Դրանցից մեկում քննադատվում էր «միաձուլման» քաղաքականությունը, որն անց էր կացվում ոչ մահմեդականների նկատմամբ Թանզիմաթի ժամանակաշրջանում։ Հեղինակի կարծիքով, այն հանգեցրեց երկրում իսլամի ազդեցության ոլորտի նեղացմանը։ Իսլամի դերի վերականգնումը հնարավոր է «մահմեդական օսմանիզմի» քաղաքականության իրականացմամբ, ըստ որի մահմեդականները պետք է մնային տիրապետող տարր։ Միաժամանակ անհրաժեշտ է հասնել բոլոր մահմեդականների միավորմանը։

Այդ դրույթներն իրենց արտացոլումն գտան համագումարի կողմից կուսակցության ծրագրում կատարված փոփոխություններում[39]։ Այսպես, 1-ին պարագրաֆում նշվում էր այն դերը, որ պետք է խաղար շեյխ-ուլ իսլամը ռեֆորմների իրականացման գործում, «իսլամության» ոգով դրույթներ մտցվեցին նաև կուսակցության ծրագրի մյուս պարագրաֆներում։ Պատահական չէ, որ Զիա Գյոքալփը «Իսլամ» ամսագրում, գնահատելով կոնգրեսի արդյունքները, գոհունակությամբ նշում էր իսլամի ազդեցության ուժեղացումը երիտթուրքական կուսակցության քաղաքականության վրա[40]։

Այսպիսով, երիտթուրքերի կուսակցական փաստաթղթերի ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնելու օսմանիզմի էվոլուցիայի ժամանակաշրջանները երիտթուրքերի իշխանության տարիներին։ 1908—1909 թթ. օսմանիզմը դիտվում էր որպես գաղափարա-քաղաքական ուսմունք, որի կենսագործումը հնարավորություն կտար մի կողմից հասնել ազգային-ազատագրական պայքարի ոչ մահմեդական ժողովուրդների հրաժարմանը, մյուս կողմից պայմաններ կստեղծեր նրանց աստիճանական թուրքացման համար։ Սակայն, արդեն 1910 թ. նշմարվեց օսմանիզմի, Թանզիմաթի գործիչներից և «նոր օսմաններից» սահմա-

նադրական շարժումից ժառանգված, այդպիսի, կարելի է ասել, «ավանդական» ըմբռնման ճգնաժամը։ Սկսած 1911 թ. նրանում ուժեղանում է զուտ ռեպրեսիվ կողմը։

1913 թ. երիտթուրքերի կուսակցական փաստաթղթերում հանդես է գալիս օսմանիզմի նոր տարբերակ, որը կարելի է անվանել «մահմադական օսմանիզմ»։

Р. А. САФРАСТЯН

ДОКТРИНА ОСМАНИЗМА В ПАРТИЙНЫХ ДОКУМЕНТАХ МЛАДОТУРОК (1908—1916)

Резюме

В статье в качестве источников по истории османизма—основной идейно-политической доктрины младотурок в национальном вопросе—использованы программы, уставы, а также циркулярные письма ЦК партии «Единение и прогресс» вилайетским отделениям, опубликованные турецкими историками Т. З. Тунайя и К. Н. Дуру. На основе изучения этих документов выделяются основные этапы в истории эволюции османизма в период правления младотурок. В 1908—1909 гг. османизм рассматривался лидерами иттихадистов в качестве доктрины, проведение в жизнь которой дало бы возможность с одной стороны добиться отказа угнетенных народов Османской империи от национально-освободительной борьбы, а с другой—создало бы условия для их постепенной туркизации. В 1910 г. обозначился кризис такого «традиционного», унаследованного от «новых османов», понимания османизма, обусловленный все более усиливающимся сопротивлением нетурецких народов политике османизации. Начиная с 1911 г. в османизме нарастает чисто репрессивная сторона. Примерно к середине 1913 г. руководство партии сформулировало основы новой трактовки доктрины османизма. Анализ партийных документов выявляет новое понимание идеи османизации. Отныне во главу угла ставится достижение «единства» между «мусульманскими элементами османской нации».

1 T. Z. Tunaya, Türkiyede siyasi partiler, 1859—1952. Ist., 1952.
2 K. N. Duru, Ziya Gökalp. 2. b., Ist., 1965.

Շրջաբերական համակների՝ սոցիոլոգ և բանասեղծ Զիյա Գյոքալփին նվիրված

գրքում հրատարակվելու պատճառն այն է, որ Ք. Ն. Դուրուն նրան է համարում այդ փաստաթղթերի հեղինակը։ Մենք հիմք չունենք չհամաձայնվելու պատմաբանի այս պնդման հետ։ Ինչպես հայտնի է, Զիյա Գյոքալփը սկսած 1909 թ. ընտրվել է երիտթուրքերի կենտկոմի անդամ՝ լինելով ըստ էության կուսակցության գաղափարախոսը։ Ի թիվս մյուս հարցերի Կենտկոմում նա զբաղվում էր նաև «գաղտնի կազմակերպություններին» և «ազգային փոքրամասնություններին» հարցերով (տե՛ս E. B. Şapolyo, Ziya Gökalp, „Ittihat ve Terakqi" ve Meşrutiyet tarihi. Ist., 1943, էջ 108).

3 Ջուտ պատահականություն է, որ Ք. Ն. Դուրուի կողմից հրապարակված փաստաթղթերը պահպանվել են։ Դրանցից երկուսը պահվում են նրա անձնական արխիվում (տե՛ս այդ մասին K. N. Duru, Ittihat ve Terakki hatiralarim Ist., 1957, s. 49; K. N. Duru, Ziya Gökalp..., s. 42)։ Իսկ մյուս երկուսը հանձնել է Ենթա Մեհդհատ Եյուքքյուն (Տե՛ս K. N. Duru. Ziya Gökalp. ., s. 52.). Միհդհատ Եյուքքյուն Բյոդան 1912, 1916 և 1917 ԹԹ. կոնգրեսներում ընտրվել է երիտթուրքական կոմիտեության գլխավոր քարտուղար (տե՛ս T. Z. Tunaya, Türkiyede..., s. 199):

4 Մանրամասն տե՛ս Ю. А. Петросян, Младотурецкое движение. М., 1971; Его же, Турецкая публицистика эпохи реформ в Османской империи, М., 1985.

5 1907 թ. սեպտեմբերից, երբ ստեղծվեց «Միության և առաջադիմության օսմանյան ընկերությունը», երիտթուրք սկսեցին անվանել միայն այդ կազմակերպության անդամներին։ Հետագայում այդ ընկերությունը դարձավ քաղաքական կուսակցություն և անվանվեց «Միություն և առաջադիմություն կուսակցություն»։

6 Ցավոք, մենք ձեռքի տակ չունենք այդ փաստաթղթի տեքստը, դրա մանրամասն շարադրանքը տե՛ս В. И. Шпильков, Младотурецкая революция 1908—1909 гг. М., 1977. с. 179—181.

7 Տեքստը տե՛ս T. Z. Tunaya, Türkiyede..., s. 208—210.

8 Այդ մասին տե՛ս АВПР, Ф. Политархив. д. 1031, 1908 г., лл. 14—15 об. Վ. Ի. Շպիլկովան նշում է, որ այդ միջումները վերաբերում էին բանվորական և գյուղացիական հարցերին։ Տե՛ս В. И. Шпилькова, Первый проект политической программы младотурок.--Народы Азии и Африки, 1973, № 4, с. 61—68:

9 Տե՛ս որոշումների տեքստում. T. Z. Tunaya, Türkiyede..., s. 208.

10 Ա. Սարրուն իր «Երիտասարդ Թուրքիան և հեղափոխությունը» գրքում հրատարակել է երիտթուրքերի 1908 թ. ծրագրի ֆրանսերեն թարգմանությունը, որը լայնորեն օգտագործվում է մասնագիտական գրականության մեջ։ Մեր կողմից բերված արտահայտությունը նա թարգմանել է հետևյալ կերպ՝ «Օսմանյան քաղաքացիների միատարրության և միատեսակության ոգով ուսուցում» (homogene et uniforme) տե՛ս. A. Sarrou, La Jeune-Turquie et la revolution. Paris-Nancy, 1912. s. 42.
Թվում է, որ մեր կողմից առաջարկվող թարգմանությունն ավելի մոտ էր թուրքերեն բնագրին։

11 Այդ մասին տե՛ս Р. А. Сафрастян, Доктрина османизма в политической жизни Османскон империи (50—70 гг. XIX в.). Ереван, 1985.

12 Տե՛ս սրբ. տեքստում Düstür, c. 2, 1289, s. 184.

13 Ինչպես գրում է Թ. Զ. Թունայան, «Ինկերությունը («Միասնություն և առաջադիմություն»—Ի. Ս.), ոչ մի պայմանով չհամաձայնվեց ապակենտրոնացման քաղաքականության հետ» (Տե՛ս T. Tunaya, Türkiyede..., s. 184).

14 Փոփոխված օրագրի տեքստը տե՛ս նույն տեղում, էջ 211—212։

15 В. И. Шпилькова, Младотурецкая революция..., с. 256—257.

16 Երիտթուրքերի առաջին կանոնադրության տեքստը տե՛ս T. Z. Tnaya, Türkiyede.., 210—211.

17 «Կոչից» բովանդակության չարադրանքը տե՛ս F. Ahmad, The Young Turqs Oxford, 1969, s. 84.

18 Իալեաթի ճառը առաջին անգամ հրատարակվել է ֆրանսերեն թարգմանությամբ՝ R. Pinon. L'Europe et la Jeune Tuiquie. Paris, 1911, 100—102.

19 F. Ahmad, The Young Turks..., p. 84.

20 Պինոնը, հենվելով Փարիզում հրատարակվող «Ժյոն Թյուրքիե» պարբերականի վրա, բերում է համագումարում քննարկված հարցերի ցուցակը (տե՛ս R. Pinon, L'Europe..., p. 99). Ցավոք, Թունայան հիշատակում է միայն այն որոշումները, որոնք վերաբերում էին ներկուսակցական կյանքին։ Տե՛ս T. Z. Tunay, Türkiyede..., s. 191.

21 R. Pinon, L'Europe... p. 99.

22 Г. З. Алиев, Турция в период правления младотурок (1908—1918). М., 1972. с. 207—209.

23 Այդ օրագիրը հրապարակել է Մ. Սալահէդդինը՝ M. Salaheddin, Bildiklerim El-Kahire, 1918, s. 153.

24 Տեքստը տե՛ս K. N. Duru, Ziya Gökalp..., s. 48—62.

25 Զիյան նրանց չարքին է դասում Թանզիմաթի գործիչներին։

26 Նրանց թվին էին պատկանում «Ազատություն և համաձայնություն կուսակցության կողմնակիցները։

27 Ս. Ղ. Սարգսյան, Պանիսլամիզմի և պանթուրքիզմի դոկտրինաները երիտթուրքերի ներքին քաղաքականությունում.—Արևելագիտության հարցեր, Երևան, 1983, № 1—2, էջ 5—19։

28 Տե՛ս, օրինակ Ջ. Կիրակոսյան, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք Ա, Երևան, 1982։

29 Կանոնադրության փոփոխված կետերի տեքստը տե՛ս T. Z. Tunaya, Türkiyede...» s 212—214.

30 Նույն տեղում, էջ 212։

31 Համագումարից հետո երիտթուրքերը հանդես եկան հայտարարություններով, որտեղ շարունակում էին օսմանիզմի պրոպագանդան, տե՛ս Ազատամարտ, 1911, № 709, 724։

32 T. Z. Tunaya, Türkiyede..., s. 191—192.

33 Y. H. Bayur, Türk Inkilaɔi Tarihi. C. 2, k. IV, Änk., s. 314.

34 Տեքստերը տե՛ս T. Z. Turnaya, Türkiyede..., s. 214—218, 218—225.

35 Տեքստը տե՛ս K. N. Duru, Ziya Gökalp..., s. 42—47.

36 Նույն տեղում, էջ 45։

37 *Այս տեղեկությունը առաջարկվել է Ֆերոզ Ահմադի կողմից տե՛ս* F. Ahmad, The Young Turks..., p. 136.

38 *Տեքստերը տե՛ս* K. N. Duru, Ziya Gökalp..., s. 53—62, 67—76.

39 *Փոփոխված կետերի տեքստը տե՛ս* T. Z. Tunaya, Türkiyede..., s. 225—226.

40 Ziya Gökalp, İttihad ve Terakki kongresi.—Ziya Gökalp. Makaleler, VIII, Ank., 1981, s. 60

Ա. Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՐՀԵՍՏՆԵՐԸ

Նոր Ջուղայի քաղաքական, հասարակական ու մշակութային կյանքը բազմաթիվ ուսումնասիրությունների առարկա է դարձել։ Այն քննարկվել է հայ-ռուսական, ռուս-իրանական կամ հայ-իրանական հարաբերությունների, առևտրական առնչությունների, մշակույթի զարգացման և այլ տեսանկյուններից։ Տեղի արհեստներին այս աշխատությունների մեջ անդրադարձել են այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել հարցադրումների բացահայտմանը։ Այնինչ, արհեստագործությունը Նոր Ջուղայի կյանքի ամենակարևոր բնագավառներից էր, որը հետաքրքիր է ոչ միայն իր բազմազանությամբ և ինքնատիպությամբ, այլև՝ արտադրանքի որոշակի իրերի համաշխարհային շուկայում ունեցած դերով։

XVII դ. առաջին տարիներին Սպահանի արվարձան դարձած Նոր-Ջուղայի բնակչությունը արտակարգ կենսունակությամբ սկսեց վերականգնել հին Ջուղայից ժառանգած իր կենցաղը, այն հարմարեցնելով հասարակական-քաղաքական կյանքի նոր պայմաններին։ Մի քանի տարիների ընթացքում Նոր Ջուղայում կառուցվեցին ապարանքներ, տներ, եկեղեցիներ։ Ըստ գաղթած վայրերի Նոր Ջուղան բաժանվեց թաղամասերի. ջուղայեցիների, թավրիզեցիների, երևանցիների և այլն։ Յուրաքանչյուր թաղամաս ուներ իր սոցիալական, ինչպես նաև կրոնական (լուսավորչական և կաթոլիկ) բաժանումները։ Դիմնվաճառներն ապրում էին Փոքր Մեյդան թաղում (կամ «Ղտրագեալ»), որի կենտրոնական փողոցն էլ կոչվում էր Շիրախանե։ Թավրիզեցիների թաղամասում ապրում էին ցորենավաճառները, կտավագործները, ոստայնակներն ու հյուսները։ Բրուտագործները կենտրոնացված էին Հակոբջանենց կամ «պրուտենց» թաղում։ Ջոչերն թաղում (սանգքրաշ—քարտաշ) ապրում էին քարհատները։ Թավրիզեցիների և Ջարսոն թա-



գրամատրան բանվորի կալվածը։ 1653—55 թթ. շահ Աբբաս II-ը Սահ-
մանագրում է Ղուկասին հետևյալ պայմանները. «Ես Ղուկաս Ջուղայեցի
իմ ժողովուրդս տանելով՝ գալիս եմ Սպահան և հաստատվում եմ
նրանց մեջ։ Ես Ղուկասս պարտավորվում եմ ամեն տարի վճարել
Սեֆի-Հոյ-Հուսեյնին[3] և Հ. Տեր-Հովսեփյանցին[3]։

Ղուկասի արհեստների մասին մենք ավելի շատ տեղեկություններ
ենք ստանում 1688 թ. Տեր-Հովսեփյանցի հիշատակարանից։ Ղուկասի
թոռնիկ Ոսկանը, որ ապրում էր Սպահանում, ուզում է վերադառնալ
հայրենի Ջուղա, բայց չունի անհրաժեշտ միջոցներ։ Նա դիմում է
Տեր-Հովսեփյանցին, որ նրան ուղարկում է Ջուղա։ Ոսկանը ուներ
մեծ ընտանիք։ Նրա կինը, որդիները, աղջիկները, փեսաները (մանու-
կասիրությամբ), որդիները, ամուսինները, հարսները, թոռները (մանու-
կասիրությամբ), ընդամենը 25 հոգի էին։ Ոսկանը ուներ նաև մեծ
գումարի չափով ապրանք։ Ճանապարհին նրանց թալանում են քրդե-
րը։ Ոսկանը հասնում է Ջուղա միայն 1688 թ. ամռանը։ Ոսկանի
ընտանիքի անդամների մեծ մասը մահանում է ճանապարհին։ Ոսկանի
մասին Տեր-Հովսեփյանցը գրում է, որ նա «ի ծերութիւն իւրոյ
ընկեցաւ ի տանջանս մահու»։ Ոսկանի թոռնիկ Ղուկասը ծնվել է
Սպահանում։ Նա ուներ 7 որդի և 2 դուստր։ Նրանցից մեկը՝ Ոսկանը,
ծնվել է 1688 թ. Ոսկանի որդի Ղուկասը ծնվել է 1730 թ.։ Ղուկասի
որդի Ոսկանը ծնվել է 1760 թ.։ Ոսկանի որդի Ղուկասը ծնվել է
1790 թ.։ Ղուկասի որդի Ոսկանը ծնվել է 1820 թ.։ Ոսկանի որդի
Ղուկասը ծնվել է 1850 թ.։ Ղուկասի որդի Ոսկանը ծնվել է 1880 թ.։
Ոսկանի որդի Ղուկասը ծնվել է 1910 թ.։ Ղուկասի որդի Ոսկանը
ծնվել է 1940 թ.։ Ոսկանի որդի Ղուկասը ծնվել է 1970 թ.։

Ղուկասի ընտանիքի մասին պահպանվել են նաև ուրիշ տեղեկու-
թյուններ։ Ղուկասի թոռնիկ Ոսկանը ուներ 7 որդի և 2 դուստր։ Նրանց-
ից մեկը՝ Ղուկասը, ծնվել է 1730 թ.։ Նրան էլ ասում էին Ոսկան։
Նա ուներ 7 որդի և 2 դուստր։ Նրանց մեջ ամենամեծը Ղուկասն էր։
Նա ծնվել է 1760 թ.։ Ղուկասի որդի Ոսկանը ծնվել է 1790 թ.։ Ոսկանի
որդի Ղուկասը ծնվել է 1820 թ.։ Ղուկասի որդի Ոսկանը ծնվել է
1850 թ.։ Ոսկանի որդի Ղուկասը ծնվել է 1880 թ.։ Ղուկասի որդի
Ոսկանը ծնվել է 1910 թ.։ Ոսկանի որդի Ղուկասը ծնվել է 1940 թ.։
Ղուկասի որդի Ոսկանը ծնվել է 1970 թ.։

Ղուկասի ընտանիքի վերջի մասին տեղեկություններ չկան։ Ենթա-
դրվում է, որ նա մեռել է Ջուղայում։ Ղուկասի ընտանիքի մասին
պահպանվել են նաև ուրիշ տեղեկություններ։ Ղուկասի թոռնիկ Ոսկանը
ուներ 7 որդի և 2 դուստր։ Նրանց մեջ ամենամեծը Ղուկասն էր։
Նա ծնվել է 1760 թ.։ Ղուկասի որդի Ոսկանը ծնվել է 1790 թ.։ Ոսկանի
որդի Ղուկասը ծնվել է 1820 թ.։ Ղուկասի որդի Ոսկանը ծնվել է
1850 թ.։ Ոսկանի որդի Ղուկասը ծնվել է 1880 թ.։ Ղուկասի որդի
Ոսկանը ծնվել է 1910 թ.։ Ոսկանի որդի Ղուկասը ծնվել է 1940 թ.։
Ղուկասի որդի Ոսկանը ծնվել է 1970 թ.։

Հայոց մեջ իմա՛ նոր չուրայոյ, ինչ Մաքսիմ պատասխանել է։ «Մեծին հասնի սահման մեր ոչին մեջ ինչ ասեք ամեն, որ-տեղ որ ուզեք, բարեկամ, ինչ ուզեք, ոսկի, ձի, ինչ ուզեք, ոսկեղէն, ծառայ, աղջիկ, ծառայութիւն, ամեն տեսակ ապրանք, ինչ որ ուզեք, ոսկեղէն, ձիեր, ինչ ուզեք, ոսկի

ցական այլ պաշտոնյաների նրանք խաբեբա էին անվանում։ Այնքան նշանակալից է դառնում այս աղանդի դերը հասարակական կյանքում, որ Խաչատուր Կեսարացին ստիպված է լինում 1642 թ. Հատուկ Սինոդ հրավիրել և աղանդի ղեկավար դերձակ Թումիկին խիստ դատապարտել։ Թումիկի գաղափարակիցն էր նաև Սև Պետրոսը[9]։ Հավանաբար հենց այս աղանդի ուսմունքի դեմ էր ուղղված Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի Հովսեփ Հարեմաթացու եկեղեցու նկարազարդումներում լուսավորչական եկեղեցու յոթ խորհուրդները պատկերող նկարների ընդգրկումը[10]։

Այս սուղ տեղեկություններին օգնության են գալիս նյութական մշակույթի բազմաթիվ օրինակներ, որոնք հնարավոր են դարձնում որոշակի պատկերացումներ ունենալ Նոր Ջուղայի արհեստների վերաբերյալ։

Նոր Ջուղան ուներ վանք, 24 եկեղեցի, ապարանքներ, արևելյան շինարարությանը բնորոշ տներ (դրսից հարթ ու սվաղված պատեր, ներսում բակ, ղեպի որը դուրս էին գալիս պատշգամբները, սենյակների դռներն ու լուսամուտները)։ Բակը փողոցի հետ էր կապվում կամարաձև միջանցքով և փայտյա դարպասով։

Նոր Ջուղայում զարգացած էր քարգործությունը։ Տեղում քարհանքեր չկային։ Քարը բերվում էր բավական հեռու գտնվող լեռներից։ Քարը տաշվում էր հմուտ վարպետների կողմից։ Քարից նորջուղայեցի վարպետները կամուրջներ են կառուցել Զայանդեռուդ գետի վրա՝ շահի հանգստյան փոքր սենյակներով (Ալավերդի խանի կամուրջը), կառուցել են եկեղեցիներ։ Քաղաքը հատուկ ճարտարապետ ուներ, որի օրավարձը 6 շահի էր[11]։ Քարից պատրաստում էին եկեղեցիների պատերի մեջ ագուցվող խաչքարեր կամ նվիրատվական սալիկներ, որոնք պարզ ձև ունեին և կրում էին իրանական արվեստի որոշակի ազդեցությունը. սլաքաձև վերին մաս, պարզ ծաղիկներ և այլն։ Այդպիսիները պահպանվել են սբ. Հովհաննեսի եկեղեցում (1610—1648 ԹԹ. պատրաստված), ավելի պարզ օրինակները սբ. Գևորգ եկեղեցու ավագ խորանի ճակատային մասում (1610 թ.)։ Միաժամանակ, շարունակելով հայկական միջնադարյան մշակույթում կարևորագույն բնագավառ կազմող խաչքարերի արվեստը, վարպետները ստեղծում են նոր կոմպոզիցիաներ, որոնք իրենց դեկորով բոլորովին այլ ոճական խումբ են կազմում։ Հին Ջուղայի խաչքարերի օրինակներով ստեղծված փոքրաչափ նմուշները այդ արվեստի վերջին արձագանքներն են։



ու Սպահանի նշանավոր Ալի Ղափու պալատի երաժշտական դահլիճը[13]ը ցուրաքանչյուր տունն ջրհոր ուներ, որը պատրաստում էին գործին հմուտ մարդիկ։ Տներն ունեին նաև իրենց սեփական հնձանները, կառասներն ու գինետները։ Ընդհանրապես, ամենաանհրաժեշտ արհեստներից էր բրուտագործությունը։ Բրուտագործական իրերի այնքան մեծ պահանջարկ կար, որ Նոր Ջուղայում այդ արհեստավորների համար Քաղամաս գոյություն ուներ։ Սվաղողները պատի սվաղի վրա նկարչական ձևավորումներ էին անում։

Նոր Ջուղայում զարգացած է եղել որմնանկարչությունը։ Վանքն ու եկեղեցիները նկարազարդվել են Հին և Նոր կտակարանի թեմաներով, որտեղ առաջնահերթ են եղել Քրիստոսի, Աստվածամոր, սրբերի, պատմական գործիչների կերպարները, տեռոմանական սյուժեները, լուսավորչական եկեղեցու խորհուրդները և այլն։ Հրավիրվել են հնչպես եվրոպացի, նույնպես և տեղի նկարիչները։ Ամենափոքրիկ վանքի նկարազարդումները Ջուղայեցին որակում է որպես «յոյժ գեղեցիկ և ամենաչքնաղ յօրինուածովք, և ոսկեհամուկ և երփներանգ որակօք ի ներքուստ պճնազարդ տեսուքեամբ գեղազարդեալ։ Այլ և՝ գեղեցկանկար և փառազարդ խորհրդական պատկերօք (զհինն ի նորս ածանցաբար բաղդատելով) ծագէ ի ծագ և համասփիւռ զարմազան և հրապաճոյճ գեղգեղեալ»[14]։

Նոր Ջուղայի տաղանդավոր նկարիչներից էր Մինասը։ Նրա շնորհը փայլել է տարբեր բնագավառներում. հաստոցային նկարչություն, որմնանկարչություն, ձեռագրերի նկարազարդում։ Նա նկարել է թեմատիկ պատկերներ, դիմանկարներ, բնանկարներ՝ առաջացնելով ժամանակակիցների հիացմունքը։ Ապարանքների նկարազարդումներում նա ներմուծել է շքեղապատող իրականությունից վերցված տեսարաններ[15]։ Մինասը միաժամանակ «հմուտ էր բժշկական արուեստի, մարդկայնոց ներհակ կրից և հիւանդութեան և չորից տարերաց խառնուածոց, և դեղօրէից բնութեան և կազմելոյն ևս առաւել սպեղանեաց կազմելոյ և զվերս բժշկելոյ։ Եւ այլ ևս բազում և զանազան արուեստից հմուտ գոլով սորա»[16]։

Նույնպիսի բազմակողմանի ընդունակություններ տեր էր Հովհաննես Մրքուզը (1643—1715)։ Լինելով հմուտ դավանաբան, փիլիսոփա և թարգմանիչ, Հովհաննես Մրքուզը ոչ միայն ղեկավարել է ամենափոքրիկ վանքի նկարազարդումները, այլև զբաղվել է կոշկակարությամբ, ջուլհակությամբ, դերձակությամբ և ժամագործությամբ։ Բաղ-

մակողմանի և անշահախնդիր գործունեության համար նա արժանացել է «տիեզերալույս» կոչմանը[17]։

Նոր Ջուղայի եկեղեցիները ձևավորվում էին հախճապակե դեկորատիվ սալիկներով, որոնցից շքեղ օրինակներ են պահպանվել դեռևս 1619 թվից։ Ավետարանական սյուժեները, կապույտ, կանաչ և դեղին ջնարակով ստացված բուսական հարուստ զարդանախշերը, նվիրատվական արձանագրությունները հայ վարպետների՝ բարձր կարողությունների վկայություններն են (ընտիր օրինակներ են պահպանվել Բեթղեհեմի, սր. Աստվածածնի, սբ. Թոմայի և Ամենափրկիչ վանքի եկեղեցիներում)։

Նոր Ջուղայում փայտի գործի հմուտ վարպետներ կային։ Նրանք ոչ միայն լուսամուտների ու դռների փեղկերն էին ձևավորում, այլև փայտե փոքր կտորներից ճառագայթաձև վարդակներ էին պատրաստում և դրանցով ձևավորում պատշգամբների առաստաղները, եկեղեցիների դռներն ու միջնորմները (խոջա Սաֆրազի տոմը, Աղանուրի տոմը, մի շարք եկեղեցիներ)[18]։ Այդ փայտե շրջանակներում երբեմն նկարազարդ փայլարներ էին տեղադրում, լուսամուտների և առաստաղի ձևավորման մի ձև, որը լայն տարածում ուներ Իրանում[19]։ Նոր Ջուղայի ամենահմուտ վարպետներից էր Հակոբջանը (?—1671), որը պալատական հյուսների ղեկավարն էր, Խաչատուր Կեսարացու տպարանական գործընկերը[20]։

Նոր Ջուղայի նկարչության և փայտի գեղարվեստական փորագրության ընտիր օրինակ է սբ. Գևորգ եկեղեցում պահպանված խաչը։ Կարմերանգ փայտը նուրբ փորագրված է, իսկ վրան ավետարանական 24 տեսարաններ են նկարված (Ավետում, Ծնունդ, Մկրտություն, Խաչելություն, Խաչից իջեցում, Հարություն, Համբարձում, Ղազարոսի հարությունը, Հիսուսն ու սամարացի կինը և այլն)։ Խաչը պատրաստվել է 1666 թ., խոջա Ապովի պատվերով[21]։

Փայտի գործի վարպետներ էին Նոր Ջուղայի տպարանի առաջին գործիչները, որոնք իրենց ղեկավար Խաչատուր Կեսարացու հետ ինքնուրույն, գործին անտեղյակ, տառեր փորագրեցին և առաջին գրքերը տպագրեցին[22]։

Նոր Ջուղա այցելած եվրոպացի ճանապարհորդները հիացական տողեր են թողել տեղի բնակչության ապրելակերպի մասին[23]։ Նրանց հիացրել են կրոնավորների ջերմաչափին տարազները, խոջայական տներում տեղի ունեցած հյուրասիրությունների ժամանակ սեղաններին դրված սպասքը, դահլիճների կահավորումները և այլն։ Առաս-

տաղից ջղթաներով կախված պղնձյա և երկաթյա լամպերով ու լուսամփոփներով էին տոնական օրերին լուսավորում սենյակները։ 1646 թ. պատրաստված ընտիր կանթեղ կա Ամենափրկիչ վանքի թանգարանում, որը դրվագված է ավետարանական տեսարաններով։ Կենցաղում ընդունված էր պղնձյա ամանեղենը, այդ թվում՝ սկուտեղները, որոնք տարբեր ուտելիքների ու մանր սպասքների համար էին (պղնձե թասի մի օրինակ պահպանվել է Էջմիածնի վանքի հին վեհարանում, Մատաղ №408)։ Հախճապակե իրերը, հատկապես կանաչ ջնարակով ձևավորված ամանեղենը, նորջուղայեցիները բերում էին Չինաստանից, իսկ արծաթյա և փայտե ամանները տեղական արտադրանք էին։

Նոր Ջուղայում զարգացած էր ոսկերչությունը, որի տեխնոլոգիան հնուց եկած ավանդներ ուներ։ Նոր Ջուղայի ոսկերիչները ևս իրերը պատրաստում էին այնպես, ինչպես նույն այդ գործը կատարվում էր Հայաստանի այլ վայրերում և հին Ջուղայում։

Գինու արծաթե ոսկեզօծ մի փարչ պահպանվել է Հ. Քյուրտյանի հավաքածուում[24]։ Արծաթից մանանատուփեր էին պատրաստում, վրան ոսկեթել ասեղնագործ սյուժետային տեսարաններ էին ամրացնում։ Օրինակ, Հովհաննես Մկրտչի գլխատման արևելականացված տարբերակը Ամենափրկիչ վանքի թանգարանի մանանատուփի վրա[25]։ Հայտնի էին Նոր Ջուղայի ձեռագրերի կազմերը։ Գաղթավայրերից Կաֆան (Ղրիմը), Կ. Պոլիսը և Նոր Ջուղան հայտնի էին իրենց կազմերի արվեստով[26]։ Ամենափրկիչ վանքի թանգարանում պահպանվում է դեռևս 1619 թ. պատրաստված ավետարանի մի կազմ, իսկ խաչելության տեսարանով մեկ այլ կազմ՝ 1648 թվի է։ Արծաթյա երկու կազմ պահպանվել են Էջմիածնի վանքի Գանձատանը, ունի պարզունակ նկարչություն և խոջա Թումենց Գրիգորի պատրաստածն է (1768 թ., Մատաղ №№ 280, 281)։ Նորջուղայեցիները տղամարդկանց արծաթյա գոտիներ ու կանացի բազմաթիվ զարդեր էին պատրաստում։ Նշանավոր էին տեղական սկիհները (պարզ մի օրինակ՝ Ամենափրկիչ վանքի թանգարանում)։

Նոր Ջուղայի եկեղեցիներն այնքան հարուստ էին թանկարժեք սպասքով, որ 1720 թ., ժողովրդի չքավորության պատճառով, եկեղեցիները պարտավորվում են «զարծաթի զարդս եկեղեցւյացն տալ՝ի վճար անիրաւ հարկին»։ Հարկ են տալիս. «բուրվառ, փոքր ու մեծ խաչեր, սաղավարտի խաչեր, արծաթե սաղավարտներ, կանթեղ, տապանակ, սկիհ, մաղզման, ըսկու ավազան, ձեռնախաչ, պատվանդան, խաչերի խնձորներ, քղոց, ճաճանչ, մեռոնաման, արծաթով բռնած սաղավարտ,



ասպրան, թավիշը, բեյբերակը, բյազը, գոլը, լիքը, գաբան, դոբանգը, զաըբաֆը, զենդենը, ղուֆը, խոզը, քամքան, գենժեն, կինդյակը, քիսեյան, միակալը, շիդը, սիֆթենգին, տաֆտան, օբյաբը և այլն։ Կոնստան Ջուղայեցին, իր առևտրական գործի ուսուցման «դասագրքերում» տեղավորած խնդիրների համար օգտագործում է «ատլաս, զառբաֆ, խարայ, մուխյար» և այլ կտորների անուններ[32]։ Ամենարարդ գործվածքներից էր քիմխա կամ նաշիճ կոչված թանկարժեք կտորը։ «...զի զվարազ ոսկին ի վերայ մորթոյ կանցնեն և մանր թել կտրեն, ե այնպէս հնարեն ի գործելն, որ այն բարակ թելին ոսկին երեսն ի վեր լինի. և վասն այսորիկ դժուար է այս գործ քան զամենայն ինչ...»—գրում է Մատթեոս Ջուղայեցին[33]։ Կտորների այծորինակ հարստությունը պայմանավորված էր Իրանի և, հատկապես նրա նոր մայրաքաղաք Սպահանի արհեստավորական հետաքրքրություններից։ Այս կտորների փափկությունը, ձևավորման հարստությունը, զարգանախշերի բազմազանությունը և գունային հնչեղությունը հիմք էր դարձել համաշխարհային շուկայում նրանց ունեցած մեծ համարմանը։ Պատահական չէ, որ երբ XVII դ. վերջում և XVIII դարի սկզբին Ռուսաստանում սկսեցին խրախուսել մետաքսագործական ֆաբրիկաների հիմնադրումը՝ առաջիններից էին նորջուղայեցիներ Իգնատ Շերիմանը, Ստեփան Խալդարովը, Ղուկաս Շիրվանովը, Վասիլի Խաստատովը։ Ռուսական մետաքսագործության բարձրագույն արտահայտություններից էր Մոսկվայի մոտ գտնվող Ֆրյանովո գյուղի Լազարյանների ֆաբրիկան, որի համար նրանք օգտագործում էին Իրանի (նաև՝ Նոր Ջուղայի) մետաքսագործության փորձը, մասնագետներին, կատարելագործելով այն, հարմարեցնում էին տեղական ճաշակին։

Ճանապարհորդների հիշատակություններում տեսնում ենք «հրնդկական գունագեղ սփռոցներ» անվանումը, որը վերաբերում է դաջե սփռոցներին։

Նոր Ջուղայի դաջազարդ կտորների նմուշներ պահպանվել են որպես ձեռագրերի կազմերի աստառներ։ Նոր Ջուղայից լիքը, միտկալը կամ քաթանը ուղարկվում էր Հնդկաստան, որտեղ դրանք հատուկ մշակման էին ենթարկվում, ապա ետ էին բերվում և կաղապարների միջոցով ձևավորվում էին տեղական վարպետների կողմից[34]։ Մի քանի վարագույրներ ու դարի մի ընտիր շապիկ է պահպանվել Վիկտորիայի և Ալբերտի թանգարանում[35], իսկ XVIII դ. վերջում պատրաստ-

ված մի գրակալի ծածկոց՝ էջմիածնի Մայր տաճարի թանգարանում (Գործվածք № 609)։

Նոր Ջուղան դերձակներ ուներ, որոնք բնակչության հագուստներն էին կարում։ Նորջուղայեցիների տարազը սկզբնական շրջանում պահպանեց իր նախկին տեսքը, իսկ ժամանակի ընթացքում ներմուծեց պարսկականից թելադրված ազդեցություններ։ Ճանապարհորդների վկայությամբ հայ կանայք տարբերվում էին պարսկուհիներից ոչ միայն նրանով, որ փողոց էին դուրս գալիս երեսը բաց, այլև իրենց ճոխ հագուստներով։ Կանայք վերևից թակալա էին հագնում, որի մեջքն ու գոգը բաց էր, գլխին մի քանի փաթեթ էին կրում, վրան՝ կոտ, կապում էին քթկալ, «արկանեն զլանչածածկոցն որ մանդիլ կոչի», իսկ ամռանը գլուխը ծածկում էին թոռով կամ շղարշով[36]։ Արդուզարդի մեջ օգտագործում էին քանկարժեք քարեր ու գաղտիկուռ։ Գլխակապի տակ կապում էին երկշար ոսկե դրամներ, իսկ հարդարանքի մյուս կտորների վրա ամրացնում էին արծաթե կամ ոսկու վարակներ։ Հագուստների մեջ նախասիրությունը տալիս էին ոսկեթել սատինին կամ թավիշին, ընտրելով կարմիր և դեղին գույները։ Կանայք բաց կանաչ էին սիրում, իսկ տղամարդիկ նախընտրում՝ էին մուգ կանաչը։ Գոտիները լայն էին, արծաթաթել, տարբեր տեսակի քարերով ընդելուզված ճարմանդներով։ Ուլունքները մարջանից էին կամ ոսկե դրամներից։ Կրում էին ոսկե մատանիներ և ապարանջաններ[37]։ Նորջուղայեցիների տարազների մասին պատկերացումներ ենք կազմում մի շարք տներում պահպանված գեղանկարչական աշխատանքներից. խոջա Սոլթանը, Նորջուղայեցի ամուսինները (Ա. Տեր-Բարսեղյանի տունը), Գևրաք աղան, Մինասի նկարած Ոսկան և Հակոբջան Վելիջանյանները (Ամենափրկիչ վանքի թանգարան) դերեզմանաքարերի հարթաքանդակներից և այլն[38]։

Նոր Ջուղայում գործված կտորներից կարում էին նաև հոգևորականների տոնական զգեստներ. շուրջառ, խույր, վակաս, բազպան, եմիփորոն և այլն։ Նորջուղայեցի կանայք հայտնի էին իրենց ասեղնագործությամբ։ Այնքան նշանավոր էին նրանց աշխատանքները, որ դրանք անվանվում էին «արմանի բաֆիխ»՝ հայի կար։ Երբեմն հագուստները ասեղնագործվում էին նաև մարգարիտներով, ընդելուզվում քանկարժեք քարերով[39]։ Նկեղեցական մի շարք հագուստներ պահպանվել են Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, թանգարանում, ինչպես նաև

էջմիածնի վանքի թանգարաններում. խոջա Դավթի և նրա որդի Գրիգորի նվիրաբերված, գունդուկն կիսաթանկարժեք քարերով ընդելուզված կերպասյա խուլրը (1653 թ., Գործվածք № 333), շուրջառի խաչը (1626 թ., Գործվածք № 176), ասեղնագործ վակաները (1691 թ., 1679 թ., Գործվածք №№ 118 և 44) շուրջառի հատվածը (1610 թ., Գործվածք № 81), Խաչելության տեսարանով կերպասյա շքեղ շուրջառը (XVII դ., Գործվածք № 78) և այլն։

Հայտնի էին Նոր Ջուղայի գորգերը, որոնց մեջ կային նաև ասեղնագործ օրինակներ։ Կոստան Ջուղայեցին իր խնդիրների մեջ օգտագործում է ասեղնագործ գորգի հետ կապ կտոր գնելու օրինակ[40]։ Նոր Ջուղայում պատրաստված ասեղնագործ գորգի մի ընտիր օրինակ պահպանվել է էջմիածնի վանքում։ Գորգի կենտրոնում ասեղնագործված է Պետրոս I-ի դիմանկարը, իսկ վերևում, հրեշտակների բռնած ժապավենի վրա ասեղնագործված է «Որբ ենք» բառը (XVIII դ. սկիզբ, Գործվածք № 6)։

Այն համարում ունեին թանկարժեք քարեր մշակողները։ Թանկարժեք քարերը Նոր Ջուղա էին բերվում ինչպես Իրանի տարբեր շրջաններից, նույնպես և Հնդկաստանից ու արաբական երկրներից։ Նոր Ջուղայում կային թանկարժեք ու կիսաթանկարժեք քարերի հղկողներ, ոսկեթերթեր դրվագողներ ու դաջողներ (բասմա) և հարակից մասնագիտության տեր մարդիկ։

Ինչպես տեսնում ենք նորջուղայեցիները աշխատասեր մարդիկ էին։ Արհեստները նրանց համար ոչ միայն ապրուստի միջոց էին, այլև գոյության պահպանման միջոց։ Արհեստները նրանց գեղարվեստական մտածողության բարձր արտահայտություններն էին։

Նոր Ջուղայի արհեստները սերտորեն շաղկապված էին տեղի բնակչության կենցաղին, նիստուկացին, սովորություններին։ Այդ արհեստները շարունակում էին ինչպես հայկական միջնադարյան արվեստների ու արհեստների ավանդները, նույնպես և հին Ջուղայում հիմնավորվածը։

Նոր Ջուղայի արհեստները ոչ միայն տվյալ գաղթավայրի աղգագրության և կիրառական արվեստի արտահայտություններն են, այլև XVII դ. հայ ժողովրդի մշակույթի կարևոր օղակներից։

А. В. СТЕПАНЯН

РЕМЕСЛА НОВОЙ ДЖУЛЬФЫ

Резюме

Общественно-культурная жизнь Новой Джуги XVII века неоднократно являлась источником научных исследовании. Однако вопрос ремесел Новои Джуги впервые исследуется в данной статье, как отдельная и важная область общественно-культурной жизни армянскои колонии.

Население Новои Джуги было разделено на сословии, где особое место занимали ремесленники. Историко-литературные источники, а также сохранившиеся образцы ремесленного и декоративно-прикладного искусства (Алмазныи трон, надгробные плиты, росписи домов и церквеи, изделия из меди, камня, произведения ювелирного искусства, набоики и т. д. из музеев Лондона, Москвы, Еревана, Новои Джуги) дают возможность восстановить систему ремесел армянской колонии в пригороде столицы Ирана-Исфагане.

Ремесленное производство Новой Джуги находилось в тесном взаимоотношении как с укладом жизни новоджугинцев, так и с устоями иранских ремесел. Одновременно оно своими корнями опиралось на традиции средневековых ремесел Армении.

1 Հ. Տեր-Հովհաննիսեանց, Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան, հ. II, Նոր Ջուղա, 1881, էջ 278։

2 Իրանի էսնաֆութիւնների մասին հետաքրքիր տեղեկութիւններ է պարունակում 1857 թ. ապրիլի 2-ին Գ. Շերմազանյանի պատասխան-նամակը Գ. Ախվերդյանին։ Վ. Աբրահամյան, Հայ համքարութիւնները Անդրկովկասի քաղաքներում։ Եր., 1971, էջ 212—216։

3 Հ. Տեր-Հովհաննիսեանց, Նշված աշխ., հ. I, Նոր Ջուղա, 1880, էջ 80։

4 Հ. Տեր-Հովհաննիսեանց, Նշված աշխ., հ. II, էջ 286։

5 Հ. Տեր-Հովհաննիսեանց, Նշված աշխ., հ. 1, էջ 184։

6 Ամստերդամ, 1711, էջ 341—342։

7 Թաքևէ Առաֆիլյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ. հ. 1, Երևան, 1958, հ. 2, Երևան, 1964։

8 *А. Б. Геворкян.* Искусство копирования армянских миниатюр по памятникам Крыма, Новой Джульфы и Константинополя (XVII в.). Автореферат, Ереван, 1972, с. 8—12.

9 Զաքարիա Սարկավագ, Պատմագրություն, հ. II, Վաղարշապատ, 1870, էջ 69; Եսայեասւր Զուղայեցի, Պատմություն Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 117; Մանր ժամանակագրություններ. XIII—XVIII դդ. հ. I, կազմեց Վ. Հակոբյանը, Երևան, 1951, էջ 302—303, Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմությունից, գիրք II, Երևան, 1959, էջ 694։

10 Լուսավորչական եկեղեցու յոթ խորհուրդները պատկերող սաեղնագործ մի վարագույր (XVII դ. հավանաբար Նոր Զուղայում գործված) պահպանվում է Հայաստանի պետական պատմության թանգարանում։

11 Հ. Տեր-Հովհաննիսյանց, նշված աշխ., հ. I, էջ 80։

12 Նոր Զուղայի գերեզմանատան շիրմաքարերի վերականգնված ընդօրինակումներ է արել ապահանարևակ նկարիչ Աբրահամ Գուրգենյանը, որի աշխատանքներից մի քանիսի լուսանկարները տեղադրում ենք ներկա ժողովածուում։

13 Karapet Karapetian, Isfahan, New Julfa. The Houses of the Armenians. I Roma, 1974, fig. 169, 179:

14 Եսայեասւր Զուղայեցի, նշված աշխ., էջ 142։

15 Տե՛ս Մանյա Ղազարյան, Հայ կերպարվեստը XVII—XVIII դարերում, Երևան, 1974, էջ 25—32։

16 Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Վաղարշապատ, 1896, էջ 413։

17 Եսայեասւր Զուղայեցի, նշված աշխ., էջ 209—210։

18 Karapet Karapetian, Նշված աշխ., fig. 295, 316; John Garswell, New Julfa Oxford, 1968, p. 68, 69, 70, 71 b.

19 Նոր Զուղայից Մոսկվա գնացած նկարիչ Բոգդան Սալթանովին այսպիսի լուսամուտներ պատրաստելու հանձնարարություն է տրվում, փոքրիկ Պետրոս Առաքսենիչ քաղաժառանգի սենյակի լուսամուտները ձևավորելու. ներսից դուս ամեն ինչ երևա, իսկ դրսից ներս չերևա։

20 Հովե. Աբգիեյաե, Նոր Զուղայու հայերուն առևտուրը ծէ դարում։ —Անահիտ, Փարիզ, 1908, № 4, էջ 31—36. Ջաքարիա Ագուլեցու օրագրությունը, Երևան, 1938. էջ 1303; А. И. Успенский, Царские иконописцы и живописцы XVII век. Словарь. М., 1910, с. 238.

21 Հ. Տեր-Հովհաննիսյանց, նշված աշխ., հ. I, էջ 182—190։

22 Ռ. Իշխանյաե, Հայ գրքի պատմություն, հ. I, Երևան, 1977, էջ 353։

23 Какаш и Тектандер, Путешествие в Персию через Московию. 1601—1603 гг. М., 1896; Адам Олеарий, Подробное описание путешествия голштинского посольства в Московию и Персию в 1633, 1636 и 1639 годах. М., 1870; Adam Olearii, Ausfuhrliche Beschreibung der Kundbaren Rayss nach Moscow und Persien,. .., Schleswig, 1646; Pere Raphael du Mans, Estat de la Perse en 1660 :., Paris. 1890; Tournefort Pitton de, Relation dûn Voyage du Levant, Paris, T. II, 1718; Doulier Desland Andre, Les Beauter de la Perse on la Description de ce qui de plus curieux dans ce royaum... . Paris, 1673; Chardin Jean de, Voyages du Cnevalier Chardin en Perse et autres Lieux de l'Orient. Paris, 1811; A Chronicle of the Carmelites in Persia and the Papel mission of the XVII and XVIII centuries, vol. I, London, 1939.

24 Հ. Ղյուրեան. Ակնարկ մը հին հայ արծաթագործության վրա։ —Դեղունի, Վենետիկ, 1950, հորելյանական համար, էջ 77։

25 John Carswell, Նշված աշխ., էջ 83։

26 Հ. Տեր-Ղևոնդյան, Մատենադարանի արծաթյա ձեռագրակազմերը մասին։ —Էջմիածին, 1961, ԺԲ, էջ 50։

27 Սերիկ Դավթյան, Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմության, Երևան, 1931, էջ 135—136։

28 Herbert Sir Thomas, Travel in Persia. New York, 1929, p. 121—122.
Նոր Ջուղայի հայ ապակեգործները միշտ աշխատել են պարսկական արքունիքում։ 1816 թ. վարպետներից էին Բաբել Ջաւարյանը, Մանուկ Եսայիկյանը, Ալեքսի Դիոնիսյանը, իսկ Հարություն Տեր-Եսայտրյանը, ճարտարապետն էր նույն ապակեգործաց։ Հ. Տեր-Հովհաննիսյանց, Նշված աշխ., հ. I, էջ 402։

29 Լ. Միհասյան, Ոսկերչությունը Նոր Ջուղայում, Նոր Ջուղա, 1983, էջ 32, 73, 82, 99, 102, 117։

30 Ա. Օլեարիուսը գրում է, որ Սպահանի շրջակայքում 1460 ավան և գյուղ կա, որոնց բնակիչները հիմնականում ջուլհակագործությամբ են զբաղվում։ Հայտնի է, որ այդ բնակչության մեջ հայերը զգալի թիվ էին կազմում։ Адам Олеарии. Նշված աշխ.,. էջ 733։

31 Լ. Եսայիկյան, Մաաթեոս Ջուղայեցու կյանքն ու մատենագրությունը։ —Բանբեր Մատենադարանի, 1956, № 3, էջ 78։

32 Կոստանդ Ջուղայեցի, Ցաղագս վաճառականութեան։ ԺՀ դար։ Մատենադարան, ձեռ. № 5994։ Նույնի, Ժողովածու, 1687, Նոր Ջուղա, Մատենադարան, ձեռ. № 8443։

33 Լ. Եսայիկյան, Նշված աշխ., էջ 78։

34 З. Р. Тараян, Набойка в Армении, Ереван, 1978.
1677 թ. հայ վաճառական Դոմինիկ Ալխալի նախաձեռնությամբ Ջրանխայում բացվում է դաշի արվեստանոց, իսկ 1699 թ. անգլիացիները դիմում են Նոր Ջուղայի հայերին, տեղական ղարդանախշերով չիթի կտորներ պատրաստելու առաջարկով, որի մեծ պահանջը կար Անգլիայում։ Նույն տեղում, էջ 47—48։

35 Victoria and Albert Museum, Brief Guide to oriental Painted, Layed and Printed Textiles, London, 1950, p. 7, 20; Raymond Koechlin, Gaston Migeon, Art musulman cent planches en couleurs ceramiques, tissus, tapis, miniatures, Paris (1956).

36 Հ. Տեր-Հովհաննիսյանց. Նշված աշխ., հ. II, էջ 289։

37 Cornelis de Bruyn, Travels into Moscovy, Persia and part of the East Indies..., London, 1737, p. 227։

38 Հայ կին։ Հայկական տարազ։ Ուսումնասիրություն և նկարները Առաքել Պատրիկի, Երևան, 1983, տախտակ 77։

39 Հետազոտում ասեղնագործության հայտնի կենտրոն էր Նոր Ջուղայի սբ. Կատարինե կուսանոցը։ Սերիկ Դավթյան, Հայկական ասեղնագործություն, Երևան, 1972, էջ 34։

40 Կոստանդ Ջուղայեցի, ձեռ. 5994։

Ս. Խ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԻՐԱՆՈՒՄ XIX Դ. ՎԵՐՋԻՆ XX Դ. ՍԿԶԲԻՆ

XVII դ. սկզբից սկսած հայ վաճառականությունն ակտիվ դեր է խաղացել Իրանի այս կամ այն շրջանի տնտեսական կյանքում։ Մինչև XVIII դ. առաջին քառորդը Իրանի արտաքին առևտրում վճռորոշ դիրքեր էին գրավում Նոր Ջուղայի հայ վաճառականները։ XVIII դ. վերջին XIX դ. սկզբին նրանք ակտիվ գեր էին խաղում Իրանական Ադրբեջանի՝ մասնավորապես Թավրիզի, ինչպես նաև Մերձկասպյան շրջանների՝ Գիլանի և Մազանդարանի առևտրում։

XIX դ. սկզբից սկսած հայ վաճառականները լայն գործունեություն էին ծավալել նաև Հյուսիս-արևելյան Իրանում, սակայն առևտրական այդ գործունեությունը մինչև այժմ չի գրավել ուսումնասիրողների ուշադրությունը։ Ներկա աշխատանքը կոչված է հնարավորության սահմաններում լրացնել այդ բացը և ի մի բերել XIX դ. վերջին XX դ. սկզբին Հյուսիս-արևելյան Իրանում հայ վաճառականության գործունեությանը վերաբերվող բազմաքնուլթ փաստերը։

Հայ վաճառականության վերակողմնորոշումը դեպի Հյուսիս-արևելյան Իրան ուներ որոշակի պատճառներ։ Նոր Ջուղայի հայկական գաղութն այս շրջանում տնտեսական անկում էր ապրում։ Իրանական Ադրբեջանում, Գիլանում, Մազանդարանում ակտիվորեն գործող հայ վաճառականությունն ավելի ու ավելի մեծ չափով էր զգում օտարերկրյա առևտրական տների, ինչպես նաև իրանցի առևտրականների աճող մրցակցությունը։ Դա ստիպում էր հայ վաճառականներին վերահարմարվել իրանական շուկայի փոփոխված պայմաններին և փընտրել այնպիսի շուկաներ, որտեղ այդ մրցակցությունն ավելի քիչ էր։ Նման շուկա հանդիսացավ Հյուսիս-արևելյան Իրանը (Աստրաբադ, Շահրուդ-Բաստամ, Խորասան)։ Ի տարբերություն Իրանական Ադրբեջանի, Գիլանի, Մազանդարանի և Իրանի հարավային շրջանների, Հյու-

հիս-արևելյան Իրանն իր աշխարհագրական դիրքի, առևտրական հարմար ճանապարհների և հղոր առևտրական կապիտալի բացակայության պատճառով շատ թույլ էր կապված Արևմտյան Եվրոպայի հետ։ Միակ հարմար առևտրական ուղին Բանդար Գյաղ-Շահրուդ-Նիշաբուր-Մեշհեդ ճանապարհն էր, որն էլ մի քանի տասնամյակ շարունակ հանդիսանում էր Հյուսիս-արևելյան Իրանն արտաքին աշխարհի հետ կապող միակ քիչ թե շատ հարմար ուղին։

Հենց այդ ուղին էլ ընտրեցին հայ վաճառականները, որոնց ներթափանցումը Հյուսիս-արևելյան Իրան այնքան արագ էր ընթանում, որ արդեն «...XIX դ. կեսին հայ վաճառականներն սկսեցին իրենց մեծնաշնորհը դարձնել մեծածախ առևտուրը Իրանի հյուսիս-արևելքում, օրինակ Շահրուդ-Բաստամում, որտեղ հնդկական, արևմտաևրոպական և ռուսական ապրանքներով առևտուրը գտնվում էր նրանց ձեռքում»[1]։

XIX դ. երկրորդ կեսին Իրանն ավելի ու ավելի էր ներքաշվում համաշխարհային կապիտալիստական շուկայի ոլորտ, ավելացնելով գյուղատնտեսական ապրանքների արտահանումը և արդյունաբերական ապրանքների ներմուծումը։ Այդ գործընթացը, բնականաբար, դիպավ նաև Հյուսիս-արևելյան Իրանին։ Բանդար Գյաղ-Շահրուդ-Սարզեվար-Նիշաբուր-Մեշհեդ առևտրական ուղին աստիճանաբար դարձավ Իրանի ամենաաշխույժ առևտրական ուղիներից մեկը, որի ամբողջ երկարությամբ, առևտրական խոշոր կենտրոններում հաստատվեցին հայկական խոշոր առևտրական ընկերությունների ներկայացուցիչները։ Օրինակ 70-ական թվականներին Բանդար Գյաղում նշանակալի առևտուր էին վարում Արտեմիա Ադամովը, Առաքել Ծատուրովը, Ներսես Կրասիլնիկովը, Գևորգ Աբիևը և ուրիշներ[2]։

Շահրուդում ևս հաստատվել էին Ադամովների և Կրասիլնիկովների խոշոր առևտրական ընկերությունների ներկայացուցիչները[3]։

Նրանց մի մասը, Իրանի պայմաններում, վարում էր նշանակալի առևտուր։ Բաքվի մաքսատան տվյալներով Ներսես Կրասիլնիկովը 1869 թ. միայն Բաքվի վրայով Իրանից Ռուսաստան էր արտահանել 49.725 ռուբլու ապրանք և 3239 ռուբլու դրամ[4], միևնույն ժամանակ Իրան ներմուծելով 21.185 ռուբլու ապրանք և 29.475 ռուբլու դրամ[5]։ Բացի այդ, նա Աստարայի վրայով Իրան էր ներմուծել ևս 15.100 ռուբլու ապրանք[6]։

Նույն թվականին Առաքել Ծատուրովը Բաքվի վրայով Ռուսաստան էր արտահանել 6.050 ռուբլու ապրանք և Իրան ներմուծել 20.955 ռուբլու ապրանք և 5.550 ռուբլու դրամ[7]։

Օգորոդնիկովի վկայությամբ Սարզևարում գործող հայ առևտրական ընկերություններից ամենանշանավորը Ադամովների ընկերությունն էր, որի ներկայացուցիչ Ներսես Տեր-Մովսեսովի առևտրական գործարքները գերազանցում էին Սարզևարի մյուս բոլոր հայ վաճառականների առևտրական գործարքները միասին վերցրած[8]։

Հայ վաճառականների և ռուս Բաումգարտենի ջանքերով Շահրուդի և Բանդար Գյազի միջև հաստատվել էր նույնիսկ կանոնավոր հաղորդակցություն, որը հեղինակն անվանում է «հայկական փոստ»[9]։

Մինչև անդրկովկասյան առևտրական ուղու փակումը 1883 թ., հայ վաճառականները զգալի չափով կողմնորոշվում էին դեպի արևմտաեվրոպական արտադրություն, Հյուսիս-արևելյան Իրան ներմուծելով հիմնականում Մարսելի շաքար, բնաճարպամոմեր և այլ ապրանքներ։ Միաժամանակ նրանք Արևմտյան Եվրոպա էին արտահանում զգալի քանակությամբ բուրդ և մետաքսահումք։ Սակայն հարկ է նշել, որ հայ վաճառականները, չնչին բացառությամբ, անմիջական կապերի մեջ չէին Արևմտյան Եվրոպայի և Կոստանդնուպոլսի հետ և շաքարը, բնաճարպամոմերը և մյուս եվրոպական ապրանքները գնում էին երկրորդ ձեռքից՝ հիմնականում Թիֆլիսում։

XIX դ. 80-ական թվականների կեսերից Հյուսիս-արևելյան Իրանում գործող հայ վաճառականները շրջադարձ են կատարում դեպի ռուսական արդյունաբերություն, որը պայմանավորված էր օբյեկտիվ հանգամանքներով։ Միջին Ասիայի միացումից հետո ցարական կառավարությունը տերիտորիալ նվաճումների քաղաքականությունից անցավ տնտեսական ներթափանցման քաղաքականության, որն ուղեկցվում էր պրոտեկցիոնիստական միջոցառումներով։ Ձգտելով նպաստել ռուսական արդյունաբերական ապրանքների ներթափանցմանը Արևելքի երկրներ, այդ թվում նաև Իրան, ցարական կառավարությունը 1883 թ. փակեց անդրկովկասյան տարանցիկ ուղին։ Դա նկատելի հարված հասցրեց արևմտաեվրոպական առևտրին հատկապես Հյուսիս-արևելյան Իրանում, որի համար այդ ուղին արևմտաեվրոպական արդյունաբերական ապրանքների ներթափանցման միակ հարմար ուղին էր։ Այժմ արդեն եվրոպական երկրների առևտուրը Հյուսիս-արևելյան Իրանի հետ կարող էր զարգանալ կամ Տրապիզոն-Թավրիզ ուղով, կամ Պարսից ծոցի, և կամ Հնդկաստանի և անգլիական Բելուջիստանի վրայով, որը կապված էր բազմաթիվ դժվարությունների հետ։

Միևնույն ժամանակ ցարական կառավարությունը սկսեց խրախուսադրամ վճարել Իրան արտահանվող ռուսական շաքարի և մանուֆակ-

տարբ. հայտ (խոշոռատառությամբ գեներալ են մեր տողերը հայտնի պատճառներով)։

Կերիկիայի սպայության և բարեկեցիկ հնդիկների վիլայեթների Հյուսիս-արևելյան Իրանում հեռավոր տեղ ողջ առնտրային գործը գտնվում էր հիմնականում հայ պատճառների ձեռքում։ Շահագրգռ, օրինակ, ? ռուսահպատակ հայ պատճառների առևտրական ընդհանուր շրջանառությունը 1884 թ. կազմում էր 1.596.550 ռուբլի[10], նրանք ներառում էին նեղմտեսների շահագործում հիմնականում շաքար, բրանդի, շուրջառի, սուկնաու, չիթ, իսկ շահույթը և նրա շրջանառությունը գնում էին բարձր, որը, իհարկե, էլ ավելի էր մեծացնում նրանց հարստությունը։

Ընդհանրապես շաքարի, բրանդիի և մի շարք այլ ապրանքների ներմուծումը սկզբ հայ պատճառների տեսակարար կշիռը բավականին բարձր էր։ 1891 թ. շահագործել են 26.000 փութ (տոննայնին մոտ) բրանդի 21.000 փութը ներմուծել էին հայերը, նկեզսուդը օսմանի և հայտար թարմիզի առևտրականները[11], արտադրությունը և մյուս 5.000 փութը՝ ապրիկ պատճառների և ներմուծել էին հայերը։ Ընդ թիկսնդին ֆաղի վրայով շահագործել են ներմուծել 35.000 փութ շաքար (120.000 ռուբլու), որից 20.000 փութը ներմուծել են պարսկական հայ պատճառների միջոցով[12]։

*Նախկին Հյուսիս-արևելյան Իրանում գործող հայ պատճառները ինչպես հնդկական ապրանքները, այնպես էլ հայկական էին։ Ուսումնասիրելով, որ 19-րդ դարի վերջին Նորսեպատ գործում էին 11 առևտրական ընկերություններ[13], որոնց թվում 4-ը խոշոր էին, նշենք, որ 19-րդ դարի վերջին Նորսեպատ գործում էին հայ պատճառների ընկերությունները, որոնք ունեին մեծ և ընկերակցական բնույթ, իսկ մյուսները՝ անհատական։ «Նուշյանց, Տեր-Մկրտիչ և Ընկ.», «Տեր-Պետրոսյանց և Ընկ.», Ներսիսյանց և Ընկ.», «Տեր-Պետրոսյանց և Ընկ.», «Տեր-Պողոսյանց և Ընկ.», «Տեր-Պողոսյանց և Ընկ.», «Տեր-Պող

Քարամյանց, «Ղուլյանց և Ընկ.» ընկերության գործակատար Գևորգյանց, Տեր-Ղազարով, Մնացականյանց, Ստեփանյանց, Ղարիբյանց) 1892 թ. Սարղևարից Ռուսաստան էին արտահանել 67.500 փութ բամբակ, 65.000 փութ բուրդ, 15.000 փութ չոր միրգ՝ ընդհանուր առմամբ 147.000 փութ 2.360.000 զուտ գումարով[15]: Դա կազմում էր Սարգևարի ողջ արտահանման մոտավորապես 55%: Միևնույն ժամանակ նրանք Ռուսաստանից Սարգևար էին ներմուծել մոտավորապես նույն գումարի կտորեղեն, շաքար, շաքարավազ, երկաթ և այլ իրեր, որը կազմում էր ամբողջ ներմուծման մոտ 45%[16]:

Իրանի տնտեսական կյանքին լավատեղյակ Քերզոնի վկայությամբ հայ վաճառականները Սարգևարից Ռուսաստան էին արտահանում տարեկան 10—12 հազար հակ (1 հակը մոտավորապես հավասար է 5 փթի) բուրդ, որի զգալի մասն այնուհետև առաքվում էր Անգլիա[17]:

Հայ վաճառականների ձեռքում էր գտնվում նաև Հյուսիս-արևելյան Իրանի մյուս խոշոր քաղաքների և բնակավայրերի առևտուրը: Նիշաբուրում զգալի առևտուր էին վարում երկու խոշոր առևտրական տների՝ Թումանյանցների և Տեր-Մկրտիչև եղբայրների ներկայացուցիչները: Բոջնուրդում լայն գործունեություն էին ծավալել Տեր-Մկրտիչև և Արուռով առևտրական ընկերությունների ներկայացուցիչները, որոնցից առաջինի տարեկան առևտրական շրջանառությունը հասնում էր 150.000 ռուբլու, իսկ երկրորդինը՝ 200.000 ռուբլու[18]:

Դամղանում միակ ռուսահպատակ վաճառականը Կարապետյանց առևտրական ընկերության ներկայացուցիչն էր[19]:

Ռուս զինվորական բենդերևի վկայությամբ Բանդար Գյազում գործում էին ռուսահպատակ հայերի 10 առևտրական ընկերություններ 1.700.000 ռուբ. տարեկան առևտրական շրջանառությամբ, չհաշված պարսկահպատակ Թումանյանցներին, որոնց առևտրական շրջանառությունն անցնում էր 200.000 ռուբլուց[20]:

Մեծ թվով հայ վաճառականներ էին ապրում թուրքմենական ցեղերի շրջանում: Նրանք կարողանում էին շահել քոչվորների համակրանքը և մեն մենակ շրջել թուրքմենական աուլներում: Օրինակ. գոկլանների Բայանդիր տոհմի շրջանում ապրում էին 4 հայ վաճառականներ, որոնք խոշոր եղջերավոր անասուններ էին գնում Մերձ-կասպյան մարզի զորքերին մատակարարելու համար: Նրանք համընդհանուր հարգանք էին վայելում քոչվոր գոկլանների շրջանում, որոնք պաշտպանում էին հայերին, ինչպես հարազատ մարդուն: 1891 թ. հայ վաճառականները գոկլաններից և Բոջնուրդյան խանության բնակ-

չուքյումից գնել և Ռուսաստան էին քշել ոնդհանուր առմամբ մոտ 1000 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ և 7—8 հազար գլուխ ոչխար[21]։

Հնշուշտ դժվար է խոսել հայ վաճառականների խիստ մասնագիտայման մասին։ Նրանք բոլորն էլ զբաղվում էին և արտահանմամբ, և ներմուծմամբ։ Լավ տեղյակ լինելով իրանական ջուկայի կոնյուկտուրային և բնակչության պահանջմունքներին, նրանք ներմուծում կամ արտահանում էին այն ապրանքները, որոնց պահանջն այդ պահին ավելի էր զգացվում։ Օրինակ, 1900 թ. «Բեգլարյանց և Կարապետյանց» ընկերությունը Բանդար Գյազի վրայով Դամղան էր ներմուծել մոտ 10.000 փութ ռուսական ալյուր և վաճառել մեծ շահույթով[22]։

1891 թ. Թումանյանցների առևտրական տունը Շահրուդում Ջանսուղ Միրզայից, կալվածատերերից և գյուղացիներից գնել էր 5.000 խարվար հացահատիկ և արտահանել Աստրախան[23]։ Սա խոսում է հայ վաճառականների օպերատիվության և շուկայի պահանջմունքներին արագորեն հարմարվելու կարողության մասին։

Մյուս կողմից ուսումնասիրությունները մեզ հանգեցրել են այն եզրակացության, որ հայ առևտրական ընկերությունները տարիներ շարունակ մասնագիտացել էին որոշակի տեսակի ապրանքների ներմուծման և արտահանման մեջ։ Հյուսիս-արևելյան Իրանից դեպի Ռուսաստան նրանց արտահանման հիմնական ճյուղերն էին բամբակը, բուրդը, լոր մորգը, մետաքսահումքը և խոշոր եղջերավոր անասունները։ Ռուսաստանից ներմուծում էին հիմնականում շաքար, շաքարավազ, երկաթ և այլ մետաղներ, քիչ չափով կտորեղեն։

XIX դ. վերջին պարսկական և թուրքական ծագում ունեցող վաճառականներն աստիճանաբար հայ վաճառականներին դուրս մղեցին ներմուծման այնպիսի ճյուղերից, ինչպիսիք էին կտորեղենը և շաքարը։ Այսպես՝ Սաբզևարում գործող վերոհիշյալ 7 հայ վաճառականներից միայն «Ղուլյանց և Ընկ.» առևտրական տունն էր ներմուծում ռուսական կտորեղեն, տարեկան մոտ 3000 փութ (մոտ 100.000 ռուբլու)[24]։

Հյուսիս-արևելյան Իրանում գործող հայկական խոշոր առևտրական տներից ևս երկուսը՝ «Տեր Մկրտիչ և եղբայրներ» և «Տեր-Սարգսյանց, Արուտչև և Գևորգյանց» առևտրական տները զգալի չափով զբաղվում էին կտորեղենի ներմուծմամբ։ 1908—09 ԲԲ. Մեշհեդ ներմուծված 9000 հակ ռուսական բամբակյա կտորեղենից առաջինին բաժին էր ընկնում 1.500 հակ, իսկ երկրորդին՝ 2.000 հակ[25]։

Նույն թվականներին Մեշհեդ ներմուծված 937.250 ռուբ. շաքարից և շաքարավազից վերոհիշյալ առևտրական տներին բաժին էր ընկնում համապատասխանաբար 67.500 ռուբ. և 52.500 ռուբ.[26], այսինքն հայ վաճառականների տեսակարար կշիռը կազմում էր ընդամենը 13%:

Ջնայած հայկական համարյա բոլոր առևտրական ընկերությունները զբաղվում էին և արտահանմամբ, և ներմուծմամբ, սակայն նրանց առևտրական գործարքներում վճռորոշը, առաջատարը արտահանման էր և շատ հաճախ ներմուծումը ենթարկվում էր արտահանման շահերին:

Ներմուծելով ռուսաստանյան արտադրության ապրանքներ՝ հիմնականում շաքար և կտորեղեն, հայ առևտրական ընկերությունների ներկայացուցիչները միաժամանակ նախավճար էին տրամադրում հումքի անմիջական արտադրողներին: Սրբ գալիս էր նրանց վճարելու ժամանակը, նրանք իրենց ներմուծած ապրանքները հաճախ վաճառում էին շատ էժան, որպեսզի ժամանակին վճարեն իրանական արտադրողներին, համոզված լինելով, որ իրանական հումքը վաճառելիս վերադիրով կհատուցեն իրենց վնասները: Ամենից հաճախ նախավճար տրամադրում էին բամբակ և մետաքս արտադրողներին: Բամբակի դիմաց կնքվող վարկային գործարքներից, որոնք հայտնի էին «սալաֆ» անունով, Խորասանում տարածված էին երկու ձևեր՝ առաջին դեպքում արտադրողին տրված վարկի դիմաց վերցվում էր 12—15%, իսկ բամբակը հաշվվում էր նույն գնով, ինչով գնանշվել էր պայմանագրի կնքման ժամանակ, երկրորդ դեպքում՝ վարկի դիմաց տոկոս չէր վերցվում, բայց բամբակը գնահատվում էր 1 խարվար չմաքրված կամ 30 ման մաքրված բամբակի գնանշված արժեքից 5—10 ղրան էժան[27]:

Նախավճարը միշտ տրամադրվում էր որոշակի քանակությամբ բերքի դիմաց: Շատ հաճախ հայ վաճառականները նախավճարը տրամադրում էին ոչ թե դրամով, այլ իրենց ներմուծած ապրանքներով:

Ինչպես ողջ Իրանում, այնպես էլ Խորասանում գերակշռում էր մանր ու միջին առևտրական կապիտալը: Հայ վաճառականների զգալի մասն ևս ուներ սահմանափակ կապիտալ: Միևնույն ժամանակ արդեն XIX դ. վերջին Հյուսիս-արևելյան Իրանում գործում էին այնպիսի խոշոր առևտրական ընկերություններ, ինչպիսիք էին Թումանյանցների, Տեր-Մկրտիչևների առևտրական տները, «Նասիբյանց և Տեր-Պետրոսյանց», «Բեգլարյանց և Կարապետյանց» առևտրական ընկերությունները, վաճառականներ Փանյանցը, Մնացականովները, որոնց առևտրական շրջանառությունն անցնում էր մի քանի հարյուր հազար ռուբլուց:

Ընդհուպ մինչև Միջին Ասիայի միացումը Ռուսաստանին և Անդրկասպյան երկաթուղու կառուցումը (1880—1886) հայ վաճառականները Հյուսիս-արևելյան Իրանի հետ առևտուրը վարում էին հիմնականում Բանդար-Ֆազլի, Շահրուդի և Սարզևարի վրայով։ Պատահական չէ, որ առևտրական խոշոր ընկերությունների ներկայացուցիչները հաստատվել էին հենց այս առևտրական կենտրոններում։ Իրաղերությունը կտրուկ կերպով փոխվեց 80-ական թվականների կեսերից։ Հյուսիս-արևելյան Իրանի հետ Ռուսաստանի առևտրում սկսեց վճռական դեր խաղալ Աշխարաղը։ Մի շարք խոշոր ընկերություններ, որոնք մինչ այդ գործում էին Անդրկովկասում, իրենց առևտրական գործարքները տեղափոխեցին Աշխաբադ։ Նրանցից մի քանիսն այնպիսի վճռական դիրքեր գրավեցին Հյուսիս-արևելյան Իրանի տնտեսական կյանքում, որ Սիսթանում ռուսական փոխ հյուպատոս Միլլերը 1900 թ. արքունական խորհրդական Ցեյդլերի միջոցով տեղեկություններ հայտնելով Սիսթանի առևտրի մասին, Տեր-Մկրտիչև և Մնացականով ընկերություններին հրավիրում էր առևտուր սկսելու Սիսթանում[28], իսկ Բիրջանգի վաճառականները ցանկություն էին հայտնում կապ հաստատել Տեր-Մկրտիչև ընկերության հետ կտորեղեն, շաքար, կերոսին, չուգունե իրեր ստանալու համար[29]։

Տեր-Մկրտիչև եղբայրները Աշխաբադում գործունեության 30 տարիների ընթացքում միայն ռուսական կտորեղենի առևտրից ավելի քան 2 մլն. ռուբլու շահույթ էին ստացել[30]։

XIX դ. վերջին XX դ. սկզբին Իրանն ավելի ու ավելի մեծ չափով էր ներքաշվում ապրանքադրամական հարաբերությունների ոլորտ, որի հետևանքը Ռուսաստանի և մյուս երկրների հետ առևտրի շեշտակի վերելքն էր։ Արտաքին առևտրի բուռն ղարգացման հետևանքով նկատելի փոփոխություններ էին տեղի ունենում նաև Հյուսիս-արևելյան Իրանի գյուղատնտեսության մեջ։ Գյուղատնտեսական ավանդական կուլտուրաները (հացահատիկ և այլն) դուրս էին մղվում տեխնիկական կուլտուրաների կողմից, որոնք մեծ չափով արտահանվում էին։ Հյուսիս-արևելյան Իրանի արտահանման գլխավոր ճյուղերից մեկը դառնում է բամբակը։ Ռուսաստան արտահանվող իրանական բամբակի ավելի քան 40% տալիս էին Աստրաբադը և Խորասանը[31]։

Մինչև XIX դ. վերջը Ռուսաստան արտահանվող բամբակը մաքրվում էր ձեռքով և սեղմվում ձեռքի մամլիչներով։ Օրինակ XX դ. սկզբին Թորբաթե-Հեյդարիում կար ընդամենը 3 ձեռքի մամլիչ[32]։

XIX դ. վերջին XX դ. սկզբին բամբակի արտադրության և արտահանման շեշտակի վերելքը նոր պահանջներ էր դնում իրանական բամբակ արտահանողների առջև։ Ջմաքրված բամբակի արտահանումը Ռուսաստան տնտեսապես ձեռնտու չէր, իսկ բամբակի մաքրումը և մամլումը նախկին մեթոդներով շարունակելն արդեն անհնարին էր։

Այդ էր պատճառը, որ XIX դ. վերջից նախ Մազանդարանում, իսկ ապա Աստրաբադում և Խորասանում հանդես եկան առաջին բամբակաշղտիչ գործարանները։ Նվ քանի որ բամբակի արտահանումը գտնվում էր գերազանցապես հայ վաճառականների ձեռքում, բնականաբար, այդ գործարանների մեծ մասը ևս պատկանում էր նրանց։ Մյուս կողմից պարսիկ վաճառականները խուսափում էին իրենց կապիտալները ներդնել արդյունաբերության մեջ և հաճախ թաքցնում էին իրենց առևտրական շրջանառությունը, վախենալով իշխանությունների կամայականություններից։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Իրանում գործում էին ավելի քան 25 բամբակաշղտիչ գործարաններ, որոնց ճնշող մասը գտնվում էր Խորասանում և Մազանդարանում։ Դրանք հիմնականում կառուցվում էին բամբակագործության խոշոր կենտրոններում, որտեղ հաստատվել էին իրանական բամբակի գլխավոր արտահանողները։ Օրինակ. Նիշաբուրում գործում էին 4 բամբակաշղտիչ գործարաններ, որոնք պատկանում էին Պոզնանսկու բաժնետիրական ընկերությանը, Տեր-Մկրտիչև, «Հախնազարյանց և Ընկ.» և «Խալափյանց և Ընկ.» առևտրական տներին[33]։

Սաբզևարում նույնպես գործում էին 4 բամբակաշղտիչ գործարաններ, որոնցից երկուսը պատկանում էին Տեր-Մկրտիչևներին և Հախնազարյանցին։ Այդ գործարաններից յուրաքանչյուրի կառուցումը նստել էր 40—50 հազար ռուբլի[34]։ Նվ Սաբզևարում, և Նիշաբուրում Տեր-Մկրտիչևների գործարանները համարվում էին լավագույններից մեկը։ Դրանք կահավորված էին ժամանակակից սարքավորումներով և գնահատվում էին 80—90 հազար ռուբլի[35]։

Այս բնագավառում խոշորագույն ձեռնարկատերերից մեկը «Աթայանց և Ընկ.» առևտրական տունն էր։ 1909 թ. Մամեդաբադում գործում էր Աթայանցների բամբակաշղտիչ գործարանը։ Գործարանի սարքավորումների վրա ծախսվել էր 7000 թուման։ Հիմնական և շրջանառու կապիտալը կազմում էր 15.000 թուման[36]։ Ընկերությունը գործարաններ ուներ նաև Միանաբադում, Դերեգեզում, Ջովեյնում և Բոջնուրդյան խանությունում։ 1916 թ. Բոջնուրդյան խանությունում

շարք մտավ ընկերությանը պատկանող խոշոր բամբակազտիչ գործարանը, իսկ հին գործարանի իր բաժինն Աթայանցը 16 հազար թումանով վաճառեց Բոչնուրդյան խանին[37]։

«Աթայանց և Ընկ.» առևտրական տունը լայն գործունեություն էր ծավալել Սարգսարի շրջանում։ Զգտելով ընդլայնել առևտրական գործարքները և ավելացնել զտված բամբակի արտահանումը Ռուսաստան, առևտրական տունը 1915 թ. նոր գործարան կառուցեց Սարգսարի շրջանում՝ Ջովչինում։ Ընկերության ղեկավարության վարձիքով նոր գործարանի գործարկումը հնարավորություն կտար այդ շրջանից Ռուսաստան արտահանել տարեկան ավելի քան 50.000 փութ մաքուր բամբակաթել[38]։ Գործարանը լավագույններից մեկն էր Իրանում և հագեցված էր ժամանակակից սարքավորումներով։ Հաշվա-վարկային բանկի աստիճանավորների գնահատմամբ այն արժեր մոտ 75 հազար ռուբլի[39]։

Բամբակի արտագրության մյուս խոշոր կենտրոնը Աստրաբադն էր։ XX դարասկզբին Բանդար Գյազում գործում էին 4 բամբակազտիչ գործարաններ, որոնք պատկանում էին «Բեգլարյանց և Կարապետյանց», «Նասիբյանց և Տեր-Պետրոսյանց» ընկերություններին, վաճառական Աղամիրզայանցին[40] և Թումանյանցների առևտրական տանը[41]։

Կայեմի վկայությամբ Բանդար Գյազում բամբակի առևտուրը գտնվում էր հիմնականում առաջին երկու ընկերությունների ձեռքում, որոնք օգտվելով իրենց մենաշնորհ դիրքից, հաճախ հումքը գնում էին ափազանց էժան գնով։ Նույն հեղինակի տվյալներով գործարանատերերից յուրաքանչյուրին հումքի թերակշռման հետևանքով մնում էր 7—12 հազար փութ մաքուր մանրաթել, որն անշուշտ չափազանցություն է[42]։

Այս, ինչպես նաև մյուս գործարանները սեզոնային էին։ Աշխատում էին տարեկան 2—3 ամիս, հիմնականում գործարանատերերին պատկանող հումքով։ Սակայն հաճախ ձեռնարկատերերը զտելու նպատակով որոշակի վճարի դիմաց հումք էին ընդունում նաև տեղական բնակչությունից և մյուս արտահանողներից։ Օրինակ, Մամեդաբադում գտնվող Աթայանցների գործարանը մասնավոր անձանցից զտելու համար ընդունում էր տարեկան 1500—2000 փութ բամբակ, 1 փութ մանրաթելի համար 4 ղրան վճարով[43]։

Ընդհանուր առմամբ գործարանների թողունակությունն այնքան էլ մեծ չէր։ Մամեդաբադի գործարանի արտադրական կարողությունը օրական 400 փութ էր, սեզոնայինը՝ 35 հազ. փութ, լյութֆարադինը՝ 20 հազար փութ[44]։ Որպես կանոն, այդ գործարանները չունեին ինք-

նուրուզն տնտեսական նշանակություն և կոչված էին նպաստելու այս կամ այն ընկերության առևտրական շրջանառության ընդլայնմանը։

Բամբակազտիչ գործարանների հանդես գալը Իրանում այդ երկրի բամբակագործության մեջ օտարերկրյա կապիտալի ինտենսիվ ներթափանցման արդյունք էր։ Ձեռնարկությունների մեծ մասը պատկանում էր բամբակի առևտրում կարևոր դիրքեր նվաճած ռուսահպատակ հայերի առևտրական ընկերություններին։ Անշուշտ, դրանք փոքր ձեռնարկություններ էին, բայց լինելով իրանական արդյունաբերության սպեցիֆիկ ճյուղի ձեռնարկություններ չէին զգում Իրանից դուրս գործող օտարերկրյա կապիտալի կործանարար մրցակցությունը։

Հայ ձեռնարկատերերը մենաշնորհ դիրք էին գրավում Իրանի ձկնարդյունաբերության մեջ։ Դեռս XVIII դարավերջին XIX դարասկզբին կասպից ծովի հարավային ափի ձկնային հարստությունները գրավել էին աստրախանցի հայ վաճառականների ուշադրությունը։ Սակայն ձկնարդյունաբերությունը Կասպից ծովի հարավում լայն հիմքի վրա դրվեց միայն 1873 թ., երբ աստրախանցի առաջին դիլդիայի վաճառական Ստեփան Լիանոզովը շահական կառավարությունից ստացավ Աստրայից-Ատրեկ հատվածում ձկնորսության մենաշնորհ իրավունք։ Այդ ժամանակից սկսած ձկան որսը և արտահանումն անշեղորեն աճեց։ Եթե 1890-ական թվականների սկզբին ձկան որսն այդ շրջանում հասնում էր տարեկան միջին հաշվով մոտ 600.000 ռուբլու, ապա 1890—1906 թթ.՝ 900.000—1.000.000 ռուբլու, իսկ 1907—1913 թթ.՝ 2,5 մլն. ռուբլու[45]։

Լիանոզովը և նրա հաջորդները զգալի կապիտալներ ներդրեցին ստեղծելով ժամանակակից ձկնարդյունաբերական ձեռնարկություն՝ հզոր սարքավորումներով, սառնարաններով, ժամանակակից փոխադրանավերով, կահավորված նավակայաններով, պահեստներով և այլ օժանդակ շինություններով։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Լիանոզովների ընկերության կապիտալ ներդրումները կազմում էին 3.380.000 ֆրանկ[46]։

Մեկ ուրիշ հետազոտողի՝ Յագանեգիի տվյալներով 1916 թ. դրա՞ք հասնում էին 9000000 ռուբլու[47]։

Այդ վիթխարի ձեռնարկության ձկնորսարանների մի մասն էլ գտնվում էր Աստրաբադի շրջանում։ Գլխավոր ձկնորսարանները գտնվում էին Կարասուի և Հաջի Նեֆեսի գետաբերաններում։ Ընկերությունն այստեղ որսը կատարում էր տեղաբնակ թուրքմենների ուժերով, նախօրոք պայմանագիր կնքելով նրանց հետ։ Ձկնորսարանների

արտադրանքը տարեցտարի ավելանում էր։ 1909—14 թթ. միջին հաշվով ձկան որսն Աստրաբադի շրջանում կազմել էր մոտ 557.000 ռուբլի[48]։

Եթե 1905 թ. ձկան արտահանումը Բանդար Գյազի վրայով կազմում էր ընդամենը 13.749 փութ, ապա 1911 թ. հասնում էր 401.500 փթի[49]։

Ինչպես և մյուս ձկնորսարաններում, Աստրաբադում ևս ընկերությունը ղգալի կապիտալ ներդրումներ էր կատարում։ Ընկերության կարիքների համար Կարասուում գործում էին էլեկտրակայան, հիվանդանոց ամբուլատորիայով, կառուցվել էին բարաքներ աշխատողների համար, դցվել էին ռելսեր վագոնների համար։

Այսպիսով, XIX դարավերջին XX դարասկզբին հայ վաճառականները ակտիվ դեր էին խաղում Հյուսիս-արևելյան Իրանի տնտեսական կյանքում։ Գերազանցապես նրանց ձեռքում էր գտնվում այնպիսի ապրանքների արտահանումը, ինչպիսիք էին բամբակը, բուրդը, չոր միրգը, մետաքսահումքը։ Հայ վաճառականները նշանակալի դիրքեր էին գրավել նաև շաքարի, երկաթի, գործվածքեղենի, թորած նավթի ներմուծման մեջ։ Երկրի ներսում նրանք հիմնականում զբաղվում էին մեծածախ առևտրով։

Հայ վաճառականների ձեռքում էին գտնվում նաև Հյուսիս-արևելյան Իրանի սաղմնավորվող արդյունաբերության հիմնական ճյուղերը՝ բամբակի զտման գործը և ձկնարդյունաբերությունը։

С. Х. СТЕПАНЯН

АРМЯНСКОЕ КУПЕЧЕСТВО В СЕВЕРО-ВОСТОЧНОМ ИРАНЕ В КОНЦЕ XIX НАЧАЛЕ XX ВЕКОВ

Резюме

В конце XIX начале XX вв. армянское купечество играло важную роль во всех сферах экономической жизни Северо-восточного Ирана. Установив тесные связи с непосредственными производителями иранского сырья, армянские купцы экспортировали из Северо-восточного Ирана в Россию хлопок, шерсть, шелк, сухофрукты. В то же время крупные армянские торговые дома и товарищества ввозили в Северо-восточный Иран русскую мануфактуру, сахар, железо, керосин.

До закрытия в 1883 году закавказского транзита, армянские купцы ввозили в этот район в основном западноевропейские товары, покупая эти товары через посредников в Тифлисе. После

закрытия транзита, они переориентировались на российскую промышленность

В руках армянских крупных купцов находились также основные отрасли зарождавшейся промышленности Северо-восточного Ирана: строительство хлопкоочистительных заводов и рыбная промышленность.

1 Н. А. Кузнецова, Иран в первой половине XIX века, М., 1983, с. 185—186.
2 Ф. Бакулин, Очерки торговли с Персией. Азербайджан, Мазандеран, Астрабад, СПб., 1875, с. 93.
3 П. Огородников, Очерки Персии, СПб, 1878, с. 64.
4 Հայ վաճառականները մեծ քանակությամբ դրամ էին ներմուծում Իրան, որպեսզի իրանական հումքի արտադրողներին վճարեն կանխիկ դրամով։
5 ЦГИА Гр. ССР, ф. 378, оп. 1, д. 11061, л. 74 об.
